22610

891.99.092(Czeczot)
Ц-44

423
891.99.092
Ա-44
Ղ.
Ա/Ղ
426

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ

ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ

1005
21014

(Արտատպուած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.
1893

53

4886

Дозволено цензурою. Тифлисъ. 18 Мая, 1893 г.

423 C

ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ

ՆԱԽԱԲԱՆ

Նորանցած 1892 թուականի հոկտեմբերին ռուսաստանի պ. Իւրի Վեսելովսկին մի նամակով դիմել էր ինձ, որ գրեմ իմ համառօտ կենսագրութիւնը և ուղարկեմ իրան։ Այսպիսի առաջարկութիւններ արել են և ուրիշները, բայց ես ժամանակ չըգտայ շուտով կատարելու իմ յարգելիների առաջարկութիւնը։ Մարդիկ սովորաբար յետաձգում են իրանց կեանքի և կտակի գրելը, ենթադրելով՝ որ դեռ ապրելու են, ուրեմն և ժամանակ կունենան այդ բանն անելու, մոռանալով Աւետարանի ասածը, թէ՝ «Ոչ գիտես յորում ժամու գոզ գայ»։ Կէս դար ապրելուց յետոյ՝ աւելին ձգելով Արարչի կամքին՝ ես վճռեցի ահա գրել իմ կեանքի գլխաւոր դէպքերը, այն դէպքերը, որոնք որ և է կերպով ազդեցութիւն են ունեցել իմ մտաւոր և բարոյական զարգացման վրայ։ Եւ այս արի ես այն համոզմամբ, որ կեանքից ստացած փորձառութիւնն ես մի հարստութիւն է՝ յետնորդներին կտակելու արժանի։

I

Ես ծնուել եմ Խաչէն գիւղումը, որ գտնւում է Թիֆլիսից դէպի հարաւ վաթսուն վերստ հեռաւորութեան վրայ՝ հին Բողնոփորումը, իսկ այժմեան Բօլնիսումը։ Գիւղի «Խաչէն» անուանելու պատճառն այն է, որ նրա այժմեան բնակիչները անցեալ դարի վերջերում գաղթել են Ղարաբաղի Խաչէն մահալից և այստեղ

սուել Խաչէնեցիք։ Գիւղացիք մինչև այսօր էլ պահպանել են իրանց բնիկ մշակի թէ բարքառը և թէ սովորութիւնները։ Պապը գաղթել է Խաչէնի Սէյդի-շէն գիւղից, ուր նա յայտնի է եղել իբրև Աղանց Վերդի։ Ես դէպք ունեցայ այցելել այդ գիւղը և տեսայ աչքովս Աղանց աղբիւրը, Աղանց ձորն ու բազը և Աղանց ճըղպրէն (ընկուզենին)։ Այդ ծառը ես որ տեսայ՝ մի ահագին կոճղ էր, բոլորովին չոր, բայց գիւղացիք այդ վաղեմի յիշատակը չէին ուզում ոչընչացնել։ Մեր ցեղից միայն մի պառաւ կին կար Միզունց Արիւթիւնի տանը։

Հայրս Աղանց Ստեփանն էր, իսկ մայրս՝ Հռիփսիմէն (Հուռի), Տէր-Անդրէասեանների տանից։

Այդ ժամանակ ծննդեան մատեաններ պահելու սովորութիւն չը կար. մէկի ծննդեան տարին յիշում էին նոյն տարին պատահած մի որ և է նշանաւոր դէպքով։ Իմ ծննդեան տարին նշանաւոր դէպքը եղել է այն, որ Մեծ-Մասիսը շարժուել է և Ակռին տակովն արել, իսկ այդ պատահել է 1840 թուականին։ Մայրս ասում էր, թէ քեզ մկրտել ենք Մեծ պասումը, Ղազարոսի յարութեան տօնին, քո ծնուելուց ութ օր յետոյ։ Այս բանին ես կարևորութիւն չը տալով՝ չեմ հետաքրքրուել ստուգելու, թէ այդ տարին Քրիստոսի բարեկամը որ ամսի քանիսին է յարութիւն առել։

Իմ մանկութիւնն ու պատանեկութիւնը ես մանրամասն նկարագրել եմ «Արութիւն և Մանուէլ» վէպիս մէջ։ Այդ վէպի Արութիւնը ես ինքս եմ։ Դրանում բաց եմ թողել միայն մի սովորականից դուրս պատահած դէպք, որ սակայն կենսագրական տեսակէտից մեծ նշանակութիւն ունի։ Այդ դէպքը իմ մանկական սիրահարութիւնն է, որ մեծամեծ աղէտների պատճառ դարձաւ և սկիզբն դրաւ այն հալածանքին, որին ենթարկեց ինձ հայրը։ Ես չըգիտէի դեռ ևս, որ մեզանում նոյն իսկ ամուսնական սէրը մի դատապարտելի յանցանք է, և դա է եղել Քրիստոսի խաչելու միակ պատճառը։ Սակայն սուրբ էր իմ սէրը, անմեղ, անարատ, անիմանալի և անգիտակից։ Այսպէս կարող էին լինել միայն Ադամն ու Եւան անմեղութեան դրախտումը իրանց մանկական հասակում, նախքան բարոյ և չարի գիտութեան ծառի պտղից ճաշակելը։ Ինչպէս խորամանկ օձը՝ նայելով նրանց անմեղութեան վրայ՝ կա-

րող էր զանազան կասկածներ տանել և աշխատել նրանց սրտի մէջ ևս ձգել այդ կասկածը, ճիշտ այսպէս վարուեցան ինձ հետ էլ իմ անմեղ սիրոյն ականատես եղողները։

Բանն ահա ինչպէս էր։ Շամշուդա գիւղի քահանայի մօտ կարդալիս ես դասընկեր չունէի, իսկ խաղընկերներս իմ հասակակից աղջկէք էին։ Սրանց մէջ ամենից փոքրը եօթը տարեկան մի աղջիկ էր, անունը Մայիկօ։ Սա իր ծնողաց մին ու ճար զաւակն էր. այս պատճառով էլ նրան միշտ զուգած ու զարդարած էին պահում, որով ամենից սիրուն էր թւում իմ աչքումը և ամենից շատ դուր գալիս։ Ինչպէս երեխան սիրում է իր զուգած տիկնիկը, անդադար շոկում է նրա զուգսը, գգւում, համբուրում, ես էլ ճիշտ այդպէս էի վերաբերւում Մայիկօին։ Աղջկայ մայրը հակառակ չէր իմ այսպէս վերաբերուելուն, ընդհակառակը նա աւելի ևս խրախուսում էր ինձ, արծարծում էր իմ սէրը, զանազան անուշեղէն ուտեցնելով։ Աղջիկն էլ մօրից ստացած մրգեղէնն առանց ինձ չէր ուտում։ Այսպէս ահա իմ սէրն օրէցօր աւելի աճեց և աւելի տաքացաւ։ Սիրտս այնպէս կպաւ Մայիկօին, որ էլ չէի կարողանում նրանից բաժանուել, միշտ ուզում էի նրա հետ նստել, նրա համար երգել։ Նրա անունով գրում էի սիրոյ երգեր, ի հարկէ նախագեղարուեստական, բայց սքանչելի երկուսիս համար էլ. քաշում էի և իմ ու նրա պատկերները կողք կողքի, ինչպէս հարս ու փեսայ, ի հարկէ նախապատմական ճաշակով, բայց մեր երևակայութեան համար շատ զմայլեցուցիչ։ Դասերս այլ ևս չէի սերտում և բերան անում առաջուան ժրաջանութեամբ. այժմ նրանք շատ չոր էին թւում և շատ տաղտկալի, ինչպէս որ էին իրօք էլ։

Տէրտէրս նկատեց այս, սկսեց յանդիմանել, ուզեց ինձ հասկացնել, որ իմ արածը լաւ բան չէ, և կարող է շատ վատ հետևանքներ ունենալ։ Ես լսում էի և գլխի էի ընկնում թէ ինչ է ուզում ասել, բայց այս հանգամանքն աւելի էր սատակացնում իմ սէրը դէպի Մայիկօն։

Մինչև այդ ժամանակ ես որ մի հրաշք էի գեղացոց աչքումը իմ բնատուր շնորհքովս, այդ հանգամանքի պատճառով դարձայ մի հրէշ։ Զը նայած տասը տարեկան հասակիս, ես միամիտ

էի խենթությունն չափ, մինչև այդ հասակում բոլոր իմ ծանոթ երեխէքը շատ սառնայ էին և խորամանկ։ Խենթությունս այն աստիճանի հասաւ, որ ես սակսեցի իմ լսած հէքիաթների հերոսների պէս ջուններ դառնալ և սար ու ձոր թնդացնել իմ սիրուհու անունով։ Ես այդ ժամանակ մի փոքրիկ Դոն-Քիշոթ էի, նրա պէս խենթ, բայց նրա պէս էլ անվեհեր և երևակայող... Ամառը, երբ Մայիկոն սարումն էր լինում, ես ոչ մի բանից չէ վախենալով՝ վեր էի կենում կէս գիշերին և թաքուն փախչում նրա մօտ։ Սովորական ճանփով չէի գնում, որ տեսնող չէ լինի, այլ խոր ձորերով և խիտ անտառներով, որոնք լիքն էին ամեն տեսակ գազաններով... Երբ բանը այս չափազանցությանը հասաւ, իմաց տուին հօրս, նա էլ ապտրեց, որ ինձ տանեն մեր տուն, ուր ինքը գիտէր, թէ ինչպէս կը խրատէր ինձ։

Ճարը ինչ, պէտք է գնայի, և գնացի։ Հայրս երեսիս չէ նայեց բնաւ։ Մայրս ինձ պաշտպանելու համար մի քանի անգամ ծեծուեց։ Իմ մանկական սէրն իմ մէջ դառաւ մի տեսակ հոգեկանացաւ և սկսեց մաշել ինձ։ Մայիկոիս կարօտը քաշելով՝ սկսեցի օրէցօր նուազել։ Որքան նուազում էր մարմինս, այնքան գիւրագրգիռ և գիւրազգաց էի դառնում և այնքան քնքշանում։ Կոպիտ գործ ու խօսք տանել չէի կարողանում, ուրիշների թշուառ վիճակը, նրանց աղքատությունը, մերկությունը, տկարությունը այնքան ունեցողների վրայ չէին ազդում, ինչքան ինձ վրայ, որ միայն ականատես էի։ Այս գիւրազգացությունն իմ մէջ մի տեսակ տկարություն դառաւ մի տեսակ ցաւ։ Մի առաւօտ մայրս իմ ձեռքով մի բաժին կերակուր ուղարկեց մի հիւանդ օտարականի համար։ Հիւանդը շատ զզածուեց և լաց եղաւ։ Պատմեց, թէ ինքն էլ ունի ինձ պէս երեխէք, որ եթէ մեռնելու լինի, նրանք որբ պիտի մնան, և սկսեց ինձ օրհնել. «Դու շատ շնորհալի տղայ ես, ասաց, և ժամանակով շատ լաւ և շատ երևելի մարդ կը դառնաս»։ Ես չէ կարողացայ լացս պահել։ Երբ դուս գնացի, մինչև կէսօր մայրս չէ կարողացաւ իմանալ, թէ ինչու եմ լաց լինում։ Հէնց որ ուզում էի պատմել, հեկեկանքը խեղդում էր ինձ, չէի կարողանում ուղիղ խօսք արտաբերել։—Լա՛ւ, լա՛ւ, հանդարտուիր, ասաց մայրս, յետոյ կը պատմես... Իսկ յետոյ, պատմեցի, որ այն դարիբ մարդը

շատ հիւանդ է, պահող չունի, հաց տուող չունի, պէտք է հոգ տանել նրա վրայ։ Մայրս գթոտ կին էր, խնդիրս անտես չարաւ, բայց այնու ամենայնիւ այն մարդը մեռաւ և իմ յիշողության մէջ թողեց մի անջնջելի հետք։

Իմ նուազելուս հետ նուազում էր և սնունդս։ Շատ կերակուրներից այնպէս էի զզւում, որ նայել երեսներին չէի կարող, գինի չէի կարող բերանս առնել, շատ մրգերի նոյն իսկ ծառիցը զզւում էի, փքուբշնին տեսնելիս գլուխս ցաւում էր, սղոց սրելիս պէտք է շատ հեռու փախչէի, որ ձայնն ականջս չընկնէր, և չէ սարսռէի բոլոր մարմնով։ Այսու ամենայնիւ Մայիկոն մոռցս չէր ընկնում։ Նորանոր երգեր էի յօրինում, որոնց մէջ կարօտս էի յայտնում ինչպէս Քեաբանին իր կորած Ասլուն։ Գիշերները տեսնում էի երազումս, ուրախությունից զարթնում էի իսկոյն, բայց տեսնելով որ երազ է, սկսում էի լաց լինել։ Լացիս իսկական պատճառը չէի յայտնում, ասում էի՝ գլուխս է ցաւում։ Բայց մէկ օր յայտնեցի մօրս։ Մայրս կարծելով որ աղջկայ մայրն ինձ կախարդել է, հօրս խնդրում է, որ գիր անող մոլլաներին դիմէ և ինձ փրկել տայ այս ցաւից։— Գիր—միր հարկաւոր չէ, պատասխանել էր հայրս, ես ինքս շատ լաւ գիր կանեմ։ Եւ ճշմարիտ, մի գիշեր էլ, երբ ըստ սովորության սկսեցի լաց լինել և սուս չէ կացայ, հայրս վեր կացաւ, մի փափուկ ճիպոտ վեր առաւ, որ իր լաւ գիրն անի ինձ վրայ, ես խակոյն վեր թռայ տեղիցս, և շապկանց ու ոտաբոբիկ փախայ մինչև գեղի ներքի թաղը՝ քեռանցս տունը, ուր ինձ պատսպարեցին, իմանալով բանի հանգամանքը։ Մայրս ինձ այդտեղից փախցնել տուաւ քաղաք—Թիֆլիս—քրոջս մօտ, ուր և մնացի մինչև մոտայ Ներսիսեան դպրոց 1853 թուականին։ Այդտեղ ինձ ընդունեցին նախավերջին դասատանը, բայց ինչ որ աւանդւում էր այդտեղ, ես արդէն գիտէի, այնքան ողորմելի մի բան էր այդ ուսումնարանը, թէև Շանշեանն էր տեսուչը։ Իմ այստեղի դպրոցական կեանքը ես նկարագրել եմ «Արութիւն ու Մանուէլի» երկրորդ հրատարակության երկրորդ գրքի առաջին գլխումը։

Այս ժամանակ ես այնքան հասունացայ և գիտակցության եկայ, որ իմ մանկական սիրահարությունս խենթությունը լինելը զգալի եղաւ ինձ համար, և ինձ մեղաւոր ճանաչելով՝ ասում էի

աղօթքիս մէջ՝ «Տէր, մի՛ յիշեր զմեղս մանկութեան իմոյ...» Այդ սիրոյ տեղ իմ մէջ զարթնեց մի նոր սէր, սէր առ ուսումն և սա էլ նոյնքան աղետալի դարձաւ ինձ համար, ինչքան և առաջինը։ Տոգորուելով նորանոր գաղափարներով, ազատուելով շատ նախապաշարմունքից, սկսեցի անխնայ յարձակուել այդ նախապաշարմունքների դէմ, որով դարձեալ զայրացրի հօրս և նա ոչ միայն չօգնեց ինձ, որ ես շարունակեմ ուսումս, այլ կրկին անգամ դուրս արաւ ինձ տանից իբրև Աստուծոյ ծրից դուրս եկած անառակ որդու։ Այս մասը նոյնպէս նկարագրած եմ յիշեալ վէպիս մէջ և դրանով էլ վերջացրած։ Այսուհետև ինչ որ ասելու եմ դրա շարունակութիւնը կը լինի առանց նրա վիպական ձևն ունենալու։

II

Նոյնատեսակ կենդանիք իրանց միջից հալածում են արտաքուստ իրանց նման չեղող ձագերին։ Այս մի այնպիսի յատկութիւն է, որով անբանները մաքառում են իրանց տեսակի կերպարանափոխութեան դէմ և թէպէտ չեն կարողանում տեսակափոխութեան առաջքն առնել, բայց այդ գործն այնքան դանդաղացնում են, որ նա կատարւում է անհուն դարերի ընթացքում։ Անբանների այս յատկութիւնը գտնւում է և բանականների այն դասակարգի մէջ, որոնք անւանում են յետադէմ, խաւարամիտ և պահպանողական։ Եթէ բանականների մէջ չը լիներ այս յատկութիւնը, լուսաւորութիւնը յառաջ կերթար անընդհատ և հսկայական քայլերով, բայց այսպիսի բան չը կայ բնութեան մէջ, ամեն կենդրոն նախոյս զօրութիւն ունի և իր կենդրոնաձիգը։ Այս հանգամանքը մի չարիք չէ, այլ բարիք, պէտք է գիտենալ միայն թէ ինչպիսի զէնքով պէտք է պատերազմել տգիտութեան և խաւարի դէմ և միանգամ ընդ միշտ համոզուելու է, որ այդ պատերազմը վերջ չունի, և որ այս դարում գործ դրած զէնքը միւս դարում կարելի չէ գործածել, իբրև հնացած և անպէտք։

Ինքնուրոյն լինել՝ կընշանակէ մի կաղապարով ձուլուած հասարակութիւնից տարբերուիլ։ Այդպիսին կը լինի միւսների համար մի հրէշ. նրան մի տեղ կը խաչեն, մի այլ տեղ կը բանտարկեն. նրան կը համարեն խենթ, վտանգաւոր, և այլն։ Այդպիսին արդարև մի

խենթ է, մի ցաւագար, գիտակից ոչինչ չը կայ նրանում, ամեն ինչ կատարում է բնազդմամբ, մի ներքին անդիմադրելի դրդումից, մի աներևոյթ զօրութեան թելադրութեամբ։

Երբ որ հայրս դուրս արաւ ինձ երկրորդ անգամ, ինձ համարելով անառակ որդի, ես ընդհակառակը ինձ համարեցի Եսաւից հալածուած մի Յակոբ, եղբայրներից վտռուած մի Յովսէփ, Եգիպտոսից փախած մի Մովսէս։ Մեծ էր հաւատս, որ ունէի դէպի իմ Արարիչս, շատ մեծ։

Ես ընկայ երկրիս ովկիանոսը ինչպէս մի հէքիաթական աշխարհի մէջ, ինչպէս մի առասպելական, այլ ոչ իրական կեանքի մէջ։ Այդ կեանքի հետ ես բնաւ ծանօթութիւն չունէի, դրսի կեղևն էի տեսել միայն և շատ հաւանել, բայց չը գիտէի, որ նա մի զարդարուն գերեզման է, չը գիտէի որ նրանում զարհուրելի գազաններ և միջատներ կան։ Շարունակ եօթը տարի պտըտեցի ես այդ զզւարանումը, որ աշխարհք է անւանւում և կեանք, բայց պտըտեցի ինչպէս կախարդուած, ինչպէս հիպնոզացրած, որ չը գիտէ ինքը, թէ ուր է գնում և ինչ է անում, բայց որ կարծես գնում է մի արդէն նախասահմանուած ճանապարհով։ Ինչպէս հնդկական հաւատով մարդուս հոգին մի նախասահմանութեամբ անցնում է զանազան առարկաների և կենդանիների միջով, որ նրանցում զուտի, մաքրի և ապա թէ միանայ Բրահմայի հետ, ճիշտ այսպէս եմ գտնում այսօր և ես իմ կեանքը. սա ևս անցել է և դեռ պիտի անցնի զանազան կենդանիների միջով—օձերի, զորտերի, էշ՛երի, կապիկների, գայլերի, ոչխարների և այլ կենդանիների, որ աւելի մաքրի և միանայ իմ պաշտած անիմանալի Զօրութեան հետ, այն Զօրութեան, որի հաւատը միշտ ունեցել եմ և զգացել իմ մէջ իբրև ինձանից անբաժան մի սիրտ և մի հոգի։

Եօթը տարուց յետոյ ես ընկայ մի տպարանական ձուլարան իբրև աշակերտ, որ այդ արհեստը սովորեմ։ Այս բանը ես արի ոչ թէ գիտակցաբար, ոչ թէ արհեստի նշանակութիւնն ըմբռնելով՝ այլ անգիտութեամբ։ Կեանքի մէջ—թէ դուրսը սար ու ձոր ընկած, և թէ քաղաքի մէջ, ամբողջ եօթը տարւայ ընթացքում աւելի քան եօթն անգամ եօթը տեղ մտնելուց և դուրս գալուց յետոյ հիմա էլ մտայ ձուլարան նոյն անգիտակցութեամբ և նոյն

աներևոյթ զօրութեան գրդմամբ, որ ինձ ման էր ածում իբրև մի կոյրի, այնքան միայն խնամք տանելով՝ որ ես խորխորատների մէջ չընկնիմ: Խաւար էր այդ ժամանակ մեր աշխարհը, շատ էր խաւար. լուսաւոր մարդուն պէտք էր լապտերով փնտրել: Ոչ գիր, ոչ գրականութիւն, այլ տարկութիւն, ճորտութիւն, գերութիւն, բռնութիւն — մի դժոխք իր բոլոր դիւական և ճիւաղական հրէշներով:

Յայտնի է, որ տառ ձուլելը, երբ այժմեան արագաշարժ և դիւրաշարժ մեքենաները չը կային և ամեն ինչ ձեռքով էր շինւում, մի տաժանելի աշխատութիւն էր պահանջում, բայց այդ տաժանելի աշխատութեան մէջ շունչ քաշեցի ես այնպէս աղատ և քաղցր, ինչպէս Անդերսէնի անճոռնի բատիկը, երբ հաւի ու կատուի ձեռից ազատուելուց յետոյ ընկնում է ջրի մէջ և լողում իր ուզածի չափ, կամ ինչպէս Ադամը, երբ դժոխքից ազատւում է և նստում Քրիստոսի կողքին Զիթենեաց սարի վրայ: Սրանից պէտք է դուշակել, թէ որքան տաժանելի պիտի լինին եղած ուրեմն անցած եօթը տարուան քաշած օրերս:

III

Զուլարանն ինձ համար դրախտի փոխարկողը եղաւ նրա տէրը, որ էր պ. Համբարձում Էնֆիաճեանցը: Սա մէկ օր՝ դիպուածաբար՝ տեսաւ իմ մի քանի ոտանաւորներս, որոնց վրայ նոր ձուլած տառեր էի ածել իբրև անպէտք թղթերի վրայ, դուրս քաշեց այդ թղթերը և սկսեց կարդալ: Գրածներս երգիծաբանութիւններ էին նոյն իսկ ձուլարանում կատարւող ծիծաղելի անցքերի վրայ, որոնց մէջ ամենից թունդը խոհարարի մասին գրածս էր: Նրա մէջ ցոյց էի տուել, թէ ինչպէս նա մեզ՝ աշակերտներիս անմարս բաներով է կերակրում և այն էլ շատ նուազ, չընայած, որ ահագին ծախք է ցոյց տալիս: Հէնց նոյն օրը դուրս արաւ խոհարարին և աւելի լաւը բերաւ: Այդ օրւանից սկսեց ինձ վրայ առանձին և լուրջ ուշադրութիւն դարձնել՝ ինձ մի նոր գիւտ համարելով: Ամեն կիրակի և ոտն օրերին հրաւիրում էր տուն ճաշի, գրքեր էր տալիս կարդալու, իր գրած նամակները, որ այդ ժամանակ շատ էր գրում Մխիթարեանների վրայ ձուլարանի և տպարանի մասին, ինձ էր արտագրել տալիս: Ընկեց ինձ հետ արած պայմանը, որով տարեկան պիտի ստանայի յիսուն մանէթ և վարձ նշանակեց ըստ աշխատութեան, որով տարեկան ստացայ փոխանակ յիսուն մանէթի վեց հարիւր մանէթ և աւելի ևս: Երբ տպարանը բացւեց և ես սկսեցի շարել առանց վարպետի, նա ինձ տաւ աշկերտներ, որոնք ինձ համար էին շարում, իսկ ռոճիկն ինքն էր տալիս: Աշակերտներ ունենալով՝ ես ժամանակ էի վաստակում ընթերցանութեամբ պարապելու:

Այս ժամանակ ահա, երբ իմ բարի համբաւը հասաւ գիւղ, հայրս եկաւ ինձ մօտ, հաշուեց ինձ հետ և արտասուքն աչքերին բացականչեց.

—Փառք իմ Ստեղծողին, որ քեզ ջուր ու կրակ գցելուց յետոյ վերջապէս օրինաւոր մարդ շինեց: Ապրես, որդիս, ապրես, հիմա կարող եմ ասել, որ իմ հարազատ ծնունդն ես, իմ սիրելի զաւակս: Ես էլ քիչ դառն օրեր չեմ քաշել, ես էլ գժութիւն շատ եմ արել, բայց դու չափն անց կացրիր, այնպէս որ ես չէի կարող ուրիշ կերպ վարուել, ուրեմն ներելի է և իմ վարմունքս դէպի քեզ:

—Ի հարկէ ներելի է, ասացի, հայր: Ամեն բանի մէջ Աստուծոյ մատը կայ, եթէ դու այնպէս չը վարուէիր, ես էլ այսպէս չէի դառնալ կամովին:

Ահա այս փոփոխութեանս և իմ հօր ասելով «օրինաւոր մարդ» դառնալուս համար ես պարտական եմ պ. Համբարձում Էնֆիաճեանցին, մինչև այդ ժամանակ առաջին անգամ ինձ պատահած միակ լաւ մարդուն: Դրա շնորհիւ ես ընկայ և ուրիշ լաւ մարդկանց շրջանի մէջ, դա ինձ ծանօթացրեց իր իսկ պաշտած մարդուն — Հախվերդեանին: Ես էի «Կռունկ»-ի շարողը, որով դարձայ նրա խմբագրի՝ պ. Աղաբէկեանի սիրելի Ղազրիկը: Գրաշար էի, այո, բայց օրինաւոր գրաշար էի. հեղինակներն ինձ էին յանձնում իրանց գրքերի սրբագրութիւնը: «Կռունկ»-ի սրբագրողը պ. Պռոշեանցն էր, բայց դա հիւանդանում էր ստէպ և այն ժամանակ ես ու Համբարձում աղան էինք սրբագրում միասին նոյն իսկ Աղաբէկեանի գրածները, որ նոր էր սկսել արևելեան բարբառով գրել:

Այս շրջանի մասին ես գրել եմ իմ «Մի երես նորագոյն պատմութիւնից» բրոշիւրիս մէջ 16—20 երեսներում:

Շատ կը սխալի մէկը, եթէ այդ նոր վերածնուած շրջանը մեր այսօրուա շրջաններին նմանեցնէ բարոյական կողմից։ Այն ժամանակ նիւթական շահի համար ոչ ոք չէր մտածում. այն ժամանակ անձ և գանձ զոհաբերուում էին հաւասարապէս առանց որ և է յետին մտքի։ Տպարան հիմնելը պ. Էնֆիաճեանցի և ընկերութեան վրայ ահագին ծախք նստեց։ Պօլսից վարպետներ հրաւիրեցին ահագին ռոճկով, թէև գրոշանոց մարդիկ դուրս եկան։ Մէկ օր ես դուրս վռնդեցի դրանց տպարանից իբրև անպէտք և յիմար շառլատանների։ Համբարձում աղան կանչեց ինձ և մեղմ յանդիմանութեամբ ասաց.—Ինչպէս դուրս ես արել, այնպէս էլ գնա հրաւիրիր որ դան, ես նրանց մօտ գնացողը չեմ, քանի որ այնքան յիմար են, որ փոխանակ քեզ դուրս անելու, իրանք են դուրս գնում. ոչ է լսել, որ վարպետն աշակերտից վռնդի։ Ես կատարեցի բարեբարիս հրամանը Պռօշեանցի միջնորդութեամբ. նա վարպետներիս հաշտեցրեց ինձ հետ, որոնք կրկին տպարան եկան և շարունակեցին իրանց կեղծ վարպետութիւնը։ Այս վարպետների միջնորդը եղել էր Մատթէոս կաթողիկոսը, այս պատճառով էլ երեք տարի զուր տեղը ռոճիկ ստացան։

«Կռունկը» առաջին իսկ տարին մեծ թիով բաժանորդ ունէր։ Նա մտցրեց մեր մէջ բուն ազգային ուղղութիւն և թէ տեսաւ Թիֆլիսի նորածին երիտասարդութեանը։ Ազնուութիւն և շիտակութիւն էր փայլում երիտասարդութեան մէջ, անկեղծ ազգասիրութիւն կար։ Սակայն ոչ ոք մեր գրական գործի վրայ այնքան մեծ զոհողութիւն չի արել, այդ ժամանակ ինչքան պ. Համբարձում Էնֆիաճեանցը, որի տունն իսկ այդ ժամանակ շարունակ մի ժողովարան էր և մի ճաշարան։ Նրա նախագիծը շատ լայն էր, իսկ իր ժամանակակիցների հասկացողութիւնը շատ սահմանափակ։ Նա ուզում էր մի մեծ ընկերութիւն կազմել, աշխարհականների մի ուխտ, որ պիտի ունենար Մխիթարեանների պէս հարուստ և գեղեցիկ տպարան և ձուլարան և մի հարուստ «Թանգարան վերածնութեան», այսինքն՝ մեծ մատենադարան, պիտի ունենար իր սեփական ամսագիրն ու լրագիրը, բայց անհնարին էր այն ժամանակ այս ծրագիրն իրագործել, քանի որ հասուն մտքի տէր մարդկանց թիւը շատ սահմանափակ էր. հունձ շատ կար, բայց

մշակ սակաւ. հաւատացեալների թիւն աճում էր, բայց հովիւներ չը կային։ Մեր գրական գործիչները բոլորն էլ դեռ ևս նորուս և թերուս մարդիկ էին. լեզուն նոյնպէս նոր էր սկսում կազմակերպուիլ, նոր էր ձեռնարկուում հասարակական թատերերգութեան, նոր էին բարեկարգուում ուսումնարանները։ Այս նոր և թարմ հոսանքի միակ պատճառը ամբողջ պետութեան մէջ նոր սկսող բեֆորմներն էին, որոնք մեզ համար անակնկալ էին, նրանցից շահուելու ոչ մի նախապատրաստութիւն չունէինք. ծերունի Ներսէսի հեռատեսութիւնը մինչև այդ մօտիկութիւնը չէր հասել, մեր մտաւոր և բարոյական վերածնութիւնն սկսուեց Մատթէոսի օրով։

IV

Մարդ նախապաշարուում է մի բանով, նախ քան իմանալը, որ նոյն բանը մի սուտ է և մոլորութիւն։ Իսկ երբ վերահասու է լինում, որ հաւատացել է մի սուտ բանի և նոյնը իր համար մի ցաւ շինել, դրանով նոյն ցաւիցն խսպառ չի ազատուում։ Բայց այս էլ բան է, որ իմանում է, թէ իր ունեցածը մի ցաւ է և գիտէ էլ, թէ ինչից է ստացել այդ ցաւը։ Սրանով նա մտքով, այսինքն՝ դատողութեամբ միայն ազատուում է նոյն նախապաշարմունքից, իսկ հոգեպէս՝ ոչ։ Հոգին այնպիսի կապրիզներ ունի, որ շատ անգամ ոչ մի դատողութիւն նրան սանձահարել չի կարողանում։ Այս հանգամանքն արժանի է խորին ուշադրութեան, որովհետև դաստիարակութեան տեսակէտից մեծ նշանակութիւն ունի։

Եթէ Մակբէթը չհաւատար վհուկ պառաւների գուշակութեանը և չնախապաշարուէր, էլ այն չէր անիլ, ինչ որ արաւ։ Այս միևնոյնը կարելի է ասել և Օհաննա Դարքի մասին. նա էլ էր նախապաշարուած։ Առաջինն իր նախապաշարմունքով չարութիւն գործեց, երկրորդն իր հայրենիքն ազատեց։ Ուրեմն նախապաշարմունքն ևս մեծամեծ գործեր է կատարել տալիս՝ թէ չար և թէ բարի։ Չարի կամ բարու ձեռքին կոյր գործիք դառնալու համար էլ բացառիկ բնաւորութիւններ են հարկաւոր։ Եթէ չասենք նախապաշարմունք, այլ՝ հաւատ, այնուհետև ամէն ոք կը հաւատայ, որ յիրաւի, հաւատը սարեր շարժելու չափ ուժ ունի։ Մինչ քիչ կան բարոյական սարեր, որոնք փուլ են գալիս հաւատի առջև։

Մարդս երեխայական հասակում թոյլ դատողութիւն ունի կամ բնաւ չունի, բայց ունի անպայման և անկասկած հաւատալու տրամադրութիւն, ուրեմն և շուտ նախապաշարելու։ Հիմա խնդիրը է, թէ պէտք է արդեօք նախապաշարել երեխային գիտութեան համար սուտ հաւատալիքներով, թէ ոչ։ Ես այսքան կասեմ միայն, որ պէտք է մի կողմ դնել սուտն ու ճշմարիտը և վերցնել բարին և չարը, վնասակարը և օգտակարը։ Ոչ մի վնասակար և չար բանով չպէտք է նախապաշարել երեխային, իսկ բարի և օգտակար բաներով նախապաշարելը շատ արդիւնաւէտ է։ Երբ երեխայի համար գուշակութիւն են անում, թէ նա որպիսի մարդ պէտք է դուրս գայ, նա հաւատում և նախապաշարւում է։ Հիմա ոմն է լաւ, չար գուշակութիւնը, թէ բարի։ Կասկած չկայ, որ բարին նրան կըտանէ դէպի բարին, իսկ չարը՝ դէպի չարը։ Եթէ երեխան հաւատում է և՛ օրհնութեան, և՛ անէծքի, ուրեմն պէտք է օրհնութիւն տալ և անէծքից զգուշանալ։ Եթէ նա հաւատում է չար և բարի ոգիների, պէտք է ոչնչացնել և սուտ չարը և բարու գոյութիւնը պաշտպանել։ Երեխան Աստուծուն պէտք է հաւատայ, թէ Նա է անսահման բարի Հայր։ Թող հաւատայ, որ Նա է աղբիւր ամենայն բարեաց, որ Նա իր հովանաւորութիւնը տարածում է մեզ վրայ ամենայն տեղ։ Մեծ է այս հաւատի զօրութիւնը, շատ մեծ։ Եւ ինչու երեխան իր սրտումը չկրէ այդ ամենամեծ և անսահման բարի զօրութիւնը, այդ ամենաքաղցր Հօր ամենասուրբ անունը։ Հայրեր կան, որ շատ չար են և անպիտան։ Երեխաներին պէտք է հասկացնել, որ Հայր Աստուծուն իրանց հայրերին չնմանեցնեն։

Երբ մի երեխայի հաւատացնում են, որ նա ունի աստուածատուր առանձին շնորհք, երեխան նախապաշարւում է և այն հոմոզմունքն է կազմում, որ Աստուած շատերի միջից նրան է ընտրել։ Այդպիսի երեխան, եթէ իրաւ ունի այդ շնորհքը, շատ յաւաջ կերթայ. նա կը լինի չափից դուրս աստուածասէր, չէ՞ որ Աստուծոյ ընտրեալն է, Նրա սիրելին, դանում է Նրա առանձին խնամքի և հովանաւորութեան տակ։ Այսպիսին ինչ նեղութեան, ինչ տանջանքի մէջ էլ լինի, միշտ կը յուսայ, որ այսօր է թէ վաղը Նրան այդ նեղութիւնից կը հանէ իր ամենաբարի

Հայրը, և եթէ չհանէ էլ, Նրա կամքի դէմ չի տրտնջալ, կերեւակայէ, որ շուտով կարժանանայ Նրա տեսութեանը, որ աւելի էլ մեծ երջանկութիւն է։ Ես ենթադրում եմ, որ այս հաւատն ունեցողը կարող չէ չարիք գործել, քանի որ իր իդէալը իր անսահման բարի Հայրն է։ Նա կարող չէ քարանալ մէկ տեղ և անշարժ մնալ։ Պէտք է ձգտի, պէտք է դիմի դէպի այն բարձրութիւնը, դէպի որը ձգտելու Նրան հմայել են զանազան գուշակութիւններով։

Փոքր ժամանակս ես մեծանալով ամեն տեսակ նախապաշարմունքների մէջ, անխտիր հաւատում էի ամեն լսածիս։ Աստուածածնին ներկայացնում էին իբրև բարեխօսող Աստուծոյ առջև։ Ասում էին, որ նա շատ անգամ, երբ աշխարհի վրայ մի նեղութիւն է գալիս, աղաչում, աղերսում է Աստուծուն և իր արտասուքով Նրա գութը շարժում, որ Նա վերացնի աշխարհից իր տուած պատիժը, ների մարդկանց յանցանքը։ Սրա համար ես այն եզրակացութեան էի գալիս, որ Աստուածածինը մի շատ գթառատ մայր է, իսկ Աստուած՝ մի անգութ մողրով։ Ի՞նչ կը լինէր մեր ճարը, եթէ Աստուածածինը բարեխօս չլինէր մեզ համար։ Այս պատճառով ահա ես վախենում էի Աստուծուց, բայց չէի սիրում Նրան, իմ պաշտելին Մայրը Աստուածածինն էր։ Ես հիմա տեսելով ասում եմ այդ բարեխօսութեան հաւատը և ամենայն տեսակ միջնորդութիւն։ Անսահման բարի Հօր և Նրա որդոց մէջ ոչ մի միջնորդութեան հարկ չկայ. Նա մեզ սիրում է առանց միջնորդի, և մենք էլ պէտք է սիրենք Նրան ամենայն սրտով և հոգով առանց երկիւղի։ Այս է իմ ներկայ հաւատը և կը ցանկանայի, որ ամենքն էլ այսպէս հաւատան և այսպէս հաւատացնեն իրանց զաւակներին և աշակերտներին. որովհետև այսպէս պէտք է լինի ճշմարիտ քրիստոնէի հաւատը, այսպէս է ուսուցել մեր կրօնի հեղինակն ու հիմնադիրը, որդեգրելով մեզ Հօրն երկնաւորի։

Շնորհակալ եմ Աստուածանից, որ ինձ շատ շատ մօտեցրեց իրան և ազատելով ինձ ամեն տեսակ բարեխօսներից ու չարախօսներից, ուղղակի իւր հովանաւորութեան տակ առաւ, յորում կամ և մնում ցմահ և յետ մահու... Ես իմ բոլոր գոյութեամբս այս հաւատի արդիւնքն եմ, չեմ ունեցել մի այլ խնամակալ և հովանաւոր՝ բացի Աստուածանից։ Ես կը ցանկայի, որ ամեն ոք՝ իր եր-

ջանկութեան համար՝ այս հանգամանքի վրայ լուրջ ուշադրութիւն դարձնէր։ Թող այս հաւատը ամեն անհատի մէջ դառնայ մի անջնջելի նախապաշարմունք, հոգեկան ցաւի պէս մի բան, առաւել լաւ. դա կը ծառայէ անհատի երջանկութեանը։ Երկու հակառակորդից յաղթողը նա կը լինի, ով որ աւելի կը զգայ, որ Աստուծոյ աներևոյթ օգնութիւնն իր հետ է. այդ հաւատից զուրկը կը զրկուի և հոգեկան ուժից, այն ուժից, որ հաւատի հետ աճում և զօրանում է և անհաւատութեան հետ թուլանում և հանգչում։

Երջանիկ կարող է լինել այն ազգը միայն, որ գիտէ թէ ոչ մի չարիք Աստուածանից նրան չի հասնում և երբէք էլ չի հասնիլ ոչ մի դէպքում։ Իսկ եթէ ներկայացնէ իրան, թէ Աստուած իր գլխին բարկացել է և պէտք է հրով ու սրով ջնջել տայ աշխարհի երեսից մի քուրդի կամ թուրքի ձեռով, այդ հաւատը նրան իսկապէս էլ կը ջնջի։ Ուրեմն անհատի և ազգի բախտը նրա հաւատալիքների որպիսութիւնից է կախուած։ Պէտք է արմատախիլ անել վնասակար հաւատալիքները և նախապաշարմունքները և պատաստել բարին և օգտակարը։ Այսպէս պէտք է անել, որովհետև երկուսից էլ միանգամից կուրել կարելի չէ։ Ինչպէս կարելի չէ զրկել մէկին հոգեկան զգացումներից, նոյնպէս կարելի չէ ազատել և նախապաշարելուց։ Լաւ կը լինի ուրեմն, որ այդ նախապաշարմունքը գոնէ նրա օգտին և բախտին ծառայէ։

V

Մանկութեանս առաջին տարիներում մեր գիւղի մէջ ես մի բացառիկ ծնունդ էի, իբրև կարգից դուրս շնորհալի երեխայ։ Նեղ էր և մութ իմ շրջանը, բայց ինչ որ կար այդ շրջանում գեղարուեստական համարուած՝ ես եօթը տարեկան հասակումս արդէն բոլորն էլ ամփոփել էի իմ մէջ, և այդ՝ ի հարկէ՝ իմ զարմանալի սուր յիշողութեան և ըմբռնման շնորհիւ։ Իմ բոլոր դասերս նախ քան դաս առնելս բերան գիտէի՝ կոյր աշակերտի պէս, որ կարդալ չիմանալով՝ ամեն ինչ բերան է անում, լսելով միայն։ Երբ որ կարդալ սովորեցի, էլ հարկաւոր չէր, որ ամեն ինչ դաս առնէի։ Ժամանակս էի բերան արել՝ լսելով միայն։ Շատ ծիծաղելի էր իմ

դեր սովորելը։ Գրերի անունները գիտէի առանց նրանց ճանաչելու, փոխերն առում էի առանց բառերը ճանաչելու։ Տառերի և բառերի վրայ չէի կարողանում կանգ առնել, չէի կարողանում ուշքս կենտրոնացնել նրանց վրայ, ոստոստում էի ճնճղուկի պէս։ Սրա համար իմ ուսուցչուհին մի բարբարոսական դաստաւութիւն հնարեց, դաս տալն սկսեց ոչ սկզբից դէպի վերջը՝ ինչպէս անգիր էի արել, այլ վերջից դէպի սկիզբը, սկսած նոյն իսկ բառերից, օրինակ՝ «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»-ը պիտի սովորէի՝ «օգնութիւն ինձ եկեսցէ ուստի ի լերինս իմ զաչս Համբարձի»... Այս հանգամանքն ինձ մի քիչ նեղը լծեց, բայց շուտով ազատուեցի և սկսեցի ամեն տեսակ գիրք կարդալ առանց բովանդակութիւնն ըմբռնելու։ Կարդացածը հասկանալու ադաթ չկար, հետաքրքրականը վարժ կարդալն էր և ես իմ վարժ կարդալովս զարմացնում էի ամենքին։ Խաղերն էլ առաջ անգիր էի սովորում, բայց երբ գիր սովորեցի, սկսեցի գրել անթիւ խաղեր։ Դրանց բովանդակութիւնը քիչ թէ շատ հասկանում էի, և շատ շուտով սկսեցի ինձանից էլ յօրինել։ Այս բանի համար ես մեծ դիւրութիւն ունէի։ Թափառական աշըղները իրանց աշակերտներով մեր տանն էին իջնում, մեր օդայումը, և շատ անգամ օրերով մնում։ Ահա այդ ժամանակ աշըղները դաս էին տալիս իրանց աշակերտներին զանազան խաղեր, մեծերին սովորեցնում էին և յօրինելու ձևը, յօրինել էին տալիս զօռով և ծեծում էլ էին սարսափելի կերպով։ Ես շատ շուտ գլխի ընկայ, թէ ինչպէս են յօրինում և սկսեցի յօրինել այն, ինչ որ չէին կարողանում իրանց աշակերտները։ Հարկաւոր չէր, որ աստուածը լինէր իմաստալից և գեղեցիկ, միայն թէ լինէր ձևաւոր, դռնաւոր և չափական։ Խաղերը յօրինում էինք թուրքերէն և ոչ հայերէն։ Հայերէն երգելու գիտակցութիւնը դեռ չէր մտել մեր աշըղների մէջ։

Ահա այս հանգամանքի շնորհիւ, ես դեռ ևս ութ տարեկան հազիւ կը լինէի, որ գիւղացոց աչքում ընկայ ընտրեալների կարգը։ Ծերերն ինձ սիրում էին, սուփրումն իրանց կողքին նստեցնում, երգել տալիս, հիանում և օրհնում ինձ, մայրերը երանի էին տալիս մօրս, հայրերը՝ հօրս։ Պառաւիկներս զարմանալի երգներ էին տեսնում ինձ համար և [illegible] մօրս, իսկ փալ-

7/XI-1922
Հ.Ս.Խ.Հ. Ազգային Գրադարան
Ս. Մայիսեանի անվան

չիքը հրաշալի գուշակութիւններ էին անում։ Գիւղի մեծերի մէջ գրագէտներ չկային, իսկ մանուկների մէջ միակ գրագէտը ես էի։ Քահանայ անգամ չունէինք, կարդ պատահած ժամանակ ուրիշ գիւղերից էինք քահանայ բերում, որոնք մաշտոցն անգամ կարդալ չէին սովորել, այնքան բթամիտ էին։ Այսպիսի մթութեան և խաւարի մէջ լուսատուին անգամ ճրագ կը թուայ։ Զարմանալի չէ ուրեմն, որ ես մի հրաշք թուայի գիւղացոց աչքում։

Երբ որ մի մանուկի ամենքը գովում և սիրում են, նրան համարում են կարգէ դուրս մի բան և զարմանում, անկարելի է, որ նա ինքն էլ չսիրահարի իր վրայ և չզարգացնէ իր մէջ այն ընդունակութիւնը, որի համար որ սիրում է ինքը։ Այստեղ արդէն զարթում է նրա մէջ ինքնազարգացման և ինքնակրթութեան ոգին։ Կարող է պատահել, որ նա մեծամտի և գոռոզանայ, իր ընդունակութիւնից վեր բաներ երևակայէ, բայց քանի որ երևակայողն ինքն է, ձգտումն իր ներսումն է, պէտք չէ նրան ոչ խենթ և ոչ մեծամիտ համարել, նա կարող է և իրականացնել այն, ինչ որ երևակայում է։

Ես շատ շուտ սիրահարեցի ինքս ինձ վրայ։ Իմ այս զգացմունքս չէի թաքցնում և պարզմտութեամբ խոստովանում էի շատերին, թէ՝ գիտէք, ես ուրիշ բան եմ, այսպէս մի նայէք վրաս, ես շատ երևելի մարդ պէտք է դառնամ։ Բայց այս պարզմտութեանս համար սարսափելի ծաղրի ենթարկուելով՝ զգացումն ծածկեցի իմ մէջ առանց իմ վրայ ունեցած կարծիքս փոխելու։ Ես քիչ-քիչ այն եզրակացութեան եկայ, թէ մարդ ինքն իրան այնպէս չպիտի ներկայացնէ ինչպէս որ ինքն է կարծում թէ կայ իրաք, այլ այնպէս, ինչպէս նրան ընդունում են։ Թող ուրիշները նկատեն, որ դու քո ունեցածդ իրքից և վիճակից բարձր ես, բայց դու մի դուրս գար քո դերից։ Այս կանոնը ես չեմ պահում միշտ։ Երբ տեսնում եմ իմ արժանաւորութիւնս ոտքի տակ ձգելիս, աղհամարհելիս՝ բողոքում եմ չարաչար և ասում. «դուք ամենքդ իմ մի եղունկը չարժէք, և այնքան ստոր էք ինձանից, որ միայն ոտքերս էք տեսնում»։ «Արութիւն և Մանուէլ» վէպը իմ ինքնասիրութեան արդիւնքն է։ Ինձ հարկաւոր էր ժամանակակից մի հերոս. ծանօթներիս մէջ ինձանից լաւը չգտայ։ Քան թէ պիտի երևակայէի և խելքիս զօռ տայի, աւելի լաւ համարեցի՝ ստուգապատում լինելու համար, բուն իրողութիւնը, իմ իսկապէս տեսածն ու լսածը վիպական ձևի տակ ձգել։

Ինձ վրայ սիրահարուելու ես ունէի և մի այլ պատճառ։ Գոռոզութիւնը և ինքնահաւանութիւնը իմ ցեղի՝ թէ մօրական և թէ հօրական՝ բնորոշ յատկութիւնն էր։ Ես չէի կարող ազատ լինել այդ ժառանգական մեծամտութիւնից։ Երևի այդ ցեղը պատճառ է ունեցել այդպիսի յատկութիւն ստանալու։ Ե՞րբ է սիրահարւում մէկն իր վրայ, անշուշտ երբ մի որ և է լաւ կողմ է ունենում, որով նա դերազանցում է միւսներին, եթէ՝ օրինակ՝ շատ գեղեցիկ է, նշանաւոր արտիստ է, երևելի ըմբիշ է, թաւադի որդի է, և այլն։

Ես շատ ուժեղ էի և օրինաւոր ըմբիշ։ Եթէ բանն ուժի ընկներ, գրաշար ժամանակս ես այնքան ուժեղ էի, որ «Կռունկ»-ի բոլոր աշխատակիցները միասին հաւաքած կարող չէին կուռս ողորել՝ այնքան թոյլ էին և վատոյժ։ Հիմա էլ որ միտս եմ բերում Պռոշեանցի, Երիցեանցի, Քօչարեանցի, Տէր-Աղէքսանդրեանի, Գարեգինի և ուրիշների թալուկ ու սիրթնած երեսները, ծիծաղս գալիս է։ Զուր չէր անցել Ֆիզիկական կրթութեանս համար իմ ուսումնառութեան ընդհատիլը, իմ սար ու ձոր թափառելս, որսորդների և այլ անտառաբնակների հետ ընկերանալս, պոլկի դուքանչու մօտ ընկնելս Աղբուլաղում, այնտեղ կրած չարքաշութիւններս, աղ կրճելս և հարիւրաւոր տակառներով միս աղելս Նամիլի դէմ պատերազմող զինուորների համար. այնտեղի անտառային կեանքս և այլն։ Վազելում, ցատկելում, մագլցելում և մենամարտելում միշտ յաղթող էի հանդիսանում և ոչ յաղթուող։ Զարմանալի կը թուայ շատերին, թէ այդ աստիճան վայրենացած մէկը ինչպէս է վիզը ճկում ձուլողի և գրաշարի ծանր լուծի տակ, անտառի ազատ արծիւը ինչպէս է կամովին վանդակի մէջ ձգում իրան։ Թող աւելի մեծ հոգեբանները մեկնաբանեն այդ երևոյթը, իսկ ես այսքան կասեմ միայն, որ այդ վայրենութեան մէջ էս ես այնպէս էի, ինչպէս մի կորուստ փնտրող, ինչպէս հէքիաթներում իր կորցրած սիրուհուն փնտրելու համար զանազան արկածների ենթարկուող մի հերոս։ Իմ սիրուհին իմ կորցրած ուսումն էր, և երբ ընկայ ձուլարան, այս է, ասացի, այն ճանապարհը, որով ես

պիտի գնամ իմ փնտրածս գտնելու, ուրիշ ճանապարհ չունէի։ Ուժ ունէի յաղթելու ամեն դժուարութեան, ամեն չարքաշութեան։ Եթէ ուժ չունենայի, շուտ կը փախչէի ձուլարանից էլ, տպարանից էլ, ինչպէս փախան իմ քանի չափ ընկերներս, որը ձուլարանից և որը տպարանից։ Այդ փախչողներից մէկն էլ հայր Բէգնազարեանցն էր, որի մասին յետոյ խօսք կը լինի սոյն պատմութեանս մէջ։

Մանկութեանս ժամանակ նուազ էի, բայց այն հասակում, երբ, ինչպէս ասում են, պատանին թափ է տալիս ինքն իրան, փոխուում են ձայնն ու գոյնը, ծլում են բեխերը, այդ ժամանակ ահա ես էլ թափ տըուի իմ մանկութիւնը, մի տարուայ մէջ կէս արշինի չափ բարձրացայ. արիւնս սկսեց եռալ և ես իմ մէջ զգացի մի անզուսպ ֆիզիքական ուժ։ Այդ ժամանակ ես ստացայ հօրս նմանութիւնը ֆիզիքապէս, ինչպէս մի խնձոր կէս արած, իսկ իմ հայրս մի քաջառողջ, վայելչակազմ, և շատ ուժեղ մարդ էր։ Մայրս ուժի կողմից մեր գիւղի մէջ մի բացառութիւն էր, որովհետև իր աննման գեղեցկութեան հետ ունէր և կարդէ դուրս ուժ՝ համարեա հաւասար հօրս ուժին։ Հայրս փոքր ինչ թխամորթ էր, իսկ մայրս սպիտակ էր ինչպէս բամբակ։ Մի դիւժին զաւակ բերաւ մայրս՝ չորս տղայ և ութ աղջիկ, որոնցից չորսն իրան էին նման, իսկ ութը՝ հօրս։ Այժմ ողջ ենք չորս եղբարքս միայն և չորս էլ քոյրս։ Եղբարքս բաժանուելով ամեն ինչ բաժանեցինք մեր մէջ։ Բաժանեցինք և մեր քոյրերին ըստ հասակի։ Իմ բաժին քոյրս Հերիքն է, որ ծանօթ է Աղբուլաղ ամարանոց գնացողներին։ Ինքը չի յայտնուում շատերին իր աղա եղբօր պատիւը պահելու համար, որովհետև աղքատ է։ Խեղճը չգիտէ, որ աղա եղբայրը խալխի նոքարն է և թէպէտ Աղայեանց է, բայց աղա չէ և չի լինիլ երբէք։ Հերիքը շատ խելօք և շատ ժրաջան տանտիկին է։ Հինգ աղջիկ է մարդու ուել իր ձեռքի աշխատանքով և հաւ ու հուն ծախելով ամարանոց գնացողների վրայ։—Իմ բարեկամներից և ծանօթներից քեզ մի՛ թաքցնիր, ասում եմ իրան,—երբ որ հարցնեն, ասա ես Ղազարոսի քոյրն եմ, այն ժամանակ քեզ աւելի կը պատուեն։—

—Է՛, ասում եմ, բա ասում չեմ, պատասխանում է քոյրս։—Երբ որ տեսնում եմ լաւ մարդիկ են, ասում եմ, բայց որ տեսնում եմ շատ

են քրքրում, ճաքճաք գալիս, նրանց ինչ լայեղ կանեմ բան ասելու...

Հերիքը Շամշուլդա գիւղումն է մարդու գնացած։ Նա իմ Մայիկօի դրկիցն է։ Մայիկօս հիմա հարսներ ու թոռներ ունի։ Միշտ հարցնում է քրոջս իմ առողջութեան մասին, բայց երբ գնում եմ այնտեղ, փախչում է ինձանից, ինչպէս նշանածը փեսայից։ Կարծես էլի նոյն երեխան է, ինչ որ քառասուներեք տարի առաջ։

Տպարանում եղած ժամանակս ես բան շատ էի գրում, բայց չէի տալել տալիս և չէի էլ ցոյց տալիս իմ բարեկամ հեղինակներին, բայց ուղարկում էի գիւղ, որ այնտեղ կարդան և լուսաւորուին։ Արդէն փորձով այն եզրակացութեան էի եկել և ասում էի ինձ, թէ քանի որ գրաշարական քոմիտոս ունիս ձեռքդ, գրիչդ մի ցոյց տար։ Բայց մէկ անգամ շեղուեցի այս կանոնից։ Այդ ժամանակ «Մեղուն» ևս մեր տպարանումն էր տպւում, որի գրաշարը իմ սիրելի ընկեր Միքայէլն էր։ Մէկ օր այնպէս պատահեց, որ ոչ Պատկանեանը և ոչ Մանդինեանը, որոնք խմբագրում էին «Մեղուն», ելեթ չունէին լրագրին տալու, ընկերս մնացել էր պարապ, իսկ լրագիրը պէտք է միւս օրը դուրս գար։ Զեռաց մի ոտանաւոր թխեցի, տըուի ընկերոջս, որ տանի Պատկանեանին։ Նա փոխել էր վերնագիրը և հրամայել շարելու։ Երբ որ տպւեց, ցոյց տըուի Աղաբէգեանին. նա հաւանեց և ասաց. «Աշխատիր, չյուսահատուիս. դու ապագայ ունիս, միայն այստեղ չմնաս, գնա Ռուսաստան։ Լսել եմ, արդէն մոտդրութիւն ունիս գնալու. գնա, մի՛ վախենար, ձեռքիդ արուեստ ունիս, քաղցած չես մնալ։ Քո գնալով մենք կը զրկուենք քեզ պէս մի շնորհքով գրաշարից, բայց հոգ չէ, քո բախտաւորութիւնը չպիտի զոհենք մեր օգտին։ Ժամանակին դու կարող ես աւելի մեծ օգուտներ տալ, ես այս յոյսն ունիմ քեզանից։ Այդ գրածիդ նշանակութիւն մի՛ տար, աշխատիր ուսումդ կատարելագործել, ես քեզ դրանով չեմ չափում, այլ քո ընդունակութեամբդ, որի չափն ու գինը դուցէ դու ինքդ չգիտես»։

Շատ զգայուն սիրտ ունէր այդ ազնիւ մարդը, այդ պատուական հայը։ Այս խօսքերն ինձ ասում էր նա յուզուած սրտով, անկեղծ սիրով, լուրջ հայեացքով։ Սաածի մէջ ոչ միայն ցանկութիւն կար, այլ և մի տեսակ հրաման, որին ինձ համար անկարելի էր ընդդիմանալ։

Յիշեալ ոտանաւորը տպւեց 1862 թուականի մայիս ամսին՝ չգիտեմ քանիսին և որ համարում։ Ես մոռացել եմ դրան ձգել իմ բանաստեղծութիւններիս ժողովածուի մէջ։

Այդ ժամանակ մեր գրողներից ինձ ամենամօտիկը պ. Ռաֆֆեանցն էր, որովհետև նա էր սրբագրում «Կռունկ»-ը, նա էր արեւելեան բարբառի դարձնում Մամուրեանի անգղիական նամականիքը և նրա միւս յօդուածները։ Մի ժամանակ կենում էինք և մէկ տան՝ տպարանի հաշուով, և ծախսարարն էլ ես էի։ Շատ անգամ ես և Ռաֆֆեանցը բաս էինք մտնում իրար հետ, որ տեսնենք մեզանից ով շուտ կը գրէ այս ինչ բանի վրայ մի ոտանաւոր։ Նա շուտ էր գրում և քանակութեամբ էլ նրանն աւելի էր դուրս գալիս, բայց յատկութեան մասին վիճում էինք, նա իրանն էր գովում, ես իմը։

Մէկ անգամ ես տպարանում չեղած ժամանակս, չգիտեմ ինչու համար, Աղէքսանդր Երիցեանը խփել էր Ռաֆֆեանցի կուրծքին, որ այդ ժամանակ բաւական թոյլ էր։ Երբ գնացի տպարան տղայքը պատմեցին ինձ այս անցքը, և ես իսկոյն բռնեցի Երիցեանին հէնց տպարանումը և ուզեցայ ծեծեմ, բայց նա շատ խորամանկ էր, և իբրև չինովնիկի տղայ, ինձ սպառնաց, թէ կերթայ հօրը կասի և ինձ բռնել կը տայ պոլիցիումը։ Պոլիցիան էլ մեր հանդէպն էր, ուր ամեն օր ռոզգի էին տալիս բռնուածներին։ Ընկերս յետ քաշեց ինձ և նա փախաւ շարունակելով իր սպառնալիքը։ Մի բան, որ Ռաֆֆեանցն ինքը կարող չէ յիշել, այդ այն է, որ մէկ անգամ նա սաստիկ ջերմ ստացաւ։ Սաստիկ տաքութեան մէջ սկսեց դէլը տալ։—Մեռնում եմ, ասաց, թուղթ տուէք՝ կտակս գրեմ։ Ռաֆֆեանցին նստեցրինք տեղումը, քամակին բարձեր դրինք, որ շիտակ մնայ, թուղթ և գրիչ տւինք, և նա սկսեց գրել։ Գրում էր ինչպէս եղեքարական գրիչ, հինգ բոպէումը թերթը լցնում էր։ Մէջ ընդ մէջ ուշքի էր գալիս և կրկին ցնորում։ Ուշքի եկած ժամանակ ասում էր՝ կանչեցէք Տէր Գրիգորին (Տէր-Յակոբեանց), իսկ երբ ուշքը կորցնում էր, աչքումը Տէր Գրիգորն էր երևում իբրև արդէն եկած և համբուրում էր ձեռքը՝ պաչպաչելով դատարկ տարածութիւնը։ Ես ահա այս բանն էի ունեցել ի նկատի Ռաֆֆեանցի կենսագրութեան մէջ՝ ուր ասել եմ պարզ այսպէս։ «Տեսել եմ նրան (Ռաֆֆեանցին) սաստիկ ջերմի մէջ գրելիս այնպիսի արագութեամբ, որ մի քանի բոպէի մէջ ամբողջ թերթեր էր լցնում, բայց ի հարկէ անկապ և անմիտ բաներ»։ Լրագրերն այնպէս բացատրեցին իմ այս գրածը, որ իբր թէ ես ասել եմ՝ «Ռաֆֆեանցը թէև շատ արագ է գրում, բայց գրածներն անմիտ բաներ են լինում»։ Ինքը Ռաֆֆեանցն էլ եկաւ վրաս կռիւ, թէ դու ինչու՞ ես այնպէս գրել, որ նրանք ծուռ հասկանան։—Հոգիս, ասացի, ես ինչ մեղաւոր եմ, որ նրանք ուղիղ հայերէնը չուզենան ուղիղ հասկանալ։

Պէտք է ասեմ, որ ես Ռաֆֆեանցին յիշում եմ դեռ ես Ներսիսեան դպրոցում, երբ նա վերջին դասատանն էր, և անկարելի է չը յիշել, որովհետև մեր վարժապետները բոլոր աշակերտներիս մատով էին ցոյց տալիս նրան, որ դպրոցի ծաղիկն էր և ամենից յառաջադէմը։ Ինչպէս ես մեր գիւղումը իմ հասը չունէի, այնպէս էլ Ռաֆֆեանցը Ներսիսեան դպրոցում չունէր իր հասը, բայց այդ դպրոցի շնորհքը չէր, այլ իր տաղանդի, իր ստացած մանկական հարուստ պաշարի, իր մայրենի լեզուի։ Դպրոցի ուղղութիւնը երեւում էր աւելի Մուրադեանի մէջ, որի իդէալը մի կողմից Յակոբ վարժապետն էր, միւս կողմից Նանշեանը, մինչդեռ Ռաֆֆեանցը նոյն ուսուցիչներին, յարգելով հանդերձ, իր մտքի ազատ թռիչքով շատ յետ էր թողել իրանից։ Ռաֆֆեանցը այսօր չի պատկանում անձնապահպանողական կուսակցութեանը, բայց եթէ քէֆարկելու լինինք, մեծամասնութիւնը նրանց կարգը կը ձգէ, և ինքն էլ այդ կը համարի յերկուց չարեաց փոքրագոյնը։ Ռաֆֆեանցի յետ մնալու պատճառը նրա վատառողջութիւնն էր, նրա կուրծքի թուլութիւնը. եթէ դա առողջ կազմուածք ունենար, կերթար իր ուսումը կատարելագործելու և մենք այսօր կունենայինք շատ նշանաւոր մատենագիր։ Տկարութիւնը նրան կաշկանդեց, նա մնաց մի կէտի վրայ կանգնած. այսօր էլ նոյնն է, ինչ որ էր երեսուն տարի առաջ. այդպէս է նայում և ուրիշների վրայ։ Այսու ամենայնիւ Ռաֆֆեանցը մեծ ծառայութիւն է մատուցել ազգային գրականութեանը և կրթութեանը, և ազգը պարտական է նրան պահպանելու, պարտական է ապահովելու նրա ծերութեան օրերը կենսաթոշակով։

VI

Նախընթաց երկու գլխները միջանկեալ էին, դրանք կարող էին և չլինել, բայց ես օգտակար համարելով դուրս չձգեցի: Եթէ մէկի կենսագրութիւնը կրթական ոչինչ չի պարունակում իր մէջ, չարժէ գրել: Դառնանք ուրեմն մեր պատմութեանը:

Մոռել եմ ձուլարան, այնտեղից տպարան. գիտեմ երկու արհեստն էլ, ստանում եմ լաւ ռոճիկ, պատիւ, սէր, օրը մէկ միջնորդ է գալիս մօտս և մեծ օժիտով սիրուն աղջիկ առաջարկում, առասպելական խոստումներ անում—բախտ, երջանկութիւն, անկախ դիրք, փառաւոր ապագայ:

—Բայց, պարոն, իմ ինչին էք թամահ անում, որ այդքան բաներ էք խոստանում, ասացի մէկ անգամ:—Ես մի գիւղացի, մի հասարակ արհեստաւոր, անտուն, անտեղ...

—Ով գիտէ, պատասխանեց միջնորդը,—հալբաթ ղըսմաթի բան է, բախտ է, ճակատի գիր է: Քեզ շատ են հաւանում. լաւ բոյ ու բուսաթ ունի, ասում են, ջանով է, ճակատը բաց, ասողով տղայ է. ամենքը քո գովասանքն են անում: Սկանդար օղլանը մի խաղ է շինել քեզ վրայ, քո գովքն է արել. ասում է՝ գիպ սուտ են, Աղայեանցի հատը ոչով չկայ: Ինչու ես ուրեմն զարմանում:

Այս գայթակղական հանգամանքներից կը նըլաճուէր իմ ուսման սէրը, եթէ այդ սիրոյ վրայ աւելացած և աճած չլիներ իմ մէջ և հայրենիքի սէրը: Դրա նիւթն ունէի ես, բայց մի բարեպատեհ հանգամանք պէտք էր, որ վառուէր և բորբոքուէր: Խրիմեան Հայրիկը մի երկնային շանթով վառեց իմ մէջ այդ նիւթը: Մէկ անգամ այդ սէրը վառելուց յետոյ՝ էլ ոչ մի աղջկայ սիրով նրան հանգցնել կարելի չէր, մանաւանդ որ այդ սէրը չկար էլ մեր աշխարհքումը: Ինչ սէր կարող էին տալ միջնորդները: Մեզանում աղջկանը ոչ թէ սիրում և ուզում էին, այլ շատ շատ՝ հաւանում և ուզում, կամ նրա բերածին թամամ անում և ուզում: Այլ բան կը լիներ, եթէ ճշմարիտ սիրահարութիւն լիներ. այն ժամանակ դեռ չգիտեմ կարելի կը լիներ արդեօք այդպիսի սիրոյ ճանկերից ազատուել յօգուտ ուսումնասիրութեան և հայրենասիրութեան:

Հայրիկի քարոզը ես առաջին անգամ լսեցի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցումը: Կանգնած էի առջևի կարգումը: Դեռ չէի տեսել Հայրիկի պատկերը: Երբ որ բարձրացաւ բեմի վրայ և հայեացքը ձգեց ժողովրդի վրայ, դեռ ևս ոչինչ չխօսեցած՝ սոսկ այդ հայեացքը ինձ վրայ մի չլսած ապաւորութիւն գործեց: Մեծն Ներսէս, Սահակ Պարթև և սուրբն Մեսրոպ վայրկենապէս պատկերացան երևակայութեանս մէջ իբր կենդանացած և առջևս կանգնած: Սիրտս լցուեց, բուկս խեղդուեց, քիչ մնաց բղաւեմ—վայ, օգնեցէք, մեռայ... Բայց ամենայն ուժովս զսպեցի ինձ և տեղս ու տեղս չոքեցի, գլուխս դրի գետնին երկու ձեռքիս մէջ և խեղդուած հեկեկանքով յորդ արտասուք թափեցի: Նա սկսեց խօսել, բայց ես չէի իմանում ոչինչ, իմ հոգին իր բոլոր զգացումներով թռել էր Հայաստան:

Ահա այս ժամանակից իմ առաջան ցաւերի վրայ աւելացաւ և այս ցաւը և ինձ համար անբուժելի դարձաւ: Ասուածսիրութիւն, հայրենասիրութիւն և ուսումնասիրութիւն երրորդութեան պէս միացեալ ուժով տիրեցին իմ ամբողջ բնութեանը, այլ ևս ուրիշ զգացումների տեղի չտուին: Աշխարհային փառք, պատիւ, վայելչութիւն բոլորովին ոչնչացան ինձ համար:

Այս դէպքից մի տարի անցած՝ Գարեգին Սրուանձտեանը կրկին եկաւ Թիֆլիս Հայրիկի պատուէրով՝ ապառիկներ ժողովելու համար: Նրա հետ էր և Միքայէլ Ալէքսանեանեանը՝ այժմեան հռչակաւոր Ռուբինեանը: Այդ Միքայէլին ես չհաւանեցի, և ասացի Գարեգնին.—Սրան ինչու ես բերել, ձեր գպրոցի անունը կոտրելու համար:

—Ուղիղ է ճանաչողութիւնդ, ասաց, Հայրիկը նոյնպէս հաւան չէ սրան և գիտութեամբ հեռացրեց: Վերադարձին պիտի արձակէ:

Գարեգինը՝ իբրև նախածանօթ, մի քանի օր մնաց իմ սենեակումս իբրև հիւր: Ինչ օդային ամրոցներ ասես, որ չշինեցինք այդ մի քանի օրւայ մէջ: Նա ինձ առաջարկում էր, որ հետը երթամ Վարագ, ես չհամաձայնեցի և իրան համոզեցի, որ Վարագ գնալուց առաջ ինձ հարկաւոր է երթալ ուսումս և արհեստս կատարելագործել, այժմեան ունեցածովս օգտակար լինել չեմ կարող, և ազնիւ խօսք տուի իրան, որ վերադարձիս անպատճառ երթամ Վարագ:

Բայց ինչպէս պիտի իրագործէի ես իմ այս ցանկութիւնը։ Բարերար գտնել կարելի չէր, իմ նպատակին ես պիտի հասնէի իմ սեփական աշխատանքով։ Բարերարներ հիմա էլ հազւադիւտ են, իսկ այն ժամանակ բնաւ չկային և եթէ լինէին էլ, ով կը գժւէր՝ դըպրոցներում փառաւոր վկայականով ուսումն աւարտած ուսանողներին թողած՝ բարերար հանդիսանալ մի գրաշարի։ Բայց պ. Էնֆիաճեանցը կարծում էր որ կարելի է և ինձ խորհուրդ չէր տալիս առանց օժանդակութեան երթալ մի օտար աշխարհ։ Նա աշխատեց Ռ. Նագիրեանցին համոզել, որ ինձ հեռը տանէ մինչև Մոսկւա և նիւթապէս էլ օգնէ, որքան կարող է։ Նագիրեանը համաձայնել էր, Համբարձումն աղան էլ ինձ ուրախացրեց այդ նոր լուրով, բայց Նագիրեանը փոխեց իր միտքը, առարկելով, որ նոր մարդ աւելցաւ և կառքումն ինձ համար տեղ չի լինիլ։

—Եկ այլ ևս մի գնար, ասաց պ. Էնֆիաճեանցը։ Հանիր գըլխիցդ այդ ցնորքը։ Ես կը խնդրեմ պ. Աղաբէգեանին, որ քեզ դասեր տայ Ֆրանսերէնից, ռուսերէնի վարժապետ էլ կը գտնեմ, լաւ վարպետներ բերել կըտամ տպարանի համար և այստեղ կը ստանաս քո ուզածդ։

Այս բանը ես ասացի պ. Աղաբէգեանին։—Ոչոքի մի՛ լսիր, պատասխանեց նա,—ինչ որ այնտեղ կը սովորես միայն տեսնելով ու լսելով՝ այստեղ ամենալաւ վարժապետներից անգամ չես կարող սովորել։ Գնա, մի՛ վախենար, յոյսդ Աստուծոյ վրայ դիր և ոչ հարուստների, դրանցից քեզ օգուտ չկայ։ Գնա, Տէրը քեզ հետ կը լինի միշտ։

Երբ որ վճռուեց իմ գնալը, իմ ընկեր Միքայէլը, որ մինչև այդ ժամանակ լուռ էր—և լռիկ բնաւորութիւն էլ ունէր հէնց—յանկարծ գլուխը բարձրացրեց և ասաց.

—Ուրեմն վճռել ես գնալ անպատճառ։

—Այո։

—Ուրեմն գնանք շէյերս կապենք։

—Ի՞նչ, ուրեմն դու էլ ես ուզում գալ։

Միքայէլը «հը՛մ» արաւ և գրաշարական քոմփոսը դրաւ սառարկղի վրայ։ Ես արդէն ազատ էի բանելուց, գնալու պատրաստութիւն էի տեսնում, իսկ Միքայէլը բանում էր։ Տպարանից գնացինք մեր բնակարանը, երկար խորհրդածեցինք և վճռեցինք միասին գնալ։

Հինգ տարի միասին ընկերութիւն էինք արել և ամենասերտ սիրով և մտերմութեամբ շաղկապուել իրար հետ։ Պարոն Էնֆիաճեանցը՝ կարծելով որ ես եմ գժւացրել Միքայէլին, վարակելով նրան իմ խենթութիւնով, կանչեց նրան և շատ խրատեց, որ չես կենայ այդ մտքից, բայց չկարողացաւ համոզել և մենք Աստուած կանչեցինք և փոստի կառքով ճանապարհ ընկանք դէպի հիւսիսային Ռուսաստան։

VII

Փոստով գնացինք մինչև Վլադիկաւկազ միայն. նոյնտեղից շարունակեցինք մեր ճանապարհը սալրանքակիր սայլերով։ Անծանօթ է մեզ երկիրը, անսովոր է կլիման, անմարս է կերակուրը, անհիւրընկալ են մարդիկ, բայց մենք գնում ենք կամաց կամաց կրիայի քայլերով, տեղ ոտքով և տեղ սայլի վրայ նստելով, զանազան արկածների ենթարկուելով։ Այդ արկածներից մէկը գրելու արժանի է իր հէքիաթական բնաւորութեամբ։

Մեր քարանը մինչև երեսուն պաւոզկաներից (սայլերից) էր բաղկացած, ամեն մէկում մի ձի միայն լծած։ Ճանապարհն այնպէս հարթ էր, որ քառասուն փութ բեռան համար մի ձին էլ շատ էր։ Քարաւանապետը մի հայ էր՝ Պոլիֆէմի պէս միականի, բայց մեզ վերցնողը ամենից խեղճն էր։ Հայի ջիգրը եկել էր, թէ ինչու իրան չենք վարձել։ Սակարգել էինք մինչև Ստաւրոպոլ։ Այդ Պոլեֆիմն ահա մեզ շատ էր նեղացնում և ջիգրեցնում արհամարհելով, արմեաշկա անուանում և մեր կողքից անցնելիս թէ ինձ և թէ ընկերոջս հրնդում ու ծիծաղում, իբր թէ հանաք է անում։ Մեր պաւոզկապանը բարկանում էր վրան, յանդիմանում, բայց նա աւելի էր կատաղում նրա ջգրու։ Մէկ անգամ էլ, երբ պիտի մօտովս անցնէր, ես պատրաստուեցայ, և հէնց ուզեց հրնդել, ես այնպիսի մի զարկ տըւի ոտքովս, որ նա բերանքսիվայր փռուեց գետնի վրայ։ Նա վեր կացաւ և ուզեց բռնել ինձ, բայց ես սպառնացի, ասելով. «Զմոտենաս, եթէ ոչ՝ խանջալս փորըդ կը կոխեմ։ Ուզում ես ուժըդ փորձել, ես պատրաստ եմ. առաջներիս դվորումը կոխ կենանք, տեսնենք ով ում կը յաղթի»։ Լաւ,—ասաց ռուսը,—ես քեզ կը սովորեցնեմ, թէ ինչ կը նշանակի վայր դցել։ Բոլոր ընկերները սկսեցին ծաղրել իրանց հային, և վախկոտ անուանելով՝ աւելի գրգռեցին իմ

դէմ, մինչև հասանք դուրը (քարանի կայարան), ուր իջնում և կերակրւում էր քարանը։ Այստեղ մէջ խառնուեց գործին դուրի տէրը և ասաց ինձ.—Յաղթուողը պէտք է մի վեդրո օղի առնի. եթէ դու յաղթես, սրա փոխարէն ես կը տամ մի վեդրո, իսկ եթէ յաղթես, ինքդ պիտի առնես։—Ես պատրաստ եմ, ասացի, թող դուրս գայ։

Ես չգիտէի, թէ ռուսներն ինչպէս են կռչում։ Վրաստանի սովորութեամբ երկու ձեռքով խաչմէրուկ բռնեցի օձիքից և աջ ծունկս յանկարծ գետնին խփելով՝ ուսիս վրայով մեր հսկային կլոխպուզ արի այնպէս, որ առաջ գագաթը դիպաւ գետնին, յետոյ մէջքի վայր փուլեց գետնին ահագին թրմփոցով։ Սարսափելի էր հարուածը, բայց վեր կացաւ տեղիցը և բողոքեց, թէ այդ սատանութիւն է և ոչ կռչել. պէտք է կռչել իրանց օրէնքով։

—Ոչ, ասացի, կռչելու մէջ օրէնք չկայ, այլ միայն ուժ և ճարտարութիւն։ Ես կռչում եմ մեր օրէնքով, դու էլ կռիր ձեր օրէնքով. ում օրէնք որ ուժով կը լինի, նա կը յաղթի։—Ոչ, ոչ, բղաւեցին ամենքը միաբերան, պէտք է ռուսական ձևով կռչել, եթէ ոչ՝ դու պէտք է առնես օղին։—Շատ լաւ, ասացի, կռչենք ձեր ձևով, բայց հետու կացէք ամենքդ էլ, ոչ ոք չմոտենայ։

Ռուսական ձևով պէտք էր իրար գոտիկից բռնել և վայր ձգել միայն ուժի օգնութեամբ։ Ինձ համար այդ անհնարին էր, հակառակորդս արջի ուժ ունէր։ Բռնեցինք, քաշքշեցինք իրար և հակառակորդիս համար անհնատելի կերպով՝ մոտեցայ յանկարծ՝ իրր նրա քաշելով՝ ոտքս անցկացրի նրա երկու ոտքի մէջով և այնպէս կեռ տալի, որ բոլոր հասակովը զբրբխկաց գետնին։ Այս բանն այնպէս արագ կատարուեց, որ ոչ ոք չնկատեց, թէ ես ինչ արի։

Հակառակորդս վեր կացաւ և հիմա էլ սկսեց կռիւ։ Նա ինձ խփեց, ես իրան, բոլոր ռուսներն իրար խառնուեցան և բոլորն էլ շների պէս թափուեցան վրաս որ դզդզեն։ Այդ միջոցին Մի.քայէլ՝ չգիտեմ որտեղից՝ ճանկ դցեց մի ահագին մահակ և՝ տուր թէ կը տաս՝ մէկ սրան և մէկ նրան...

Այս կռիւն սպանութեամբ կը վերջանար, եթէ մէջ չդային անտարբեր մարդիկ և մեզ չազատէին այդ բարբարոսների ձեռքից։ Մենք արդէն մոտեցել էինք Սուաւրոպոլին, միւս օր մոտ կէսօրին պիտի հասնէինք, բայց այլ ևս հնարաւոր չէր որ դրանց հետ գնամանել ինձ, թէ ինչու եմ իւր հանգիստը խանգարել այսպիսի մի չիմար թղթով։

—Ի զուր էք բարկանում, ասացի, աղա, շատ ի զուր. ես ձեզանից ողորմութիւն չեմ ուզում, այլ աշխատութիւն եմ առաջարկում. դուք տպարան ունէք, իսկ մենք գրաշար ենք. մենք խընդրում ենք, որ մեզ ուղարկէք ձեր տպարանումն աշխատելու։ Շատ շատ, դուք կարողէք ասել, որ ձեր տպարանումը տեղ չըկայ, գործ չը կայ. իսկ ես հաստատ գիտեմ, որ կայ և գրաշարների էլ կարօտութիւն կայ։ Հայր Այւազեանը ձեզանից շատ շնորհակալ կը լինի, որ մեզ ուղարկէք։ Մեր նպատակն այստեղ գալ չէր, ինչպէս գրել եմ այդ թղթումը, այլ գնալ Մոսկուա, բայց բանն այսպէս պատահեց, մեր ճանապարհածախքը հատաւ...

Խալիպեանը, որ մի դաժան կերպարանքով ծերունի էր և հէնց այդ դէմքը բաւական էր, որ մարդ սարսափէր նրանից, բայց իմ համարձակ պատասխանը լսելով՝ հանգած հրդէհի պէս թշթշաց, խեղճացաւ և աթոռի վրայ նստելով՝ մի բոպէ մտածեց ինքն իրան և մի այսպիսի բան առաջարկեց, թէ լաւ չի լինիլ արդեօք, որ հէնց ուղղակի Մոսկուա գնանք. և սկսեց հաշուել թէ որ ճանապարհով աւելի էժան կը նստի։ Ես վախեցայ, թէ մի գուցէ Նադիրեանցի պէս սա էլ յետ առնի խօսքը, և Մոսկուա ուղարկելու պատրաստակով և ոչ Թէոդոսիա ուղարկի, այլև օգուտ քաղելով իր մեղմանալուց, ասացի՝

—Աղա, Թէոդոսիա գնալն աւելի ձեռնտու է, որովհետև դրա համար հարկաւոր է մեզ միայն տասը մանէթ. առաջ ուղարկեցէք մեզ Թէոդոսիա, ուր կարող ենք ճանապարհածախք վաստակել. եթէ դուք կամենաք, այնտեղից էլ կարող էք օգնել մեզ։

—Շատ լաւ, ասաց, «այդպէս անենք»։

«Այդպէս անենք», որպէս թէ ինքն էլ է մեր օգտի վրայ մտածում։ Վերջապէս ցանկալի տասը մանէթը բերաւ և մենք գնացինք Թէոդոսիա։

VIII

1862 թուականի ամառն է։ Հայր Այւազեանի ամենափառաւոր ժամանակն է։ Հին ուսումնարանում բազմաթիւ գիշերօթիկ

յինք։ Նոյն գիւղումը մանաւոր կառք վարձեցինք և իսկոյն ճանապարհ ընկանք։ Մեզ բերող պաւոզկապանը իր վարձն ուզեց, բայց ոչ մի կոպէկ չտւինք. ինչ որ նրան պիտի տայինք, տըւինք նորավարձ կառապանին, որ մեզ կարճ ճանապարհով թռցրեց մինչև Ստաւրոպոլ։

Ռոստով որ հասանք, մեզ մնաց միայն 12 մանէթ...

Ես իմ վաստակած փողերս հօրս էի տալիս, յոյս ունենալով՝ որ երբ կարիք ունենամ, նա էլ ինձ կը տայ, բայց նա ոչինչ չտւեց, որ ես հնար չունենամ քաղաքից հեռանալ, այլ ստիպւիմ մնալ։

—Դու նորից ուզում ես գժւել, ասաց հայրս, ինչ ունիս Ռուսաստան, այդ կորած աշխարհումը. ինչու՞ ես կորչում, որդի. տեղդ չի լաւ, թէ ռոճիկդ է քիչ. լսիր ինձ, այդպէս բան մի անիր։

Մայրս էլ, որ միշտ ինձ էր պաշտպանում, այս բանումը համաձայն էր հօրս ասածին։ Լաց էր լինում աղիողորմ և աղաչում, որ չերթամ։

Ես սկսեցի նրանց համոզել մեծամեծ խոստումներով, թէ ես կերթամ ուսումս կը կատարելագործեմ, մեծ մարդ կը դառնամ. այնուհետև գիւղում քաշած նեղութիւններից կազատւինք, էլ եռաստւուլների երես չենք տեսնիլ, էլ մովրովը մեզ չի ծեծիլ, և այլ այսպէսակ բաներ, բայց նրանք չէին համոզւում, իրանց առջև չունէին մի այլ օրինակ, չգիտէին որ այդպէս բան կարող է լինել. ինձ վրայ նայում էին դարձեալ իբրև անփորձ երեխայի վրայ, կարծես ծնողական խնամքի և հսկողութեան, չէին հաւատում, որ իմ ունեցած ուսումս քիչ է, կարծում էին, թէ ես եմ շինում բոլոր տպած գրքերը, հեղինակը գրաշարից չէին զանազանում։

Մի և նոյն կերպով վարւեցան և իմ ընկերոջ ծնողքը։—Մենք կաշխատենք, գրանք կը գան կը տանեն, ասաց Միքայէլը, ուրեմն մնալով ոչինչ չենք կարող աշխատել, միայն զուր ժամանակ կը կորցնենք, լաւն այն է, որ ինչ ունինք-չունինք ծախենք և ինչ որ կը գոյանայ, նրանով ճանապարհ ընկնինք։ Ծախեցինք ունեցածներս և հազիւ 120 մանէթ գոյացաւ, որից մի քանի մանր ծախքեր արինք ճանպի վերաբերեալ, մնաց 75 մանէթ. դրանով էլ ճանապարհ ընկանք։

Ռոստովից 12 մանէթով ճանապարհ ընկնել դէպի Մոսկւա,

կարելի չէր։ Մտածեցինք տեսակ-տեսակ հնարներ և վերջը մի հնարի վրայ կանգ առանք։ Վճռեցինք գնալ Թէոդոսիա՝ Խալիպեան տպարանը, այնտեղ ճանպի ծախք աշխատել և ապա ճանապա ընկնել դէպի Մոսկւա։ Գնացինք նաւը և տոմսակ առինք մինչև Թայղան, ուր մեր բոլոր փողից մեզ մնաց միայն մէկ մանէթ, քառասուն կոպէկ։ Չընայած այս բանին, ես իմ կողմից շատ անհոգ էի. իմ անհոգութիւնն ազդում էր և Միքայէլի վրայ։ Ես այդ ժամանակ զեռ չէի կարդացել Սէրւանտէսի երգիծաբանութիւնը, և լաւ է, որ չէի կարդացել։ Երբոր կարդացի, միտս եկաւ մեր ճանապարհորդութիւնը. ես և Միքայէլն էլ նոյն էինք, ինչ որ Դոն-Քիշոտն ու իւր Թիկնապահը։

Թայղանումը մի առաւօտ շատ վաղ վեր կացանք և գնացինք Ծովափ լողանալու։ Յունիսի վերջերումն էր։ Հասանք Ծովափ թէ չէ, Միքայէլը բացականչեց.—Նայիր, նայիր, Ղազարոս, ձկները Ծովից դուրս են եկել, որ արածեն։

Յիրաւի, ջուրը նոր յետ էր քաշւել յանկարծ և ափի քարաղաթերում թողել անհամար ձկներ, որոնք թպրտում էին զեռ ևս կենդանի.—Ա՛յ հրաշք, ա՛յ ճանպի ծախք, ասացինք և սկսեցինք հաւաքել և մի ահագին կոյտ կազմել։ Ես մնացի կոյտի մօտ, իսկ Միքայէլը գնաց, որ բազարից մի մշակ բերէ և աման, որ ձկները տանենք ծախենք։

Մշակին 30 կոպէկ տւինք, իսկ բոլոր ձկները ծախեցինք 20 կոպէկով... Այս մեզ համար մի լաւ դաս եղաւ, որ էլ միւս անգամ ձկնորսութիւն չանենք, բայց այնքան խնդացինք, որ առնւազն էլի մի 10 կոպէկ կարժէնար, որ ասել է մեր վնասը յետ ստացանք։

Այդ ժամանակ Թայղանումը բնակում էր մի աւելի մեծ ձուկը, կատարեալ Լեւիաթան, որին կարող էինք աւելի թանգ ծախել... Հ. Այւազեանի վրայ։ Դա էր աղա Յարութիւն Խալիպեանը։ Որպէս զի չասեն «աղան տանը չէ», ես մի թուղթ գրեցի, որի մէջ մեր նպատակը յայտնելով՝ խնդրեցի, որ մեզ ճանպի ծախք տայ մինչև Թէոդոսիա և գրէ հայր Այւազեանին որ այդ փողը մեր վարձից դուրս դայ։

Թուղթս ներս գնաց, ես մնացի կանգնած պատշգամբի վրայ։ Մի քառորդ ժամից աղան դուրս եկաւ և ուղղակի սկսեց յանդի-

աշակերտներ կան թալուկ դէմքերով, իսկ նոր ուսումնարանի հոյակապ շէնքն արդէն աւարտուած է. մնում է ներսի սարք ու կարքը. հիմք է ձգուած և մի եկեղեցու։ Տպարանը շատ հարուստ է, բայց էլի շատ ծախք է պահանջւում Վենեցեանի հետ մրցելու համար։ Միակ մարդը, որ դրանց մաղձը խառնում էր ստէպ, բռնուեց հէնց մեր այնտեղ եղած ժամանակ, էլ դրանց քէֆին քէֆ չէր հանիլ։ Տեսնելու էր, թէ ինչքան ուրախացան, ինչ խնջոյք սարքեցին, երբ Խալիպեանից հեռագիր ստացուեց, թէ՝ «բռնուեցաւ մեր թշնամին»։

Մենք իջանք մի սրճարանում։ Առանձին սենեակ չը վարձեցինք, որ ծախք շատ չունենանք. հէնց այնտեղ, որտեղ յաճախորդները դիշերը մինչև լոյս խաղում ու խմում էին և ահագին աղմուկ բարձրացնում թէ երգելով և թէ կուռելով, մենք հէնց այդտեղ էլ պառկում էինք դիշերները մի-մի նստարանի վրայ և քնում էինք այնպէս անուշ քնով, որ բնաւ չէինք իմանում, որ մեզ մօտ աղմուկ բարձրացողներ կան։ Ով որ առաւօտեան ժամը հնգից մինչև երեկոյեան ժամը ինը ոտքի վրայ կանգնած կաշխատի, կէսօրին մի ժամ միայն կը նստի ճաշելու համար, նա էլ մեզ պէս անուշ կը քնի։ Ես չեմ կարծում, որ Այւազեանը կամ Խալիպեանը իրանց փառաւոր ննջարանում մեզ պէս անուշ ու հանգիստ քուն ունենային։

Քաղաք հասանք թէ չէ՝ ես գնացի հ. Այւազեանի մօտ։ Ներս մտայ, ձեռքը համբուրեցի և նստեցի մօտը, չսպասելով, որ ինձ հրաւիրէ նստելու։ Սկսեցի պատմել, թէ ուր ենք գնում, ինչու համար և ինչպէս եկանք այստեղ։ Հէնց այս միջոցին ներս մտաւ Յ. տէր-Աբրահամեանցը, որ տպարանի գլխաւոր գրաշարն էր։ Ներս մտնելիս նա դուռը կամացուկ չեռ դրաւ, որ փայտը ցաւ չզգայ. հէնց այնտեղ էլ կանգնեց, և այնպէս խոր գլուխ տուաւ, որ քիչ մնաց գլուխը յատակին դիպչի. յետոյ մի քանի քայլ յառաջ եկաւ, դահլիճի մէջ տեղը կանգնեց, մէկ էլ այդտեղ երկուսակուեց մէջ տեղից, մեխուեց տեղն ու տեղը, ոտքերը զինուորի պէս իրար կպցրած և երկու ձեռքը սրտին դրեց ինչան հայկական խոնարհութեան։

Վարդապետը նրան մի քանի պատուէր տուաւ, և հրամայեց, որ մեզ էլ գործ տայ տպարանումը։ Այս տեսարանին ներկայ լինելով ես սկսեցի մտածել, թէ անքաղաքավարութիւն չարի՞ արդեօք, որ առանց հրաւիրելու նստեցի մօտը։ Ի հարկէ անքաղաքավարութիւն էր և մինչև անգամ յանդգնութիւն։ Այս անքաղաքավարութիւնը և յանդգնութիւնը ես սովորել էի մեր Պռօշեանցից. նրա համար մեծ ու փոքր չկար և այսօր էլ չկայ. ամենքի հետ վարւում էր ինչպէս իր հաւասարի հետ։ Բայց Տէր-Աբրահամեանցի վարմունքն էլ Պռօշեանցի վարմունքի ստորին ծայրն էր. եթէ յանդգնութիւն է վերին ծայրը, զզուելի է ստորինը։ Այդ ժամանակ ես ինձ երազել անգամ չէի կարող, որ Երուսաղէմի գերագահ պատրիարքը իր հրաւէրքին ինձ իր կողքին կընստեցնէ, իսկ ինձանից վար մեծամեծ եպիսկոպոսներին և կոնսուլներին։ Ճշմարիտ է, մէկ անգամ ես արժանացել էի գեներալ Հախվերդեանցի կողքին նըստելու, բայց այդ պէտք է վերագրել նրա ծայրայեղ մարդասիրութեանը և այն բանին, որ հարկաւոր համարեց ինձ պէս մի վայրենուն պատսպարել իր պաշտպանութեան տակ, որ չըլսրտնեմ։ Այւազեան վարդապետն անմատչելի էր իր ստորադրեալների համար Թէոդոսիայումը. նա իր փառքի վերին ծայրումն էր և ձգտում էր աւելի ևս բարձրանալու։ Այսպէս չէր նա Թիֆլիսումը իր եպիսկոպոս և առաջնորդ ժամանակ. շատ էր խեղճացել և դառել դիւրընտել։ Նա կուչ էր եկել Մանկունու պէս մի գեղացի ձեռքի մէջ։ Թէոդոսիայումը նա թէև վարդապետ, բայց առաջնորդ էր և առաջնորդ անսահման և անկախ միապետական իշխանութեամբ, գտնուելով միապետի անմիջական պաշտպանութեան տակ։ Առաջնորդ, ռեկտոր, խմբագիր երեք պարբերական թերթերի, գրաքննիչ էլ ինքը, Խալիպեանի հարստութիւնն իր ձեռքին, բարձրագոյն հովանաւորութիւն և բարձր կապեր և յարաբերութիւն։ Այս դիրքի մէջ նա այնքան զօրացաւ, որ չուզեց խոնարհիլ իր հովւապետին—Մատթէոս կաթողիկոսին, որի դէմ մինչև անգամ մի շրջաբերական բողոք հրատարակեց իր թեմի մէջ, բայց սրբազոյս կաթողիկոսը կարողացաւ նրա եղջիւրները ջախջախել և նախկին Այւազեանին շինել մի խրթիլակ։

Թէոդոսիայումը մենք մնացինք ամբողջ ամառը և բոլ լողացանք Սև ծովումը։ Ես լող գիտէի, իսկ Միքայէլը չըգիտէր. նա կանգնում էր ափին մօտիկ, իսկ ալիքները մէկ ընկնում էին ոտքի

տակը, մէկէլ բարձրանում գլխովն անցնում։ Մէկ անգամ վստահացաւ եռևիցս լողալ դէպի խորը, մէկ էլ տեսնեմ Միքայէլը չի երևում։ Յանկարծ գլուխն երևաց, մէկ էլ ծածկուեց ալիքի տակ։ Շուտ հասայ և բռնել աւի ինձանից։ Միքայէլը վախեցաւ, բայց ես աւելի ևս։ Այս դէպքից յետոյ վերջ տուինք մեր լողանալուն։ Մէկ անգամ էլ սրճարանում մեզ կալանաւորեցին և բանտարկեցին երկու ժամի չափ։ Զըգիտէինք ինչ էր պատճառը, բայց շուտով իմացանք։ Նկարիչ Այւազովսկու տունը գողեր էին մտել և նրա տան կառավարչին մահացու վէրք տալով՝ յափշտակել էին թանգագին բաներ։ Գողերը չէրքէզի հագուստով էին եղել, մենք էլ այդպիսի հագուստ ունէինք։ Բռնուածներին տանում էին ցոյց տալիս վիրաւորուածին, որ ճանաչի, բայց մենք չը տեսանք նրան։ Երբոր մեզ տարան ցոյց տալու, նկարիչ Այւազովսկին մեզ ջոկել տուաւ միւսներից և ազատել տուաւ։ Այդտեղ առաջին անգամ տեսայ ես հանճարաւոր Այւազովսկուն։ Շատ դուր եկաւ ինձ նա իր վայելչակազմ հասակով և համակրելի դէմքով։ Զըգիտեմ ինչու ազատել տուաւ մեզ. արդեօք գիտէր, որ մենք իր եղբօր գրաշարներն ենք, թէ՝ իբրև նկարիչ՝ մեր դէմքերից նշմարեց, որ մենք գողի պատկեր չունինք։

Ինչ և իցէ, բայց սրա համար նա ինձ աւելի դուր եկաւ։ Երկու Այւազովսկիները ջոկ-ջոկ աստղի տակ էին ծնուած։ Աշխարհային փառքը մէկի եռևիցն էր վազում, միւսի՝ առջևից։ Նկարիչը չէր կարող փառքի ճանկերից ազատուել, որքան էլ փախչէր նրանից, իսկ նրա եղբայրն ի զուր էր չարչարում փառքի եռևից հասնելու։

Ամառն անցնում էր. պէտք էր շտապել դէպի Մոսկուա, որ ցուրտը վրայ չը հասնի, թէև ռուսական ցրտի մասին մենք որոշ գաղափար չունէինք։ Մեր վաստակածից մենք յետ գցեցինք միայն չիսուն մանէթ, որ մի չնչին գումար էր. եթէ դրանից դուրս գային Խալիպեանի տուած 10 մանէթը, որի մասին արդէն գրել էր Այւազեանին և ես էլ էի ասել, այդ գումարն աւելի ևս կը նաւզէր։ Սրա համար ես գնացի ամարանոց Այւազեանի մօտ և խընդրեցի, որ գրէ տպարանի կառավարչին, որ նոյն 10 մանէթը չը հանէ մեզ տալիք վճարից։ «Մենք, ասացի, Մոսկուայումը կը վճարենք, ում որ կամենաք, կամ կուղարկենք ձեզ»։

Վարդապետը չէր ուզում համաձայնիլ, որով շատ ստորացաւ իմ աչքումը և ես նրան յանդիմանեցի շատ խիստ խօսքերով։—Մի նայէք, ասացի, որ ես մի գրաշար եմ. իբրև մարդ, գուցէ ձեզանից ստոր չը լինիմ. գոնէ եթէ ես ձեր տեղը լինէի, ամենայն հայրական խնամք ցոյց կը տայի մեզ պէս երիտասարդներին, որոնք թափառաշրջիկ բախտախնդիրներ և ձրիակերներ չեն, այլ նպատակ ունին ծառայելու ազգին, կատարելագործելով իրանց ուսումն ու արհեստը։ Կարծում էք թէ դուք ձեր դպրոցից աւելի պէտքական մարդիկ դուրս կը բերէք, որոնց վրայ կարժէր ահագին ծախքեր անել, իսկ մեզպէսներին անուշադիր թողնել։

Այս խօսքերիս համար ես նրան թուացի իբրև մի յանդուգն սրիկայ, բայց գլխիցը ռադ անելու համար.—Լաւ, ասաց. ես կը գրեմ Գէօղչայեան Յարութիւն քահանային, որ ձեզանից ստանայ այնտեղ։ Մի թուղթ գրեց տպարանի կառավարչին, որ 10 մանէթը չը հանէ։ Զուր չէր ուրեմն իմ կասկածս, որ ունեցայ Խալիպեանի առատաձեռնութեան մասին իր ծախքով մեզ Մոսկուա ուղարկելու համար։ Գուցէ շատերին առասպել թուայ այս բանը, թէպէտ ոչ ոքի իմ ճշմարտախօսութեան մասին կասկածելու տեղիք չեմ տուած, պէտք է այստեղ վերջացնեմ այդ 10 մանէթի պատմութիւնը։ Այդ գումարը հասաւ Գէօղչայեան քահանային, բայց մեզ յայտնի չէ, թէ նա ուղարկեց ըստ պատկանելոյն թէ ոչ։ Այս անցքից մօտ 14 տարի անցած՝ Ալէքսանդրապոլ եղած ժամանակս, Սուքիաս վարդապետը (այժմ եպիսկոպոս) ինձ հարցրեց, թէ իրաւ է, որ դուք Այւազեանին 10 մանէթ էք պարտ։—Այո, ասացի, եղել եմ պարտ և վճարել եմ, բայց դուք ո՞րտեղից գիտէք այդ բանը։ Նա պատասխանեց, թէ՝ հաւաքուած էինք կաթողիկոսի (Գէորգ) մօտ շատ հոգիք. կաթողիկոսը կարդացել էր քո բրօշիւրը Այւազեանի դէմ և նրան ջիգրացնելու համար կատակով ասաց.—Ինչու չէք պատասխանում Աղայեանցին և նրան մէկ լաւ հրահանգում։ Այւազեանը ոչ տարաւ, ոչ բերաւ, և կաթողիկոսին մի անկապ պատասխան տուաւ, թէ՝ ես Աղայեանցին դեռ Թէոդոսիայից 10 մանէթ պարտք եմ տուել, ցայսօր չի վճարել, կարժէ, որ ես նրան պատասխան տամ...։

—Շատ կարելի է, ասացի, որ տէրտէրը հասցրած չը լինի

նրան. այդ գումարը վճարել է Միքայէլի ձեռքով, բայց նրանից յետոյ առ նեազն ես տասն անգամ պատահած կը լինիմ Այւազեանին և նա ոչ միանգամ չի ասել ինձ, թէ իմ 10 մանէթն ինչու չէք տալիս։ Յետոյ կաթողիկոսն ինչ ասեց։—Մէկ կուշտ ծիծաղեց. մենք ամենքս էլ ծիծաղեցինք... ախր 10 մանէթն ինչ է, որ 14 տարում չմոռացի, արդէն դաւնօսոն անց է կացել, ասաց Սուքիասը, քահ քահ խնդալով...։

IX

Այւազեանից հեռացայ ես մի տեսակ արհամարհանքով և անբաւականութեամբ։ Այստեղ իրանք հազարներով էին կուլ տալիս անհաշիւ, իսկ մեզ տուած 10 մանէթի համար խնայողութիւն էին ցոյց տալիս։ Իբրև տնտես, շատ խեղճ էր Այւազեանը։ Արծաթասէր չէր, փող պահել չգիտէր, իր մասին խնայող էր և անհոգ, բայց ուրոշողներն ուտում էին և ահագին գումարներ էին վատնում անհաշիւ, անխնայ և անհեռատեսութեամբ։ Մեծ գիտնական էր, բայց ոչ դրական, այլ բացասական մտքով առած այդ բառը։ Լաւ է որ մարդ բոլորովին տգէտ լինի և պարզամիտ, քան թէ ամբարուած բացասական գիտութիւններով։ Այսպիսի մարդը մի ժողովրդի գլուխ անցնելով՝ նրան կը տանէ դէպի նախապատմական խաւար դարերը։ Սրանք են, որ կապկացնում են մարդիկներին և ոչ նրանք, որոնք ասում են՝ մարդը կապկից է յառաջ եկել։

—Այս մարդը շատ գիտութիւն ունի, շատ լեզուներ գիտէ, բայց խելք չունի. ինչ կասես, տղա՛ս, ասաց ինձ մէկ անգամ Գէորգ կաթողիկոսը։

—Վեհափառ տէր, ասացի,—եթէ չգիտութիւնը գիտութիւն չըհամարուի, դա և ոչ գիտութիւն ունի։ Կաթողիկոսը հաւանութիւն տուաւ ասածիս, բայց հաւատացած եմ, որ չհասկացաւ թէ ինչ ասացի ես... Ցիրաւի, հ. Այւազեանը զուրկ էր ժամանակակից գիտութիւնից և մանաւանդ կենցաղագիտութիւնից։ Ամբողջ աղգին թողած, նա մէկ հատ մարդու պոչից էր բռնել։ Որքան անհեռատեսութիւն և անձնապաստանութիւն։ «Առաջնորդ» բառը շատերին է սխալեցնում։ Ճշմարիտ առաջնորդը նա է, որ ժողովրդի առաջը չի կորցրել, նրան չի կանգնեցնել իր քիմքի ուզած տեղում,

այլ կերթայ նրա հետ ձեռք ձեռքի տուած, համախոհ և համամիտ յառաջադէմ մտքի տէր եղող մարդկանց հետ։ Բայց սրա համար հարկաւոր է, որ ինքն էլ իր զարգացմամբ նրանց գաղափարակից լինի, որովհետև տատասկից կարելի չէ թուզ քաղել։

Սեպտեմբերի սկզբներին ճանապարհ ընկանք Խրիմից խաղող տանող սայլերի հետ և զանազան նահանգներով անցնելով՝ և տեղ տեղ այլ բեռնակիր սայլեր տեղափոխելով, միակերպ տափարակ տարածութիւններ կտրելով՝ դիմեցինք դէպի Մոսկուա։ Այդ տարածութիւնը այնքան միակերպ էր, շատ տեղ ամայի և անապատ, որ մարդ շուտ կարող էր ճանապարհը կորցնել և մոլորուիլ։ Մէկ տեղ մի հոգի էր միայն մեր սայլապանը, բայց ունէր եօթը սայլ մի մի ձի լծած և կապած իրար ետևից ուղտերի նման։ Գիշեր էր և քունը տարել էր սայլապանի։ Երկինքը պայծառ էր և աստղալից։ Նայեցայ մեծ արջ աստեղատանը և տեսայ, որ մենք գնում ենք նրա հակառակ, այսինքն ոչ դէպի հիւսիս, այլ դէպի հարաւ։ Զարթեցրի սայլապանին և ասացի. «մէկ նայիր, ճանապարհդ չէս կորցրել արդեօք. դու գնում ես դէպի հարաւ, յետ յետ ես գնում։ Բուսը շուտ գլխի ընկաւ, որ իրաւ մոլորուել է։ Շեղուել էր մեծ ճանապարհից, որի ափերին տեղ-տեղ քարակոյտեր կային իբրև ուղեցոյցներ։ Սայլապանը վայրենու պէս ապշած մնաց, թէ ես ինչպէս իմացայ, որ կորցրել ենք ճանապարհը։

Նոյեմբերի կիսին մենք հասանք Մոսկուա և իջանք մի դուքանում։ Այո՛, հասանք վերջապէս, բայց վա՛յ այնպէս հասնելուն, ինչպէս մենք հասանք։ Մերկացանք բոլորովին և՛ փողից և հագուստից և հացից։

Պէտք է ասեմ, որ իմ սիրելի Միքայէլը բնաւորութեամբ բոլորովին իմ հակապատկերն էր։ Մենք մի մագնիսի երկու հակառակ բևեռներն էինք։ Գուցէ, էլ ինչ գուցէ, հէնց այդ էր պատճառը մեր օրինակը չը տեսնուած առասպելական բարեկամութեան։ Ես դիւրագրգիռ էի, իսկ նա պաղարիւն. ես շռայլ էի, իսկ նա՝ խնայող. ես անխոհեմ էի և յանդուգն, իսկ նա՝ խոհեմ և համեստ. ես անհոգ էի, իսկ նա հոգացող։ Հասակով իրար հաւասար էինք—թէ տարիքով և թէ բօյով։ Այս լաւ հանգամանք էր, որովհետև մի և նոյն հագուստը երկուսիս համար էլ միակերպ յարմար էր գալիս, նոյն իսկ մեր գլխարկներն ու կօշիկները։ Այս հանգամանքից մենք շատ

անգամ էինք օգուտ քաղում։ Իմ բնաւորութեան թոյլ կողմերն ես չէի հաւանում, իսկ նա բանի տեղ չէր դնում և տանում էր եղբայրական սիրով։ Նա նիհար էր և սակաւամարդ, բայց լերկ երեսին մի այնպիսի գեղեցիկ խաղափունջ ունէր, որ արժէր իմ խիտ և երկայն մօրուքին։ Ես ուսում ունէի որքան և իցէ և վառ ուսումնասիրութիւն, գիտէի ռուսերէն բաւական խօսել և քիչ-շատ կարդալ, իսկ նա չունէր ուսման սէր, աւելի արուեստն էր սիրում, արուեստին նուիրուած։ Նա չէր կարդում. ասում էր՝ մի և նոյն է, դու կարդում ես, յետոյ ինձ կը պատմես կարդացածդ։ Ես նրա հերոսն էի, իսկ նա իմ պահապան և պաշտպան հրեշտակս։ Ես իդէալներ ունէի և յափշտակուած էի նրանցով, հետևում էի նրանց օրինակին, մանաւանդ Բէնիամին Ֆրանկլինին, որ ամենից մօտ էր իմ սրտին. դրանցով ոգևորում էի ընկերոջս, որ նեղութեան համբերի և չը յուսահատուի։ Հիմա ժամանակն էր, որ այսպիսի հէքիաթներով սիրտ տայի ընկերոջս. և սկսեցի պատմել մեծ մարդկանց կեանքից զանազան աղէտներ...

—Այդ բոլորը շատ լաւ, բայց հաց չունինք, հաց, այսօր ի՞նչ պիտի ուտենք, ասաց Միքայէլը, որ շատ չերևակայեմ։

—Ի՞նչ անենք թէ հաց չունինք, ասացի ես։—Երևակայիր, որ շատ հաց ունինք, և քեզ բոլորովին կուշտ կզգաս։

—Շատ լաւ, մենք կերևակայենք, բայց սայլապանը չի երևակայում, իր հինգ մանէթն ուզում է, ուրեղից պիտի տանք։

—Հոգիս, դու հաւատ ունեցիր և յոյս, Աստուած կը տայ, ցոյց տալով մեզ ճանապարհը, թէ ինչպէս պէտք է գտնել հինգ մանէթի կրկնապատիկը։

Կօշիկներ չունէինք և ոչ տաք հագուստ, իսկ Մոսկուայումն արդէն ձիւն կար և ռուսական «մարոզ»։ Իմ կօշիկներս ոչ երես ունէին և ոչ տակ, իսկ Միքայէլինն երես ունէին, բայց տակ չունէին։ Հագայ ընկերիս կօշիկները, բան ուզեցի և մեր սայլապանի արմեակ վերարկուն, և այս տարազի մէջ շատ նման էի սալմասուցի խաչագողի, որպիսիք մեզ շատ պատահեցին Ռուսաստանում թափառողներից իրանց սեփական սայլերով։

Գնացի ուղղակի Լազարեան ճեմարանի տպարանը, որ այդ ժամանակ կապալով ունէր վերցրած Մամոնտովը, որ յետոյ բոլորովին գնեց։ Տպարանում գերմանացի Ֆակտորը փորձեց ինձ, որ տեսնէ իմ վարպետութեան աստիճանը. մի բան տուաւ հայերէն. շարեցի, շարածս տպեց և չը գիտեմ ուր ուղարկեց կարդացնելու. յետ բերին հաւանութիւն ստացած։—Շատ լաւ, ասաց Ֆակտորը, կարող էք գալ և գործ սկսել։ Ասացի որ փող ենք պարտ մեզ բերողին և ծախսելու էլ ոչինչ չունինք. մեզ մի 10 մանէթ է հարկաւոր կանխիկ։ Ֆակտորը մերժեց, ասելով՝ որ կանխիկ փող վճարել կարող չենք։

—Եթէ չէք հաւատում, ասացի, ահա իմ անցագիրս, կարող էք գրաւ պահել ձեզ մօտ։

—Ոչ, չենք ընդունիլ, ասաց անգութ գերմանացին սառնութեամբ և երեսը շրջեց հեռացաւ։

Գրաշարներից իմացայ Ս. Նազարեանցի հասցէն, և ուղղակի գնացի նրա սեփական տունը։ Ճանապարհին մտքումս մի լաւ ճառ պատրաստեցի և իմ ճառն ինձ վրայ այն տպաւորութիւնն արաւ, որ Նազարեանցը մեր որպիսութիւնն ստուգապէս իմանալուց յետոյ, պիտի գրկէ ինձ, ճակատիցս համբուրէ, ինչպէս երբեմն Խ. Աբովեանցը Դորպատում մի պանտուխտ հայի։ Նազարեանցը պիտի ասէ, թէ ուրեմն իմ ցանած սերմերս արդէն ձեզ պէս գեղեցիկ ծաղիկներ են բուսցրել իմ սիրելի հայրենիքիս մէջ. ուրախ եմ, անչափ ուրախ, և ինձ մխիթարուած եմ զգում։ Թող այսուհետև ինչքան կուզեն, յարձակուեն ինձ վրայ, ես այլ ևս չեմ վրդովիլ։

Տան դուռը բաց էր, բայց ես անքաղաքավարութիւն համարեցի ուղղակի ներս գնալ, զանգը քաշեցի։ Ոչ ոք դուրս չեկաւ։ Կրկնեցի մի քանի անգամ, մէկ էլ տեսնեմ մէկը բղաւելով ցած է իջնում և ասում. «տեսնում ես դուռը բաց է, ներս արի, էլ ինչու ես ինձ անհանդիստ անում»։ Եկողը Նազարեանցն ինքն էր։ Հէնց որ դէմս ելաւ և հարցրեց, թէ դու ո՞վ ես և ի՞նչ ես ուզում, ես սկսեցի իմ արդէն պատրաստած ճառը. «Երկու հայ երիտասարդ եկել ենք»... Նազարեանցն ինձ խօսքն ընդհատեց և ասաց բարկանալով՝

—Հայ, հայ, հայ... գահլա տարաք այդ հայերդ. ես ի՞նչ անեմ, որ հայ էք, կուզէք ջհուդ եղէք, ինձ համար հայը, թուրքը, մըլթոնին բոլորն էլ մէկ են»։ Այս ասաց Նազարեանցը աչքերը խփած,

մէջքի վերի մասը գլխով միասին թեքած, երկու ձեռքը թափ տալով դուրս անելու նշանով, և երեսը շրջեց ու հեռացաւ։

—Պարոն Նազարեանց, բայց դուք չը հասկացաք, թէ ես ով եմ, ինչ եմ, և ինչ եմ ուզում,—կոչեցի ես նրա ետևից, բայց նա էլ յետ չշրջեց երեսը։ Նա անհետացաւ, իսկ ես մնացի մի առ-ժամանակ տեղումս մեխուած։ Այսպիսի յուսախաբութեան կեանքումս պատահած չէի ես։ «Երևի սա «Հիւսիսափայլ»-ի խմբագիրը չէր, ասացի ես, այլ մի ուրիշ Նազարեանց, բայց աւաղ, իսկ և իսկ «Հիւսիսափայլ»-ի խմբագիրն էր, ուրիշ ով կը համարձակէր սրբազան կոսմոպոլիտութիւնը անասնական էգոիզմի հասցնել։ Եթէ քեզ համար հայն ու մլթոնին միևնոյն է, առաւել լաւ, փառք և պատիւ քո բարձր մարդասիրական զգացումներին, ուրեմն ընդունիր երկուսին էլ, սիրիր երկուսին էլ։ Բայց ոչ, դու մարդատեաց ես և ոչ մարդասէր, դու ինքնասէր ես, բայց նոյն իսկ ինքնասիրութիւնդ բանականի չէ, այլ անբանի...։»

Այսկերպ դատելով և դատապարտելով Նազարեանցին, կրկին գնացի տպարան և այնտեղ իմանալով Էմինի հասցէն, ճանապարհ ընկայ դէպի նրա բնակարանը, որ բաւական հեռու էր։ Գլուխս այնպէս էր տաքացել և սիրտս այնպէս յուզուել, որ չէի զգում ոտաբաց քայլելս ձիւնի և սառուցի վրայով։

Ես արդէն Թէոդոսիայից մի նամակ էի գրել Էմինին և հարցրել, թէ արդեօք տեղ կը լինի ճեմարանի տպարանում, և ճառաբանել էի մեր նպատակը, բայց պատասխան չստանալով՝ ճանապարհ էինք ընկել։ Հիմա որ գնացի մօտը, ասացի, որ ես այն նամակի գրողն եմ, ձեզանից պատասխան չստանալով՝ հիմա եկել ենք, ու յուսով ենք, որ դուք ինչ որ կարող էք անել՝ կանէք։ Ասացի էլ, որ ես արդէն տպարանումն էի, այնտեղ մեզ համար տեղ կայ, բայց կանխիկ փող չեն տալիս. դուք որ գրէք, յուսով եմ, որ չեն մեր ժիլ։ Նա պատասխանեց.

—Ես ձեր նամակին պատասխանեցի, որ տեղ չկայ, չգաք, որովհետև այդպէս ասացին ինձ տպարանումը. բայց որ հիմա կայ և ձեզ ընդունում են, աւելի լաւ։ Փող կը տան կանխիկ թէ ոչ՝ այդ իմ գործը չէ, բայց կուզէք ես կը գրեմ, որ եթէ կարելի է տալ՝ տան։

Հէնց այսպիսի մի թուղթ էլ գրեց Էմինը. տարայ տուի Ֆակտորին, և նա կարդալուց յետոյ պատասխանեց ինձ սառնութեամբ. «Եթէ կարելի լինէր, ես առաջ էլ կը տայի. եթէ կարելի է տալ, ինչո՞ւ ինքը չէր տալիս, երևի կարելի չէ, որ չի տալ...»։

Ես մնացի շլարած։ Այդ միջոցին մի ջահել ռուս գրաշար մօտեցաւ ինձ, քաշեց մի կողմ և ասաց կամացուկ.—Մի սրանեղիր և ոչ ոքի էլ մի դիմիր։ Համբաւաբերի գրաշարը գործը թողել գնացել է։ Մսերեանցին շատ է պէտք մի հայագէտ գրաշար. ինչ ուզենաս, հիմա նրանք կը տան. ուրեմն կարող ես ուղղակի գնալ Մսերեանցներին, իսկ նրանք կենում են հէնց մեր փողոցումը, ճեմարանի դէմ, եկեղեցու բակումը, ձախ կողմին։ Ուրեմն ցտեսութիւն, ասաց և ձեռքս այնպէս ամուր սղմեց, որ իր քնքուշ սրտի բոլոր զգացումները մի ելեքտրական հոսանքով թափեց իմ սրտի մէջ։ Ես նկատեցի, որ նա շատ յուզուած էր և իր յուզմունքը ծածկեց ինձանից՝ շուտ հեռանալով։ Այս տղան՝ Եաշան էր, որ յետոյ դարձաւ իմ և Միքայէլի անբաժան և սիրելի ընկերը։

Մութն արդէն վրայ էր հասնում։ Մսերեանցի բնակարանը թէպէտ շատ մօտիկ էր, բայց անժամանակ լինելով՝ այցելութիւնս վաղուան թողի, և շտապեցի, որ այդ բարի լուրը շուտով հաղորդեմ Միքայէլիս։

Այդ օրը երկուսս էլ քաղցած էինք։ Միքայէլս ասաց, որ ինքը հաց է կերել սայլապանների հետ. ես էլ ասացի, որ Նազարեանցի մօտ նախաճաշիկ արի, իսկ Էմինի մօտ՝ ճաշ. և լռեցինք, առանց մէկմէկու հաւատալու։ Մեր մէջ մի տեսակ սրտակցութիւն կար, և միմեանց դէմքի նայելով՝ հասկանում էինք իրար միտք։ Ուրախանալով՝ որ միւս օրը և՛ փող կունենանք, և՛ գործ, մոռացանք մեր քաղցածութիւնը և անուշ քնով քնեցինք խոհանոցի փռնի գլխին...

Իսկապէս տասն օր էր՝ ինչ որ մենք քաղցած էինք, այնքան նւազ էր մեր սնունդը։ Խարկովից հեռանալիս Միքայէլը մի պարկ լցրել էր սև հացով ու բոզկով։ Ես ծիծաղեցի վրան. այդ ինչ է, ասացի, որ առել ես, ով պիտի ուտի այդ անպիտան հացը։

Միքայէլը «հը՛մ» արաւ և ոչինչ պատասխան չտուաւ։

Վերջը բանն այնպէս պատահեց, որ այդ սև հացն ու բոզկը շաքարի ու մեղրահացի տեղ բռնեցին, այնպէս ախորժակով էինք

ուտում, ուրիշ ոչինչ չունենալով։ Անցեալ օրը վերջին կտորտանքն էինք կերել, իսկ այսօր և ոչ մի կտոր։ Եթէ ես էլ Միքայէլի պէս սակաւապէտ լինէի, մենք այս օրը չէինք ընկնիլ։ «Եկ այսօր մի մարդավարի ճաշ ուտենք», ասում էի շատ անգամ. և նա թէպէտ գիտէր, որ մարդավարի ճաշը մեզ վրայ թանգ կը նստի, յետոյ չմարդավարի ճաշ էլ չենք ունենալ, բայց խաթրը չէր կտրում։ Նա չէր ծխում, իսկ ես ծխում էի, և երբ տեսնում էր, որ ես խնայողութիւն անելու համար էժանագին պապիրոս եմ առել և ծխում եմ ղզէլով, նա առանց ինձ հարցնելու՝ լաւ պապիրոս էր առնում ինձ համար։ Իրան համար խնայող էր, իսկ ինձ համար շռայլ։

Միւս առաւօտը մի թուղթ գրեցի մագիստրոս Մսերեանցի վրայ՝ մէկ այն նպատակով, որ եթէ տանը չըլլինին, թուղթս թողնեմ այնտեղ, մէկ էլ որ՝ ցոյց տամ նոյն իսկ գրածովս, որ ես մի անգրագէտ գրաշար չեմ, այլ աւելի լաւ գրող, քան թէ շատ գրողի տարածներ, մանաւանդ որ արդէն տպուած բանաստեղծութիւն ունէի, թէև «Մեղուի» մէջ։

Մսերեանները տանը չէին և ես ուրախ եղայ, որ թուղթս կը կարդան և ըստ այնմ կընդունեն ինձ։ Ծառան ասաց, թէ որ ժամին կարող եմ գնալ պատասխանն իմանալու։ Նոյն ժամին գնացի և հայր ու որդի սիրով ընդունեցին ինձ. նստեցրին իրանց մօտ, և միմեանց ասած հաստատելով՝ հաւատացրին ինձ, որ եթէ գրաշարի կարօտ էլ չըլլինէին, մեզ դարձեալ կօգնէին իբրև արհեստասէր և ուսումնասէր հայ երիտասարդների։ Այդ մարդկանց ասածը գուցէ և ուղիղ էր, բայց ես չէի կարող հաւատալ։ Նաղարեանց և Էմին իմ հաւատը կորցրին։ Մէկ օրուայ մէջ ես շրջահայեաց և կենցաղագէտ դարձայ. մէկ օրուայ մէջ ես զգացի, թէ ուրեմն այսուհետև ինչ տեսակ մարդկանց հետ պէտք է գործ ունենամ։

Ստացայ փրկարար տասը մանեթը և մի շնչում վազեցի ընկերոջս մօտ, որ նրան ազատեմ գերութիւնից, որ թափեմ իմ կենդանի գրաւս սայլապանների ձեռից։

IX

Մենք տեղափոխուեցինք տպարանի բանուորների բնակարանը։ Լուսաւորեալ անուանուած քաղաքները այնպիսի խաւար ու

մութ անկիւններ ունին, որ Ասիայի ոչ մի խաւար քաղաք չունի։ Այն բնակարանները, որոնց մէջ կենում էին Մոսկուայի բանուորները, շատ և շատ ստոր էին մեր ամենայեռին գիւղի ախոռից և հաւաբոյնից։ Այն սնունդը, որ նրանք էին ստանում, տասնապատիկ վատ էր, քան թէ մեր շների լակն ու լափը։ Մեր բնակարանը մի սենեակ էր, որի մէջ կային երեք լայն թառեր, մէկը միւսից բարձր։ Քառասունի չափ բանուորներ և աշակերտներ գիշերում էին այդ թառերի վրայ իրանց սովորական կուտն ուտելուց յետոյ։ Վերի թառը առաստաղից ցած էր միայն երեք քառորդ արշին. այնտեղ պառկողները պէտք է սանդուղքով բարձրանային և ներս խցկուէին օձի պէս սողալով։ Ես և ընկերս տեղաւորուեցինք այդ սողունի բնումը ուրիշ շատերի հետ։ Ռուսի հոտից փախչող հայերս ամենահոտաւէտ տեղն էինք ընկել։ Ինչ անէինք, ուրիշ ճար չունէինք։ «Մինթէ սրանք էլ մեզ պէս մարդիկ չեն, ասում էինք մենք,—ինչպէս սրանք, մենք էլ սրանց հետ։ Հաշն ու ընթրիքը նախաճաշով արժէր երեք մանեթ ամիսը ամեն մի հոգու համար։ Այս գնիցը կարելի էր եղրակացնել արդէն, թէ այդ ինչ սնունդ պիտի լինի։ Այսպէս որ չըլլնի, ինչպէս պէտք է ապրէ ամնական երկու, երեք, և չորս մանեթ ռոճիկ առնողը։ Ռուսները կարողանում են այսպիսի սննդով ապրել։ Մի ահագին չուգունէ կաթսայի մէջ լցնում են խոզի ճարպ, կաղամբ, մի կտոր տաւարի միս։ Ուտելիս միսը հանում են, մանր կտրատում, ածում մի մեծ փայտէ չանի մէջ, խաշուն էլ վրան ածում, չանը լցնում դնում սեղանի մէջտեղը և չորս կողմը շարելով՝ ընկնում են դրա ջանին, կծոտելով սև հացը։ Շատ անգամ հասարակ կաս են խրպշտում և այլ անմարս բաներ, բայց ռուսները մարսում են և պարծենում էլ են դրանով, ասելով՝ «ինչ որ առողջութիւն է տալիս ռուսին, նոյնը մահ է տալիս գերմանացուն»։

Լսել էի, որ ցուրտ երկրի մարդիկն առհասարակ շատ են ուտում, կլիման այդպէս է պահանջում։ Այդ շատակերութեան օրինակը ես աչքով տեսայ սայլապանների մէջ։ Դէօրներում նրանց կերակրում էին ամեն մի հոգուց երեսուն կոպէկ առնելով՝ բայց այն պայմանով, որ տեղից դուրս գնացողը կրկին նստելու իրաւունք չունենայ։ Նախ և առաջ տալիս են կաս միայն, բայց ահագին չան

լիքը։ Դ բանից յետոյ բերում են բորշ. դրանից յետոյ ամբողջ ոչխար խորոված։ Ինչ որ դրւում է սեղանի վրայ ոչ մի մնացորդ չի թողնւում։ Այդ տապակածից յետոյ բերում են կաշա, նոյնպէս ահագին չանի մէջ։ Սրանից յետոյ մեղր և սպիտակ հաց։ Մէկ անգամ ուտողները եօթը հոգի էին։ Դրանք իմ նկատմունքով, որքան կարող էի աչքով չափել կերակուրի քանակութիւնը, այնքան կերան, որքան կարող չէին ուտել մեր երկրում երեսուն մշակ։ Ես և Միքայէլը մնացել էինք զարմացած և շատ անգամ ասում էինք՝ «սրանք օշաւ են, մեզ էլ կուտեն»։ Շատակերութիւնը ռուսին չաղացնում է չափից դուրս. ով որ չաղ չէ, կընշանակէ ուտելիքը քիչ է, որ ասել է աղքատ է. և այս պատճառով չաղութիւնը յայտնի ցոյց է տալիս ունևորութիւն. չաղ մուժիկն անպատճառ և հարուստ է, իսկ նիհարը՝ աղքատ։

Քաղաքի բանւորներին և՛ սակաւ են ուտեցնում և՛ վատ։ Ես շատ էի ցանկանում, որ իմ գդալի մէջ մաս-մաս արած մսից մի կտոր ընկնի, բայց այդ այնպէս էր յաջողում, ինչպէս գետից ձուկ հանելը։ Բատխի բան էր, մէկ անգամ յաջողում էր, միւս անգամ ոչ։ Հացն ուտելու բան չէր, այնքան վատ էր. խոզի իւղով կաշն աւելի վատ։ Ախր եթէ կերակուրը վատ էր, մեր տւած գինն էլ մի բան չէր. ինչ կարող էիր պահանջել։ Այս կեանքը ես քաշեցի մէկ ամիս միայն։ Շուտով ճամպի ծախք վատակեցինք, և ես Միքայէլին թողնելով Մոսկւայում, ինքս ճանապարհ ընկայ դէպի Պետերբուրգ։ Այդ գծով արդէն երկաթուղի կար և վեց մանէթ արժէր երրորդ կարգով գնալը։ Հասայ Պետերբուրգ և ընդունւեցի Գիտութեանց ճեմարանի տպարանումը իբրև գրաշար արևելեան լեզուների։

Կեանքումս առաջին անգամ այստեղ տեսայ կատարեալ և հոյակապ մի տպարան, ուր և պրտւում էին բազմաթիւ շոգեշարժ արագատիպ մեքենաներ և տպագրում զանազան գիտական գրւածներ մինչև յիսուն երեք լեզուով։ Որքան օտար և անծանօթ էր մի լեզու, այնքան թանգ էր նրա շարելը։ Ընդունակ գրաշարների համար դժւար չէր անծանօթ լեզուի գրերը միայն սովորել. դրա համար տպած ձեռնարկներ կային իրանց տառարկղիկների պատկերներով։ Մանելուս պէս՝ ինձ յանձնեցին մի վրացերէն ձեռագիր, և նշանակեցին երեսուն կոպէկ տառավարձ հազարի վրայ, որ էր ռուսերէնի կրկնապատիկը։ Այս գնով լաւ գրաշարը կարող էր ամսական մինչև հարիւր և հարիւր յիսուն մանէթ վատակել։

Ես ինձ ապահովացրի։ Մնում էր Միքայէլիս հոգսը քաշել և Մոսկւայի գժոխքից ազատել։ Նրա ցանկութիւնն էր ձուլարան մանել և այդ արհեստն օրինաւոր կերպով կատարելագործել։ Պետերբուրգում այդ ժամանակ ամենալաւ ձուլարանը Գերմանացի Լեմանինն էր, որին և դիմեցի ես։ Սա չէր յօժարում ընդունել, առարկելով թէ այդ բոլորը, ինչ որ ուզում էք որ ձեր եղբայրը սովորի, դրանցից շատերը մենք գաղտնի ենք պահում։ Բացի սրանից՝ մեր գործարանում գործը բաժանւած է շատ մասերի, և մէկին վարժեցնել բոլոր մասերի վրայ էլ՝ մեզ ձեռնտու չէ։

—Գիտէք ինչ կայ, ասացի. մենք չորս հազար վերստ տարածութիւն անցնելով, և այն էլ համարեա ոտքով, չենք եկել այստեղ ձեր հացը կտրելու, այլ որ այդ շնորհքը տանենք ձեզանից շատ և շատ հեռու մի մութ աշխարհ։ Իմ եղբայրս այդ գործից խամ չէ և այնքան էլ ընդունակ է, որ ինչ գործի վրայ էլ կանգնեցնէք, նա չի փչացնիլ։ Նրան պէտք է բոլոր մասերը գիտենալ, սկսած հասարակ ձուլածքից մինչև մայրերի յղկումն ու յարդարումը։ Մենք չէինք կարծում որ լուսաւորեալ և քրիստոնեայ Եւրոպան լուսաթաքոյց կը լինի և որ և է բան կը ծածկի խաւար Ասիայի համար։ Հիմա ինչ պիտի անենք մենք այսպիսի յուսախաբութիւնից յետոյ. գուցէ հարկաւոր է, որ մեծ մարդիկ միջնորդեն մեզ համար, բայց տարաբախտաբար մենք պանդուխտ ենք, ոչ ոքի չենք ճանաչում, կամ ով բանի տեղ կը դնի մեզ պէս հասարակ արհեստաւորներին։ Եթէ եղել էք երբ և իցէ մեր վիճակում, կարող էք երևակայել, թէ որքան թշւառ պիտի լինինք մենք։

Այս խօսքերն ասելիս աչքերիցս արտասուք էին թափւում... Լեմանը յուզւեց։ Բանից երևաց, որ նա էլ է մեր վիճակում եղել մի ժամանակ։—Լաւ, լաւ, ասաց, մի յուսահատւիք, գրեցէք եղբօրդ, թող գայ։ Այս ասելով վեր կացաւ տեղից և ինձ զահւէի հրաւիրեց վերև իր տանը։

Երբ որ մտանք իր սեղանատունը, ուր ճոխ նախաճաշիկ էր պատրաստւած, կանչեց երեխաներին, որ ծանօթացնէ մի հեռաւոր երկրացու հետ։ Չը գիտեմ ինչ ասեց գերմաներէն, երեխէքը մի

առանձին ուրախութիւն զգացին և քաղցր ժպիտով հրեշտակների պէս թրթռալով՝ եկան ձեռքս բռնեցին և կարծես արդէն վաղածանօթ՝ մի առանձին փայփայանք ցոյց տուին։ Կեանքիս մէջ չեմ կարող մոռանալ այն ապաւորութիւնը, որ ես ստացայ այս երկնային հրեշտակներից։ Այստեղ երևակայեցի մեր ընտանեկան խաւար ու բարբարոս պատկերը, նրա վայրենի վիճակը, և այն տարբերութիւնը գտայ, ինչ որ կայ դրախտի և դժոխքի մէջ։

Պարոն Լեմանը այսօրուանից դարձաւ իմ ամենամեծահոգի բարեկամս։ Սիրով ընդունեց Միքայէլին, շատ հաւանեց։ Ես ասել էի, որ կարող է ռոճիկ չը տալ, բայց նա ռոճիկ էլ տուաւ, տեսնելով, որ իմ վատակածը երկուսիս բաւականութիւն չի տալ։ Միքայէլն այստեղ աւարտեց իր արհեստի կատարելագործութիւնը և ստացաւ փառաւոր վկայական։

X

1863 թուականի սկզբներում նկարիչ Յ. Պատկանեանը Պետերբուրգում բաւական ապահով դիրք էր ստացել։ Նրա ձեռքին էր Ամիդիի ծխախոտի գործարանը և մագազինը և ծխախոտի մատակարարն էր (поставщикъ) Նորին Կայսերական Մեծութեան։

Նրա մօտ էր բնակում և Ռափայէլը, որ այդ ժամանակ ոչ մի գործի չէր։ Յովհաննէսն ուզենալով Կալուգայից մայրաքաղաք տեղափոխել իր հօրը, և եղբօրն էլ մի պարապմունք տալ, մի մտմուլ էր ձեռք բերել հայերէն տառերով։ Սրանց մի հայագէտ գրաշար էր պէտք, ինձ հրաւիրեցին։—Քան թէ ուռուսի տպարանն էք կնում, ասաց Յովհաննէսը, լաւ չէ հայի տպարանումը իլէք. մենք պէտմա մեր Լուսաւորչի հաւատին հատատ իլենք...

Որովհետև նոր էի եկել Հայաստանից, պարոնն աշխատում էր իր գիտցած դաւառալեզուով խօսել հետս, այլ և կրօնական գաղափարով, որ վրաս խոր ազդեցութիւն անէ և գրաւէ։ Բայց երբ ես սկսեցի խօսել մաքուր գրական լեզուով, նա զգաց, որ անտեղի էր իր փարիսեցութիւնը։ Ես ընդունեցի դրանց առաջարկութիւնը։

Մեծ պասի վերջին շաբաթներին էր։ Պիտի տպւէր Մեծին Պետրոսի պատմութիւնը և Ջատկի տօներին նուիրաբերուէր մի շատ բարձրաստիճան անձի, նրա ողորմածութիւնը հայցելու համար։

Դրանից կախումն ունէր իրանց հօրը մայրաքաղաք բերելու հրաման ստանալը։ Ժամանակը կարճ էր. պէտք է աշխատէի գիշեր-ցերեկ։ Տառերը քիչ էին և կոտրատուած, պէտք էր ջոկէլ. մտմուլը ձեռքի էր, ուշ էր հասցնում տպագրութիւնը։ Օրուայ մէջ երկու ժամ հազիւ էի քնում. մի գիշեր էլ ամենևին չքնեցի և միւս օրը առաւօտուայ տասը ժամին աչքերս արիւնով լցուեցին, էլ ոչինչ չըտեսայ և վայր ընկայ թուլացած։ Ռափայէլը եկաւ, տեսաւ իմ վիճակը և բացականչեց.

—Ափսոս, գործն ուշացաւ։

Այս խօսքը գնդակի պէս դիպաւ սրտիս, բայց ոչ մի պատասխան չըտուի։ Մտքումս միայն ասացի, թէ որքան փչացած է այս մարդը, որ իմ աչքերի համար ոչ մի ցաւ չի զգում։ Այդ բոպէից նա այնքան վատացաւ իմ աչքում, որ էլ ոչ մի բանով չէր կարող լաւանալ։

Սառը ջրով թաց արած քաթան դրի աչքերիս և պառկեցի տեղումս՝ քունս կշտացնելու համար։ Միւս օրը բաւական լաւ էի և գործն էլ հասցրի իր ժամանակին։

Այս աշխատութիւնը մի բառացի թարգմանութիւն էր ռուսերէնից, մանուկների համար շինած մի պատմութեան. բայց այս հանդամանքը ծածկեց թարգմանիչը և ճակատին տպագրեց «աշխատասիրութիւն»։

Ուրիշի գաղտնիքն իմանալը շատ անգամ փորձանք է բերում իմացողի գլխին։ Մարդասպանը հարկադրուած է սպանել և նրանց, որոնք կարող էին մերկացնել նրա եղեռնագործութիւնը։ Խորհուրդ եմ տալիս այն մարդկանց, որոնք որ և իցէ չարագործութեան պատահմամբ ականատես են եղել, զգոյշ կենալ. չասեն թէ ազատ կը մնան իրանց գաղտնապահութեամբը։ Գաղտնապահութիւնն անհնարին է. դու կասես քո մտերմին, նա էլ՝ իր, և այսպէսով ամբողջ աշխարհք կը տարածուի։ Ինձ վատաբանել և հալածել են այնպիսի մարդիկ, որոնց մաղի չափ մի ճնաս չեմ տուած։ Այս առաջ է եկել նրանից, որ տարաբախտութիւն եմ ունեցել անգիտակցաբար, անմեղութեամբ և պատահմամբ միայն նրանց զազրելի արարքները տեսնելու։ Զազրագործի ամենամեծ թշնամին իր զազրագործութեան վկան է, և լինելով զազրագործ, ոչ-

ին։ Չարժէ նրա համար մի զաղրութիւն եւս դործել, բարոյապէս կամ ֆիզիքապէս սպանելով իր մութ դործերի վկային։ Քանի քանի անմեղներ ու արդարներ զոհ են դնացել այսպիսի եղեռնագործութիւնների։ Մէկ անդամ Ռափայէլը տեսաւ իմ ձեռքում յիշեալ պատմութեան բնագիրը կարդալիս։ Այս դէպքից յետոյ իմ տստղը թեքւեց նրա աչքումը։ Բայց ես բանի տեղ չդրի այս հանդամանքը։ Նա ինձ չէր պահիլ, բայց արդէն սկսել էր «Հիւսիս» շաբաթաթերթը, ճարահատեալ պիտի պահէր, և պահում էր սիրաշահելով, որքան որ կարող էր սիրաշահել օրւայ մէջ 24 դոյն ցոյց տւող մի մարդ։ Շուտով եկաւ հայրը, և երբ որ նրան Ծանօթացայ, Ռափայէլը դարձաւ իմ աչքումն մի անմեղ, միամիտ և բարի հրեշտակ այս մարդու համեմատութեամբ։ Սրանց մօտ մնացի մի քարու չափ, առանց տարին լրացնելու և լաւ Ծանօթացայ ամենի էլ կեանքի բնորոշ գծերին, բայց ես չեմ ուզում գրել, որովհետև իմ նպատակս չէ ուրիշների կենսագրութիւնն անել, մանաւանդ որ դրանց կենսագրութիւնները զուրկ են բարոյակրթական կողմերից։ Ես չհեռացայ դրանցից, այլ փախայ, գործը երեսի վրայ ձգելով, որից յետոյ այլ ես ոչ մի յարաբերութիւն չուզեցայ ունենալ դրանց հետ։ Սրա պատճառը ի միջի այլոց և այս էր. ես մի յայտարարութիւն դրեցի և տւի տէրտէրին, որ տեսնէ և թոյլ տայ տպելու «Հիւսիսումը»։ Նա կարդաց, և՝ շատ լաւ է, ասաց, տար շարէ, բայց թերթը չելցնես, պէտք է մի բան էլ ես գրեմ։ Իմ յայտարարութեան բովանդակութիւնն այս էր թէ՝ «այս ինչ երիտասարդներս, որ Թիֆլիսից հեռացանք այս ինչ նպատակով, այժմ Պետերբուրդումն ենք և շուտով կրհասնենք մեր նպատակին, ուստի և առաջարկում ենք մեր ծառայութիւնը մեր ազգային տպարաններին—Էջմիածնի, Ղարաբաղի և Ներսիսեան դպրոցների տպարաններին»։ Սրանով ես ուզեցայ նաև ուրախացնել իմ հեռաւոր ծանօթներին և բարեկամներին։ Այս յայտարարութիւնը շարեցի, սրբագրեցի և սպասեցի, որ տէրտէրն էլ իր դրածը բերի։ Նա բերաւ տւաւ ինձ և սուս ու փուս դուրս գնաց։ Ես կարդացի, և ինչ եմ տեսնում. մի առակ և շատ խայտառակ. եթէ տպւի իմ յօդւածից յետոյ, բոլոր կարդացողներն այն եզրակացութեանը պիտի գան որ վերը դրւած յայտարարարութիւնը գլխովին սուտ է։ Ես չըշա-

ռեցի այդ յիմար բանը, այլ միայն իմն գրի, և հրամայեցի տպել։ Տէրտէրը եկաւ տեսաւ իր ոտանաւորը դէն եմ ձգել, շատ կարմրեց. չըգիտեմ ամօթից թէ բարկութիւնից. երեւի երկուսն էլ միասին կըլինէին. բայց ոչինչ չըխօսեց։ Այդ բանը ես պատմեցի Մէքայէլիս և նա այնպէս վրդովւեց, որ չնայած իր պաղարիւնութեանը, ասաց կտրական. «Էլ մի գնար այդ տպարանը, ես չեմ ուզում. դու աւելի իմ խաթրու ես գերի դառել դրանց, բայց ես հիմա արդէն ապահով եմ. Լեմանն ռոճիկս աւելացրեց. այժմ քանը հինգ մանէթ է շինել ամսականս։»

Պէտք է խոստովանիմ սակայն, որ ես Պատկանեանցի տանը շատ և շատ բան սովորեցի։ Այդ տեղ միայն հասկացայ, որ ջոկ բան է ուսումը, տաղանդը, և ջոկ՝ բարոյական զարգացումը. և թէ՝ մէկը միւսին կատարելագործում է՝ լաւին դէպի լաւն է տանում, վատին դէպի վատը։ Եթէ, օրինակ, մի գիրք պարունակում է իր մէջ լաւ և վատ տիպեր, լաւի հակումով ընթերցողը ատում է վատերին և սիրում լաւերին. իսկ վատ հակումն ունեցողը՝ դրա հակառակ՝ ծիծաղում է լաւի վրայ և աշխատում է նմանիլ վատերին։ Ներկայումս էլ ես այդպէս եմ համոզւած։ Եթէ մէկը չունի ազնիւ բնաւորութիւն կամ ժառանգապէս և կամ ինքնուրոյն, մտաւոր զարգացումը նրան չի ազնւացնիլ, այլ աւելի ևս կանազնւացնէ։ Սրա հակառակ ազնիւ բնաւորութիւն ունեցողը որքան շատ զարգանայ մտաւորապէս, այնքան շատ կազնւանայ և կըհասնի մինչև այլասերութեան աստիճանին, որ ծայրն է բարոյական զարգացման։ Բարոյական յատկութիւնները նոյնքան ժառանգական են, ինչքան և ֆիզիքականն ու մտաւորը։ Զար ծառը բարի պտուղ տալ կարող չէ։ Ուսումնասիրեցէք մէկի ծնողաց անհատական յատկութիւնները, նրանցով կարող էք և նրանց ծնունդների մասին մտաւոր գաղափար կազմել։

XI

Պատկանեաններից որ հեռացայ, ես կրկին դիմեցի ակադէմիայի տպարանը, բայց այս անդամ ինձ չընդունեցին։ «Մէկ անդամ այստեղից դուրս եկողը կրկին այստեղ մտնելու իրաւունք չունի», ասացին։ Ցիրաւի այս կարգը պահւում էր այստեղ։ Ռոճիկներիս էլ

մի յայտնի տոկոս պահւում էր խնայողական արկղում, որից կենսաթոշակ էին տալիս յետոյ՝ ծերացած և անկարող աշխատաւորներին։

Գնացի Լէմանի մօտ, նա ինձ մի նամակ տւաւ մի տպարանատիրոջ վրայ և նա ինձ ընդունեց մեծ սիրով։ Գործս լաւ էր գնում, բայց ուսումս կաղիկաղ. քիչ ժամանակ ունէի ինքնակրթութեանս համար, դատարկ ռոմաններ էի կարդում և այն էլ պատահաբար և անխտիր։ Այս միջոցին մի կիրակի օր Միքայէլս գնաց ժամ և այնտեղից մի լուր բերաւ, թէ Նազարեանցն ուզում է շարունակել «Հիւսիսափայլի» տպագրութիւնը, որ քանի ամիս էր դադարած էր, բայց գրաշար չունի։ «Հիւսիսից» լսելով՝ որ մենք այստեղ ենք, գրել է Մարտիրոս Սիմոնեանցին, որ մեզանից մէկնումէկին ուղարկէ։ Նա խօսեց ինձ հետ, ես չեմ կարող, ասացի, բայց կը համոզեմ Ղազարոսին, որ երթայ։

—Հիմա ինչ կասես, ասաց Միքայէլս, ես խորհուրդ եմ տալիս, որ գնաս. հոգ չէ, որ ես մենակ կը մնամ։

—Շատ լաւ, բայց ես ինչպէս գնամ այն մարդու մօտ, որ ինձ հետ խօսել անգամ չուզեց։

—Դու էն վախտն ուրիշ մարդ էիր, իսկ հիմա ուրիշ։ Ի՞նչ տեղից պիտի գիտենայ, որ դու նոյն մարդն ես, և եթէ իմանայ, ինքը պիտի ամաչի և ոչ դու։ Պայմանն էլ շատ ձեռնտու է։ Հազարին 20 կոպէկ, և երկու էլ աշակերտ պիտի տան։ Դու նրանց շուտ կը սովրեցնես, նրանք կը շարեն, իսկ դու քո ուսումը կը շարունակես։

Արդարև իմ ինքնակրթութեանս համար այս շատ ձեռնտու պայման էր։ Վճռեցինք գնալ, և ես իսկոյն ճանապարհ ընկայ դէպի Մոսկուա։ Գնացի Նազարեանցի մօտ իբրև նոր և նրան անծանօթ մի մարդ։ Եւ յիրաւի, ես այլ ևս այն չէի, ինչ որ առաջ։ Հիմա հագնուած եմ վայելուչ ձևով և մինչև անգամ աւելի ճոխ, քան թէ պէտք էր, ուրեմն այլ ևս չէի խրատեցնիլ այն մարդկանցը, որոնց խելքն աչքումն է և ոչ գլխումը։

Լաւ հագուստին նշանակութիւն չտուող մարդիկը մի առած ունին, թէ «Հագուստի համեմատ կընդունեն, իսկ խելքի համեմատ ճանապարհ կը ընդունեն»։ Ի հարկէ այդպէս է, բայց որ շատ անգամ էլ միայն հագուստին նայելով՝ ուղղակի ճանապարհ են ձգում, առանց

խելքի մասին մի գաղափար կազմելու, սրա դէմ ինչ ունիք ասելու։ Եթէ ես մէկ լաւ հագնուած մարդ լինէի, կարելի՞ բան է, որ Նազարեանցն այնպէս վարուէր ինձ հետ, ինչպէս վարուեց։ Ո՞վ է բացառութեան վրայ ուշադրութիւն դարձնում, մանաւանդ մեծ քաղաքներում, ուր հազար տեսակ թափառաշրջիկ բախտախնդիրներ կան։

Այս անգամ Նազարեանցն ինձ շատ պատուով ընդունեց, մօտը նստեցրեց, երկար խօսեց, բողոքեց հայերի դէմ, որ իրան չեն հասկանում, չեն գնահատում։ Խօսակցի վրայ այն տպաւորութիւնն էր գործում, որ այդ մարդը մէկ հատ է, իրանով յափշտակուած, ընդդիմախօսել կարելի չէր, և հէնց շատերին էլ, որոնք ուզեցել են մի բան էլ իրանք ասել, մի կարծիք յայտնել, Նազարեանցը այսպիսի նկատողութիւն է արել։—«Լսեցէք, եղբայր սիրելի, լսեցէք, լսելն անգամ շատ է ձեզ համար...»—Սրա պատճառն այն էր, որ իր ժամանակ հայերիս մէջ չըկար նրա չափ և նրա նման աշխատասէր մի մատենագիր։ Այդ մարդը հիմք դրաւ գրական լեզուի նոր ուղղութեան և նոր գրական դպրոց ստեղծեց, որով սարսափելի հարուած տւաւ ընդարմացած և թմրած ուղեղներին։ Նազարիանցի այս մեծ գործը դեռ ևս ըստ արժանւոյն գնահատուած չէ հայ հասարակութեան և նորագոյն գրագէտների կողմից, որոնք շատ թեթև աչքով են նայում նրա աշխատութեան և ուղղութեան վրայ։ Նազարեանցի և Աբովեանցի նմանը՞ դեռ ևս չի ծնւել մեր մէջ։ Առաքեալներ շատ ունինք, բայց հիմնադիրներ՝ և ոչ մէկը։

Մոսկուայում մնացի ես 63 թւականի վերջերից մինչև 64-ի վերջերը և այդ փոքր ժամանակամիջոցը կարելի է համարել իմ մտաւոր զարգացման ոսկեդարը։ Ինձ յանձնած աշակերտներին շատ շուտ սովրեցրի հայերէն կարդալ և շարել, թէև ռուսներ էին։ Սրանց վարձը տպարանն էր տալիս, բայց շարում էին ինձ համար։ Ես ժամանակ ունեցայ իմ ինքնակրթութիւնս մի սիստեմի տակ ձգել, պարապել որոշ ծրագրով, դիտութիւնների տարերք ուսանելով։ Այս միջոցին մի զարմանալի օգնութիւն էլ կարծես երկնից, հրաբի նման ինքն իրան եկաւ և ուղղակի իջաւ գլխիս վրայ, հեքիաթների «զովլաթ-զուշի» ասած թռչունի նման, որ ում գլխին իջնում է, նրան են թագաւոր շինում։ Մոսկուայի համալսարանից մի խումբ

ռուս ուսանողներ ձրի դասաւուութիւն էին անում զանազան գործարաններում եղած աշակերտներին և վարպետներին։ Ուսանողները իրանք վարձ էին ստանում ուրիշ տեղից։ Սակայն ամեն գործարանատէր այդ բան իրան ձեռնտու չէր համարում և թոյլ չէր տալիս։ Բայց մեր տպարանի տէրը, որ Մամոնտովն էր, ինքն ուսեալ մի երիտասարդ էր, յայտնի հարուստի որդի, ամենայն ուրախութեամբ թոյլ տուաւ։ Դասագրքերն ևս ուսանողներն էին բերում և ձրի բաժանում։ Մեզ մօտ գալիս էին չորս հոգի, ամեն մէկն առանձին առարկայի համար։ Սկզբումը սովորողներս մինչև քսան հոգի էինք, որոնց մէջ ամենից հասակաւորը ես էի։ Բայց հետզհետէ կամեցողների թիւը նուազեց և ես մնացի մենակ։

Ուսանողները ինձ վրայ առանձին ուշադրութիւն էին դարձնում, և զարմացած էին մնացել, որ քսանըչորս տարեկան մի երիտասարդ, որ նոր է սկսում սովորել, այսչափ դիւրաթեք, ճկուն ու դիւրըմբռնող միտք ունի։ Նրանք ծանօթ չէին իմ անցեալի հետ և ես էլ չէի պատմում, ուզում էի, որ ամեն ինչ այբուբենից սովորեմ թէ դասը և թէ դաս տալու եղանակը, որ ինձ համար նոյնպէս նոր էր։ Այս ուսանողները հմուտ էին ժամանակակից մանկավարժական գրականութեանը, որ նոր էր զարգանում, հետևում էին նորագոյն մեթոդներին, ունէին և դասաւուութեան շնորհք։ Երբ որ մենակ մնացի, այլ ևս տպարան չեկան, այլ ուղղակի իմ սենեակս։ Իրանք աղքատ էին և իրանց ստացած նպաստի փոխարէնն էր, որ դաս էին տալիս ձրի։ Բայց դրանցից մէկը ամենից աղքատ էր, ստացած օգնութիւնն իրան չէր բաւականացնում, վարձով դաս գնալու էլ շնորհք չունէր։ Բացի մաթեմատիկայից ուրիշ առարկայ չէր սիրում և մինչև անգամ սովորածն էլ մոռացել էր. միակողմանի էր բոլորովին։ Լեհացի էր և աղգասէր։ Այսքանը բաւական էր, որ մենք սերտ սիրով կապուէինք միմեանց հետ։ Ես առաջարկեցի, որ իմ սենեակումն բնակի և ինձ հետ ճաշի։ Մերժել չէր կարող, այնքան սրտանց էր իմ առաջարկութիւնը։

Այս ձևով իմ ուսումնառութիւնս տևեց միայն մէկ տարի, որից յետոյ ես Մոսկուայից հեռացայ, կամ աւելի ուղիղն ասեմ, փախայ Պետերբուրգ։ Սրա պատճառը հետևեալ հանգամանքներն էին։

Զանազան տպարանների յառաջադէմ գրաշարներից և ուսա-

նողներից մի ընկերական խումբ էինք կազմել։ Հաւաքւում էինք մէկտեղ և զանազան նախագիծեր կազմում, վիճում, դատում մեր խելքից շատ վեր բաների վրայ։ Այս ոչինչ. սա մինչև անգամ օգտակար էր մեզ համար և զարգացուցիչ, բայց մեր ժողովներից յետոյ խենթութիւն շատ էինք անում։ Միքայէլը մօտս չէր, որ ինձ զսպէր, գժութեան մէջ չէի ուզում ոչ մէկից յետ մնալ, այլ եթէ կարելի է, գերազանցել բոլորին։ Ուր որ գնում էինք խմբովին, մեր առաջին գործն էր լինում անկարգութիւն անել։ Տակն ու վրայ էինք անում շատ պանդոկներ և կանանոցներ մի որ և է առիթով, իսկ առիթներ այդպիսի տեղեր միշտ լինում էին և այն էլ շատ առատ։ Օտար մէկը վիրաւորում էր մեզանից մէկին, այդ արդէն բաւական էր, որ վրայ թափուէինք և աթոռ ու սեղան կոտրտէինք և ջարդէինք մեր հակառակորդների քիթ ու պռունկը։ Այդ ժամանակ այժմեան խստութիւնը չկար և մեծ նշանակութիւն չէին տալիս ոչ մեր ժողովներին և ոչ նոյն իսկ մեր անկարգութիւններին։ Եթէ երբեմն տանում էին և ոստիկանատուն, այնտեղ մի թեթև նկատողութիւն էին անում և արձակում։ Բայց ես զգում էի, որ լաւ բան չէ մեր արածը, մանաւանդ որ մտադրուել էինք ծեծել մի քանի գերմանացի ֆակտորների, որոնք շատ բարբարոսաբար էին վարւում ռուս դրաշարների հետ և նախապատուութիւն, մեծ ուռճիկ և օգտակար գործերը յանձնում էին իրանց ազգակիցներին։ Ռուսաստանի բոլոր գործարաններում ռուս սարրը սաստիկ ճնշած էր գերմանացոց ձեռքում, և միայն ռուսներն էին, որ կարողանում էին տանել այդ տնտեսական ճնշումը, իրանց վրէժը արաղի մէջ թափելով։

Մոսկուայից հեռանալու համար ունէի և մի աւելի կարևոր առիթ։ Այդտեղ ծանօթացայ մի աղջկայ հետ։ Այդ պատահեց իմ նոր բարեկամ Եաշայենց տանը։ Աղջիկը դրանց մօտաւոր ազգականն էր, շատ գեղեցիկ, քնքոյշ, լաւ ուսում առած և շատ կարդացած և զարգացած։ Ինքը մեն մենակ, ոչ հայր, ոչ մայր, բայց ապահոված էր նիւթապէս։ Այդ աղջիկը սիրահարուեց ինձ վրայ. սպասում էր, որ այսօր է թէ վաղը ես կը յայտնեմ իրան իմ փոխադարձ սէրը։ Խեղճը չէր իմանում, որ այդ խօսքն իմ բերանից դուրս գալուն պէս՝ հոգիս էլ հետը պէտք է դուրս գայ։ Սիրահարած էի և ես, մինչև

անգամ հիացած և յափշտակուած, բայց իդէալական սիրով, պաշտելու չափ։ Շատ անգամ ամբողջ դիշերներ էինք լուսացնում։ Ժամանակի ընթացքը մեզ համար զգալի չէր. մեր խօսակցութեան նիւթն անհատնելի էր։ Նա պատմում էր իր կարդացած վէպերի բովանդակութիւնը, և այդ տեղից սկսում էինք մարդկային հոգու զանազան յատկութիւնների մասին ճառել, զօռ տալով մեր երևակայութեանը, որ անսանձ կերպով թռչում էր առանց մեր կամքի։ Հոգեկցութիւն, նախազգացմունք, համակրութիւն և դլուխ ամենայնի՝ սէր՝ իր բոլոր աստիճաններով և տեսակներով մեր բացատրութեանն էին ենթարկւում, և բացատրում էինք միակերպ և միանման, լրացնելով իրար պակաս թողածը։ Խօսում էինք և բանաստեղծութիւնների մասին, թէ որի մէջ աւելի հանճար, աւելի տաղանդ կայ, կամ ինչ տարբերութիւն կայ հանճարի և տաղանդի մէջ։ Երկուսս էլ Լերմոնտովին բարձր էինք դասում Պուշկինից։ Մէկ օր նա այսպիսի մի բան ասաց. «Լերմոնտովը չըգտաւ մի հոգի, որ կարողանար բաւականութիւն տալ նրա բարձրասլաց սիրոյն. եթէ ես նրա ժամանակ եղած լինէի և նրան ծանօթ, նա անպատճառ իմ մէջ կը գտնէր իր որոնածը։» Այս ասաց նա ոչ թէ ինձ բան հասկացնելու կամ գրաւելու դիտաւորութեամբ, այլ անմեղ հաւատով և պարզմտութեամբ։

Մէկ դիշեր էլ շատ ոգևորւեց Վարվարա Պետրովնան, (այսպէս էր անունը)։ Նախ կարդաց իր գրած բանաստեղծութիւնները, որոնց մէջ նկարագրում էր իր տածած սէրը դէպի մի երիտասարդ, նկարագրելով նրա ներքին և արտաքին գեղեցկութիւնները. բայց նա փախչում է իրանից, որովհետև նրան դէպի իրան է քաշում իր տառապեալ հայրենիքը, և այստեղ բացականչում է. «չէր իմանում խեղճը, որ հէնց դրա համար էլ ես սիրում էի իրան, բայց փափագում էի, որ ինքն էլ ինձ սիրէր»։

Ես մնացի լուռ, չիմացայ ինչ պատասխան տամ։ Նա ուզեց նիւթը փոխել. մօտս նստեց դիւանի վրայ և սկսեց Պուշկինի «Կովկասի գերին» ամբողջապէս բերան ասել։ Երբոր վերջացրեց, կուռը դցեց վզովս և ճակատիցս համբուրեց, կարծես կարօտելով՝ որ մէկն էլ իրան համբուրէր նոյնքան վառ սիրով։

Մենք շատ էինք խօսել սիրոյ մասին, շատ էինք արծարծել Տուրգենևի На канунѣ վէպի բովանդակութիւնը և կողմնակի կերպով հասկացրել էի, որ ես օտար աղջիկ, մանաւանդ ռուս աղջիկ, որքան էլ որ սիրելիս լինիմ, ինձ կին չեմ առնիլ. ասել էի, թէ ինչ պատճառով։ Այժմ ես բացւեցի ձերմ համբուրի ազդեցութեան տակ և ասացի.—Վարվարա Պետրովնա, դիտէք, ես որքան շնորհակալ եմ ձեզանից։ Կեանքումս դուք առաջին աղջիկն էք, որ ձեր անկեղծ սիրովը ահագին ազդեցութիւն էք գործել իմ բարոյական և մտաւոր զարգացման վրայ։ Դուք ձեր զարգացումը անձրևի պէս տեղացրել էք իմ հոգուս մէջ։ Ձեր սիրով կենդանութիւն եմ ստացել. ձեր սիրով մեղմել, քնքուշացրել եմ իմ շատ կոպիտ բնաւորութիւնս։ Միով բանիւ՝ դուք, առանց ձեր դիտութեան, դարձել էք իմ ոգևորող մուսան։ Ես յուսով եմ, որ մեր այս յարաբերութիւնը այսպէս էլ կը շարունակւի, առանց այլ կերպարանք առնելու. ես կը լինիմ ձեր սիրելի եղբայրը, իսկ դուք իմ ամենասիրելի քոյրս...

—Այո... բացականչեց Վարինկան և թաշկինակն աչքերին դնելով՝ սկսեց հեկեկալ։ Ես համբուրեցի նրա ձեռները և սկսեցի ճառել իդէալական սիրոյ վեհութիւնն ու վսեմութիւնը, իսկ ռէալական սիրոյ ոչնչութիւնը։—Ռէալական սէրը հանդցնում է, ասացի, հոգեկան սիրոյ կրակը, բաժանում, անջատում է հոգեկցութիւնը, դադարեցնում է երևակայութեան թռիչքը, ցածրացնում է ճշմարիտ սիրոյ բարձրութիւնը, շնորհազուրկ է անում, մերկացնում. հոգեկան յափշտակութիւնից յետոյ հիասթափութիւն է յառաջ բերում։ Ես չեմ կարող իմ պաշտած աստուածուհուն զրկել իր երկնային զօրութիւնից, քանի որ այդ զօրութիւնն ինձ վրայ է տարածում. ես այդ կը համարեմ մի սրբապղծութիւն»...

Ահա այս բանից ես մտածեցի անպատճառ հեռանալ, վախենալով՝ որ մի գուցէ կրակի հետ խաղալով՝ ընկնէի մէջը ճրագի չորս կողմով թրթռող թիթեռնիկի նման։

Իմ սիրոյ այս վերջին արկածը պատմեցի ես իմ ուսանող վարժապետին՝ Սոկուլսկուն, որ շատ էր ցանկանում ծանօթանալ այդ տարօրինակ աղջկայ հետ։ Նա ասաց.—Լսիր, հոգեակս, թող այդ աղջիկը իմ իսկական կինս լինի, իսկ քո իդէալական սիրուհին պէտք է իմ

աչքումն անարատ լինի, ինչպէս հրեշտակ, մի ամենափոքր բիծը նրան սատանայ կը շինէ իմ աչքումս։

Պետերբուրգ գնալիս ես «Ճնաս բարևի» չգնացի. մի նամակ գրեցի տալ Սոկուլսկուն և Լիւյիսի Ֆիզիօլոգիան, որ Վարինկան տուել էր ինձ կարդալու, և ասացի՝ տար իրան տուր և Ծանօթացիր։

Վերջը Սոկուլսկին ամուսնացաւ Վարինկայի հետ, բայց տարի չքաշեց, ծնունդի վրայ մեռաւ խեղճը։

Երբոր մաքիս մէջ ծագում է մի բան անելու, էլ չեմ կարողանում համբերել, սպասել, աշխարհքը մթնում է դլխիս, էլ ոչ մի բան աչքիս չի երևում, ոչ մի բանի ձեռքս չի կպչում։ Մտադրուել եմ գնալ Պետերբուրգ, բայց գործը կարող էր կիսատ մնալ, իսկ այդ անաղնուութիւն կը լինէր իմ կողմից, եթէ մի իրաւացի տեղիք չունենայի։ Այդ տեղիքը տաւ ինքը Նազարեանցը։ Շարելու նիւթը ուշացնում էր։ Աշխատակից չունէր. ամեն ինչ ինքն էր գրում, ինքն էր թարգմանում, շատ անգամ ոչինչ բաներ և զանազան կեղծ անուններով։ Մի յօդուած միայն, որ կրում է «Ազգային թշառութիւն» վերնագիր, Նալբանդեանցի գրածն էր, թէև Նազարեանցի իսկական անունն է ստորագրուած։ Բոլոր շարելիքը ձգում էր ամսի վերջերին և շտապեցնում, որ ամսի վերջին դուրս գայ։ Ես հասցնում էի դարձեալ, բայց այդ օրերում զրկւում էի դասերիցս, որոնք ինձ համար աւելի թանգ արժէին, քան թէ «Հիւսիսափայլի» ամսավերջին դուրս գալը։ Մէկ օր էլ երբ այդպէս բերել թափել էր յօդուածները, և շտապեցնում էր, ես այլ ևս ուշադրութիւն չը դարձրի, դասերս բաց չըթողեցի։ Նազարեանցը գալիս է տղարան, տեսնում է որ ես չը կամ, հարցնում է թէ ուր եմ։ Նրան ասում են, որ ես դաս եմ առնում մի խումբ ուսանողներից։ Սա բարկանում է սաստիկ և ասում.—«Այդ ասիացի ախմախը ահագին կենդանի է դառել, նոր դուզում է ուսում առնել. գնացէք շուտ, կանչեցէք»։ Եկան ինձ ասացին նրա բարկութիւնը։ Ես իսկոյն գնացի ոչ թէ նրա հրամանը կատարելու, այլ իր հայհոյանքի փոխարէնը յետ դարձնելու բոլորի առջև, որ տեսնեն թէ ես Նազարեանցին թոյլ չեմ տալ ինձ անպատուել անպատիժ կերպով։ Գնացի, և կանգնեցի տաս արկղիս առջև՝ բիզը ձեռիս։ Նա դուրս եկաւ գրասենեակից և սկսեց իր յանդիմանութիւնը կոպիտ խօսքերով. ես պատասխանեցի

իրանից աւելի կոպիտ կերպով։ Նա աչքերը խփեց, ինչպէս սովորութիւն ունէր, և սկսեց ձեռքերը շարժել ինչպէս մի դերասան բեմի վրայ, որ ասածն աւելի ազդու դուրս գայ, բայց այս անգամ նրա մի ձեռքը դիպաւ իմ ձեռքի բիզի ծայրին, որ անգիտութեամբ մեկնեցի դէպի իրան՝ ուղենալով պատասխանս իր ձեռքը տալ։ Նազարեանցը վիրաւորուելով թէ իմ խօսքերից և թէ իմ խթանից, երեսը շրջեց ու հայհոյելով հեռացաւ, իր հետ տանելով և իմ հայհոյանքը, որ անխնայ իր ետևից թափեցի գլխին։

Նազարեանցը հայերիս ասում էր կոպիտ ասիացի, բայց չէր զգում, որ ասիական կոպտութիւնը իր մէջ գերանաչափ էր։ Մէկ անգամ Էմինի ու Նազարեանցի մէջ ես դարձայ մի յափշտակութեան առարկայ. այդտեղ տեսայ այդ երկու մեծ մարդկանց փոխադարձ հակայական ատելութիւնը։ Էմինը մի գիրք էր շարել տալիս ռուսերէն հայոց հեթանոսական կրօնի մասին։ Այդ գրքում տեղ-տեղ հայերէններ կային, և ինձ խնդրեց, որ ես շարեմ։ Այս բանը, որ մի չնչին բան էր, Նազարեանցին կատաղեցրեց։—«Ես իմ գրաշարիս թոյլ չեմ տալ, ասաց, որ նրա համար բան շարի»։ Եկաւ արգելեց ինձ և ասաց.—«Եղբայր սիրելի, նա մարդ չէ, այլ խոզ է, խոզ. քո տեսած խոզերից չէ, դա վատթար տեսակից է»... Ռուս գրաշարները Էմինին յայտնեցին Նազարեանցի արարմունքը։ Նա էլ եկաւ ինձ մօտ և ասաց.—«Դուք գրան ինչու էք լսում, դա խելագար է, զուրկ մարդավարութիւնից. դա որտեղ էր դեռ, որ ես ձեզ համար այստեղ հոգացի, որ տեղ տան»...

Մաքումս ասացի՝ շատ հոգացիր, շատ... երկուսիդ էլ երեք նահլաթ, ամեն մէկիդ հինգ։ Հայոց ազգի աչքը լոյս, որ ձեզ պէս գիտնականներ ունի. իբր թէ մէկդ Մովսէս Խորենացին էք, միւսդ Դաւիթ անյաղթը։

Էմինին միամտացրի ես, որ կը շարեմ, որպէս զի «ե ր ա խ տ ա հ ա տ ո ց» լինիմ։

Նազարեանցի հետ ունեցած կռուից յետոյ ես այլ ևս չէի կարող նրա հետ որ և է յարաբերութիւն ունենալ։ Այդ տարին ես շարեցի Շահազիզի Լևոնի վիշտը, և միայն այդ մարդուն սիրեցի ես Մոսկուայի հայերից։

Մեր կռիւը շատ յարմար ժամանակ պատահեց «Հիւսիսափայլ»-ի

համար։ Այդ ժամանակ Միքայէլը մօտս էր։ Զուլարանումը հիւանդացել էր, նոր եկել էր ինձ մօտ, որ փոքր ինչ կազդուրւի։ —Դու գնա, ասաց, ես մի կերպ եօլա կը տանեմ, կը շարեմ «Հիւսիսափայլ»-ը քո պատրաստած աշակերտների հետ։

XII

1864 թուականի վերջերում, ես կրկին Պետերբուրգումն էի, լաւ պատրաստուած ինքնակրթութիւնս ազատ կերպով շարունակելու համար։ Գրաշարութիւնից ազատուելու միտքը, որ առաջ ինձ համար մի ցնորք էր համարւում, քանի գնում էր՝ մօտենում էր իրականութեան։ Այժմ ես թափ էի տալ մտաւորապէս, ինչպէս մի ժամանակ ֆիզիքապէս։ Այժմ իմ մէջ զգում էի մի մտաւոր անզուսպ ուժ։ «Մինթէ ես պակաս կը գրեմ, քան թէ Ռափայէլ Պատկանեանը, քան թէ Նազարեանցը», մտածում էի ես և երևակայում էի, որ նրանցից էլ լաւ կը գրեմ։ Առաջ այսպիսի միտք չէր կարող էի, որ նրանցից էլ լաւ կը գրեմ։ Առաջ այսպիսի միտք չէր կարող պատլտուել գլխումս։ Ներքին դրդումս էլ որ չլինէր, արտաքինը բաւական էր, որ ես ձգտէի ինձանից թօթափել բանւորի սարկական շղթան։ Մենակ մեր խմբագիրների տմարդի վարմունքը բաւական էր, որ մի ազատասէր սրտի մէջ կրակ վառէր, յառաջ մղէր և այդ կախարդական շրջանից դուրս մղէր։ «Ի՞նչ հայեր են այստեղի հայերը, ասում էի ես. ինչպէս կան ռսի նեմեցներ, ռսի ջհուդներ, նոյնպէս կան և ռսի հայեր. դրանց բոլորին միմեանցից զանազանել չես կարող բարոյական կողմից։ Մէկ հայ որ չաշխատի իրանով իր ազգի անունը բարձրացնել, նրա պատիւը պահել, պաշտպանել, նա ինչ հայ է»։ Այս զգացումն ինձ մինչև դոնքիշոտութեան էր հասցնում. շատ բան անում էի միայն նրա համար, որ ինձանով իմ ազգի պատիւը չատորացնեմ, չասել տամ, թէ Աղայեանցը սովորական անպիտան հայերից մէկն է, այլ եթէ հնար է, շակեմ օտարների այդ ծուռ գաղափարը բնիկ հայերի մասին։ Այս զգացումն ու հաւատը ինձ ազատում էր շատ գայթակղական և անբարոյական դէպքերից։ Օտարների շրջանի մէջ, ընկերներիս և ծանօթներիս մէջ, ազատ կանանց և օրիորդների մէջ ես յայտնի էի, իբրև բարոյապէս անբիծ և ազնիւ մարդ։ Շատ ուրախ էի, որ գնահատւում է իմ ներքին արժանաւորութիւնը գոնէ օտարների կողմից։ Շատ շատերից եմ ստացել նոյն իսկ կանանցից և օրիորդներից իրանց լուսանկարը՝ քամակին գրած «Նուիրում եմ Ղ. Աղայեանցին եղակի շիտակ մարդուն» (единственному честному человѣку)։ Այսպէս՝ նախ քան ինձ «շնորհալի» և «տաղանդաւոր» տիտղոսներ տալը, տուել են «ազնիւ և շիտակ մարդու» տիտղոս, որով քիչ չեն խրախուսել և մխիթարել ինձ և աւելի ևս զարկ տուել իմ բարոյական զարգացմանը և շիտակութիւնը շինել ինձ համար արիւն և մարմին։

Մի պակասութիւն, որ այդ ժամանակ ես ունէի, այդ այն էր, որ ես իմ յարաբերութիւնը իսպառ կորեցի տեղական հայերից. եկեղեցի էլ չէի գնում, որ նրանց երեսը չըտեսնեմ։ Մէկ երկուսի հետ մօտ ծանօթանալով՝ և մի քանիսին էլ միայն հեռուից դիտելով՝ բոլորի մասին կազմել էի մի այսպիսի ծայրայեղ և մոլար գաղափար։ Մոսկւայում իմ յարաբերութիւնը ռուս և լեհացի ուսանողների հետ էր. հայ ուսանողներին ճանաչում էի միայն հեռուից. տեսնելով նրանց թղթամոլութիւնը և բուլւարներում քարշ գալը անանուն աղջկերանց հետ, ես տածում էի դէպի դրանց խորին արհամարհանք։ Զուր տեղ վատնում էին իրանց հայրերի և բարերարների փողերը, առանց հոգ տանելու իրանց բարոյական և մտաւոր զարգացման վրայ։ Այսպէս չէին Պետերբուրգի ուսանողները, բայց դրանց հետ դեռ ևս ծանօթ չէի։ Իմ ծանօթութիւնս այդ ժամանակ լեհացոց հետ էր։ Ապրելով Սոկուլսկու հետ՝ իմ ուսանող վարժապետի, որ ծայրայեղ ազգասէր էր, այնպիսի սրտաճմլիկ պատմութիւններ էի լսել նրա ազգի վերջին պատմութիւնից, որ լաց էի եղել հետը միասին։ Ես ինքս էլ իմ աչքովս քիչ աղեկտուր բաներ չըտեսայ։ Այս հանգամանքն ահա ինձ մօտեցրեց լեհացիներին։

Պետերբուրգ որ հասայ, իմ սենեակս մի լեհացու բնակարանում վարձեցի ամեն ծախքով։ Ընկեր գրաշարներս նոյնպէս լեհացիք էին։ Իմ և սրանց մէջ այնքան սէր ու մտերմութիւն կար, որ հասնում էր մինչև հոգեկցութեան։ Մէկ անգամ սրանց մէկի ամուսնու հետ ծանօթացայ դուրսը, առանց նախածանօթ լինելու։ Սա մի շատ զարմանալի դէպք էր, թէև շատ բնական։ Մի ջահել տիկին երկու անգամ ճանապարհ պատահելով՝ այնպիսի հայեացք էր ձգում վրաս, ինչպէս մօտաւոր ազգականուհի։ Սա ինձ ճանաչում է, ասացի մըտ-

քումս, բայց ո՞վ կարող է լինել, երբի Գանսկեւիչի կինն է. մարդն ինձ նկարագրած կը լինի, սա էլ ճանաչում է ինձ։ Երրորդ անգամ որ դէմ առ դէմ եկանք, մոքումս ասացի. եկ փորձեմ, տեսնեմ նա է։ Ես գլխարկս վերցրի և ուղղակի հարցրի։—Դուք տիկին Գանսկեւիչը չէ՞ք արդեօք։—Այո, իսկ դուք պարոն Աղայեանցն էք, իմ ամուսնու ընկերը։—Այո։—Ես ձեզ ճանաչեցի, ասաց, որովհետև Պետերբուրգում չկայ մի այլ ոք ձեր տարազով և դէմքով, դուք աչքի էք ընկնում հազարների մէջ, բայց ինքներդ ի՞նչպէս ճանաչեցիք ինձ։

—Ձեր հայեացքն ինձ թելադրեց ենթադրելու, որ դուք իմ սըրտակից բարեկամի սրտակիցն էք, և ես, ինչպէս տեսնում էք, չըսխալեցի։

—Մենք ամենքս, նոյն իսկ երեխէքս, ձեզ սիրում ենք առանց ձեզ տեսնելու, բայց շատ նեղացած ենք ձեզանից, որ մեզ չէք այցելում. ամուսինս գանգատաւոր է ձեզանից. ասում է՝ շատ անգամ եմ խնդրել, չի գալիս։ Ինչու՞ չէք գալիս։ Ես կը խնդրեմ, որ կիրակի օրը անպատճառ գաք մեզ մօտ ճաշի։ Ես կը պատրաստեմ հայկական կերակուրներ...

Ամբողջ կեանքումս չեմ կարող մոռանալ այդ ճաշը, ուր լաց ու խնդում իրար խառնուած տեսեց վեց ժամ։ Ի՜նչ ճառեր, ինչ կենացներ։ Ես իմ ճառի մէջ ասացի՝—Լացը կեանքի նշան է. նորածին երեխան երբ լաց է լինում իսկոյն, ամենքն էլ ուրախանում են, տեսնում են, որ կենդանի է։ Մենք հայերս դեռ չենք արժանացել այդ բախտին...

Տասներկու հոգի էինք. ամենքն էլ լեհացի էին, միայն ես էի օտար։ Բայց այդ տեղ օտար չէի զգում ինձ, այնքան սրտանց էր ստացած համբոյրներս։ Կարելի բան չէ, որ այսպիսի սիրոյ և անանխապաշար պատուի արժանանայի ես որ և է հայկական շրջանում։ Հայերը չէին սիրում միմեանց, փոխադարձ ատելութեամբ էին վարակուած, մինչդեռ լեհացիք... բայց թողնենք այս. ինչ համեմատութիւն, և որտեղից որտեղ։

Պետերբուրգ որ գնացի, դիմեցի Լեմանին, ասացի՝ եղբայրս շուտով կառողջանայ և կը գայ, բայց ես տեղ չունեմ։ Իսկոյն մի նամակ տուաւ և ուղարկեց մի գեղարուեստական տպարան։ Տպարանատէրը (Գոլովինը) ինձ մի առանձին սիրով ընդունեց. պատկերա-

սէր մարդ էր. նա, ինչպէս ես զգացի՝ սիրահարուեց իմ պատկերի վրայ, համարելով կլասիկական տիպ, ցոյց տուաւ նաև իր կնոջը, որ նոյնպէս յափշտակուեց ինձանով։ (Հիմա այդ պատկերի ստերագիծն է միայն մնացել վրաս)։ Այդ տեղ ինձ շինեցին գլխաւոր գրաշար, այսինքն այնպիսի գրաշար, որ իր ձեռքի տակ ունենում է սոսկ շարողներ, իսկ երեսներն ինքն է շինում ճաշակաւոր։ Այսպիսիներին ասում են մեստրանպաժ, և անհամեմատ աւելի վարձ է ստանում, քան սոսկ շարողը։ Այստեղ ես լաւ էի վարձատրւում, բայց գործը շատ աշխատանք էր պահանջում, իսկ ես ժամանակ չէի ունենում ինքնակրթութիւնս շարունակելու։ Կրկին անգամ գնացի Ակադեմիայի տպարանը, դիմեցի գլխաւոր կառավարչին։—Թէպէտ, ասացի, ես եղել եմ այստեղ և դուրս եկել, որի համար ինձ այլ ևս չեն ընդունում, բայց խնդրում եմ, որ ինձ բացառութիւն համարէք, որովհետև ես իսկապէս գրաշար չեմ, այլ ուսանող. պատրաստւում եմ քննութիւն տալու, բայց ոչ մի նիւթական հնար չունենալով, գրաշարութեամբ եմ պահում ինքս ինձ։ Ես խնդրում եմ, որ ինձ ընդունէք իբրև ազատ գրաշար, ընդհանուր կանոնից դուրս, և թոյլ տաք մինչև անգամ, որ ես միայն մինչև կէսօր պարապեմ, իսկ կէսօրից յետոյ զբաղւեմ իմ դասերով։ Այս մարդը թէպէտ դարձեալ գերմանացի էր, բայց այս անգամ գերմանացու անզթութիւն ցոյց չըտաւ և ինձ ընդունեց կրկին անգամ իմ ուզած պայմանով։

Քիչ աշխատելով՝ քիչ էլ վարձ էի ստանում։ Ծախքս չափաւորելու համար, դուրս եկայ սենեակիցս և այնուհետև անկիւններ էի վարձում ում և ինչ բնակարանում։ Ոչքան վիպական նիւթերի տպաւորութիւններ եմ ստացել ես այդ հռչակաւոր անկիւններից։

Մէկ ձմեռ այդպիսի մի անկիւնում մրսեցի և հիւանդացայ։ Կարծելով որ տիֆ կը լինի կամ տիֆ կը դառնայ և ինձ կը տանէ դէպի յաւիտենականութիւն, գլուխս տաքացած ժամանակ երևակայութիւնս էլ տաքացաւ, սկսեցի մի շատ երկար ոտանաւորով գլխովս անցածը նկարագրել, որ յիշատակ մնայ։ Հիւանդութիւնս սաստկացաւ, ինձ տարան հիւանդանոց։ Այստեղ երկու շաբաթ մնալով՝ առողջացայ։ Արձակելիս ինձանից փող ուզեցին. ասացի՝ չունիմ, և ինձ ազատ թողին, վերցրին միայն իմ անցագրի հաս-

ցէն։ Գրել էին մեր գաւառապետին և նա էլ մեր տանից պահանջել էր 15 մանէթ, թէ ձեր տղան Պետերբուրգում հիւանդանոցումն է եղել, նրա վարձը պէտք է տաք։ Խեղճ ծնողքս կարծել էին, թէ ես հիւանդանոցում մեռել եմ, ընկել էին սուգի մէջ։

Հիւանդանոցից որ գնացի անկիւնս, էլ ոտանաւորս չգտայ։ Հրէուհի տանտիկինս՝ անպէտք բան համարելով՝ ձգել էր հնոցը։— Ես չգիտէի, որ դուք գրող էք և այն էլ բանաստեղծ—արդարացրեց իրան պարզմտութեամբ և ախ ախ անելով,—ձեզ կը վարձարէին անշուշտ նրա համար, և դուք էլ կը վճարէիք մեր ճաշի և անկիւնի վարձը, ափսոս, ափսոս...

Յիրաւի այդ ժամանակ նիւթական նեղ վիճակի մէջ էի, բայց Միքայէլս անյապաղ օգնութեան հասաւ։ Ես փորձեցի նորից գրել նախկին պօյէմաս՝ շատ բան էր միտս, թէ ինչպէս էի գրել, իսկ նիւթն արդէն ծանօթ էր։ Մինչև երեկոյ գրեցի, իսկ երեկոյին գնացի ինձ վաղածանօթ մի հայ ուսանողի մօտ, որ հիւանդ էր թոքախտով և պառկած։ Սա էր Յովսէփ Անանեանը, մի շատ ընդունակ երիտասարդ, համալսարանի մաթեմատիկական բաժնում։ Զուրկ լինելով նիւթական օգնութիւնից, նեղութիւն շատ քաշեց և վերջը թոքախտ ստանալով՝ այստեղ էլ մեռաւ։

Յովսէփը պառկած էր, իսկ ես մօտը նստած խօսում էի։ Այս միջոցին ներս եկաւ կից սենեակից մի երիտասարդ, գլխին մեր թարաքեամաների մոթալ փափախներից մէկը ծածկած, նախշուն և վարվռուն աչքերով։ Յովսէփը ծանօթացրեց, ասելով նուազ ձայնով.— Ռուբէն Չալալեանց և Ղազարոս Աղայեանց։

Ռուբէնը ձեռքս բռնեց և մօտս նստեց լուռ ու մունջ. ես նրան ուսանողի տեղ չէրի։ Յովսէփին արգելած էր խօսելը. ես շարունակեցի իմ խօսակցութիւնը, որ մի տեսակ բողոք էր հայերի դէմ Նազարեանցի մեթոդով։

Վերջը Ռուբէնն սկսեց խօսել, որից երևաց, որ մոթալ փափախի մէջ պատապարած է մի հրաշալի գլուխ։

—Դուք շատ սխալւում էք, ասաց, այստեղ կան և շատ լաւ հայեր, որոնք ձեզանից աւելի են ատում ձեր ատած մարդկանցը։ Որպէս զի ապացուցանեմ ձեզ, որ դուք սխալւել էք, հէնց այս երեկոյին ես ձեզ կը տանեմ լաւ մարդկանց մի շրջան։

—Շնորհակալ եմ, ասացի, եթէ կան, կը հանդիպիմ մէկ անգամ։

—Ո՛չ, հէնց այս երեկոյին. ես այս բոպէիս կը հագնւեմ և միասին սահնակ կը նստենք կերթանք։

Ռուբէնը գնաց հագնւելու, իսկ Յովսէփը յայտնեց ինձ, թէ այս երեկոյին գրական ժողով ունին ուսանողները պ. Եղեանցի տանը. այնտեղ է ուզում տանել քեզ։ Գնա, վստահ եղիր, մի վախենար. Ռուբենին հաւատա, շատ ազնիւ տղայ է և մոլեռանդ հայրենասէր...

Ռուբէնն ինձ տարաւ պ. Եղեանցի տունը, ուր հետզհետէ հաւաքւեցին շատ ուսանողներ։ Դրանցից ոմանք իմ պատանեկութեան ընկերներն էին և՝ շատ ուրախացան ինձ տեսնելով։ Ռուբէնն ինձ ծանօթացրեց ամենքի հետ էլ և ամենքն էլ սիրալիր ընդունելութիւն ցոյց տուին։ Պարոն Եղեանցը, երևի Ռուբէնից տեղեկութիւն քաղելուց յետոյ, ինձ վրայ առանձին ուշադրութիւն դարձրեց։ Մէկուսացրեց մի այլ սենեակ, խօսեց, խօսեցրեց, և երևի մի որ և իցէ գաղափար կազմեց իմ մասին, գոնէ կը նկատէր, թէ ես ինչպէս եմ խօսում հայերէն, որ այդ ժամանակ նշանակութիւն ունէր։ Կարդաց և կարդացրեց Ալիշանի ոտանաւորներից, իբր թէ նրա համար, որ տեսնեմ թէ ինչ հրաշալի բանաստեղծութիւն է։ Այս մարդու վարմունքը ինձ հետ պարզ չէր։

Թէյ բաժանեցին շամպանի բակալների նման բաժակներով. սկսւեց ընթերցանութիւնը։ Այդ երեկոյին կարդացին երեք հոգի։ Նախ կարդաց Եւանդուլեանցը իր աշակերտական յիշողութիւնները, որ յետոյ տպւեց «Մեղուի» մէջ։ Նրանից յետոյ կարդաց Ա. Բաբայեանցը մի թարգմանութիւն Հէյնէյի բանաստեղծութիւններից։ Սա այն ժամանակ համալսարանի լիզուաբանական բաժնումն էր։ Բաբայեանից յետոյ կարդաց Ս. Արծրունին։

Ընթերցմունքն ընդհատւում էր ընդմիջումներով։ Ընդմիջումներում անց ու դարձ էինք անում ընդարձակ սենեակներում. մօտ էին բերում մրգեղէն, լաւ տանձ ու խնձոր։ Անդրէաս Արծրունին ածում էր դաշնամուրի վրայ։

Ամեն մի յօդուած կարդալուց յետոյ քննադատում էին նոյն գրուածը մանաւանդ լեզուի կողմից, որ գլխաւոր նպատակն էր ժողովների։ Այդ կարծիքներն արձանագրւում էին։ Արձանագրողի կամ

քարտուղարի պաշտօնը վարում էր Ռուբէն Զալալեանցը։ Արձանագրութիւնը կարդացուում էր հէնց նոյն երեկոյին ժողովի վերջանալուց յետոյ։

Պ. Եզեանցը ինձ մէկուսացրել էր մի ուրիշ սենեակում, երբ զանգը տուին և նիստի հրաւիրեցին անդամներին։

—Գնանք, ասաց պ. Եզեանցը, արձանագրութիւնը պիտի կարդան, լսենք, տեսնենք ինչ են գրել։

Ռուբէնը կարդաց արձանագրութիւնը կարդացած յօդուածների մասին։ Վերջումն էլ կարդաց մի այսպիսի բան. «Այս երեկոյին անդամների միաձայն հաւանութեամբ պ. Ղազարոս Աղայեանցը ընդունուեց ուսանողական ժողովի անդամ։»

Արձանագրութեան այս կտորը ընդունուեց բուռն ծափահարութեամբ։ Պ. Եզեանցը ձեռքս սեղմեց, շնորհաւորեց և ասաց. «Ցուսով եմ, որ եկող ժողովին դուք էլ մի բան կը բերէք կարդալու»...

XIII

Ուսանողական ժողովի անդամ ընդունուելս այնքան անակնկալ էր ինձ համար և յանկարծական, որ երբ լսեցի արձանագրութիւնը, քիչ մնաց ուշաթափուէի իսկոյն և վայր կընկնէի, եթէ չբռնէի աթոռի մէջքից։

Շատ յետոյ ես յանդիմանեցի Ռուբէնին, որ շատ անզգոյշ վարուեց։—Մենք ամենքս էլ նկատեցինք, ասաց Ռուբէնը, որ դու շատ զգածուեցար, բայց չէինք կարող իմանալ դրա չափը։

Ժողովից յետոյ ես և Ռուբէնը միասին գնացինք տուն։ Ամբողջ ճանապարհին ես լուռ էի, էլ այս աշխարհումս չէի և չէի իմանում, ինչ էր խօսում Ռուբէնը։ Հէնց որ հասայ հռչակաւոր անկիւնիս սենեակը, ուր գիշերը ես մենակ էի լինում, որովհետև տանտիրոջս արհեստանոցն էր և ոչ ննջարանը, ես բերանքսիվայր ընկայ մահճակալիս վրայ և մի կուշտ լաց էլայ։ Այսպէս թեթևացնելով լցուած սիրտս, վեր թռայ տեղիցս և բացականչեցի.

—Ես պէտք է գրեմ, այո, պէտք է գրեմ։ Այս ինչ բան է, որ գրել եմ։ Վերցրի գրած ոտանաւորս և կտոր-կտոր արի։—Ես հիմա էլ այն չեմ, ինչ որ քեզ գրելիս. հանաք մասխարութիւն է, ինչ է՝ լինել ուսանողական ժողովի անդամ...

Եւ սկսեցի գրել իմ «Արութիւն և Մանուէլս», որի մէջ ուզեցի դուրս բերել ինձ, չմոռնալով և իմ Միքայէլին, որին և շինեցի Մանուէլ։ Զը գրեցի «Ցարութիւն», այլ «Արութիւն» իբր արիութիւն, այրութիւն, քաջութիւն, այդ յատկութիւնները գտնելով հերոսիս մէջ։

Այս վէպը գրելիս՝ շարունակ յուզած վիճակի մէջ էի։ Գործող անձինքներիս լացի հետ լաց էի լինում, ծիծաղի հետ ծիծաղում, բարկացողի հետ բարկանում բնական կերպով։ Այս զգացմունքով եթէ բեմի վրայ մի դերի մէջ լինէի, ում որ ուզում էի սպանել, փոխանակ սպանել ձևացնելու, ուղղակի կըսպանէի։ Նկատում էի սակայն, որ անկիւնիս տէրերը՝ մարդ ու կնիկ ապշած էին մնացել իմ տարօրինակ վարմունքի վրայ և երևի կարծում էին, թէ ուր որ է, ես պիտի գժւիմ և հիւանդանոց տանելու դառնամ։ Սակայն ես այնքան յափշտակուած էի իմ գործովս, որ դրանց վրայ ուշադրութիւն դարձնել չէի կարող. ազատ էի ամեն տեսակ կաշկանդող կապանքներից։ Այս վիճակում մնացի շարունակ եօթն օր, և հէնց այդքան օրում էլ վերջացրի գրելիքս։ Գրիչս չէր կարողանում հասցնել թղթին զգացմունքներիս բուռն և արագ հոսանքը։ «Երանի քառասուն ձեռք ունենայի այս րոպէիս», ասում էի ես։ Վիպագրողների և բանաստեղծների մէջ այս երևոյթը արժանի է խորին ուսումնասիրութեան հոգեբանների կողմից։ Սա խելացնորութիւն է արդեօք, ինչպէս շատերը կարծում են, թէ ներշնչութիւն կամ ոգևորութիւն,—այդ չէ գլխաւորը, այլ ինչ հանգամանքից է յառաջ գալիս և ինչու միշտ էլ չի կրկնւում։ Այս վիճակի մէջ ես միայն մէկ անգամ եմ եղել, բայց ոգևորւելով շատ անգամ եմ ոգևորւել։ Այս բանը ես այսպէս եմ բացատրում։ Երբ տպաւորութիւնները չափից դուրս շատանում են, նրանք արտաբղխում են չափից դուրս զօրեղ հոսանքով։ Այս օրինակը նկատում ենք հոգու և բնութեան միւս երևոյթների մէջ էլ։ Մի տեղից աղբիւր է բղխում յանկարծ, հեղեղ է լինում, զանազան երկրային վիժմունքներ են լինում։ Դրանց բոլորի ուժը կախւած է այն առատութիւնից, որ ունին նրանց ամբարները՝ փակւած աւազանները, պահպանող ամբարտակները։ Ծնունդը, ինչպէս և բղխումը, պէտք է դուրս գայ մի որ և է կեղևից, իր ուժով բանալով այդ

կեղևը, ինչպէս ձագուկը ձուն կամ արգանդը։ Մէկ օրուայ կարօտն այն ուժը չունի, ինչ որ տասն օրանը, իսկ տասը տարուանն աւելի ահաւոր է։ Մի օրական երեխայի մահը այն կսկիծը չի պատճառում, ինչ որ մի տարեկանինը, իսկ քսան տարեկանին աւելի ևս։ Այդպէս են բոլոր հոգեկան զգացումները։ Ժամանակի ընթացքում դրանց հաւաքիլը ահագին ուժի է հասնում և արտայայտելիս քարուքանդ անում իր բնի չորս կողմը։ Կարող է պատահել, որ այսպիսի ծնունդը առաջինը և վերջինը լինի, ինչպէս Աբովեանցի «Վէրք Հայաստանին»։

Երբ գրածս պատրաստ էր և արտագրելու էլ կարօտութիւն չունէր, ես հոգւով հանդարտեցայ, բայց շատ յոգնած էի և ջարդուած, ինչպէս մի հիւանդադարձ, կամ ինչպէս իր անդրանիկ ծնունդից նոր ազատուած մի մայր։ Վեր առայ ծնունդս և տարայ տուի Ռուբէնին, որ նա մկրտի։ Ախր բանը ցաւով ծնելը չէ, այլ ծնածն է։ Թզուկը կարող չէ հսկայ ծնել, իսկ հսկան երբեմն թզուկ է ծնում։

—Ահա մի բան եմ գրել, ասացի, առաջ դուք կարդացէք, եթէ կը տեսնէք, որ արժանաւոր բան չէ, դուրս չը բերեմ ժողովի մէջ և չը խայտառակուիմ։—Կարդացէք, ասաց, ես կը լսեմ։ Ես կարդացի մի գլուխ։ Ռուբէնը յափշտակուեց, և որքան առաջ գնացինք, այնքան սաստկացաւ նրա յափշտակութիւնը, և վերջումը բացականչեց։

—Դու մի այնպիսի բան ես գրել, որի գինը ինքդ չես կարող իմանալ։ Ես չափից դուրս ուրախ եմ։ դա մի կարգէ դուրս բան է, մեր գրականութեան մէջ նմանը չկայ։

Ի հարկէ ուրախ կը լինէր Ռուբէնը, որովհետև ես իր արած գիւտն էի, բայց ես էլ պակաս ուրախ չէի իմ գտնելուս համար։ Ռուբէնի հաւանութիւնը ինձ սիրտ ու վստահութիւն տուաւ, որ աւելի լաւ կարդամ։

Առաջիկայ ժողովը շատ բազմամարդ էր։ Լսել էին որ մի նոր բան պիտի կարդացուի, եկել էին և կողմնակի ինտելիգենտ մարդիկ յատկապէս ինձ տեսնելու և լսելու։ Սկսեցի կարդալ և նմանը չը տեսնուած ընդունելութիւն գտաւ։ Մի գլուխ ծափահարում էին և զանազան բացականչութիւններ անում։ Գլխաւորն այն էր, որ այդ բոլորն անկեղծ էր, բղխում էր ազնիւ սրտերից։ Այդպէս կարող են

լինել միայն ուսանողները իրանց իդէալական աշխարհում եղած ժամանակ։ Վերջումն ամենքն էլ ձեռքս սխմեցին և շնորհակալութիւն յայտնեցին։

Պարոն Եզեանը շնորհաւորելով ինձ, յայտնեց և այսպիսի բան.

—Պարոն Սանասարեանցին դուք շատ դուր եկաք և նա ասաց ինձ, որ կը հոգայ ձեր ուսման ծախքը, որ դուք բոլորովին նուիրուիք ուսման, պատրաստուիք քննութիւն տալու և մտնէք համալսարան։

—Ես չեմ կարող, ասացի, այդ պայմանը յանձս առնել, մի գուցէ չը կարողանամ կատարել և ձեզ մօտ սուտերես մնամ։ Ես մի բան կը խնդրեմ ձեզանից. առաջարկեցէք, որ եկեղեցումը ինձ երգելու պաշտօն տան, և մի թեթև ռոճիկ դրա համար, ինչպէս այդ անում են շատ ուսանողների, որոնք երգել էլ չը գիտեն, իսկ ես լաւ գիտեմ։

—Շատ լաւ, ասաց. ես այդ մասին կը խօսիմ Սուլթան շահին (գեներալ), նա աւելի մօտիկ է Լազարեանին. բայց դուք մէկ ծանօթացրէք ձեզ, գնացէք մէկ անգամ երգեցէք։

Այս անցքից յետոյ ինձ և Մարտիրոս Սիմէօնեանցին ընտրեցին «լեզու մշակող». մենք պիտի սրբագրէինք միւսների գրածներն ու թարգմանածները։

Միւս շաբաթ օրը ես առաջին անգամ գնացի հայոց եկեղեցին։ Եկեղեցի չգնալուս պատճառներից մէկն էլ ահա ինչ էր։ Մոսկւա նոր եկած ժամանակս մի օր գնացի ժամ։ Իբրև յաջողակ ձայն ունեցող և շարական դաս առած մարդ, ուղղակի գնացի հոգևորականների դասը և առաջարկեցի աւագ քահանային, որ թոյլ տայ ինձ շապիկ հագնել և երգել, որ հայ եկեղեցու սովորութեամբ ոչ ոքի չի մերժւում։ Բայց հայ քահանան կոպտութեամբ ընդդեմ ինձ, ասելով.—Ինչ հարկաւոր է, դու ով ես, գնա, գնա... Ես հեռացայ, բայց ժամումն էլ չանդնեցի և այնուհետև էլ ժամ չգնացի, ասելով մտքումս՝ «Այստեղի ժամն էլ չէ ժամ եղել, հայն էլ ո՞րտեղից հայ կը լինի...»

Պետերբուրգի եկեղեցում Մոսկւայի հակառակ ընդունելութիւն գտայ։ Երևի բախտիս անիւը շուռ էր եկել և ամեն ինչ պտտւում էր դէպի աջ։ Այստեղի աւագ քահանան տէր-Գրիգորն էր։ Սա նոյնպէս ներկայ էր նախընթաց գրական ժողովին։ Ամենքը գովում էին իմ գրածքը, իսկ սա՝ իմ հասակը, մօրուքը, և ասում էր.—

«Մեր Տիգրան Հայկազնին կը նմանի», կարծես Տիգրանին տեսած լինէր։ Սա մի պարթև հասակով մարդ էր և շատ բարի, զօրեղ էլ ձայն ունէր։ Ինձ սիրով ընդունեց, շապիկ հագցրեց։ Երևելի ձայնաւոր Սուքիասեանցին խնդրեց, որ նոյն օրը դպրութիւնը ես անեմ, ինքը միայն ձայն պահի, դիրքն էլ ես կարդամ։ Նոյն օրը ժողովուրդ չը կար, բայց մէկը կար իր ամուսնու հետ, որ ամբողջ ժողովուրդ արժէր իմ նպատակի յաջողութեան համար։ Դա էր ինքը Լազարեանը, իր տոհմի վերջին ծերունի շառաւիղը։

Ժամերգութիւնս հիանալի էր. կարօտել էի, շատ ժամանակ էր ժամ չէի ասել, բոլորի վրէժը այսօր լուծեցի, փափագս առայ։ Դիրքը կարդացի սքանչելի առոգանութեամբ։ Երբոր պատարագը վերջացաւ, գնդապետ երեցփոխը մօտեցաւ ինձ և շատ քաղաքավարութեամբ, ժպիտը բերնին՝ ասաց.—Վեհագնը կամենում է տեսնել ձեզ. հրամայեցէք վերև գնանք։

Վեր բարձրացանք փառաւոր սանդուղքներով և հասանք մինչև ընդունարան։ Այստեղ դիմաւորեց ինձ բարեսիրտ ծերունին, որին խոր գլուխ տուի, մի հինգ րոպէ խօսեց հետս, ասելով, որ ինձ շատ հաւանել է, և խնդրում է որ շաբաթ կիրակի ժամումը երգեմ։ —Դուք ռոճիկ կըստանաք, ասաց, և բնակարան, իսկ այս առէք ձեզ, առ ժամանակ։ Այս ասելով տուաւ ինձ մի նամակի ծրար։ Ես առայ, գլուխս վեր բերի, և դուրս եկայ լուռ ու մունջ։ Ի՞նչ խօսէի, ինձ բան չը հարցրեց որ պատասխան տամ։ Երևի, ասացի մտքումս, գեներալ Սուլթանշահը, պ. Եղեանցի առաջարկութեամբ, ինչ որ ասելու է, ասել էր։ Եւ այդպէս էլ էր, ինչպէս ստուգեցի յետոյ։

Երբոր հեռացայ, ծրարը բաց արի, միջին քսանըհինգ մանէթ գտայ։ Կեանքիս մէջ առաջին անգամն էի ծրարով փող ստանում, այն էլ ընծայ։

Ասած է՝ «աղան որ ձէթ տայ, փէշդ դէմ արայ», իսկ քսանը հինգ մանէթը ձէթ չէր և ինձ շատ հարկաւոր էր։ Նոյն օրը ինձ սենեակ տուին, և ես իմ հրէական անկիւնից տեղափոխուեցայ հայկական եկեղեցու դաւիթը։

Միւս օրը Մ. Սիմէոնեանցը, որ Ներսիսեան դպրոցում իմ դասընկերն է եղել և դրացի, բերաւ մի ձեռք հագուստ, ինձ համար շատ թանկագին, ասելով որ պ. Մովսէս Բուզաղեանցն է ու-

զարկել քեզ ընծայ։ Ես չէի ուզում վերցնել, բայց Մարտիրոսն ինձ յանդիմանեց ընկերաբար, թէ այն մարդը իբրև ողորմութիւն չի ուղարկել, նոր հագուստ է առել քեզ համար, նա քեզ շատ սիրեց, ինքն էլ է բանասաեղծ, եթէ չընդունես, նրան վիրաւորած կը լինես։—Շատ լաւ, ասացի, կընդունեմ, բայց երեսս չի պատիլ, որ գամ նրան շնորհակալութիւն անեմ, ես կամաչեմ։

—Այդ հարկաւոր չէ, ասաց, ես քո փոխանակ շնորհակալութիւն կանեմ։

Այսպէս՝ ահա ամսական նշանակեցին երեսուն մանէթ. քիչ յետոյ շինեցին քառասուն, մինչև իմ պաշտօնակից երկու ուսանողներից մէկն ստանում էր 10 մանէթ, միւսը՝ 15։ Հոգևոր կոչում ունեցողները լաւ ռոճիկ ունէին։

Եկեղեցում ընդունելիս լուրը հաղորդեցի պ. Եղեանին, պատմելով, որ ինձ շատ հաւանեց վեհագնը։

—Այո՛, պատասխանեց Եղեանցը,—ես գիտէի, որ նրանք շատ կը հաւանեն... ձեր փառաւոր մօրուքին...

Պարոն Եղեանցի նկատողութիւնը շատ ուղիղ էր, թէև երգիծական։ Նրանք գնահատեցին իմ արտաքին հանգամանքները և ոչ ներքին։ Արտաքին բարեյաջող հանգամանքներով աւելի դիւրին է մեծամեծների շրջանը մտնել քան թէ ներքին։ Ես ունէի այդ բարեյաջող հանգամանքը, բայց բնածին բարոյական հակումներիս շնորհիւ գայթակղեցուցիչ ոգուն գլուխս չը տուի։ Բեսարաբիայի թեմի ժամանակաւոր կառավարիչ Եղիազար եպիսկոպոսը երբոր եկաւ Պետերբուրգ, այնպէս սիրահարուեց իմ արտաքինով, որ իսկոյն մի ուրբաթ ձգեց ուսիս։—Ձեմ ուզում, ասացի, սրբազան հայր, ես հոգևոր կոչում չունեմ։—Շատ մի՛ խօսիր, ասաց, չոքիր առաջիս. ինձ խնդրում են, որ ես այս քօռ ու քաչալներին տէրտէր շինեմ. Աստուծուն հաճելի են միայն քեզ պէսները։

Զընդդիմացայ, ընդունեցի ուրարը։ Այս բանը շատ դիւր եկաւ վեհագնին։—Մենք ձեզ քահանայ չենք շինիլ, ասաց, այլ վարդապետ և յետոյ էլ եպիսկոպոս...

Իմ պաշտօնակից Մ. Տէր-Գրիգորեանը (Գոմբի թարգմանիչը), որի յանդգնութիւնը մինչև ծայրայեղութեանն էր հասնում, իսկոյն միջ մտաց և ասաց.

—Յետոյ էլ կաթողիկոս, վեհազն տէր...

Վեհազնը Եկեղեցու պաշտօնեաներիս ստէպ-ստէպ ճաշի էր հրաւիրում, ուր դրսի հայերից ներկայ էր լինում միայն գեներալ Սուլթանշահը։ Այդ գերդաստանական ճաշերին ես այնպէս էի լինում, ինչպէս ասեղների վրայ նստած, ինձ կոմպլեմենտներ էին անում և ես շատ ամաչում էի պատասխանել, դանակ ու պատառաքաղը ստէպ-ստէպ ձեռքիցս թռչկոտում էին այս ու այն կողմ։ Շատ ուշ ընտելացայ այդ բանին։ Սիրը ուր Մոսկւայի ամսական երեք մանէթանոց ճաշը և ուր պալատական լակէյների ձեռքով ընդունածը։

Այդ ճաշերն ինձ դուր չէին գալիս, որովհետև այդ մի պատիւ չէր, այլ ողորմութիւն, բայց չէի կարող մերժել։ Դուրս գալիս սովորաբար ստանում էինք և ընծաներ մի-մի ծրարով։ Իմ ստացածը միշտ աւելի էր լինում, քան Տէր-Գրիգորեանինը. նրա ծրարից դուրս էր գալիս առաւաւելն 10 մանէթ, իսկ իմից երեսուն, բայց միասին էինք ուտում, թատրոն գնում և այլն։

Որովհետև այս բոլորը եղաւ «Արութիւն և Մանուէլ» վէպիս շնորհիւ, հարկաւոր եմ համարում մի երկու խօսք էլ այդ վէպի ուղղութեան մասին գրել։

Ոմանք այն միտքը տարածեցին ընթերցող հա-սարակութեան մէջ, որ իբր թէ իմ աշխատութիւնը մի հետևութիւն է անմահ Աբովեանցի վէպի։ Այդպէս չէ։ Նրա «Վէրք Հայաստանին» մի ողբ է, ողբ հայրենիքի թշուառութեան վրայ, ողբ հայրենասիրի, բղխած մի զգայուն սրտից, զարդացած ուղեղից։ «Արութիւն և Մանուէլը» բերում է մի բոլորովին նոր ուղղութիւն, բոլորովին ինքնուրոյն։ Սա մի պատերազմ է յայտնում հին դաղափարների, հին դաստիարակութեան դէմ, որոնց վրայ չի ողբում, այլ յարձակւում է անխնայ և նրանց տեղը տարածում նորը և լաւագոյնը։ Հեղի կողմից էլ այս վէպն նոյն նորութիւնն է բերում, որ հեղինակին խօսեցնում է մաքուր գրական լեզուով, միայն գործող անձերին է թոյլ տալիս, որ մօտաւորապէս իրանց խօսելու ոճով ու բարբառով հանդէս գան, ինչպէս այդ թոյլ են տալիս ռուս գրողներն էլ։ «Վէրք Հայաստանիի» մէջ ստոյգն և անստոյգը ռէալական և իդէալականը խառնուած են իրար հետ, մինչդեռ «Արութիւն և Մանուէլը», իրականի նկարչական պատկերն է

դնում ընթերցողի առջև։ Գեղարուեստական տեսակէտից «Վէրք Հայաստանին» սրտի խորքից բղխած մի բնական ժայթքումն է, հեղինակը միտք չի ունեցել իր շէնքի գեղեցկութեան վրայ ուշ դարձնելու։ Իսկ «Արութիւն և Մանուէլի» մէջ ամէն մի գլուխը մի նկարչական ամբողջութիւն է. բոլոր գլուխներն ի միասին կազմում են պատկերների մի կարգ։ Հերոսն այստեղ զարգացման ճանապարհի վրայ է դրուած, սրա համար այս վէպը կարող է շարունակուել հեղինակի զարգացման հետ և դառնալ մի կենսագրութիւն՝ ժամանակակից անցքերի հետ կապուած։ Իմ «Մի երես նորագոյն պատմութիւնից» յօդուածը, որ տպուեց «Գրական Հանդէսի» մէջ, որից արտատպելով ձրի բաժանուեց իմ գրքի բաժանորդներին, պէտք է մտնէր «Արութիւն և Մանուէլի» մէջ, բայց ինչ-ինչ պատճառներով այդ չըյաջողուեց և ես ստիպուեցայ զանազան փոփոխութիւններով տպել առանձին։ «Արութիւն և Մանուէլը» վէպ անուանել անգամ կարելի չէ, բայց որ մեզանում ասւում է, դրա պատճառն այն է, որ մենք վիպական գրուածների ամէն ձևի համար ջոկ բառ չունենք։ Իմ առաջին նկարչական ամբողջութեամբ գրած վէպը «Երկու Քոյրն» է։ «Արութիւն և Մանուէլն» այդ ամբողջութիւնը չունի, և կարող չէ ունենալ, որովհետև դա մի պատկեր չէ, այլ թանգարան պատկերների։ Դրա նախագիծն այնպէս է կազմած, որ ժամանակով այս աշխատութեան բովանդակութիւնն ևս պէտք է մտնէր նրա մէջ։ Շատ անգամ մի բան ուզեցել եմ տեսնել կամ անել, ասելով. «Սրանով Արութիւնիս մէջ մի գլուխ ևս կաւելանայ». Փորձը ցոյց տուաւ սակայն որ այս նախագիծն անիրագործելի է գեղարուեստական տեսակէտից. Ցայտնի անցքերի մէջ գործող անձը անյայտ մնալ կարող չէ, մինչև հեղինակը չըշեղուի բնականից ու իրականից և չըստեղծէ տիպերի և անցքերի մի խառնուրդ. իսկ ես չուզեցայ անել, ազգային ստոյգ պատմութեան օգնելու նպատակով։

Կրթական տեսակէտից՝ իմ վէպն ունեցաւ իր սքանչելի ազդեցութիւնը նոր սերնդի վրայ, թէև ամենից շատ շահուողները հաւի նման կտուցները գետին քսեցին, իբր ոչինչ չըկերած։ Այդ վէպով ժողովուրդը ծանօթացաւ նոր սերնդի յառաջադէմ մտքերի հետ, իսկ նոր սերունդը ժողովրդի մտաւոր ու բարոյական կողմերի հետ։ Սրանից աւելին թող դատէ կրիտիկոսը, որ անշուշտ ի նկատի

կունենայ և մեր վիպագրութեան զարգացման պատմութիւնը, սկըսած Թաղիատեանից, ցոյց տալով, թէ ով ինչ նորութիւն է ներս բերում, ո՞րն է հետևողութիւն և որը՝ ինքնուրոյն։

XIV

1864 թուականի վերջին և 1865 թուականի սկզբի ամիսները Պետերբուրգի մտաւոր կեանքի վերածնութեան ամենաթունդ ժամանակն էր։

Ինչպէս գարնանամուտը աւելի քնքոյշ ծաղիկներ է բուսցնում, իսկ ամառնամուտը սար ու ձոր լցնում է ամեն տեսակ՝ լաւ ու վատ, կոշտ ու քնքոյշ, հոտաւէտ և անհոտ բոյսերով, այնպիսի մի ամառն էր ներկայացնում Պետերբուրգի այդ ժամանակուայ մտաւոր կեանքը։ Հնութիւնն ու նորութիւնը պատերազմ էին յայտնել իրար դէմ, սրանք էլ՝ դարձեալ բաժանուած զանազան ճիւղերի՝ անխայտ յարձակւում էին միմեանց վրայ, ամեն ինչ քննադատում, ամեն խաւար վարագոյր յետ քաշում։ Արևմտեան Եւրոպայի լուսաւոր մտքերի առջև դրած թումբը քանդւելով՝ այդ քաղաքը հեղեղւեց նորանոր գաղափարներով։ Դա էր առաւելապէս թարգմանական գրականութիւնը, որ իւրաքանչիւր օր տասնեակ հատորներով էր դուրս գալիս։ Մարդ շշկլւում էր, չգիտէր որը կարդայ և որը թողնի, քանի որ մէկը միւսից զարգացուցիչ էր, մէկը միւսից գրաւիչ։ Դուրս եկաւ Բոքլը և ահագին յեղափոխութիւն ձգեց, ոչ միայն իր գրքովը, այլ և իր անձնովը։ Այդ մարդը համալսարանի երես չէր տեսել, ուրեմն կարելի է եղել երևելի հանդիսանալ և առանց համալսարանի։ Այդ համոզմունքը հաստատեց Սմայլսի «ինքնօգնութիւնը»։ Սա հազարաւոր կենսագրական փաստերով ցոյց տուեց, թէ մարդս ինքը կարող է միայն զարգացնել իրան, թէ՝ ուրիշի օգնութիւնը պակասեցնում է ինքնօգնութեան ուժը։ Այս օրինակները ծայրայեղ էին և միակողմանի, բայց շատ գայթակղական էին։

Ինքնակրթութեան ախտով ես արդէն վարակուած էի բնականից, հարկաւոր չէր, որ այդ բանը սովորցնէր ինձ Բոքլը կամ Սմայլսը, բայց դրանցով ես աւելի ոգի առայ, չկորցնելով իմ ինքնուրոյնութիւնը։ Մեր կեանքի տեսակէտից ես համաձայն չէի Սմայլսին։ Եւ ահա ինչու։ Ոչինչ չի զարգանում առանց մնունդի. ինչպէս բոյսն իր մնունդն է պահանջում, նոյնպէս պահանջում է և միտքը։ Ես ինչպէս ինքնակրթւեմ հայկական չոր անապատում, ինչ մնունդով։ Մնունդ եղած տեղը զարգացումն ինքն իրան կը լինի։ Անգլիայի մտաւոր առատ և ճոխ մնունդը կարող է Բոքլներ յառաջացնել, իսկ հայկականը...

Մեզանում մի առած կայ. ասում են՝ «կճուճը թոլ էլաւ, խուփը գտաւ»։ Թոլ էլած կճուճը կարող է և կոտրւել կամ չգտնել իր խուփը։ Եթէ թոլ անես մի մագնիս, նա, որտեղ երկաթի փշրանքներ կան, իրանից կը կպցնէ կամ ինքը կը կպչի իրանից զօրեղ երկաթի։ Բայց կարող է պատահել, որ փշրանքներ չգտնի. բաւական չէ ուրեմն, որ մարդ մեզի նման զանազան ծաղիկներից հիւթ ժողովելու և քաղցր մեղր շինելու յատկութիւն ունենայ, հարկաւոր են և ծաղիկները։ Բնութիւնը կենդանուն չի ստեղծում նախքան նրա մնունդը, ընդհակառակը՝ մնունդն ինքը իրանից արտադրում է կենդանի։

Ասած է՝ «Զորին Հաչ գնալով՝ հաչի չի դառնալ»։ Պաշտպանելով մնունդի անհրաժեշտութիւնը, կարելի չէ ուրանալ և անհատի սննդառութեան գործարանների առողջութիւնը, նրա ամելու ընդունակութիւնը և բեղմնաւորութիւնը։ Այդպէս որ չլինէր՝ մնունդի առատ տեղում հանճարները բանջարի պէս կը բուսնէին, կրթւելու համար Եւրոպա գնացողները բոլորն էլ կը վերադառնային մի մի Կանտ ու Կոնտ դառած, ընդհակառակը շատերն ստամոքսն են խանգարում և այնպէս վերադառնում, շատերն էլ իրանց ուղեղը դնում են ուշով և վերադառնում ապուշ. հեղինակի գիտութիւնը բերելու տեղը, նրա սոսկ անունն են բերում։

Չեմ կարող ուրանալ և թաքցնել մեղքս։ Ես վարակւեցայ իմ շրջանի ընդհանուր ախտով, որով և ընկայ պ. Եղեանցի աչքից։ Ինձ դուր չէին գալիս նրա կրօնական գաղափարները, նրա կղերական ձգտումները։ Ինձ առաջարկում էր, որ ես թարգմանեմ Ներսէս Շնորհալու Ընդհանրականը։ Ես չը համաձայնեցի, առարկելով՝ որ մեր ժողովուրդն այդ տեսակ գրքերի կարօտութիւն չունի, նրա մէջ պէտք է տարածել բնական գիտութիւնների տարերքը, որ նա բացատրել կարողանայ բնութեան երևոյթները և ազատւի իր զարբաւոր նախապաշարմունքներից։ Սրանից պ. Եղեանցը եղրակացրեց,

որ իբր թէ ես ենթարկւել եմ զանազան իզմերի, և իստերի կարգն եմ ընկել։ Պր. Եզեանցը նկատեց նաև, որ համալսարան մտնելուս փափագը թուլացել է իմ մէջ, և այս աւելի ևս դուր չեկաւ նրան։ Համալսարանի արևելեան բաժինը մտնելու ես մեծ դիւրութիւն ունէի, հանգամանքներն էլ շատ յաջող էին։ Մի քանի անգամ մասնաւոր կերպով գնացի դասեր լսեցի, բայց դասի ժամանակ քունս տանում էր ոչ թէ նրա համար, որ դասի նիւթն ինձ համար բարձր էր, այլ ընդհակառակը շատ ստոր։ Համալսարանի միւս մասերը հեշտութեամբ կարող չէի մտնել. պրոֆեսորներն ինձ անծանօթ էին, սէր էլ չունէի դէպի որ և է մասնագիտութիւն։ Այս պատճառով ահա իմ համալսարանս դարձաւ Պետերբուրգի հասարակաց գրադարանը, որի մշտական ընթերցողը դարձայ։ Այդ ժամանակ սունկի պէս բսնում էին և շատ էժանագին և մինչև անգամ ձրի գրադարաններ, որոնցից նոյնպէս օգուտ էի քաղում, ուզած գրքերս գտնելով տանը։ Այժմ չկան այլ ևս այդ գրադարանները։

Այդպէս ահա իմ ինքնակրթութեան համար մենակ իմ ընդունակութեանը չեմ պարտական, այլ Պետերբուրգի մտաւոր վերածնութեան շրջանին, այն բորբոքող և եռանդոտ կեանքին, որի մէջ չէի կարող չեփւել։ Թատերն ականատեսներից ինձ յանդիմանում էին, երբ տեսնում էին կարդալիս բարձր բովանդակութիւն ունեցող մի գիրք, և ասում էին ընկերաբար՝ «Այդ ի՞նչ քո խելքի բան է, որ դրա վրայ ժամանակ ես կորցնում»։ Բայց սխալւում էին իրանց ընդունակութեան չափով. իրանք որ չէին հասկանում, ենթադրում էին, որ ես էլ չպիտի հասկանամ։ «Ես հօ գիտեմ, որ հասկանում եմ», ասում էի ես, «բայց չգիտէի, որ այս հասարակ բանը հասկանալու չափ սրանք չեն զարգացրել իրանց ինքնօգնութեան ոյժը, զուրկ են բազմակողմանի հետաքրքրութիւնից. զարգացած չեն դրանց զգացումները, և այս բոլորը միայն նրա համար, որ նւազ է կեանքից ստացած դրանց պաշարը, աղքատ է իրանց փորձառութիւնը, միակողմանի և մեքենայական է դրանց մտաւոր զարգացումը, ամուլ է դրանց ուղեղը»։

Ես իմ միտքը չէի բռնադատում, չէի յոգնեցնում, այլ միայն բաւականութիւն էի տալիս նրա ձգտումներին, բաւականութիւն

էի տալիս իմ հետաքրքրութեանը, այն պատճառով էլ ամենադժւար թւացող գիրքը ես կարդում էի այնպէս, ինչպէս շատերը մի գրաւիչ ռոման։

Տիեզերքն ինձ հետաքրքրում էր, ինչպէս չկարդայի տիեզերագիտութեան վերաբերեալ գրքեր։ Մարդկային կեանքն ինձ հետաքրքրում էր, ինչպէս չկարդայի նրա կեանքին վերաբերեալ գրքեր, և այլն։ Եւ քանի որ այդ բոլորը գրւում է պարզից սկսելով և աստիճան առ աստիճան բարձրանալով դէպի բարդը, ինչ դժւարութիւն կայ այդ բանը հասկանալու համար, եթէ առ այդ ունես բնական պահանջ, մի տեսակ քաղց և ծարաւ և անզուսպ հետաքրքրութիւն։ Դժւարը նոր բան ասելն է, նոր գիւտ անելն է, իսկ արած պրծածը չհասկանալու համար բաւական բթամտութիւն ունենալու է։ Փորագրութեան և ճնշման տակ ձգելու համար ամեն փայտ պէտք չի գալիս։ Ես չեմ ասում, որ ամեն ոք կարող է ամեն ինչ անել, բայց ով որ իր մէջ կարողութիւն է զգում, թող սկսէ գործել, աշխատել, և կը տեսնէ, թէ ինչպէս սկզբում դժւար և անմատչելի թւացող գործը—իր ձեռքին դառնում է մի խաղալիկ։ Ես մէկ անգամ մի հասակաւոր վարդապետի ռուսերէն էի սովորեցնում։ (Ինչու թաքցնենք, այդ վարդապետը այժմ Սուքիաս եպիսկոպոսն է)։ Սկզբումը դա դժւարանում էր։ Գործն սկսել էի մի հասա. ռոմանից, որ հետաքրքրէ իրան։ Մի վախենաք, ասացի, միայն սրա տասներորդ մասը պիտի սովորէք։—Հապա ճնաղանդը, հարցրեց։—Մնացածն արդէն կը գիտենաք, որովհետև ամեն մի հեղինակ գործ է ածում յայտնի չափով բառեր և դարձւածներ։ Գիրքը գլխէ ի գլուխ նորանոր բառեր և դարձւածներ չի պարունակում։ Սրա բոլոր հարստութիւնը տասներորդ մասումն արդէն վերջացած կը լինի։ Եւ այդպէս էլ եղաւ։ Մինչև գրքի կէսը որ հասանք, հայր սուրբն սկսեց ամեն ինչ թարգմանել առանց իմ օգնութեան։

Մտքի զարգացման համար ֆիզիքական պարապմունքը անհրաժեշտ պայման պէտք է համարել։ Մեզանում ոչ միայն այս չկայ, այլ որ ամենից վատն է՝ ուսանող աւտած երիտասարդները իրանց ուսումն աւարտած են համարում այն հասակում, երբ նոր պիտի սկսէին ուսում առնել։ Գոնէ շարունակէին իրանց ինքնակրթութիւնը մի նոր բան սովորելով, կամ սովորածը լաւ իւրաց-

նելու համար։ Վերջապէս ինքնազարգացումը պէտք է շարունակել անընդհատ, ինչպէս գիտութիւնն ինքը զարգանում է անընդհատ։ Մի կէտի վրայ կանգ առնել՝ կը նշանակէ լճանալ, նեխել, կամ ընդհանալ և քարանալ։ Սակայն մարդիկ կան, որ պարծենում են շարունակ միևնոյն զուրնան փչելով։ Նոր սերնդին խորհուրդ կը տայի դրանց օրինակով չվարակուել. այլ սովորել, սովորել, շարունակ սովորել և սովրացնել միևնոյն ժամանակ, շատից շատ, քչից՝ քիչ։

XV

Պետերբուրգի մտաւոր կեանքի վերածնութիւնը, ինչպէս ասացի, նման էր մի հեղեղի։ Դրա առաջը սկսեցին առնել 65 թագաւորի վերջերից և սկսեց մի յետադարձ ուղղութիւն։ Այնուամենայնիւ ծանօթացայ ես Միքայէլ Նալբանդեանցին, որ աղատութիւն ստացաւ գեներալ Սուլթանշահի երաշխաւորութեամբ։ Այս մարդուն առաջին անգամ ես տեսել էի Թիֆլիս, ուր եկել էր Էջմիածին գնալու համար։ Այդ ժամանակ մենք յափշտակուեցանք նրա ճարտար հայախօսութեան վրայ։ Գրական լեզուով մենք դեռ ևս թոթովում էինք. այդպէս չէր Նալբանդեանցը, նրա լեզուն արդէն կազմակերպուել էր և խօսում էր այնպէս, ինչպէս որ գրում էր։ Իսկ հիմա նրան խօսել արգելել էին բժիշկները. թոքախտը մաշել էր նրան և առաջուայ Նալբանդեանի ստուերագիծն էր մնացել։ Բայց որքան զարգացել էր մտաւորապէս և որքան յետ թողել իրանից Ս. Նազարեանցին։ Համակիր չէր այլ ևս ոչ նրա լեզուին և ոչ նրա ուղղութեանը, համարելով յետամնաց և պահպանողական։ Նալբանդեանցը աշխարհից կտրուելով՝ չէր կտրուել ժամանակակից գրականութիւնից, շարունակ կարդացել էր միայնութեան մէջ և շատ էր մտածել։ Նրա գրածների մի մասը Մ. Տէր-Գրիգորեանցի ձեռքն ընկաւ, բայց թէ ում մօտ մնաց յետոյ՝ ես չիմացայ։ Գրուածներից նշանաւոր էր «Արկածք Ադամայ» պօէմանը, գրուած ընտիր գրաբառով։ Այդ բանաստեղծութիւնը գլխէ ի գլուխ բերան էր արել Մ. Բուդաղեանցը և ասում էր շատ տեղ։ Դա մի շատ հրաշալի բանաստեղծութիւն էր, նկարագրում է բնականի կռիւը անբնականի դէմ, Ադամը վիճում է հրեշտակի հետ, որ թոյլ

չի տալիս նրան սիրելու Եւային։ Հրաշալի էր մանաւանդ սիրահարուած Ադամի և Եւայի գեղեցկութեան նկարագիրը։ Նալբանդեանցի տաղանդը, մտաւոր զարգացումը, լեզուի հարստութիւնը անհամեմատ բարձր էր Ռ. Պատկանեանից, իսկ բնաւորութեամբ շիտակ էր Նալբանդեանցը, ինչպէս ուղիղ վեր բարձրացող մի բարդի, մինչդեռ Պատկանեանը մի տատասկ էր փուլած գետնի երեսին, որի մօտով անցնել չէր կարելի անպատիժ։

Պետերբուրգում այդ միջոցին գլուխ բարձրացրեց Միքայէլ Միանսարեանցը, թարգմանել տալով Կոմբը և Լաբուլէի դասախօսութիւնը։ Կոմբի կէսը թարգմանեց Մ. Տէր-Գրիգորեանցը, իսկ միւսը կէսը Եղիա Բաստամեանցը Մոսկուայում (յետոյ Վահան վարդապետ)։ Սրա թարգմանածը մի փոքր անհարթ էր, սրբագրեցինք ես ու Տէր-Գրիգորեանցը, բայց սա բոլորն իր անգրեցինք ես ու Տէր-Գրիգորեանցը, բայց սա բոլորն իր անուան սեփականեց և զրկեց խեղճին, առարկելով, որ նրա թարգմանածը պէտք չեկաւ։ Իսկ Լաբուլէն համարեա բոլորն էլ ես թարգմանեցի, բայց որովհետև իրան էր յանձնուած թարգմանութիւնը, խնդրեց որ ես բաժին չպահանջեմ։ Միանսարեանցը ժողովում էր և ազգային երգերը, որ յետոյ տպագրեց Քնար Հայկական վերնագրով։ Սրա ձեռնարկութեան համար տառեր էին հարկաւոր։ Ես յանձն առայ ձուլել տալ Լիմանին և ձուլել տի։ Երբ ամեն ինչ պատրաստ էր արդէն Եակշատի տպարանում, ես շարեցի մի երես բան և տպել տի, որ ցոյց տամ Միանսարեանցին և ուրախացնեմ։ Եւ իրաւ շատ ուրախացաւ և սկսեց օդային ամրոցներ կազմել, թէ ինչ և ինչ է մտադիր տպագրելու։ Բաւական հարստութիւն ունէր, բայց ասում էր՝ «մեծ գործերիս այն ժամանակ կը ձեռնարկեմ, երբ բախտ ունենամ արժանանալու վիճակախաղի Էրկու հարիւր հազարին»։ Հասարակութեան մէջ սա այնպիսի մի դիրք էր բռնել, որ ուզում էր ստուերով ծածկել Սանասարեանցին և Եղեանցին, որոնք դեռ մի նշանաւոր ազգային գործ չէին կատարել։ Ես չգիտէի, որ մի ներքին լուռ նախանձ կայ սրանց մէջ։ Ուզենալով ուրախացնել և Սանասարեանցին և Եղեանցին, նրանց ևս ցոյց տի տառերի օրինակը, պատմելով գործի հանգամանքը և գովելով Միանսարեանցին։ Նրանք նայեցին և գտան, որ տառերը շատ անպէտք են և անճոռնի, որ նրանցով կարելի չէ

օրինաւոր բան տպել։ Ես շատ վիրաւորուած զգացի ինձ, բայց ձայն չհանեցի։ Վիրաւորանքս չծածկեցի Միանսարեանցից, և նա ինձ մխիթարեց, ասելով՝ նրանք քեզ չեն վիրաւորել, այլ ինձ. դրանք չեն ուզում, որ ես մի բան արած լինեմ, բայց ես պիտի անեմ դրանց ջգրու։ Մոքուսն ասացի, «Միայն լաւ բան արէք, թէկուզ միմեանց ջգրու լինի»։

Ուսանողութեան սէրն ու յարգանքը Սանասարեանցն էր վայելում և ոչ Միանսարեանցը, որովհետև նա էր պէտք գալիս մի դրամական օգնութեան պահանջ եղած ժամանակ, բացի այն մշտական տուրքից, որ վճարում էր ամէն ամիս չքաւոր ուսանողաց օգտին։ Այդ մարդը շատ առատաձեռն էր և տուածը տալիս էր առանց զգացնել տալու ստացողին, որ նրան մի բան տուաւ։ Տալիս էր իբրև թէ պարտ լինէր ուզողին։ Եւ հարստահարում էր անխնայ։ Նրա համար չկային ոչ բախտախնդիրներ, ոչ խաչագողներ, դիմողին չէր մերժում. իր ողորմածութիւնը տարածում էր և օտարների վրայ։ Եթէ իմ բնաւորութեան մէջ շահելու տրամադրութիւն լինէր, ես կարող էի այդ ազնիւ հայրենասէրի հաշուով ապրել։ «Աշխատանք և վարձատրութիւն, և ոչ ձրիակերութիւն», այն է եղել իմ նշանաբանը։ Իմ այդ իբր ապահովուած միջոցին ես վերջին չքաւորութեան մէջ ընկայ։ Պատճառը ոչ ոքի յայտնի չէր։ Շատ անգամ օրերով քաղցած էի մնում, աւելորդ հագուստս ծախում էի։ Միքայէլս ձուլարանումը իր արուեստն աւարտեց, բայց շատ մաշուեց խեղճը, բոլոր միսը հալուեց և մնաց չոր կմախքը։ Դրա վրայ աւելցաւ և մեր ընկեր Եշան։ Դա ևս եկաւ Պետերբուրգ և հիւանդացաւ թոքախտով։ Եկեղեցու գաւթում թոյլ չէին տալիս ընկերներիս մօտս պահել, հարկադրուած առանձին սենեակ էի վարձել նրանց համար, ստացածս չէր բաւականանում երեքիս և երեքեանքս էլ մնում էինք քաղցած։ Ճար չկար, պէտք է դիմէի արտաքին օգնութեան։ Այս բանը յայտնեցի Ա. Բաբայեանցին, որ Ռուբէն Զալալեանցի գնալուց յետոյ իմ մտերիմ բարեկամն էր։ Սա հաւաքեց մասնաւոր օժանդակութիւն կարող ուսանողներից, բայց քիչ էր, դիմեցի պ. Սանասարեանցին, և նա ասաց. «Այդ մասին բնաւ հոգ մի անէք, ես ինքս կուղարկեմ նրան հայրենիք իմ քրոջ որդու հետ (Լևոնի) և ուղարկեց։

Իմ այդ նեղութեան ժամանակս Պետերբուրգ էր Աղեքսանդր Երիցեանը։ Դա Թիֆլիսումը գրավաճառի խանութ էր բացել Տէր-Միքայէլեանի հետ, եկել էր գրքեր գնելու, ուրեմն հարուստ էր։ Արութիւն և Մանուէլի ձեռագիրը տարայ մօտը, և ասացի՝ «գրքեր էք տպում, այս բանն էլ առէք և տպեցէք, թանգ չեմ գնահատիլ, յիսուն մանէթով կը տամ։ Աղեքսանդրը պատասխանեց։ Շատ էժան ես գնահատում, դա աւելի թանգ արժէ, բայց ես պիտի նայեմ իբրև վաճառական, թէ արդեօք այդ գիրքը որ տպագրեմ, կը վաճառւի և կը կարողանամ տպագրութեան ծախքը հանել։ Դու գիտես որ մեզանում կարդացողների թիւը շատ նուազ է։ Իմ կարծիքով պէտք է գտնել մի բարերար, որ իր հաշուով տպէ։—Ես չեմ կարող բարերար գտնել, ասացի, բայց ուրախութեամբ կը վաճառեմ նոյն իսկ 25 մանէթով։ Կը տայի և ձրի, բայց փող շատ է պէտք։

Զգնեց անիրաւը. գոնէ ասէր՝ «փողի կարօտութիւն ունես, առ քեզ 25 մանէթ պարտք»։

Միքայէլի գնալուց յետոյ էլ չթեթևացաւ իմ նեղութիւնը։ Եշան մնաց և տկարութիւն շատ քաշեց խեղճը։ Միքայէլն ու ես տնտեսապէս և բարոյապէս անբաժան ընկեր էինք, իսկ Եշային օգնում էինք իբրև ազնիւ ընկերոջ, նա ինքը ոչինչ խնայած չէր մեզանից երբէք։ Բայց ես ի՞նչպէս ասէի մէկին, թէ այնպիսի մի ընկեր ունիմ և օգնում եմ նրան։ Այդ կը համարէին մի տեսակ մեծամտութիւն և մնափառութիւն իմ կողմից. պիտի ասէին՝ իր գլուխը չի կարողանում պահել, ուրիշների հոգն էլ է քաշում, այն էլ մի օտարի։ Մէկ անգամ հարկադրուած էի նոյն իսկ պ. Եղեանին երթալ մի հինգ մանէթ ձեռքափոխ ուզելու կամ պարտք։ Պարոն Եղեանցը տուաւ ինձ հինգ մանէթը, միևնոյն ժամանակ հաշուեց իր ելքն ու մուտքը և ասաց, որ հազիւ ծայր ծայրի է բերում, ինձ էլ պատուիրեց, որ հաշուով ապրեմ, եղած ժամանակ չշռայլել և յետոյ քաղցած նստել։—Այս անգամ ներեցէք, ասացի, միւս անգամ այդպէս կանեմ։

Զնայած իմ նեղ վիճակին, ինձանից աւելի ևս նեղացած ուսանողներ կային. դրանք էլ ինձ էին դիմում օգնութեան, տնտեսական թշուառութիւնը մի սովորական երևոյթ էր մեզ համար, չէինք յուսահատւում։ Մէկ անգամ մէկին փող չունէի որ տայի,

ժամացոյցս տուի, որ գնեմ գրաւ դնէ։ Վերջը թափել չկարողացանք, այնպէս էլ կորաւ։ Ես դերուիշի պէս մէկից առնում և միւսին էի տալիս, բայց ոչ ոք չգիտէր այդ բանը։ 67 թուականի սկզբում Եաշային տարայ իր ծնողաց մօտ Մոսկուայ։ Շատ ցուրտ էր, սարսափելի ցուրտ։ Տաք վերարկուս և թաղիքի ոտնամաններս հագցրի Եաշային որ չմրսի, բայց ես մրսեցի այնպէս, ինչպէս ցրտահար եղած վարդենի։ Վերադարձայ Պետերբուրգ ձայնս խզած կորուած, գոյնս թռած, առոյգութիւնս կորցրած։ Այլ ևս երգել չէի կարողանում և ռոճիկս ստանում էի ողորմութեան պէս։ Միքայէլի դնալուց յետոյ ես ինձ մի տեսակ որբացած զգացի, սկսեցի հայրենիքիս կարօտը քաշել և մաշուել։ Ձմեռը մօտենում էր և ես յոյս չունէի, որ գարունքին կարժանանամ, այնքան սաստիկ էր կարօտս։ Վեհաղնը իր բժիշկներին ուղարկեց ինձ տեսնելու։ Եկան զննեցին և միաձայն վճռեցին, որ վերադառնամ հայրենիք. «Եթէ մնաք, չէք ապրիլ, ասացին. ձեր տկարութիւնը և ֆիզիքական է և հոգեկան»։

Վճռեցի եկեղեցուց երեք հարիւր մանէթ ճաշակ ստանալ և ուղարկել հայրենիք։ Հէնց այս միջոցին Պետերբուրգ հասաւ Նորընտիր Գէորգ կաթողիկոսը և իջաւ Լազարեանի բնակարանումը։ Հետը բերել էր և Պետրոս եպիսկոպոսին ու Խորէն Գալֆայեանին և իր թարգման Նիկողայոս Տէր-Յով[illegible]։ Մանկունուն թողել էր Մոսկուայումը։ Բերել էր և շաթիրներին, որոնք գորգի վրայ դրուած խաչի գլխների էին նմանում։ Ինքը Լազարեանը դուրս էր եկել իր բնակարանից և տեղաւորուել իր դստեր մօտ։ Դպրեցին (պալատական) փնփնթում և կատաղում էր, տեսնելով, որ պատուաւոր հիւրերը փչացնում են թանգագին կահկարասիքը, չիմանալով ոչ նրանց պատիւը և ոչ գինը։ Հասարակ մահկանացուների համար անմատչելի պալատը դարձել էր մի հասարակաց պանդոկ, ուր անխտիր ներս ու դուրս էին անում ամեն կարգի մարդիկ։

Կաթողիկոսն ասել էր՝ թէ ինչ է մտադիր անելու էջմիածնումը, թէ մտադիր է վերանորոգելու և տպարանը և մի ամսագիր հրատարակելու։ Այն դէպքից օգուտ քաղելով՝ Սանասարեան և Եղեանը մատնացոյց են լինում ինձ և իմ Միքայէլի վրայ, վկայելով, որ մենք այդ գործին շատ յարմար ենք։

—Եթէ այդ երիտասարդներին տանէք այնտեղ, ասել էր

պ. Սանասարեանցը, ես էլ իմ կողմից, ինչ որ հարկաւոր լինի թէ ձուլարանի և թէ տպարանի համար, կը հոգամ։ Մայրեր ունեմ մօտս, այն էլ կը տամ։

Այստեղ ուշադրութեան արժանի է պ. Սանասարեանցի հեռատեսութիւնը, որով իր տալիք օգնութիւնը կապում է մեր այնտեղ լինելու հետ, շատ լաւ իմանալով, որ ամեն օգնութիւն ապարդիւն կանցնի եթէ այնտեղ չլինեն գործին հմուտ մարդիկ։

Սրա վրայ Վեհափառը ինձ կանչեց մօտը, պատուիրեց, որ երթամ Թիֆլիս սպասեմ մինչև իր վերադարձը, խոստանալով, որ այնտեղից ինձ կը տանէ էջմիածին լաւ ռոճիկով։ «Դէ, ապրես, տղա» ասաց և աջը մեկնեց, ես համբուրեցի և դուրս եկայ լուռ ու մունջ։

XVI

Պետերբուրգից դուրս եկայ 1867 թուականի վերջերին։ Երկաթուղին Պետերբուրգից մինչև Մոսկուա և այդտեղից մինչև Կոզլով էր։ Այդտեղից պէտք է փոստով գնայինք։ Ընկերս մի օֆիցեր էր, Լիւնդեկիստ ազգանունով, որ բաւական կարդացած և զարգացած մարդ էր։ Ճանապարհորդում էինք սանկայով, արթուն մնալու համար՝ ընկերս պատմում էր իր կարդացած հեղինակներից զանազան բոմաններ։ Զարմանալի յիշողութիւն ունէր. Շէքսպիրի բոլոր դրամաները բերան գիտէր։ Մեզ հետ կային և կաբարդացիք, որոնք նոյնպէս Պետերբուրգից էին գալիս, այնտեղի կայսերական թիկնապահ գնդի ձիաւորներից էին։ Նովոչերքասկից որ դուրս եկանք, ճանապարհին մեր առջև գնացող կաբարդացիք կանգնեցրին իրանց սանկան և սկսեցին իրանց լեզուով հարայ-հրոց բարձրացնել և դղակները գնդակի պէս վեր վեր նետել։ Մօտեցանք և հարցրինք պատճառը։—Հաբա չէք տեսնում, ասացին, նայեցէք, հրէն հորիզօնի ծայրում մեր էլբրուսը։

Տեսնելով հայրենի լեռան գագաթը, ուրախութիւնից չըգիտէին թէ ինչ անեն։ Երկար ժամանակ լեռներից զուրկ մնալով՝ շատ էին կարօտել խեղճերը։ «Ուրեմն մինակ ես չեմ կարօտ քաշել, ասացի ես մտքումս, սրանք էլ են իմ օրում»։ Այստեղ պատկերացան իմ երևակայութեանս մէջ հայրենիքիս ծաղկապատ լեռները, որոնց

տեսութեանը շուտով պիտի արժանանայի և փափագս առնէի՝ առատառատ ծծելով նրանց կենսատու օդը։

Շատ մարդիկ կան, որոնք իրանց վրայ չեն փորձել, թէ ինչ է քաղցը, ծարաւը, փափագը, կարօտը, սէրը և ուրիշ շատ զգացումները։ Ուրիշի զաւակի մահուան վրայ աւելի նրանք են լաց լինում, որոնք փորձով գիտեն, թէ ինչ է ծնողական կսկիծը. միտն են բերում իրանց զաւակը և լալիս աղի արտասունքով։ Ընկերս ծիծաղեց չէրքէզների ոգևորութեան վրայ, իսկ ես նրանց հետ վերվեր կըթռչէի, եթէ չամաչէի...

Ուղեկիցս առ ժամանակ մնաց Ստաւրոպոլ, իսկ ես չէրքէզների հետ գնացի մինչև Վլադիկաւկազ, և այստեղ էլ մնացի մինչև եօթն օր, որովհետև ճանպան կապած էր «заваль»-ների պատճառով։ Այստեղ ճանպուս ծախսը հատաւ, մնաց հինգ մանէթ միայն։ Էլ սպասել կարելի չէր. մտածեցի ուղտով գնալ։ Գնացի ուղտապահների մօտ, սակարկեցի մինչև Թիֆլիս երեք մանէթ։ Նստեցի մի ուղտի վրայ իմ եւրոպական շորերովս և քաղաքի միջով լանգու-լանգու անելով անցայ մինչև միւս ծայրը։ Ամենքն էլ ապշած նայում էին և հարցնում միմեանց, թէ ո՞վ է արդեօք այս գիժը։ Այդտեղ իմ ուղտապահներն իջան ուրիշ քարաւանի մօտ, որոնց բեռները դեռ պատրաստ չէին։ Ես մնացի դրանց մօտ կանգնած մոլորուածի պէս։ Մէկ մանէթ կանխիկ էի վճարել. «Եթէ այսօր գնալու չէիք, ասացի, ինչո՞ւ բէհ առաք ինձանից»...

Այս միջոցին, չըգիտեմ, Աստուած ուղարկեց, թէ իրանք եկան, մօտեցան ինձ երեք հոգի Ղզլարցի վաճառականներ, և միտքս իմանալով՝ ասացին, ուղտով անցնել անհնարին է, դուք բոլորովին կը սառչիք։ Մենք էլ պէտք է գնանք Թիֆլիս, սպասեցէք միասին երթանք. ինչ ունիք շտապելու։ Ես յամառեցայ, իսկ նրանք աշխատեցին համոզել ինձ և իբրև մի խենթի խելքի բերել։ Տեսայ որ ինձ անխելքի տեղ են դնում, պատճառը յայտնեցի, խոստովանելով, որ սպասել չեմ կարող, որովհետև ճանպու ծախքը հատել է։ Ղզլարցիք խնդացին։

—Գնանք, գնանք, ասացին, մեզ մօտ։ Մենք կարող ենք ձեզ մինչև Թիֆլիս տանել, իսկ այնտեղ դուք կը վճարէք ձեր բաժին ծախքը։

—Եթէ այդքան բարի կը լինէք, ասացի,—ես ուրախութեամբ կը վճարեմ թէկուզ պարտքիս կրկնապատիկը։

Կանխիկ վճարած մանէթս այլ ևս չըպահանջեցի ուղտապահներից։—Զանս, ինչո՞ւ չառնես, ասացին տղայքը։—Ո՛չ, ասացի, ես արդէն նստեցի ուղտի վրայ, այն էլ կեանքիս մէջ առաջին անգամ, այդ ինձ համար աւելի արժէ քան թէ մի մանէթ։

Թիֆլիսում պարտքս վճարելու յոյսս մեծ էր։ Վէպս տպել էր արդէն Միքայէլը, ուրեմն գրավաճառի մօտ ստանալիք կունենայի։

Հասանք Թիֆլիս և իջանք Զուբալովի քարւանսարայումը։ Միւս օրը գնացի գրավաճառի խանութը, որ ծախւած գրքերիս փողն ստանամ և բերեմ վճարեմ պարտքս, որ 12 մանէթ էր։ Բանից դուրս եկաւ, որ իմ անդրանիկ մտաւոր ծնունդն ևս իմ պատանեկութեան օրն է ընկել։ Այստեղ միտս ընկաւ Պետերբուրգի գրաքննիչ Ծերունի Բերոյեանցի մարդարէութիւնը։ Երբ որ վէպս տարայ նրա մօտ, որ գրաքննէ, նա իր ձեռագիր հարուստ բառարանի թերթերը փռել էր դահլիճի մէջ, և չըգիտեմ ինչ էր ջոկջրկում։

—Այդ ի՞նչ ես գրել, ասաց։

—Ինչ, ասացի, ազգային կեանքից մի վէպ է։

—Ազգային կեանքից... ասաց ծերունին ցաւած սրտով։—Ուրեմն ազգային թշւառութիւն կը լինի անշուշտ։ Այո՛, թշւառ է մեր ազգի կեանքը, շատ թշւառ։ Տեսնում էք ահա այս թերթերը. յիսուն տարւայ աշխատութիւններ են. յիսուն տարի շարունակ աշխատել եմ ես սրանց վրայ, բայց գնահատող չըկայ, ոչ տպող կայ, ոչ առնող, այսքան ամուլացած է մեր ազգի մէջ ուսումնասիրութիւնը, գրասիրութիւնը, չնայած, որ միլիոնատէր հայեր ունենք։ Այս աշխատութեան դին չըգնողները ի՞նչ դին պիտի դնեն քո վէպին։ Բէր, բէր ստորագրեմ։

Եւ ստորագրեց առանց կարդալու։

Ընկերս տպագրում է գրքերը թղթի փողը հաւաքելով բաժանորդագրութեամբ, շարում է ինքը, իսկ տպագրութեան վարձը վճարելու համար գտնում է մի ազգասէր մարդ, որ էր Երևանցի Աղաջան Թաղիանոսեանցը, նրանից փող է առնում մօտ մի հարիւր մանէթ և հազարի չափ գրքեր յանձնում իրան, թէ՝ վաճառեցէք,

ձեր փողը վերցրէք, իսկ մնացած գրքերը և աւելցած փողը յանձնեցէք հեղինակին։ Այս յանձնարարութիւնն անելուց յետոյ ինքը գնում է հայրենիք։ Մեր ազգասէր վաճառականը Աւետարանի քարքարաթաքոյցի նման գրքերը փակում է իր սենեակում, իսկ ինքը գնում է Երևան։ Գնացի մնալը։ Մի ուրիշ մարդ էլ կար մնալը՝ և ինչպէս երևաց՝ իր ընկերն էր։ Սովորական բարևներից յետոյ ասացի.—Շնորհակալ եմ, որ տպարանից հանել էք գրքերս, բայց շատ դժգոհ եմ, որ գրավաճառներին չէք յանձնել։ Գիրքը տպւած է կարդալու համար և ոչ բանտարկելու։ Գոնէ, հիմա լինի, այդպէս արէք, յանձնեցէք գրավաճառներին։

—Մենք ոչինչ չենք կարող անել, պատասխանեցին,—մենք ձեր գործակատարը չենք, մեր փողը կը բերէք, ձեր գրքերը կը տանէք։

—Շատ լաւ էք ասում, ասացի, և իրաւունք էլ ունիք, բայց որ փող չունեմ, ի՞րաւունքից բերեմ, կամ ինչ շահ ունիք գրքերը պահելով։

—Եթէ գրքերն ազատելու փող չունիք, ուրեմն ձեռք վերցրէք գրքերից, այնուհետև մենք կը վաճառենք և մեր փողը կստանանք. միայն դուք մեզ մի ստորագրութիւն պիտի տաք, որ գրքերը մեզ էք տուել, ստանալով լիովին բաւականութիւն։

—Եթէ այդպիսի մի թուղթ տամ, մի՞թէ դուք կասնէք, չէք զգալ, որ այդ մի անիրաւութիւն է, զրկողութիւն է, մի անզթութիւն է, ծայրայեղ հարստահարութիւն է, դա մի թալանութիւն է, ախր ինչպէս կարելի է հարիւր մանէթի տեղ՝ հազար մանէթի գիրք տալ։

—Ինչու՞ էք մեզ անպատուում, պարոն, բարկացան հայոց գրականութեան կատաղի թշնամիները. կամքի բան չէ, մեր փողերը բերէք, ձեր գրքերը տարէք։ Ուզում էք որ ծախւի, մեզ մի թուղթ տուէք, որ դուք ձեռք էք վերցնում։ Այդ էլ չէք ուզում, գրքերը կը մնան մի անկիւնում թափւած։

—Շատ լաւ, ասացի, տուէք ինձ թուղթ և գրիչ, ես կը տամ ձեր ուզած թուղթը, նրա հետ և իմ խորին զգացմունքը, որ կարելի է տածել միայն դէպի Նէյլոկի նման մարդիկը։

Այս ասածիցս բան չըհասկացան. Նէյլոկի մասին գաղափար չունէին։ Թուղթ և գրիչ տւին և ես իրանց ուզած ստորագրութիւնը

տւի և դուրս եկայ։ Յետոյ սրանք գրքերս տարել էին Երևան և այնտեղ ցրւել հատը 10—20 կոպէկով, որով հաւատացրել էին, որ ազգասիրութիւն են անում ժողովրդի մէջ էժան գնով գրքեր տարածելով։ Ես ինքս փողով գնեցի իմ գրքերից մի քանի օրինակ՝ բարեկամներիս ընծայելու համար։

Աշխարհումս վատ մարդիկ որ չըլինին, էլ ինչ գին կարող են ունենալ լաւերը։ Այս բանը դեռ շատ վազուց վրացոց հռչակաւոր բանաստեղծ Շոթա Ռուսթաւելին ոտանաւորով է ասել, թէ՝ «Գեղեցկութիւնն երբ էժանանայ, էլ մէկ չիր էլ չի արժենայ»...։

Պարտքս չըվճարած, միտք չունէի ծանօթներիս երևալ, բայց հիմա հարկադրւեցայ գնալ ուղղակի պ. Էնֆիաճեանցի մօտ և խոստովանել գլխիս անցքը։ Նախկին բարերարս շատ ուրախացաւ ինձ տեսնելով և իսկոյն տւաւ փոխանակ 12 մանէթի՝ երեսուն մանէթ, պատւիրելով՝ որ եթէ նեղութիւն ունենամ, չըծածկեմ իրանից։

Պարտքս վճարելուց յետոյ հիւրասիրւեցայ պ. Մովսէս Վարդանեանցի տանը։ Մովսէսը, որ իմ նախկին աշակերտակիցս էր ձուլարանում, հիմա գլխաւոր գրաշար էր պ. Էնֆիաճեանցի տպարանում և միշտ նամակակցութիւն ունէր հետս. ձրի ուղարկում էր ինձ և «Մեղուն»։ Ձուլարանումը մի ռուս վարպետ ունէինք մենք, որ այն ժամանակ միակն էր ամբողջ Թիֆլիսում։ Սա բոլոր աշակերտներին ուստա էր ասում, իսկ Մովսէսին՝ պոլատրա ուստա, այսինքն՝ մէկ ու կէս ուստա կամ ուստա ու կէս։ Պետերբուրգից Մովսէսին ուղարկած լուսանկարի վրայ մի ոտանաւոր էի գրել, որ նրան անւանել եմ «ուստա և կէս»։ Շատերը բերան են արել այդ ոտանաւորը, բայց չըգիտեն ուստա և կէս ասելուս պատճառը։

XVII

Մօտ եօթը տարի էր, ինչ որ չէի տեսել ծնողացս։ Հիմա գնացի աղքատ գրպանով, բայց հարուստ տարազով և գլխով։ Այնպէս ճոխ հագուստ, որ նրան տեսնող գիւղացին երբէք չէր կարող երևակայել, որ նրա գրպանները կարող են դատարկ լինել։

Լսել եմ, որ մի արևելցի բանաստեղծ ասել է՝ «Երկնքի արքայութիւնը ոչ թէ այն նիւթական ունի, ինչպէս դուք էք երևակայում, այլ ունի այն բոպէի քաղցրութիւնը, երբ մի մայր գրկում է եօթը տարով տարագրւած որդուն»։

Տունը հասայ թէ չէ, թէև առաջուց իմաց էի տուել գալս և նախապատրաստել, չափից դուրս յուզուեցան ամենքը։ Հայրս, որ նոյն իսկ իր զաւակներին չը համբուրելու մի նախապաշարմունք ունէր, որովհետև Ցուդան համբուրելով էր մատնել Քրիստոսին, այս նախապաշարմունքը ծնողական ծուլացած կարօտի առջև ջարդ ու փշուր եղաւ։ Ինձ առաւ իր հսկայական բազուկների մէջ և սկսեց հեկեկալ երեխայի նման և համբոյրների հեղեղ թափել։ Մօրս հերթ չէր տալիս։ Խեղճ մայրս ժպիտը բերանին և արտասուքն աչքերին՝ կանչում էր.—Ա՛յ մարդ, երեխիս կըսպանես, թող մէկ էրեսին մոռիկ տամ։ «Վա՛յ, ես քըմատաղ ինեմ, ես, անուշ բալաս, անջաղ մին եկար»... Հայրս բաց թողեց թէ չէ՝ ես «ազի ջան» գոչելով՝ ընկայ մօրս գիրկը և երեսս թաղեցի երկու հսկայական ծծերի արանքում։ Ամբողջ գիւղը հաւաքուեց, որը ժպտում և որը լաց էր լինում ուրախութիւնից։

Մի զարմանալի գիւղ է մեր գիւղը. իր բնակիչներին սիրագորով մօր պէս գրկած է պահում, չթողնելով ոչ ոքի պանդխտութեան երթալ։ Ես առաջին և վերջին պանդխտութիւն քաշողն եմ մեր գիւղում։ Նոյն իսկ Թիֆլիսումը չի կարողանում մնալ մեր գիւղացին, չունինք ոչ մի վաճառական և ոչ արհեստաւոր քաղաքիս մէջ։ Նրանք նուիրուած են իրանց գիւղի բերրի և արդիւնաւէտ հողին ու ջրին. դուրս երթալու կարօտութիւն չունին։ Ինքը գիւղը Գուգարքի ակն ու մարգարիտն է։ Այդտեղ է եղել հին Գուգարքի բդեշխութեան մայրաքաղաքը։ Ամեն անգամ երբ գնում եմ մեր գիւղը, սրտիցս չի տալիս քաղաք գալ և չէի գալ, եթէ ստիպողական պահանջ չունենայի։ Ամեն մարդ կը սիրէ իր ծննդավայրը, բայց այլ է սիրել, և այլ՝ հաւանել, հիանալ և զմայլել։ Մեր գիւղն զմայլելի է և հիանալի իր գեղեցիկ դիրքով և տեսարաններով։ Նախքան Ռուսաստան գնալս, ես այդ գեղեցկութիւնը չէի զգացել, որովհետև չունէի գեղեցկի ճաշակը, մանաւանդ բնութեան վերաբերեալ։

Ինչպէս հին հէքիաթներում հարսանիքն անում են եօթն օր և եօթը գիշեր, այնպիսի մի հարսանիք դարձաւ մեր տունը ամբողջ եօթն օր և եօթը գիշեր։ Կեր ու խումին էլ հաշիւ չկար։

Այնպէս էի սովորել ձրի հաց չուտելուն, որ հիմա շատ

թեալի էր ինձ, որ կարող եմ կուշտ փորով հաց ուտել առանց մի բան վճարելու, և մինչև անգամ ուրիշներին էլ հիւրասիրել ամենայն առատութեամբ։ Գիւղում սովորութիւն չկար որոշած ժամերում ճաշել կամ ընթրել։ Մեր սուփրէն առաւօտանից դցած էր մինչև կէս գիշեր, մէկը նստում և միւսը վեր էր կենում շարունակ։ Ով ասես՝ գալիս էր աչքալոյս, մինչև հեռաւոր գիւղերից անգամ, և ոչ միայն հայեր, այլ և վրացիք և թուրքեր։ Հայրս յայտնի էր իբրև շատ հացով մարդ և շատ հիւրասէր, նրա եկողգնացողներին թիւ չկար։ Մայրս չափաւորութիւն էր սիրում, որովհետև նա էր եփողն ու թխողը։ Հայրս մէջտեղ ուտում էր, զրաղ մնալիս։ Ամենի հետ ուտում և խմում էր հիւրերին օրինակ տալու համար։ Այսպիսի մարդ մէկ էլ Ալեքսանդրապոլ տեսայ։ Դա բժշկապետ Աւետիք Բաբայեանցի հայրն էր։

Իմ բացակայութեան ժամանակ բաւական կոտրել էին թէ հայրս և թէ մայրս։ Հայրս մէջքից կռացել էր և գաւազան էր առել ձեռքը, կորցրել էր իր առաջուան ուրախութիւնն ու աշխոյժը։ Բայց երբ տեսաւ ինձ, երբ իմացաւ, որ առաջիս մեծ ասպարէզ է բացուում յառաջ գնալու, երբ տեսաւ, որ ես էլ այն չեմ, ինչ որ տպարանումն էի, հիմա կաթողիկոսներն են հրաւիրում գործի և բարձր պաշտօնի—մէջքը շտկեց, գաւազանը դէն ձգեց, վերանորոգուեց վաթսունչորսթը տարեկան հասակում և առաջուայ պէս սկսեց իր Քեօրօղլին երգել։

Թող ոչ ոք չզարմանայ, աչքովս տեսած բանն եմ ասում։ Այստեղ պէտք է մի հանգամանք ևս աւելացնեմ, որ ի նկատի ունենան բարի զաւակ լինելու փափագ ունեցողները, մանաւանդ նրանք, որոնք ռամիկ դասակարգից ինտելիգենտ դառնալով մի առանձին արհամարանքով են նայում իրանց արիւնակիցների վրայ։ Ես իմ հօրս պատուում էի չափից դուրս. այս հանգամանքն անուշադիր չէի թողնում, գործով էի ցոյց տալիս առանց զանցառութեան։ Նրա համար նոր հագուստ էի առնում և զարդարում։ Հայրս ասում էր.—որդի, ինչու՞ ես նեղութիւն քաշում, ինչու՞ ես զուր ծախքի տակ ընկնում, այս բոլորը տէրտէրը պիտի տանի։—Ինչ՞ս է պէտք, ասում էի. յետոյ ով ուզում է թող տանի, բայց հիմա ես իմ պարտականութիւնս պէտք է կատարեմ. երեխի ու ծերի

սիրտը պէտք է շահած պահել, մանաւանդ հաղուստի կողմից։ Ապրիս, որդի, զօրանաս, որ քո հօրն այդպէս պատիւ ես տալիս։ Թող ուրիշներն օրինակ առնեն քեզանից, Աստուած էլ քո անունը բարձրացնի, ինչպէս դու բարձրացնում ես իմ անունը... Ստէպ-ստէպ բաղնիք էի տանում և ինքս իմ ձեռքովն էի լւանում ոտներն և գլուխը և լողացնում խչխչալի։ Ես այս անում էի ստիպուած ներքին դրդումից, բայց նկատում էի նաև, որ տեսնողների վրայ խոր տպաւորութիւն է գործում և լաւ օրինակ դառնում։ «Առաւել լաւ, ասում էի մտքումս, սա մի ցուցամոլութիւն չէ, այլ մի սրբազան պարտականութիւն, որ պէտք չէ թաքցնել նորագոյն փչացած սերընդից, այլ պէտք է նրա աչքը կոխել։

Ալէքսանդրապոլ եղած ժամանակս տեսնում էր ժողովուրդը, թէ ինչպէս եմ վերաբերւում ես դէպի իմ հայրը և ինչպէս մի ուրիշը դէպի իր հայրը, և այս դառել էր խօսակցութեան առարկայ։ Այդ ուրիշը Լազարեան ճեմարանում աւարտած մի կոկարդաւոր վարժապետ էր պետական ուսումնարանում։

Սրա համար պատմում էին, թէ երբ որ հայրը մօտն է գալիս, ամեն կերպ աշխատում է ցոյց տալ, որ նա իր հայրը չէ, այլ իրանց գիւղացի մի ռամիկ, կամ եթէ խոստովանում էր, չէր ասում իմ հայրն է, այլ ասում էր «համարեա թէ»։ Ես համարում էի այս մի զրախօսութիւն և չափազանցութիւն։ Մէկ օր ինքս ականատես եղայ այս բանին։ Գնացել էի մօտը, հայրը հեռու մի անկիւնում նստած էր իբրև մի օտարական. չծանօթացրեց ինձ, բայց ես մօտեցայ նրան, ձեռք տւի և դառնալով վարժապետին՝ կիսահարց առաջարկեցի, «կարծեմ, ասացի, սա քո հայրը պէտք է լինի»։ Վարժապետը նեղմացրեց և ասաց կըմկըմացնելով՝—Հը՛մմմ... ինչպէս ասեմ... համմմամամարեա թէ»։ Սրա վրայ, ես դարձայ իրան և յանդիմանեցի ռուսերէն.—Ցիմար ասացի, ինչպէս «համարեա թէ», ի՞նչ մեղք կը լինի, որ սա քո հայրը լինի. դու կարծում ես, որ սրանից շատ լաւ մարդ ես. սա գոնէ մի բնական մարդ է, իսկ դու մի շինովի արարած...»։

Ահա այսպիսի որդիք էլ կան, որոնցից վատթարները նոյնպէս կան։ Այսպիսի ծնողքը վերակենդանանալ կարող չեն, նոյն իսկ ունեցած կենդանութիւնն էլ կը կորցնեն։

Հայրս մէկ անգամ ասաց.—Ես ինձ շատ մեղաւոր եմ զգում, որ քու ուսման համար ոչ մի կոպէկ ծախք չեմ արել։

—Իսկ ես կարծում եմ, պատասխանեցի, որ քեզանից ահագին դրամական օգնութիւն եմ ստացել։

—Այդ ի՞րբ, ո՞ր տեղից, ի՞նչպէս։

—Քեզանից, քո հոգուց, քո մարմնից։ Չէ՞ որ ես քո ծնունդն եմ։ Եթէ իմ հայրս դու չըլինէիր, քո բոյ ու բուսաթով, քո առողջ կազմւածքով, քո բնական ձիրքերով և շնորհքով, այլ լինէիր մի անշնորհք մարդ, մի ապուշ և թոյլ արարած, ի՞նչ ես կարծում, ես այնուհետև մի՞թէ կարող կը լինէի բանի նման մի բան դառնալ, թէկուզ միլիոններ ծախսէիր վրաս։ Ո՛չ, հայր, դու շատ բան ես տւել ինձ, ինչ որ դու տւել ես, մանէթներից շատ և շատ թանգ է...

—Ապրիս, որդի, որ այդքանը հասկանում ես, պատասխանեց հայրս, տեսնելով որ ես ժառանգական յատկութիւններին մեծ նշանակութիւն եմ տալիս։

Ուշադրութեան արժանի է, յիրաւի, որ ժառանգական յատկութիւնների մասին մեր բոլոր գիւղացիք ամենայն տեղ պարզ գաղափար ունին, թէև դրանից շահելու գիտակցութիւնը նւազ է և համարեա թէ չունին։

XVIII

Գիւղումը երկար մնալով՝ ես մեր տանը մի օգուտ տալ չէի կարող, բայի վնասից։ Պէտք է շուտ վերադառնայի քաղաք։ Մտադրութիւնս յայտնեցի հօրս։

—Գնա, որդի, ասաց հայրս, բայց մենակ մի մնար, դունէ դուռը մի ընկնիր, աղջիկ ուզիր, քեզ համար տուն ու տեղ դիր։ Թեղծ աղջիկս քանի ողջ էր (Օսանան՝ Արութիւնի քոյրը) քաղաքումը մեզ համար տուն ունէինք, հիմա գնում ենք-թաւլումն ենք վէր գալիս։ Մի վախենար, ապրելուդ հոգսը շատ մի քաշիր, Աստուածը ողորմած է, քո տարեկան հացն ու գինին այստեղից կուղարկեմ, մնացածն էլ դու կարող ես հոգալ։

Հայրս իմ սրտից էր ջուր խմում։ Ես արդէն այդպիսի մտադրութիւն ունէի. Պետերբուրգի ազատ կեանքը Թիֆլիսում վարել

կարող չէի։ Դժուարն այն էր, որ դեռ ևս պաշտօն չունէի, Էջմիածնից չէին պահանջում։ Մեր Մովսէսի (Վարդանեանց) մօտ էի բնակում. նա էր պահում ինձ իր բոլոր ծախքով, իմ միայն հօրս ուղարկած հացն ու գինին էր, բայց աւելի ծախքի մէջ էր ձգում մեզ։ Զրի գինի ունենալով՝ շուտ-շուտ հրաւէրներ էինք սարքում։ Ուզում էի դրաշարութիւն անել, բայց Մովսէսը չէր թողնում. նա իմ պատիւս ինձանից աւելի էր ուզում պահել։—Դրաշարութիւն որ սկսես, ասում էր, էլ ոչ մի օրինաւոր պաշտօն չեն տալ։—Վնաս չունի, ասացի, թող չտան, ես պարապ կենալ կարող չեմ։ Մտայ տպարան, և մի և նոյն ժամանակ խնդիր տուի Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանը, որ ինձ ուսուցչութեան պաշտօն տան։ Մարտիրոս Սիմէօնեանցն արդէն վարժապետ էր այդ տեղ, խնրիրս էլ նրա թելադրութեամբ գրեցի։ Պ. Էնֆիաճեանցն ուզում էր ինձ մոցնել «Մեղուի» խմբագրատունը, իբրև օգնական Սիմէօնեանցի, բայց յաջողութիւն չունեցաւ։ Խմբագիրը չընդունեց։ Գրեցի Պետերբուրգ իմ անյաջողութիւնների մասին և այն էլ յիշեցի, թէ ինչպէս երևում է, Վեհափառն իր խոստումը կատարելու մոադրութիւն չունի։ Պետերբուրգից բազմաթիւ նամակներ գրուեցին թէ Թիֆլիս և թէ Էջմիածին, որով շատերի ուշադրութիւնը դարձրին ինձ վրայ։

Մի և նոյն ժամանակ աղջիկ ուզելու միտքս չեմ հեռացնում ինձանից, և արդէն զանազան տեղերից միջնորդներ են գալիս մօտս մեծ-մեծ խոստումներով։

—Ես միջնորդով աղջիկ չեմ կարող ուզել, ասացի, իմ միջնորդը ես ինքս պիտի լինեմ։ Եւ այդպէս էլ եղաւ։

Մէկ իրիկնապահի ս. Սարգսի զառիվերը բարձրանալիս դէմս ելան մի պառաւ կին և մի սիրուն աղջիկ։ Փողոցի անհարթութեան պատճառով բանն այնպէս պատահեց, որ ես ու աղջիկը դէմ առ դէմ եկանք, և ես նրանից յափշտակուելով՝ քարի պէս արձանացայ։ Աղջիկը նոյնպէս արձանացաւ մի րոպէի չափ և շառագունելով՝ շուտ թեքուեց և արագացնելով քայլերը հասաւ մօր ետևից, որ գնում էր գլուխը քաշ գցած և ով գիտէ ինչ մտածմունքի մէջ ընկած։ Ես մնացի նրանց ետևից նայելիս։ Մայր ու աղջիկ յետ մտիկ տուին և ինձ նկատելով՝ իսկոյն շրջեցին երեսները։ Ես մի քիչ ամաչեցի և շարունակեցի ճանապարհս։ Մեր հանդիպած տեղից մօտիկ ինձ ծա-

նօթ խանութպան կար դուրսը կանգնած, և հեռից նկատել էր մեր հանդիպումը։ Սրան հարցրի, թէ ովքեր էին այն կին ու աղջիկը։ Նա ասաց՝ այստեղից հեռու չէ նրանց տունը և այս ինչ կինն է. յետոյ աւելացրեց.—Հը՛, կուլի բան ունիս մտքումդ, թէ վուր աչքումդ դուր եկաւ, գնա ու գնա, չիս փոշմնի. էն ղադար ինձ օր աւելնայ։ Քու արևն եմ ասում, էտ թահրն ախճիկ մեր քաղքումը մէ հատ չիս գթնի...

Ես ժպտեցի և արագացրի քայլերս։ Գնացի իմ քեռակնոջ մօտ, որ հէնց նոյն թաղումն էր կենում։ Սա մի շատ բարեպաշտ և հին հաւատի պառաւ էր։ Մեծ-Պասին չամշով էր չայ խմում և խստիւ պահպանում բոլոր պառաւական կամաւոր ծոմերն ու պասերը։ Մի և նոյն ժամանակ մի շատ ժրաջան և աշխատասէր տանտիկին էր։ Ափսոս որ բուն հայկական այս տիպերն անյայտացան մեր միջից և այդ տնարարների տեղը բռնեցին տնաքանդերը։ Ամեն անգամ երբ սրա մօտ էի գնում, ինձ ստիպում էր, թէ աղջիկ ուզի։ Այս անգամ էլ մի նոյնը կրկնեց։—Հիմա պիտի ուզեմ, ասացի, թէ որ ինձ կօգնէք այս բանումը։ Պատմեցի թէ ում եմ տեսել ու հաւանել։—Աղջիկ շատ եմ տեսել, ասացի, բայց ոչ ով սէր չի գցել սրտիս մէջ, իմ սիրտը կոպաւ էդ աղջկանը, էլ չի զջլիլ։

Պառաւը ճանաչեց, թէ ով էր և ասաց.

—Հա, ապրի աչքդ, շատ լաւ աղջիկ է, հալալ ծծկեր, նամուսով, զայրաթով, տանու աղջիկ է, լաւ մօր պահած. շատ էլ շնորհքով է, ամեն բան ձեռքիցը գալիս է, կար, ձև, քարգահ, ինչ չէքիլէք, ինչ ճակոի աղլուխներ, էնքան էլ լաւ բնութիւն ունի, որ սաղ թաղաւորը նրա արևովն է խնդում։

Ուսման մասին խօսք չէր կարող լինել, այդ ժամանակ հայ դպրոցները չէկային աղջկանց համար։

—Բայց գիտես ինչ կայ, աւելացրեց դեղէն,—նրանք փող չունին, լսել եմ քեզ հազարներ են առաջարկում։ Մէկ էլ ինձ մօտ եկաւ անցեալ օրը. երեք հարիւր թուման կըտանք, ասում է։—Զէ, ասացի, աղջիկը նրա մօր հասակն ունի, նա չի ուզիլ։ Մեծ փողով լաւ աղջիկ չէն տալ քեզ, էս լաւ գիտենաս։

—Ինձ փող չի հարկաւոր, ասացի, դու գնայ էդ աղջիկն ինձ համար ուզիր։ Աւելի լաւ, որ փող չունին. անփող ինձ նման աղին

չեն կարող տալ. ուրեմն պէտք է որ համաձայնին։

Երբ մութն ընկաւ, դեղէն գնաց խնամախօս։ Քիչ անցած՝ վերադարձաւ աղջկայ մօր հետ, որ մի տարած տրորած խեղճ կնիկ էր։ Սա եկել էր, որ իր ազգայ փեսացուին տեսնի։ Ծանօթացաւ և սկսեց կողմնակի բաների վրայ խօսիլ, որպէս թէ ինձ համար չէր եկել։ Բայց ես միջահատեցի նրա խօսակցութիւնը և սկսեցի բուն գործից խօսել։—Դեդի, ասացի, քո աղջկան ես հաւնեցի, թէ որ դու էլ, քո աղջիկն էլ ինձ կը հաւնէք, մեր բանը վերջացնենք։

—Քեզ Աստուած է հաւանել, որդի, ասաց, լաւ տղայ ես երեւում աչքումս, ինչ թաքցնեմ։ Ես քեզ տեսել եմ երեխայ ժամանակդ, հիմա, Աստուած պահի, մեծ մարդ ես դառել։ Իմ աղջիկն էլ պակաս աղջիկ չէ, էդ թող սրանք ասեն, ինձ խօսք չի հասնիլ, ոչ ով իրա թանին թթու չի ասիլ, թէ որ զամաթ կը լինի, կը տեսնես։ Բայց պէտք է գիտենաս, որ մենք պատրաստութիւն չունինք, հասկանում ես, փողը չըկայ մէջ տեղը։ Շատերն են տալացուք, լուսահոգի մարդուս շատերն են պարտ, բայց էսօր էգուցն են գցում, ոչինչ չեն տալիս։

—Այդ վնաս չունի, ասացի, դուք լաւ է, գոնէ մի տուն ունիք, քրեհ չէք տալիս, իսկ ես ամենևին ոչինչ չունեմ։ Լաւ հագուստիս մանիկ մի տար, ջիբս դարտակ է. էգուց էլօր չասես, որ ես քեզ թանխէք ուի, խաբեցի։ Հէնց էս եմ որ կամ, ոչինչ չունեմ։

—Էս ինչ է ասում, քա, բացականչեց պառաւը, հանաք է անում, թէ դրուստ է խօսում։ Որ քու բանը էդպէս է, որդի, էլ ինչու ես իմ աղջկայ մեղքի տակն ընկնում, նրա աչքը քեզ վրայ գցում։

—Ինչ վնաս ունի, ես նրա մեղքի տակը կընկնեմ, նա էլ իմ, էսպէս եօլա կը գնանք։

—Չէ, ախպէր, ես զարուլ չեմ, դու ուրիշ հանգի ես խօսում, էրեսդ շատ է բաց. ես աղջիկ չունիմ դէն գցելու։ Քո տարեն էլ տուր մէկ հարցնեմ իմ բարեկամներին, տեսնեմ նրանք ինչ են ասում։

Անուշս գրեցի ուի իրան և ասացի՝ վաճառականներ ինձ չեն ճանաչիլ, միայն վարժապետներ կը ճանաչեն, եթէ բարեկամ վարժապետ ունիք, տարէք նրան ցոյց ուէք։

Տոմնակս ցոյց էր տուել իր մօտիկ ազգական մի վարժապետի,

նա էլ խորհուրդ էր տուել, որ առանց խօսելու աղջիկը տայ ինձ։ Ասել էր՝ ուղիղ է ասել, նա հիմա պաշտօն չունի, բայց շուտով կունենայ։ Նրա պէս ուսում առածներին տասը հազար են գալիս, բայց նա ուրիշ բնութեան տէր է, փողով աղջիկ չի ուզիլ և ոչ էլ հարուստների եաւիից կընկնի։

Երեք օրւայ մէջ ամէն բան պատրաստ էր։ Ես ու Մովսէսը մի ժամացոյց և մի մատանի առանք և գնացինք նշանդրէք։ Նոյն երեկոյին ես այլ ևս չէի ուզում հեռանալ նշանածիցս. բայց ինձ զօռով դուրս արին։ Միւս երեկոյին գնացի, դուռը վրաս փակեցին, ինձ թողեցին ցրտումը։ Ես թաք կացայ դուրսը. քառորդ ժամանցած՝ զօքանչս դուռը բաց արաւ և գնաց խոհանոց, այդ միջոցին ես ինձ ներս գցեցի և ընկայ նշանածիս ոտքերը և խնդրեցի նրա պաշտպանութիւնը։ Զօքանչս այդ աղջիկն ունէր միայն, երկու աղայ էլ ունէր, բայց երկուսն էլ կորած էին՝ մէկը Ռուսաստանում և միւսը հէնց քաղաքի մէջ։ Երբ որ ներս եկաւ զօքանչս և ինձ տեսաւ, սաստիկ բարկացաւ։—Ա՛ռ, ասաց, քո նշանը, դուրս կորիր իմ տանից, ես քեզ նման երեսբաց փեսայ չեմ ուզիլ...

—Ինչու եմ նշանս առնում, ասացի, հազիր նշանածս կառնեմ ու հայդա, կը փախչենք քեզանից...

Այստեղ նշանածս պաշտպանեց ինձ, ասելով,—դէդա, ես երեխա հօ չեմ, ուրեմն հաւատ չունեն դու ինձ վրա։ Դու աւելի լաւ կանես, որ ընթրիքի պատրաստութիւն տեսնես, կարելի է քաղցած է (անուշս չի տալիս)։

—Օ՛... շատ քաղցած եմ, շատ, էսօր թիքայ չեմ դրել բերանումս, բացականչեցի ես։

—Ա՛յ, սատանայ, նկատեց զօքանչս և գնաց խոհանոց։

Նշանածիս ձայնն ու խօսելը առաջին անգամ լսեցի։ Մայրը որ դուրս գնաց, սա այլ ևս չխօսեց հետս։ Միտս ընկաւ, որ խօսելն էլ մի առանձին ընծայ արժէ։—Ես գիտեմ, ասացի, որ քեզ մի ընծայ պիտի տամ, որ խօսես ինձ հետ, բայց ինչ ընծայ կարող եմ տալ, որ թանգ լինի ինձանից, ահա ես ոտով գլխով, հոգով մարմնով քեզ ընծայ, և սկսեցի համբոյրներ ցողալ հրեշտակային քնքշութեամբ։

—Դու փոխանակ այդքան չարութիւն անելու, խօսեց նշա-

նածս, աւելի լաւ կանես, որ ինձ գիր սովրեցնես, թող այդ լինի քո ընծան։ Դու իմն ես ու իմը, քեզ ով կը խլի ինձանից, դու պէտք է քեզանից դուրս մի բան տաս ինձ։ Ինձ գիր սովրեցրու, որ քո գրածները կարդամ։ Ես գիտեմ վրացերէն գրել կարդալ, բայց հայերէն մէկ այբբեն գիտեմ միայն։

—Շատ ուրախ եմ, հոգիս, չափից դուրս ուրախ, որ այդպէս սէր ունես կարդալու։ Ես մէկ շաբաթում քեզ կը սովորեցնեմ օրինաւոր գրել և կարդալ, միայն մէկ պայմանով, որ ինձ դուրս չանէ հայրդ։

—Եթէ խելօք կը կենաս, մայրս բան չի ասիլ։

—Ազնիւ խօսք եմ տալիս քեզ. բայց չեմ կարող չփայփայել, չդուրդուրել քեզ, այդ մի յանցանք չէ։

Միւս օրը տեղափոխուեցի զօքանչիս մօտ։ Սկսեցի գիշեր ցերեկ աշխատել տպարանումը, որ հարսանիքի համար փող պատրաստեմ։ Նշանածս էլ իր աշխատութիւնը կրկնապատկեց, միևնոյն ժամանակ պատրաստում էր և տուած դասերս։ Անտարբեր չէր և զօքանչս, սա էլ իր հանգուցեալ ամուսնու թողած ապառիկների եռևից ընկաւ։ Մի օր մի ահագին կապոց թղթեր ձգեց առաջս, որ նրանցում փող գտնեմ։ Բոլորն էլ մուրհակներ էին, բայց որի ժամանակն էր անցած, որի պարտականն էր մեռած կամ սնանկացած. միայն մէկը գտնուեց յուսալի, որի մէջ երկու հարիւր մանէթի գումար կար։ Այդ թուղթը տուի իրան. տարաւ և բերաւ բոլորն էլ տուաւ ինձ, որ հարսնիքի պատրաստութիւն տեսնեմ։ Շաբաթ չքաշեց, ամեն ինչ պատրաստեցի, մնաց որ պսակի հրամանն ստանամ։ Այդ ժամանակ կոնսիստորիայի նախանդամը Սուքիաս վարդապետն էր։ Երբ քահանայիս թուղթը տարայ, Սուքիասն ինձանից 10 մանէթ ուզեց հրաման տալու համար։

—Ես միայն երեք մանէթ կը տամ, ասացի, այդքան փող չունեմ։

—Եթէ չունես, ասաց, ինչու ես ամուսնանում։

—Ուրեմն՝ որովհետև չունեմ և այսու ամենայնիւ ամուսնանում եմ, դրա համար պէտք է ձեզ տուգանք վճարեմ, և այնուհետև կարող կը լինեմ պահելու ամուսինս առանց փողի էլ։ Դուք չգիտէք, հայր սուրբ, թէ ում հետ էք խօսում։ Ես չեմ եկել ձեզ

խորհուրդ հարցնելու, թէ ամուսնանամ արդեօք թէ ոչ, դուք ինչ իրաւունք ունիք ինձ ասելու, թէ ինչու էք ամուսնանում, ում է տուել ձեզ իմ ցանկութեան վրայ իշխանութիւն։

—Դուք շատ յանդուգն էք երևում, պարոն, ասաց Սուքիասը, եզակի ձևով խօսելը փոխելով յոգնակիի։

Ես ձայն չհանեցի և դուրս եկայ բարկացած։

Եռևիցս վազեց բարեկարգիչ Ց. Ք. Արաբատեանը, որ ինձ լաւ էր ճանաչում մանկութիւնիցս սկսած, կանգնեցրեց ինձ ու ասաց, դու միամիտ գնա բանդ տես, ես հրամանը կուղարկեմ քո ծխական քահանային, և ես ինքս էլ կը գամ, թէև ինձ չես հրաւիրել։ Դու բեր երեք մանէթ տուր, աւելի տալ հարկաւոր չէ։

—Տէր հայր, ասացի, ես աւելի էլ կը տայի, բայց աւելին այդպէս անքաղաքավարութեամբ չեն առնիլ, վիրաւորուելով չեն պահանջիլ, այլ հայրական սէրով յորդորելով։ Դա որ ինձ հետ այդպէս է վարուում, ինչպէս կը վարուի խեղճ հայերի հետ։

Ապսպրեցի հայրս եկաւ հետը բերելով բոլ գինի և սկսուեց Խարբուլսի թաղումը չտեսնուած մի նոր հարսանիք։ Նորութիւնը նրանումն էր, որ առանց զուռնայի էր, դրա տեղը բռնել էին ազգային երգերն և տաղերը։ Հաւաքուած էր ժամանակակից ազգային ինտելիգենցիան, որը հրաւէրով և որն էլ առանց հրաւէրի անկեղծ բարեկամութիւնից թելադրուած։ Խաչեղբայրս իմ սիրելի Մովսէսն էր։ Կեանքիս մէջ այնպիսի առիթներում աստիճանով ինձանից բարձր մարդկանց դիմած չեմ նրանց հովանաւորութիւնը բարեկամական կապով ապահովելու համար։ Հարսանիքս դուրս եկաւ իմ սպասածից շատ փառաւոր։ Եւ այդպէս ահա ես ամուսնացայ 1868 թ. հոկտեմբերի 22-ին օրիորդ Էփէմիա (Նոյնը և Փէփէլ) Մովսէսեան Տէր-Ցարութիւնեանցի հետ։

Այս անցքից յետոյ իմ խնդիրս յաջողուեց Ներսիսեան դպրոցում, բայց Էջմիածնից էլ եկաւ մի հրաման, որով պահանջում էին, որ ես անյապաղ երթամ, քանի որ խօսք եմ տուել Վեհափառին և նրանից երեք հարիւր մանէթ ճանապարհածախք ստացել։

Սրբազան Մակար առաջնորդը կանչեց ինձ և ասաց.

—Վարժապետ ամեն ոք կարող է լինել, բայց ինչու համար

որ դուք կանչուած էք Էջմիածին, այդ բանին յարմար և ընդունակ՝ բացի ձեզանից ոչ ոք չըկայ։ Երբ որ դուք կը վերջացնէք այդ գործը, կը պայծառացնէք Էջմիածնի տաճարանը, ձեր տեղը բռնող աշակերտներ կը հասցնէք, այնուհետև դուք կը վերադառնաք, այն ժամանակ իմ պարտականութիւնս լինի, որ ես ձեզ ոչ միայն վարժապետութիւն տամ, այլ և ձեռնադրեմ և ուղղակի աւագ քահանայութիւն տամ քաղաքի ամենաարդիւնաբեր մի եկեղեցում։

—Շնորհակալ եմ, ասացի, սրբազան հայր, որ այդքան բարի տրամադրութիւն ունէք դէպի ինձ, բայց ներեցէք, որ մի թեթև նկատողութիւն անեմ Էջմիածնից ստացած հրամանի առիթով։ Այդ թուղթը մի քաղաքավարի հրաւէր չէ, այլ հրաման։ Դրանից երևում է, որ եթէ գնալու չըլինեմ, ինձանից պէտք է յեա պահանջի իմ ստացած երեք հարիւր մանէթը, թէպէտ այդ չէ ասուած ներկայ հրամանում։ Վեհափառը դեռ Պետերբուրգ չէր եկել, որ արդէն որոշել էին այդ գումարը տալու ինձ։ Ես կամովին մնացի նրա գալստեանը.

—Ինչիդ պէտք է, որդի, թող իրանց վրայ առնեն այն, ինչ ուրիշներն են արել։ Ես այդ մասին աւելի շատ բան գիտեմ դուցէ։ Բայց քո ռոճիկդ որոշել են արդէն տարեկան վեց հարիւր մանէթ, բնակարան, ուտելիք և վառելիք և այստեղից էլ ճ նապարհածախք յիսուն մանէթ։ Քո ընկերն էլ ահա երեք ամիս է, որ այնտեղ է և քո գնալուն է սպասում։ Պետերբուրգից նոյնպէս ձեր գնալուն են սպասում, ոչինչ չեն ուղարկում այնտեղից և չեն ուղարկիլ մինչև դուք չըգնաք. տեսնում էք,ուրեմն ես էլ գիտեմ մի քանի բան։

Ես համաձայնութիւն տի և խոստացայ մի շաբաթուայ վրայ ճանապարհ ընկնել։ Ես կատարեցի իմ խոստումս, կատարեցի այն բոլորը՝ տասնապատիկ առաւելութեամբ՝ ինչ պայման որ դրաւ Մ. սրբազանը ինձ ձեռնադրելու համար. բայց նա, որ առասպելական յիշողութիւն ունէր, մոռացաւ իր խոստումը և չըկատարեց իր պայմանը շնորհիւ միջանկեալ չարախօս աղէխների։

(Վերջ առաջին մասի)

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԲԱՆ

Այս գործի առաջին մասը պարունակում է իր մէջ գլխաւորապէս իմ անհատական գործունէութիւնը, իսկ սոյն երկրորդ մասի մէջ դրա վրայ պէտք է աւելանայ և իմ հասարակական գործունէութիւնը։ Առաջին մասում ես միայն կրթում եմ ինձ, իսկ երկրորդում՝ կրթում եմ ուրիշներին, թէ իբրև ուսուցիչ և թէ իբրև գրող։ Պատշաճաւոր տեղերում կը մտնեն և առաջին մասում չը յիշածներս։

Եթէ մէկը մի որ և է օտար երկրում եղել է, նա խօսակցութեան մէջ՝ տեղի թէ անտեղի՝ յիշում է ստէպ-ստէպ նոյն տեղը, ասելով՝ օրինակ՝ «Երբ որ ես Պետերբուրգ էի... Պետերբուրգում եղած ժամանակս... Մէկ օր Պետերբուրգումը... Այդ բանը Պետերբուրգումը...»

Շատերի մէջ այս յատկութիւնը մինչև ծաղրականի է հասնում, իսկ կատակերգութիւններում այսպիսի տիպերը բաւական զարմացնում են հասարակութեանը։ Պէտք է գիտենալ սակայն, որ ամեն անհատ էլ այս յատկութիւնն ունի, միայն մէկը գործ է ածում պատշաճաւոր տեղում, միւսը՝ անպատշաճ։ Այս հանգամանքի շնորհիւ է, որ մենք մեր մէկ անգամ տեսածը չենք մոռանում։ Զեն մոռացուում միայն կրկնուող յիշողութիւնները։ Ասում ենք՝ «Միտս է, երբ ես դեռ երեխայ էի»... Եթէ այդ ժամանակից արդէն անցել է կէս դարից աւելի, ինչու է միտը։ Նրա համար որ տարին տասներկու ամիս նա այդ բանը կրկնում է—«միտս է, երբ ես դեռ երեխայ էի»...

Եթէ յիշողութիւնները չեն մոռացուում միայն նրա համար, որ կրկնուում են շարունակ, ապա ուրեմն մոռացուում են չըկրկնուող-

ները։ Այս մոռացած յիշողութիւններն ևս կարող են վերակենդանանալ մեր մտքի մէջ, միայն դրա համար հարկաւոր է, որ միտքը առօրեայ հոգսերից ազատուի և ոգևորուի անցեալի յիշատակներով։ Այս էլ հոգեկան մի առանձին վիճակ է, որի մէջ շատ քիչ է ընկնում մարդ։ Սովորական երևոյթը կրկնուելն է, որ թէ բերանացի է լինում, թէ մտքով և թէ նոյն իսկ երազի մէջ։ Արտաքին տպաւորութիւնները մեր գագաթի մէջ ծովանալով շարունակ շարժման մէջ են, շարունակ տակ ու վեր են լինում։ Բարձր ոգևորութիւնը այդ ծովում փոթորիկ բարձրացնելն է։

Երբ մարդուս մտքի զարգանալը իր գագաթնակէտին է հասնում և այդտեղից թեքւում է դէպի ցած, դէպի իր մուտքը՝ արևի նման, նա օրէցօր կորցնում է իր յիշողութիւնները։ Լաւ է ուրեմն, որ մարդ այդ վիճակին չհասած՝ գրի առնէ իր յիշողութիւնները, գտնէ իր գլխի անցքերը, իր ստացած տպաւորութիւնները, իր տեսած գլխաւոր դէպքերը։ Որքան լաւ կը լինէր, որ մենք շինովի և անճաշակ թխուած վէպերի տեղ այնպիսի գրուածներ ունենայինք։ Թող լինի շինովի էլ, բան չենք ասիլ, եթէ նա մի գեղարուեստական շէնք լինի. բայց իրական կեանքի մասին ուղիղ գաղափար կազմելու համար հարկաւոր են ստուգապատում գրուածներ։

Իմ այս գործը մեր գրականութեան մէջ առաջին փորձն է և իբրև առաջին՝ շատ հեռու է դեռ ևս կատարեալ լինելուց։ Անկատարութեան պատճառը այնքան իմ անձիս անկատարութիւնը չէ, որքան այդ շրջանի, որի մէջ պէտք է լոյս ընծայէի ես մի այսպիսի բան։ Գրեցի այնպէս և այնքան, ինչպէս և ինչքան որ կարելի էր գրել այդ շրջանի համար։ Եթէ տեսնեմ, որ մեր ընթերցող հասարակութիւնը լաւագոյնը գնահատել գիտէ, և ես էլ ողջառողջ կը լինեմ, այն ժամանակ ես այն միևնոյն բանը կը գրեմ իմ ուղածիս պէս, կամ սրա պակասը կը լրացնեմ ջոկ ջոկ արկածներով, «Իմ կեանքի արկածներից» վերնագրով։

I

Մակար սրբազանին խօսք տալուց յետոյ՝ ես պատրաստուեցի էջմիածին գնալու։ Գրեցի հօրս, որ փոքր եղբօրս ուղարկի, որ հետս տանեմ ուսում տամ։

—Ինձ էլ տար հետդ, ասաց Մովսէսը, ես այլ ևս չեմ ուզում իմ ներկայ շրջանում մնալ, ուզում եմ քեզ հետ լինել։

—Շատ ուրախ կը լինեմ, ասացի։ Միքայէլն այնտեղ է, նա կը լինի ձուլարանի վարպետ, դու տպարանի, իսկ ես կը լինեմ իբրև կառավարիչ կամ տպարանապետ։ Հէնց այդ մտքով էլ ինձ հրաւիրում են։ Աշխատաւորների ընտրութիւնն և վարձատրութիւնն ինձանից պիտի լինի կախուած, քանի որ ես պիտի լինեմ գործի յատկութեան պատասխանատուն թէ վանքի և թէ ազգի առջև։

1868 թուականի ծննդեան պասը բռնելուց յետոյ ես ու Մովսէսը մէկ օր ճաշելուց յետոյ ճանապարհ ընկանք դէպի ս. էջմիածին։ Այլ ևս չսպասեցի եղբօրս դալստեանը։ Երեկոյեան հասանք Կոդա, ուր և գիշերեցինք։ Նոր ուղին դեռ շինուած չէր, խճուղի դեռ չկար։ Ճանապարհն այնպէս ցեխ էր, որ մեր կառքի առջևից երկու ջուխտ գոմէշ լծել ուրն, և հազիւ կարողացան Կումսի փոսից դուրս բերել Կոդա։

Նոր արդէն հասել էինք, մէկ էլ տեսանք հայրս ներս եկաւ եղբօրս հետ։ Այդ ծերունի մարդը նոյն օրը ~~հարկաւ~~ վերստ ճանապարհ էր կտրել, ցեխ ճանապարհ և այն էլ ոտքով... Հէնց որ մենք դուրս ենք եկել, նա ներս էր մտել քաղաք, և իսկոյն մեր ետևիցն ընկել, որ հասնի, ենթադրելով, որ նոյն գիշերը չենք կարող Կոդայից հեռանալ, ու էլ կառքը կարող է ցեխ ճանապարհով այնպէս արագ գնալ, որ ~~նա~~ քով մեզ չհասնէն։

—Ամի՛, ասացի, դու շատ անգութ ես վարուել դէպի քեզ...

—Այո, պատասխանեց,—բայց էրեխիս համար, որ չզրկուի ուսումից։

Հայրս մեր գիւղում միակ մարդն էր, որ գիտէր ուսման յարգը, արհեստի նշանակութիւնը։ Երեխայ ժամանակը ծնուել էր Գորի քաղաքում և այդտեղ էլ անցուցել իր պատանեկութիւնը։ Աշակերտ էր եղել պղնձագործի մօտ, և շատ բան էր պատմում իր մանկութեան օրերից, իր աշակերտական կեանքից։ Շատ լաւ մարդ էր վարպետս, ասում էր հայրս, բայց մանաւանդ վարպետիս կինը, որ մի շատ խելօք տանտիկին էր։ Նրա խրատներից չեմ մոռանում այս խօսքը, որ շուտ շուտ ասում էր—Սաեփան, աշխատիր, որ լափչիքդ

ու քոշերդ արեխ չդառնան, եթէ ոչ՝ արեխ էլ չես գանիլ, որ հագնես։ Երևի այս էր պատճառը, որ հայրս ոչ ինքն էր հագնում արեխ և ոչ իր որդոցը հագցնում։—Տրխի որ սովորէք, ասում էր, էլ լափչիք հագնելու ձգտում չէք ունենալ։

Մեր կառքը դեռ յետ չէր դարձել։ Նրան մի մանէթ տուի, որ հօրս տանէ մինչև քաղաք։

Օրը կարճ և ցուրտ, գիշերը խաւար, ճանապարհը տեղ ցեխ և տեղ՝ սառած։ Մենք ~~հենց նոյն~~ օրէ ճանապարհ գնացինք և ծննդեան թաթախման երեկոյին հասանք Երևան։

Ճանապարհին ոչ մի լաւ տպաւորութիւն չզգացի, բացի զզւանքից, մանաւանդ Դիլիջանի սարը բարձրանալիս հին՝ ձորամիջի ճանապարհով։ Այդ մազէ կամուրջներից անցնելով՝ և Գեղամայ լճեզրի բուք ու բորանից լաւ ծեծուելուց յետոյ, երբ մօտեցանք Երևանին, իմ բոլոր նեղութիւններս մոռացայ, երբ յանկարծ դէմս ելաւ Մասիսը կէսից վեր ձիւնով ծածկուած։ Ես ոտքով էի գնում և կառքի առջևը։ Մասիսը տեսնելուն պէս՝ ես վեր վեր չթռայ կաբարդացոց նման, այլ տեղնուտեղ մեխուեցայ, ինչպէս մի ահեղ սրբութեան առջև, որին մօտենալ կարելի չէ կօշիկները չհանած։ Սարը խօսեց ինձ հետ, բայց ինչ որ ասաց, այդ կը մնայ իմ և նրա մէջը։ Այդ մի պատգամ էր և խորհրդաւոր պատգամ, սուրբ և աստուածային, որ կարելի չէ լոյս աշխարհ հանել նախքան ժամանակը։

Երևան որ հասանք, իջևանի պահողը մի լաւ հայ էր. սա իր տանից ուղարկեց մեզ ճոխ ընթրիք—իշխանաձուկ, եփած և խորոված, ձու, և շատ լաւ փլաւ արշտով եփած։ Զէր մոռացել և երեք շիշ իրանց թունդ գինուց ուղարկել։ Այդ գինու բնութիւնը չգիտէի, մի քանի բաժակ որ խմեցի, գլուխս տաքացաւ և կառքը լծել տուի, որ այն գիշեր հասնենք Էջմիածին և առաւօտուն ջրօրհնէքի հանդիսին ներկայ լինենք։

Մեր կառապանն, ինչպէս երևաց, խամ էր, Դալմի բաղերից մի քիչ անցած՝ ճանապարհը կորցրեց։ Ձիւնը լցրել էր դար ու փոս և շինել մի հարթ մակերևոյթ, որի վրայ մարդկային հետք և նշան չէր երևում։ Շատ այս ու այն կողմ պտըտելուց յետոյ պատահեցանք մի պահնակի, ուր թուրք ձիաւորներ կային իբրև ու-

ղեպահներ։ Կանչեցինք, մի ձիաւոր եկաւ ընկաւ առաջներս, բայց բաւական հեռացրեց մեզ ոլոր մոլոր ճանապով։

Մի կողմից կասկածելով՝ թէ մի գուցէ թուրք ձիաւորը մեզ տանում է կողոպտելու յարմար մի տեղ, ուր թաքցրած ընկերներ ունի, միւս կողմից էլ տեսնելով Մոսէսի և Սարգսի (եղբօրս) դողդղալն ու սրթսրթալը ցրտից ու երկիւղից, կառապանին հրամայեցի, որ յետ դառնայ եկած տեղով և մեզ կրկին Երևան հասցնէ։ Այդպէս էլ արաւ, և մենք կէս գիշերից անց՝ կրկին իջանք Երևանի իջևանումը։

Միւս առաւօտը մեզանից նորից վարձ պահանջեցին Էջմիածին տանելու համար։—Ոչ թէ վարձ, այլ սև քար կը տամ ձեզ, ասացի,—ես ձեզ ցոյց կը տամ, թէ ինչ կը նշանակէ ցրտումը կոտորել մեզ։

Այդ օրը մնացինք Երևան և ես գանգատուեցի ուր հարկն էր ոչ թէ նրա համար, որ կրկին վարձ չտամ, այլ որ ուշք դարձնեն այս հանգամանքի վրայ և ուրիշներին էլ մեր օրը չգցեն։

Այս դէպքը կարծես նրա համար պատահեց, որ նոյն օրն առիթ ունենամ ծանօթանալու մեր գրականութեան մէջ ապագայում երևելի անուն հանած Մելիք-Յակոբեանի հետ, այն է՝ Րաֆֆու։ Սա բազարումը պատահում է Մոսէսին, որի հետ մօտիկ ծանօթութիւն ունէր, և իմ գալն իմանալով իսկոյն շտապում է ինձ մօտ, հետս ծանօթանալու համար։ Եկաւ ծանօթացաւ, սովորական հաճոյախօսութիւններ անելով իբրև նոր հեղինակի։—Ես կարդացի, ասաց, ձեր «Արութիւն և Մանուէլը» և ինձ վրայ շատ խոր տպաւորութիւն գործեց, այդպիսի գրուածք չկայ մեր մէջ։

—Շնորհակալ եմ, ասացի, ես էլ ձեր «Խլուբլիկը» կարդացի, որ Պետրոսի (Քաթանեանց) ձեռով ուղարկել էիք ինձ տեսնելու։ Նրանից կարելի է մի բան շինել, եթէ աշխատէք։

—Այո, ես այդ ձեռագիրն ուղարկել էի պ. Նազարեանցին, նա յետ է ուղարկել մի քանի նկատողութիւններով, կաշխատեմ օգուտ քաղել թէ նորա և թէ ձեր խորհուրդներից։ Ցուսով եմ, որ այսուհետև իրար հանդիպելու առիթ կունենանք, իսկ այսօր կը խնդրեմ որ միասին ճաշենք իմ ազգականիս տանը, ուր կը ծանօթանանք շատ հետաքրքրական մարդկանց հետ։

Ես ընդունեցի պ. Յակոբի հրաւէրը և Մոսէսի հետ գնացինք

ճաշի։ Ճշմարիտ որ շատ հետաքրքրական մարդիկ կային, այսինքն նշանաւոր խաչադողներ և երևելի աւազակներ։ Այդտեղ էին, ի միջի այլոց, Եղնակենց Խաչատուրը և Սալմասցոնց Մկրտիչը։ Ամենքն էլ, առանց ծածկելու, պատմում էին իրանց կատարած քաջագործութիւնները, չէին ծածկում նաև, թէ ինչպէս էին կողոպտել նոյն իսկ Մելիք-Յակոբեանի ապրանքը Թաւրիզից բերելիս և նրան սնանկացրել։ Երբ որ սրանք դադարեցնում էին իրանց պատմութիւնը, Մելիք-Յակոբեանը խօսում էր ժամանակակից գրականութեան վրայ։ Նա քիչ բան էր ասում և շատ բան հարցնում, որ իմ կարծիքս իմանայ և մի նոր բան սովորի։ Ես նրան ոչինչ չէի հարցնում, նրա կարծիքն ինձ համար արժէք չէր կարող ունենալ, այն էլ բաւական էր, որ նա իմ ասածը լիովին ըմբռնէր։ Եթէ երբեմն վստահանում էր իր գաղափարը յայտնել, ես խոկոյն ցոյց էի տալիս նրա ուղիղ կամ սխալ լինելը և երկուսի համար էլ գոհ էր մնում. մի տեսակ յարգանք և պատկառանք էր տածում դէպի ինձ։

—Ես Նալբանդեանցի ուղղութեանն եմ համակրում, ասաց. իմ կարծիքով միակ ուղիղ ճանապարհը նրա քարոզածն է։

—Այդ շատ լաւ էք նկատել, ասացի, բայց մեծ նպատակի հասնելու համար մ ի ա կ ճանապարհ չըկայ, այլ շատ. թշնամու դէմ պատերազմը մի ուղիղ գծով չեն մղում և ոչ մի գործողութեամբ, այլ զանազան կողմերից և զանազան գործողութիւններով։ Ամենայն ճանապարհ ուղիղ է, եթէ տանում է դէպի մի և նոյն գլխաւոր նպատակը։ Ոչ մի ճանապարհ անտես անելու չէ։ Անվարժ զօրքով թշնամուն յաղթել կարող չես։ Ինչ կուզես տուր մի ոգեմի, նա միւս օրը կը կորցնէ իր ստացածը։ Ուրեմն եթէ բանը յետ ու առաջի մասին է, Նալբանդեանցի բարձրացրածը մի ձեռք է միայն, որ միայնակ ծափ չի տալ։ Ամենայն ազգ իր այբբենն ունի, և հիմա մեզ համար ամենից շատ մի լաւ այբբենարան է հարկաւոր, որ ժողովուրդը հեշտ կերպով գրել կարդալ սովորի և մեր ասածն ու գրածը ըմբռնէ։ Ինքը Նալբանդեանցը այդ համոզման էր եկել իր վերջին օրերում. նա ասում էր՝ «Մեր ազգին հարկաւոր է գիտական զարգացում, «Հիւսիսափայլը» այդ գերը կատարել կարող չէ, հարկաւոր են նոր ու թարմ ուժեր, ժամանակակից սոցիալական գիտութիւններին քաջ հմուտ»։

Մելիք-Յակոբեանն իմ ասածին հաւանութիւն տուաւ, և ասաց.

—Շատ ուղիղ է ձեր նկատողութիւնը։ Ճշմարիտ որ ամենից առաջ պէտք է լուսաւորել ժողովուրդին, պէտք է ազատել նրան շատ նախապաշարմունքներից, և ես, եթէ դէպքը բերի, ամենայն ուրախութեամբ յանձն կառնեմ վարժապետ լինել։

Կրթուելն ու կրթելը՝ վարակուելու և վարակելու նման մի բան է։ Ինչ գաղափարներով որ ես վարակուած էի, նոյնով էլ պէտք է վարակէի ինձ հետ շփուողներին, մանաւանդ նրանց որոնք վարակուելու տրամադրութիւն ունէին. Մելիք-Յակոբեանը շատ դիւրաթեք էր վարակման, բաւական էր մի փոքրիկ հատիկ, որ նրանից նա մի բան աճեցնէր։ Այսօրուանից ես ու նա ծանօթութիւն կապեցինք իրար հետ, առանց որ և է սերտ բարեկամութեան։ Ես երբէք չէի կարող երևակայել, որ նա երբ և իցէ Բաֆֆի կը դառնայ։ Տարիքով նա ինձանից մեծ էր առնուազն եօթը տարով, ուրեմն իմ տեսած ժամանակ նա պէտք է լինէր մօտ 35 տարեկան, իսկ այդ հասակում նա չունէր ոչ գիտական զարգացում և ոչ գրական կրթութիւն։ Բայց ունէր վառ երևակայութիւն և կեանքից ստացած շատ պաշար։ Այդ հումնիւթը նա կարող էր պէտք ածել, եթէ ընկնէր մի լաւ գործարանի մէջ, և ընկաւ «Մշակ»-ի խմբագրատունը, ուր և մշակեց իր պաշարը։ Բաֆֆու մասին առ այժմ այսքան, իսկ յետոյ կրկին կը հանդիպենք գործիս ընթացքում, իբրև արդէն Բաֆֆու հետ և ոչ վաճառական Մելիք-Յակոբեանի։

II

Միւս առաւօտը մենք հասանք Էջմիածին, ուր սիրով գրկեցի Միքայէլիս, որին չափից դուրս կարօտել էի։ Սա իմ հոչակ՝ իբրև իր հերոսի՝ բարձրացրել միաբանութեան մէջ, նրա համար էլ ինձ շատ սիրով ու պատուով ընդունեցին, մանաւանդ Մանկունին, որ Վեհափառի հոգեզաւակն էր, բայց շատ երես տուած. ամեն կերպ աշխատում էր սիրաշահած պահել ինձ, ժամերով մօտիցս չէր հեռանում և ամեն պահանջ շուտափոյթ կատարել էր տալիս։

«Արարատն» արդէն սկսած էր և տպագրւում էր հին և կոտրատած տառերով և խմբագրւում էր Աբել եպիսկոպոսի ձեռքով, որ փոխանակ ազատամիտ լինելու՝ շատ ազատավարք էր իր ծերութեան հասակում։

Տպարանի, տպագրողի և տպագրածի մէջ մի վայրենի ներդաշնակութիւն կար, երեքն էլ իրար նման էին։

Միաբանութեան մէջ ոչ մի ուսումնական մարդ չկար, եղածներն վիճակներն էին ուղարկած։ Դրանց մէջ աչքի էր ընկնում միայն Արիստակէս վարդապետը, բայց նրան հեռացրած էին պահում միաբանութիւնից, և հէնց ինքն էլ չէր մտենում մի միաբանութեան, որ իր ուղածը չէր։ Նա մի ծրագիր էր կազմում, ի հարկէ դեռ ծածուկ, թէ ինչպէս պէտք է լինի կազմած միաբանութիւնը, որ կարողանայ օգուտ տալ եկեղեցուն և ազգին։

Եղած միաբանութիւնը եթէ անուսում էր, բայց այն լաւ կողմն էլ ունէր, որ գտնւում էր նահապետական պարզութեան մէջ, պարզ սրտի և մտքի տէր էին, չէին ամբարել իրանց գլուխները հակագիտական գաղափարներով։ Զունէին ներքին ուսումն, չունէին և արտաքին, որով եթէ զինուած լինէին առանց ներքինի, ոչ մի բարի սերմ չէր կարելի բուսցնել դրանց մէջ, մինչդեռ այժմ ազատ լինելով՝ ընդունակ էին ամեն բարի խորհուրդ լսելու, ամեն առողջ միտք ընդունելու։ Թող քո քարոզածդ լիներ նորագոյն մարդաբանական վարդապետութիւն, նրանք սիրով ընդունում էին, առանց ասելու, թէ այդ հակառակ է Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղիղ վարդապետութեանը, ինչպէս այդ անում են մեզանում շատ աշխարհական եղբիտներ, որոնց պարագլուխն է Մ. Ա., որ իր չաստուածաբանութիւնն ուզում է աստուածաբանութեան տեղ ծախել, որով և մոլորեցնում է այժմեան միաբանութիւնը։

Էջմիածնի միաբանութիւնն իր այդ քրիստոնէական պարզութեամբը ինձ շատ դուր եկաւ։ Խօսակցութեան ժամանակ իմ յայտնած ամեն նոր միտք սիրով ընդունում էին և սեփականում, որ լուսաւորուեն։ Այսպէս էին նոյն իսկ մեծ եպիսկոպոսները։ Եթէ դրանց մէջ լիներ մի Այւազովսկի, մի Օրմանեան, ինձ չէին պահիլ Էջմիածնում և ոչ մէկ օր։

Այս նկատողութիւնս յայտնեցի Արիստակէս վարդապետին, որ երբեմն գալիս էր վանք։

—Շատ ուղիղ էք նկատել, ասաց, նոյն նկատողութիւնը արել եմ և ես։ Բայց ինչքան լաւ կը լինէր, որ այդ ուղղութեամբ

դրանք փոքր ինչ զարգացած լինէին։ Այժմ դրանք գտնւում են մի տեսակ խնամակալութեան և բռնութեան տակ, մինչդեռ եթէ փոքր ինչ զարգացած լինէին՝ բուն հայկական հոգւով մի ընտանիք կը կազմէին։ Այժմ դրանց մէջ փոխադարձ սէր, փոխադարձ աջակցութիւն չկայ, բաժան բաժան անհատներ են, չեն կազմում մի ամբողջութիւն։ Զունին ոչ մտաւոր և ոչ ֆիզիքական սնունդ, ինքնալուսացման ոչ մի հնար չի տուած դրանց։ Աշխատելու է, որ միաբանութիւնն այդ գիտակցութեանը հասնէ, բայց այս բանին հակառակ են վերևից. նրանք աշխատում են միաբանութեան անդամներին միմեանցից հեռու պահել, իրար մէջ ատելութիւն են ձգում և նախանձ, շատերին լրտես ու մատնիչ են շինում զանազան խոստումներով։ Պէտք է շատ զգոյշ կենաք, դրանց պարզութեան վրայ չպէտք է յոյս դնել, յի՛նարին հաւատալ կարելի չէ։

Այս մարդը շատ շուտ էր հասկացել ինքնազարգացման անհրաժեշտութիւնը և սեփական աշխատանքով այդ բանին դիւրութիւն տալը և զարգացրել էր ինքն իրան ոչ միայն մտաւորապէս, այլ առաւել ևս բարոյապէս՝ ամենախիստ կերպով վարուելով դէպի ինքը, կտրուելով ամենայն տեսակ թուլութիւնից և ծուլութիւնից։ Ոչ մի բոպէ պարապ չէր անցկացնում, ոչ մի դատարկ բան բերանից չէր հանում, հասունացրել էր իր ճանաչողութիւնը և կշռադատութիւնը, իսկոյն և իսկ գիտէր պատասխանել առաջարկուած հարցին, իբրև երկար ժամանակ նրա վրայ մտածած արդէն։

Էջմիածին հասնելուս միւս օրը Վեհափառն ընդունեց ինձ, օրհնեց և պատուիրեց, որ գրեմ Պետերբուրգ այնտեղից ստանալիք կարևոր պարագաների մասին։

Վեհափառն ինձ կանչում էր ստէպ ստէպ։ Մանկունին միշտ ներկայ էր լինում մեր խօսակցութեանը և մերթ իմ խօսքն էր միջահատում և մերթ Վեհափառի։ Վեհափառը աչքերը խոժոռացնում էր նրա վրայ, նա մի քիչ յետ էր քաշւում, բայց էլի եղնիկի ցնծութեամբ ոստոստելով և կոտրտելով մէջ էր խառնւում։ Վեհափառի համբերութիւնը որ հատնում էր, սաստիկ բարկանում էր և յանդիմանում էր տղաներին։

Գրեցի Պետերբուրգ պ. Եղեանցին, որ պ. Սանասարեանցի մտերիմն էր և շուտով էլ ստացանք մեր ուղած պարագաները,

որով հեշտացաւ Միքայէլիս գործը։ Հին մայրերով ձուլած տառերը այլ ևս պէտք չեկան արագաձայլ մեքենայի վրայ։ Նոր մայրերով թափեց նոր տառեր։ Հարկաւոր էին էլի մի քանի մանր-մունր բաներ, որ կարելի էր Թիֆլիսից գնել։ Սրա համար ինձ ուղարկեցին Թիֆլիս։

Մօտ երեք ամիս էր անցել, ինչ որ նոր պսակուածս հեռացել էի ամուսնուցս։ Հայերէն այնքան սովրեցրել էի, որ կարողանում էր իմ նամակներս կարդալ և պատասխանել, որով աւելի ևս սիրելի դարձաւ ինձ համար, թէպէտ առանց այդ էլ նուիրուած էի հոգւոյս բոլոր ոյժովը։ Իմ պէտքս չէր, թէ ես էլ նոյնքան սիրում էի թէ ոչ, բայց ով կը համարձակէր սիրոյ քնքշութեան կողմից հաւասարուել ինձ։ Էջմիածին գնալիս, թէկուզ տարի քաշէր՝ հոգս չէր, բայց երբ այստեղից երեսս շրջեցի դէպի Թիֆլիս, թէև էի ուզում, որ թռչեմ։ Ուղեթուղթս արքունական էր, մէջին էլ աւելացրած՝ գնում է շտապողական գործով։ Առաւօտը վաղ դուրս եկայ Երևանից և միւս առաւօտ արդէն հոգւոյս հատորի գրկումն էի։ Ինձ հետ՝ թարսի պէս՝ դրել էին մի պոլսեցի, որ Թիֆլիս հասցնեմ։ Սա չէր դիմանում արագընթաց կառքին և բղաւում էր՝ «Վա՛յ, մեռայ, վա՛յ, հոգիս էլաւ, չանըմ ինչո՞ւ կըսպանես զիս»։ Վերջը ձգում էի կառքի մէջտեղը, չորս կողմը խոտով պնդացնում, ինչպէս խեցեղէնով լի՛ք պարկ, որ չըկոտրուի.—Դէ՛, էլ ձայն չըհանես, եթէ ոչ ճանապարհին վայր կը ձգեմ և գայլերը կուտեն քեզ։—Խեղճը երկիւղից սուս էր կենում, բայց նըլում էր ծովաշարժից բռնուած նաւորդի նման։ Թիֆլիս որ հասանք երկու շաբաթ պառկեց խեղճը, բայց թէ ով էր, ի՞նչ էր, հետաքրքիր չեղայ իմանալու. երևի Մանկունու ազգականներից էր, ուրիշ ով կը լինէր այնքան անհետաքրքրական, այնքան անճոռնի մի հրէշ։ Այսու ամենայնիւ իմ սրտերծը անգթութիւն էր, այս զգալի չէր եղջերուի նման սիրով հարբածիս։

«Արարատն» սկսուած էր մայիսին, տարին լրանալու համար մնացել էր մի քանի օր։ Նոր տառերն արդէն պատրաստ էին, բայց ես ուզում էի, որ նրանով սկսուի երկրորդ տարին և մի փոքր մարդավարի խմբագրութեամբ։ Մէկ օր Մանկունին մի թուղթ բերաւ Սինոդից և խունջիկ-մունջիկ դալով՝ ասաց.—Իշտէ՛, մարդս քեզի խմբագիր ըրած է, «Արարատի» երկրորդ տարին դուք պիտի սկսիք։

Թուղթն առայ կարդացի, և «շատ լաւ, ասացի, թէպէտ աւելի լաւ կը լինէր, որ խմբագիրը միաբանութիւնից մէկը լինէր, ես կը լինէի նրա օգնականը»։

—Ո՛չ, պէտք չէ, դուք կը լինիք խմբագիր, իսկ ես ամեն կերպ կօգնեմ ձեզ։

—Բայց այս մի անպատուութիւն չէ՞ միաբանութեանը։

—Ոչ, որովհետև խմբագրի անունը չի դրուիր, ով պիտի իմանայ, որ խմբագիրը միաբանութիւնից չէ։ Վերջապէս մարդս այսպէս կը բարեհաճի, քո մասին անոր շատ բան ըսած է Սանասարեանցը։

Մանկունին Վեհափառի մասին խօսելիս՝ ասում էր մարդս, որ իրանց լեզուում ներելի էր, բայց ես ու Բաստամեանցը, որ յետոյ եկաւ, այդ բառը լսելիս չէինք կարողանում մեր ծիծաղը բռնել։

Նոր «Արարատը» սկսեցի ես անպատրաստից, և ինձ համար անակնկալ կերպով։ Առաջին իսկ համարում մի առաջնորդող դրեցի «Աշխատութիւն» վերնագրով, որի մէջ ցոյց տուի, թէ որպիսի ուղղութիւն պիտի ունենայ «Արարատը», թէ ընդհանուր տիեզերքը շարժման մէջ է, ուրեմն մենք ևս պիտի շարժինք, պիտի աշխատինք, թէ՝ աշխատութիւնը մարդուս համար մի անէծք չէ, ինչպէս կարծում են, այլ՝ օրհնութիւն։ Բոլոր ասածներս վերաբերում էին ոչ այնքան ազգին, որքան նոյն իսկ միաբանութեանը, որ երեսի քրտինքով հաց ուտելու սովոր չէր, չէր աշխատում, չէր սովորում, չէր ինքնակրթուում։ Մի և նոյն համարում սկսեցի և իմ «Խորհրդածութիւններս դատարակութեան վրայ»։ «Արարատը» ոչ միայն արտաքուստ այլև ի ներքուստ դարձաւ մի նորութիւն և շատ հետաքրքրական։ Պետերբուրգից բարեկամներս շնորհակալութիւն գրեցին, Թիֆլիսի բարեկամներս գովաբանեցին «Մեղուում» և ես աւելի խրախուսուեցի։

Երկրորդ համարում դուրս եկաւ իմ խորհրդածութիւնս նոր ուսումնարանի մասին։ Այն ժամանակ դեռ ճեմարան բանը չը

կար։ Սրբագրութեան թերթն ուղարկում էի Վեհափառին և նա վրան գրում էր՝ տպեսցի։ Այդ խորհրդածութիւնը որ ուղարկեցի, ինձ կանչեց մօտը, և սկսեց օրհնել և գովել, և վերջումն աւելացրեց.

—Իմ մասին ասում են, որ իբր թէ ես շատ եմ սիրում գովասանք։ Այստեղ դուք ինձ գոված չէք, բայց ինչ որ լաւ է, լաւ է, լինի գովասանք թէ ոչ։ Ապրիս տղաս, դու շատ ուսումնականներու գլխու վրայ լիմոն կը քամես...

Վեհափառն աշխատում էր, որ ինձ հետ Արարատեան բարբառով խօսի, բայց դուրս էր գալիս մի խառնուրդ. խառնում էր և եզակի և յոգնակի դէմքով խօսելը։ Ինչ որ է, բայց այս անգամ ես մի թիզ բարձրացայ Վեհափառի աչքում, թէկուզ սրտանց լինէր ասածը թէկուզ նպատակաւոր, և սկսեցի աւելի ևս ազատ գրել։

Խորհրդածութիւններս գրելու համար ձեռքիս տակ չունէի ոչ գրաւոր աղբիւր, ոչ օժանդակող գիրք։ Այս մասին գրեցի Պետերբուրգ Ա. Բաբայեանցին, Ն. Սալամբէգեանցին, որ այդ նիւթի վերաբերեալ կարևոր գրքեր հասցնեն, բայց նրանք պատասխանեցին, թէ՝ «դու այն ասա, ինչ որ արդէն գիտես, այդ էլ շատ է. թէ մենք էլ կաշխատակցենք «Արարատին» և քո պակաս թողածը կը լրացնենք դաստիարակութեան մասին»։ Սրանք իրանց խոստումը կատարեցին, բայց ոչ իմ խնդիրս, վախենալով, ինչպէս յետոյ իմացայ, թէ մի գուցէ ես կսկսեմ թարգմանութիւն անել և յօդուածներս զրկել իրանց սրտաբուխ թարմութիւնից, մոռանալով՝ որ ամեն աճռելութիւն սնունդ կը պահանջէ։

Խորհրդածութիւններիս մէջ այն միտքն էի ուզում տարածել, ինչ որ պահանջում էր նորագոյն մանկավարժութիւնը, թէ մարդուս բարոյական, մտաւոր և ֆիզիքական կողմերի զարգացման մէջ պէտք է ներդաշնակութիւն լինի, կամ՝ որ նոյն է հոգու, մտքի և մարմնի մէջ։ Այդպէս էլ գրեցի ես։ Նախ մարմնի մասին, այսինքն ֆիզիքական կրթութեան, որի համար արհեստն անհրաժեշտ համարեցի, յետոյ մտքի մասին։ Կարգն որ հասաւ հոգուն, ես շատ նեղն ընկայ։ Ինչպէս գրէի, որ ոչ հոգեբանութեան հակառակ լինի և ոչ աստուածաբանութեան։ Ինձ օգնութեան կանչեցի մեր Դաւիթ Ան-

յաղթին իր «Սահմանք իմաստասիրութեան» գործով, որպէս զի ինչ տեղ որ ասածս հակառակ լինի միջնադարեան գաղափարներին, իսկոյն մի վկայութիւն բերեմ հինգերորդ դարու փիլիսոփայից, որ մեզանում և՛ սուրբ է համարւում և՛ աստուածաբան։ Ուշադրութեան արժանի է, իրաւի, որ մեր հինգերորդ դարու հայրերը շատ բաներ ունին ասած, որոնք գլխովին հակառակ են վերջին դարերի սրբացած գաղափարներին։ Մեր Եղիշէի ասելովը, թէ «Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ հոգւոյ և մարմնոյ միտք են կառավար», մի ահագին քար է գցում այն ինքնակոչ աստուածաբանների գլխին, որոնք մտքի թելադրութիւնը չարի թելադրութիւն են համարել, և իմաստութիւնը՝ յիմարութիւն։

Երբ հոգու մասին գրած յօդուածս ուղարկեցի Վեհափառին, որ վրան գրէ տպեսցի, նա այդ յօդուածը շատ խրթին էր գտել և յանձնել էր Տէր-Յովհաննէսեանցին և Թաղիանոսեանցին, որ քննեն։ Սրանք յետ էին դարձրել յօդուածս, ասելով՝ «Վեհափառ տէր, սա աստուածաբանութեան է վերաբերում, իսկ մենք այդ գիտութիւնը չունենք, տէր եպիսկոպոսներին քննելու»։ Վեհափառը կանչում է Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալեանին և ասում է, որ մի ժողով կազմի իր նախագահութեամբ և այդ յօդուածը քննադատէ։ Ժողովը կազմուեց, ուր, բացի նախագահից, ներկայ էին Աբել եպիսկոպոս Մխիթարեան, Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեան, Գրիգոր եպիսկոպոս Սագինեան և էլի ուրիշ եպիսկոպոսներ և վարդապետներ, որոնցից շատերը եկել էին միայն այդ հանդիսին ներկայ լինելու։ Ինձ կանչեցին, որ կարդամ իմ յօդուածը և պաշտպանեմ։ Պաշտպանելուս իրաւունքը Վեհափառն էր տուել։ Վարպետ մարդ էր, նա ուզում էր և՛ յօդուածս պաշտպանուած և ազատուած լինի, և՛ ինքը չլինի թոյլ տուած, որ բան է, եթէ դրա տակիցը մի բան դուրս գայ, ինքը մեղապարտ չլինի։

Սարգիս եպիսկոպոսը, իբրև համերկրացի, ինձ սիրում էր որդու պէս, մանաւանդ որ իր աշակերտի աշակերտն էի։ Միւսները նոյնպէս շատ յարգում էին, ոչ ոք տրամադրութիւն չունէր վրաս յարձակուելու, մանաւանդ որ աստուածաբանութիւն ասածդ նրանք էլ միայն ինձ չափ էին հասկանում, գուցէ դեռ մի քիչ էլ պակաս։ Բայց նրանք միևնոյն ժամանակ և բարի էին, շատերը մինչև անգամ

ինձ պաշտպանում էին։ Այնու ամենայնիւ էլի շատ տեղեր ջնջել տուին, ասելով միայն, թէ՝ երկդիմի է դուրս գալիս ասածդ և շատերը կարող են գայթակղել։ Ես էլ ջնջում էի խաթրի համար՝ չարաչար պաշտպանելուց յետոյ, որով յօդուածս բաւական կցկտուր և դուրս եկաւ։ Այդ ժողովում ես մի բան սովորեցի. Սարգիս սրբազանը շուտ շուտ «Յովհաննէս-Յակոբի» անունն էր տալիս. յետոյ իմացայ որ այդ Յովհաննէս-Յակոբը Ժան-Ժակ Ռուսօն է եղել, որից իբր թէ ես շատ մտքեր եմ սեփականել։

Այս թշուառ յօդուածը իմ կրօնական գաղափարները ձգել տուաւ կասիածի տակ։ Այւազովսկին կարդացել էր և Պետրոս եպիսկոպոսին ասել, թէ «Արարատում» անաստուած բաներ են տպւում, իսկ Վեհափառը դրա վրայ ուշադրութիւն չի դարձնում։ Ցիրաւի «Արարատն» իմ ձեռքում կրօնական դրոշմ չէր կրում իր վրայ, բարոյակրթական էր և զարգացուցիչ։

Այս ժամանակ եթէ մի լաւ բան կար էջմիածնում, այդ տպարանն էր և ձուլարանը, որ Միքայէլիս շնորհիւ շատ պայծառացաւ, և մէկ էլ վերանորոգւած «Արարատը», որի մէջ վերջումը տպեցի և «Բացատրութիւն բնութեան երևոյթների»։ Ով էլ գալիս էր ուխտ կամ այցելութեան, ինձանից էր միայն գոհ մնում և շնորհակալութիւն անում։ Նոյն իսկ նահանգապետ Կարմալինը, որ մի լուսամիտ և զարգացած մարդ էր, ձեռքս բռնեց և շնորհակալութիւն արաւ։ Երբ իմացաւ ռոճկիս քանակութիւնը, «շատ քիչ է» ասաց, և Վեհափառին առաջարկեց, որ աւելցնէ իմ ռոճիկը։ Նուստով աւելցրին երկու հարիւր մանէթ էլ, բայց Մանկունին սկսեց քիչ քիչ ոտքն առաջ դնել, սկսեց նախանձել։ Նա շատ էր աշխատում, բայց նրա արածը չէր երևում, պատիւն ինձ էին տալիս։ Նա էր իմ ու Վեհափառի մէջ տեղ եղող մարդը, իմ պահանջներս նա էր տեղ հասցնում և անյապաղ կատարել տալիս, բայց այդ չէր երևում, ոչ ոք դրա համար նրան շնորհակալութիւն չէր անում։ Սրա համար ահա նա մտածեց, որ ինձ դուրս անել տայ և իմ պաշտօնն ինքը կատարէ։ Իսկ այդ շատ հեշտ էր։ Գիտէր, որ ես ոչ մի բանում զիջում չեմ անիլ և շատ կը նեղանամ ու դուրս կը գամ, իսկ այդպիսի առիթներ շատ կային։

1870 թուականի ամառը Վեհափառը գնաց Թիֆլիս և Ման-

Կարող քիչիքակաւ ոչ մի էր դնում վերջանում հարցաս գրաւոր կամ դատի հանի մտ։ Բ. Ֆ.

կունին համարեա թէ նրա տեղը բռնեց։ Սա ստիպում էր ինձ, որ թէ իր և թէ իր գաւառական գործակատարների յօդուածները տպեմ Արարատում։ Ես չէի շարել տալիս այդ ցիմար յօդուածները և ձգում էի խոհանոց։ Պէտք է ասեմ, որ այդ կողմանէ չափից դուրս խիստ էի։ Ես չտպեցի և Բաստամեանցի տուած մի յօդուածը, որից նա ևս վիրաւորուեց, բայց յետոյ ինքն էլ համոզուեց, որ կարելի չէր տպել այդ յօդուածը։ Նրան հակառակ՝ ես առաջարկեցի իմ ինքնուրոյն տեսութիւնը, որից յետոյ իր չռած աչքերը աւելի լայն բաց արաւ։ Իմ այդ տեսութիւնը հիմնւած էր հաւատի, բարձր մարդասիրական զգացմունքի, այլասիրութեան, զուտ բանականի վսեմ յատկութիւնների՝ ազատ կենդանական յատկութիւններից, միով բանիւ ոգեկան, այլ ոչ ֆիզիքական երևոյթների վրայ։ Այս տեսութիւնն իմ սեփականն էր և իմ գիւտը, թէկուզ ուրիշներն էլ գրած լինեն միևնոյնը։ Պետերբուրգից ես թղթակցում էի իմ մի բարեկամ ուսանողի հետ (Նիկոլայ Ջիմին)։ Մենք շատ սիրում և յարգում էինք միմեանց, առանց համակարծիք լինելու։ «Որ համակարծիք չենք միմեանց», գրեցի մէկ անգամ,—«դրա պատճառն այն է, որ մենք ամեն մէկս բանի վերայ նայում ենք մեր ազգային տեսակէտից»։ Ինչպէս կարելի է, որ Անգլիայից, Գերմանիայից դուրս գայ մի Գարիբալդի, մի Վիլհելմ Թէլ։ Մենք զգում ենք ինկուիզիցիայի սոսոր արարքներից և միևնոյն ժամանակ հիանում և սքանչանում այրուողների հոգու վսեմութիւնից։ Ես այն յոյսն ունեմ, որ աշխարքից կանհետանան բոլոր անիրաւ յարձակմունքները և երկրի վրայ կը տիրէ ընդհանուր եղբայրութիւն, փոխադարձ սէր և յարգանք, այդ ժամանակ միայն մարդը կը լինի մարդ, իսկ այժմ նա մի կիսագազան է։ Հաւատացած եմ սակայն, որ մարդն այս աստիճանին հասնել կարող չէ առանց կռւի։ Այս կռւի մէջ նա կը հանդիսանայ յաղթող, ում ձգտումը որ կը լինի հասնել մարդու այդ բարձր կատարելութեանը, իսկ կը ջախջախւի նա, ով որ հակառակ կը հանդիսանայ դրան, թէ կռւզ ըստ երևութին նա շատ զօրեղ թւայ։ Այս հանգամանքը բացատրւում է նոյնպէս բնական օրէնքով։ Կլանող ազգի ամեն մի անհատը կլանող է, անհատի էլ ամեն մի հիւլէն կլանող է։ Այդպիսի ազգը կուլ է տալիս ինքն իրան, կուլ է գնում ինքն իր մէջ, նա դառնում է մի բերրի հող, որի վրայ

աճում և զարգանում են նոր և թարմ ազդեր։ Մեծն ինձ չի սարսափեցնում, բարձր ծառերը վայր են ընկնում արմատահան, իսկ թուփերը մնում են անվնաս։ Թող իմ այս մոմոուքը լինէր մի ցնորք, բայց ես կը ցանկանայի, որ ամեն մի անհատ այսպիսի ցնորքներ ունենար։

Այս յիշողութիւնը մէջ բերի Բաստամեանցի յօդուածի առիթով։ Ես կարծում եմ սակայն, որ նրա անձի, նրա երևալու վրայ կարժէր աւելի շատ խօսել, քան նրա յօդուածի։ Նրա ժամանակակիցները, նրան մօտիկ ճանաչողները շատ ապերախտ են, չգրելով նրա մասին, ինչ որ գիտեն։ Այդ յանդիմանութիւնից ինքս ինձ ազատելու համար, ես ահա կասեմ, ինչ որ գիտեմ նրա մասին, ոչ լսովի, այլ իբրև ականատես։

Առաջին անգամ Բաստամեանցին ես տեսայ Պետերբուրգ, 1866 թուականին։ Եկեղեցու տան երրորդ յարկում ես բաւական ընդարձակ սենեակ ունէի և շատերն են հիւրասիրուել այդտեղ ինձ մօտ։ Բաստամեանցը Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժնի ուսանող էր, բայց ազատ լսող. ոչ մի տարի քննութիւն չէր տալիս և համալսարանն էլ քիչ էր այցելում, աւելի տանն էր պարապում և սովորում արդէն վիմատպած դասախօսութիւնները։ Պարապում էր և կողմնակի բաներով, օրինակ վերջերում նա մի սպիտակեղէնի կարանոց էր բաց արել, ուր բանւորներն աղջկերք էին։ Սրա վրայ բամբասում էին նրան ուսանողները, բայց զուր։ Նրա արածը վատ միտք չունէր։ Նա ուզում էր աշխատութեան միջոցով գեղեցիկ սեռին բարոյական անկումից ազատել։ Բարձր էր գաղափարը, իր նիւթական կարողութիւնից վեր, բայց այդ մարդը անում էր, ինչքան որ կարող էր։ Նա գրագրութիւն ունէր քիչ թէ շատ զարգացած, բայց արդէն իրանք իրանց ծախած աղջկերանց հետ, յորդորում էր, որ դուրս գան այդ ստոր վիճակից և մի աշխատութիւն ձեռք բերեն։ Այսպիսիների մէկի հետ ես անձամբ ծանօթացայ։ Զարմից դուրս գեղեցիկ էր և բաւական զարգացած։ Այս աղջիկը Պետերբուրգում էր և գտնւում էր այնպիսի մի տեղ, ուր գրականութեան մարդիկ գալու սովորութիւն չունին, թէև իրականի մէջ շատ են յաճախում։ Այդ աղջիկն ահա Մ. Տէր-Գրի

գորեանցին ցոյց էր տուել Բաստամեանցի գրած նամակները Մոսկուայից, որով առաջարկում է հեռանալ ինքնավաճառութիւնից և մի գործով պարապել։ Այդ նամակներից մէկի մէջ ասում է՝—եթէ դու այդ քաջութիւնն ունենաս, ես խոստանում եմ մինչև անգամ ամուսնանալ քեզ հետ։ Աղջիկը չէր համաձայնել, առարկելով որ կարող է նրա անկեղծ սէրն և մտերմութիւնը, նրա բարեկամեցողութիւնն ի չարը գործ դնել։

—Ի՞նչ կասես սրան, հարցրեց ինձ Մ. Տէր-Գրիգորեանցը։

—Այն կասեմ, ասացի, որ այս աղջիկը իր ընկած վիճակի մէջ շատ և շատ բարձր է քեզանից, որ ամեն այդպիսի վսեմ զգացումների վրայ ծիծաղում ես։

—Ախ, ես մոռացայ, որ դու էլ Բաստամեանցից բէթար չիմար ես, սրախօսեց Միքայէլը։

Բաստամեանցն այդ ժամանակ ընդհանուր մարդասիրական զգացմունքներով էր տոգորուած, նեղ ազգասիրական ոգի չունէր։ Նա ինքնակրթութեան և արհեստների պաշտպան էր։ Ամեն ինչ սովորում էր ինքն իրան, հէնց դրա համար համալսարան չէր յաճախում, և բոլոր կուրսերի քննութիւնն էլ մի անգամից տուեց, որով զարմացրեց շատերին և գրաւեց պ. Սանասարեանցի ուշադրութիւնը։ Նա դեռ ուսանող ժամանակ «Մեղու»-ի առաջին տարիներում տպեց Բենեամին Ֆրանկլինի կեանքը։ Նա չէր կարող երևակայել, որ այդ մարդու կենսագրութեամբը ինձ մեծ խրախոյս տուեց։ Վերջերումն ասում էի ես իրան այս բանը։ Նա շատ յօդուածներ էր գրում, բայց տպել էր տալիս կեղծ ստորագրութիւններով և դրանով էլ պարծենում էր։—Այս ինչ յօդուածը ես եմ գրել, ասում էր, բայց անունս չեմ դրել...

—Աւելի լաւ է, ասացի, դնելը, քան չդնելով պարծենալը, եթէ չես դրել նրա համար որ ոչ ոք չիմանայ, թէ դու ես գրել։ Էլ ո՞ւր ես ամենքին ասում, որ դու ես գրել։ Այսպիսի պարծենկոտութիւն ունէր։ Վերջերումս ասում էր, թէ մի հարիւր տարի պիտի անցնի, որ կրկին մի Բաստամեանց երևայ, բայց այն էլ՝ դժուար թէ...

Ցիրաւի որ այս մարդը նշանաւոր մարդ էր, ինչ անենք, որ իր վրայ մեծ համարում ունէր. ով չէ այդպէս, առանց նրա արժէքն ունենալու էլ։

Մաքրասեր վերին աստիճանի, իր կերակուրն ինքն էր եփում, իր հագուստեղէնը ինքն էր կարում շատ անգամ: Ով է տեսել այսպիսի տարօրինակ բնաւորութեամբ մարդ մեր ուսանողների մէջ: Խօսում էր չափից դուրս շատ, և խօսելիս էլ զգացնել էր տալիս, որ ասածը շատ ուղիղ պէտք է համարի լսողը և զարմանայ: Իսկ երբ խօսում էր ռուսերէն, ուզում էր զարմացնել իր ուղիղ խօսելովն և բառերի ուղիղ արտասանելովը: Իր այսպիսի ձևերով մարդկանց չէր քաշում դէպի իրան, այլ յետ էր մղում:

Նա եկաւ Էջմիածին պարոն Սանասարեանցի յանձնարարութեամբ: Նրան տուին առանձին սենեակ և կերակուր: Ինքն ասում էր, որ եկել է Հայոց եկեղեցական և քաղաքական իրաւաբանութիւնն ուսումնասիրելու համար Էջմիածնի մագենադարանից օգուտ: Նրա համար բաց էր մագենադարանը և կարող էր իր ուզած գրքերը տանել իր սենեակը և քաղուածներ անել: Եւ պարապում էր անխոնջ կերպով, քաղուածներով լցրել էր բազմաթիւ տետրակներ: Նա գրել էր և Թիֆլիս քաղաքի ընդարձակ պատմութիւնը, որ եթէ տպէր, մի ահագին հատոր դուրս կը գար: Ուր մնացին այդ աշխատութիւնները—յայտնի չէ ինձ:

Մի տարուց չափ պարապեց Էջմիածնումը: Աղգականութիւն ունէր Երևանցի Մելիք-Աղամալեանների տան հետ, ուր գնում էր շատ անգամ:

Մի տարուց յետոյ Բաստամեանցը գնաց Թիֆլիս, ուր ուզեց ամուսնանալ, բայց այդ ամուսնութիւնը ոչ միայն չը յաջողուեց, այլ և վարդապետացրեց նրան միջին դարերի սիրահարների նման: Նա էլ գնաց Գայիանէի վանքումն անց կացնելու իր սև օրերը: Նրա այդ նոր ձեռնարկութիւնը հաշտեցրեց նրան իր նախկին բարերարի՝ Սանասարեանցի հետ: Բանից դուրս եկաւ, որ պ. Սանասարեանցին՝ վարդապետանալու խօսք է եղել տուած: Խոստմնազանցութեան համար Սանասարեանցը դադարեցրել էր իր օժանդակութիւնը, բայց երբ կատարեց իր խոստումը, պ. Սանասարեանցն էլ ուղարկեց նրան Եւրոպա և նրա ամեն ձեռնարկութիւններում ձեռնտութիւն ցոյց տուաւ: Դրա հետևանքն էլ այն եղաւ, որ նա մասնաւոր տպարան բաց արաւ իր վանքումը, սկսեց հրատարակել «Պարոց» ամսագիրը և պատրաստեց Գոշ Մխիթարի դատաստանագիրքը մեծաչան ուսումնասիրութեամբ, որով անմահացրեց իր անունը:

Էջմիածնումը նրա գինը չիմացան. նրան թողած՝ ձեմարանի կառավարութեան համար բերին այնպիսի մարդիկ, որոնք արժանի չէին Բաստամեանցի կօշիկը վերցնելու: Այս բանը նրան հարուածեց և նա մեռաւ, առանց այդ հանգամանքն ևս ձգելու իր անտիպ յիշատակարանի մէջ, ուր նկարագրած ունի իր ժամանակակից միաբանակիցների որպիսութիւնը, նրանց բնաւորութիւնը:

III

Արիստակէս վարդապետն իմ մէջ այն միտքը ծնեցրեց, թէ հարկաւոր է մօտ լինել միաբանութեանը և նրան՝ թմրութիւնից հանելով՝ ինքնագործունէութեան ոգի տալ: Վեհարանն իրան կըզզիացրած էր պահում և միաբանութեան վրայ իշխում էր մի տեսակ բռնապետական քաղաքականութեամբ: Արծաթասիրութիւնը, սիմոնականութիւնը վիշապի կերպարանք էր ստացել, և կուլ էր տալիս դրսից ու ներսից եկած մուտքերը: Մանկունին բաւական ազատ էր պահում իր այդ ախտից, բայց հետզհետէ դուրս մղեց ուտողներին և ինքը բռնեց ամենքի տեղը: Զեռք առնելով Վեհափառի ոյժը, այսինքն նրա բարեհաճութիւնը, նրանով տիրեց ամենքին: Կորցրեց իր համեստութիւնը և ինքն իրան մի Բիսմարկ երևակայեց, մոռանալով այն, ինչ որ երբէք չի էլ իմացել—թէ իր տիրապետութիւնը բարոյական և մտաւոր ուժի հետևանք չէ, վարչական ընդունակութեան գործ չէ, այլ այնպիսի մի բան, որ կարող է անել շահի ամենասինլքոր մանկլաւիկն անգամ: Ես հակառակ էի նրա այս ընթացքին և պաշտպանում էի միաբանութեան օգուտը, որով և դարձայ նրա աչքում հակավեհարանական: Մեր այսպիսի յարաբերութիւնը, Վեհափառի բացակայութեան ժամանակ, այն աստիճան լարեց, որ մէկ օր էլ Մանկունին ուղղակի մի այսպիսի հարց դրաւ—Կամ ես, կամ Աղայեանց [1]):

---

[1]) Այն ժամանակ Մանկունին ուզում էր «Արարատ»-ը Պոլսի Ղալաթիայի օջախի որդան չինել, իսկ ես հակառակում էի և չէի տպում լինելով Հայրիկեան.

Այս հարցին պէտք է պատասխան տար տպարանական ժողովը, որի նախագահն էր Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանը, մի պարթև, քաջ և վերին աստիճանի անաչառ և ազնիւ մարդ։

Պրոկուրորը այդ ժամանակ Ծերունի Վասակեանն էր։ Սա իմանալով իմ և Մանկունու լարուած յարաբերութիւնը, ասաց.— Սիրելի Ղազարոս, դու այդ Մանկունուն մի դիպչիր։ Եթէ ուզում ես այդտեղ մնալ և վանքին մի օգուտ տալ, դրա հետ հաշտ ապրիր։ Ներսէսի պէս մեծ մարդը, մեծ կաթողիկոսը, մի լակոտի ձեռքում խաղալիք էր, և նրա խօսքով ինձ դեռին ձգեց։ Ցանցանքս այն էր, որ այդ լակոտին լակոտ էի անուանում։ Դու Մանկունու իսկական անունը մի տալ։

Երբ բանը հասաւ տպարանական ժողովի վճռին, ինձ էլ, Մանկունուն էլ կանչեցին այնտեղ։ Այդտեղ յայտնեցի Մանկունու ոտնձգութիւնները, ասացի, որ ես սրան առաջ քաշեցի, ամեն բանի հետ ծանօթացրի, որ ժամանակին պէտք դայ. բայց սա այդ ժամանակն արդէն հասած է համարում, ուզում է իմ տեղը բռնել, ուզում է ինձ իր ստորադրեալը համարել, իր հրամանակատարը, իսկ ես այդ անել չեմ կարող քանի որ ինքս եմ գործի պատասխանատուն։ Երբ որ ես չեմ լինիլ, այնուհետև ինչ ուզում են՝ թող անեն, իսկ քանի որ կամ, կրաւորական դեր չեմ կարող կատարել։

Մանկունին լուռ էր, ոչինչ չէր խօսում, երես տուած քմմոլ երեխայի նման այնպէս էր ուռել, որ քիչ էր մնում լաց լինի։ Իւր այդ դիրքով զգացնել էր տալիս, որ ժողովն օգուտ է քաղում նրա անպաշտպան վիճակից, նրա պաշտպանի բացակայութիւնից, յիշեցնում էր մօրից հեռու զրկուող երեխայի, որ ճարահատեալ կանչում է վայ, նանի... Մտքումս ասում էի՝ «հիմի այդպէս չես, բայց Աստուծով այդ օրը կընկնես ժամանակով, և կը զգաս, թէ ում շնորհիւ էիր զրթփրթում և սիրամարգի պէս պոչդ խաղացնում»։

Ժողովը միաձայն ինձ պաշտպանեց, բացի Սուրէնեան սարկաւագից։ Դա արդէն նեւրւել էր Մանկունու խնամակալութեանը, դառել էր նրա գաղտնատուն։ Բայց այնպէս էր ուզում պահել Ման-

կունու կողմը, որ ինձ էլ չլինի վիրաւորած, բայց ինչ կուզի լինի, ինձ աւելի մօտիկ էր համարում իրան քան թէ Մանկունուն։ Բայց դրանով չէր կարող շահել իմ սիրտը, քանի որ ես արդէն շատ բան գիտէի իր հաղորդածներից։

Վերջումը խօսեց Գրիգոր եպիսկոպոսը շատ վրդովուած և յուզուած, կարծես մի առիթի էր սպասում, որ իր բոլոր մաղձը թափէ Մանկունու գլխին։ Ցածրից սկսեց և հետզհետէ բարձրացրեց ձայնը, վերջումը մատը թափ թափ տալով Մանկունու վրայ՝ ասաց,—Է՛յ, տիրացու, ոտքդ շատ ես առաջ դրել, աղի մկան պէս ամեն բզուզի մէջ ես ընկնում, ամեն բանի մէջ խառնուում։ Եթէ դու ես տպարանի տէրը, նրա վրայ հսկողը, էլ այս ի՞նչ ժողով է, ինչո՞ւ է սրա անունը տպարանական։ Մի՞թէ մենք քո ծառաներն ենք։ Ի՞նչպէս թէ՝ «Կամ ես, կամ Աղայեանցը»։ Դու ո՞վ ես, ինչացո՞ւ ես։ Եթէ դու մի բանի պէտք էիր, էլ ո՞ւր էինք այդ մարդուն հրաւիրում։ Եւ ապրի, զօրանայ. դա մեր սպասածից, մեր ակնկալութիւնից էլ շատ աւելի բարձրացրեց թէ մեր տպարանը և ՆԹԷ ամսագիրը։ Այս բանը մենք մեր երազումն էլ չէինք տեսել։ Ցեռոյ դառնալով ինձ ասաց.

—Պարոն Աղայեանց, դուք ձեզ համար միամիտ և անհոգ եղէք, ոչ ոք իրաւունք չունի ձեզ վրայ, բացի Վեհափառից։

Մանկունին դուրս գնաց սեւացած՝ ինչպէս երեսին մուր քսած, իսկ ես դառնալով Մուշեղեանին՝ ասացի.

—Սրբազան Հայր, ես մի ազատ մարդ եմ, ուր լինի՝ կապրեմ, բայց դուք կախումն ունիք մի այնպիսի իշխանութիւնից, որի կամքը Մանկունու ձեռքն է։ Աստուած տայ, որ ես սխալուած լինեմ, բայց այդ կը նշանակէր, որ ես կոյր լինեմ եղած և ոչինչ չըլինիմ տեսած։ Ինձ պաշտպանելով դուք ձեզ հալածանքի տակ էք ձգում։

—Ղազարոս, ասաց սրբազանը, ես այդ բանը գիտեմ, բայց կարող չեմ սևին սև չասել և սպիտակին սպիտակ։ Ես իմ ասելիքը կասեմ, իմ անելիքը կանեմ, թող ուրիշներն էլ իրանցը անեն, ի հարկէ փշից խաղող չի քաղուիլ, այլ փուշ։

Մօտեցաւ սրբազանին և շատ յուզուած համբուրեցի սուրբ աջը, շընչելով՝—իմ ու քո բանը վերջացած է...

Եւ իրաւ վերջացած էր։ Հենց նոյն երեկոյին գանձապետ Ներ-

սէս վարդապետ Խուդավերդեանը, որ իմ ամենամօտիկ բարեկամն էր և սիրելին, եկաւ մօտս և ասաց ուղղակի.

—Ղազարոս, ով իմանայ չիմանայ, դու պէտք է լաւ իմանաս, թէ ինչ է Մանկունին: Ազգն ընտրել է մէկին, նա էլ մի ուրիշին. հիմա մենք այդ ուրիշի ձեռքի տակին ենք: Այսպէս է հանգամանքը; ինչ կարող ես անել: Ես գիտեմ, որ դու այստեղ մնալու մեծ փափագ չունես, բոլոր ուսումնարանների դռները բաց են քեզ համար, ուր որ գնաս և՛ աւելի ռոճիկ կառնաս և աւելի պատիւ: Գնա, եղբայր, ինչ ես ուզում մեզանից, քո խաթրու մենք էլ պիտի կրակի մէջ ընկնենք, ի սէր Աստուծոյ, հեռացիր մեզանից, էլ չենք ուզում, ես, ես... հմ, հմ...

—Հասկանում եմ, ասացի: Մանկունին քեզ ուղարկել է ինձ յորդորելու, որ ես հրաժարւեմ. ուղիղն ասա, այդպէս է թէ ոչ:

—Այդպէս է, ախպէր, մեղքս ինչ թագցնեմ: Եւ պէտք է հրաժարւես: Վնասդ ինչ է: Կուզես, քո ամբողջ տարեայ ռոճիկը կլրանք, գնալուդ ճանապարհի ծախքը նոյնպէս, թէկուզ՝ մէկին երկու:

—Ի՞նչ ասեմ: Եթէ փոխանակ փող տալու՝ մարդ պահելու համար, տալիս էք, որ հեռացնէք, էլ ես ինչ ասեմ: Երևի այսպէս է ձեր Վեհարանի ապաթը: Ես մեծ չեմ քան Թաղիադեանը: Նա այստեղ տեսաւ թքամանը թանաքաման դառած, իսկ ես տեսնում եմ մի և նոյն թքամանը թաղաւոր դառած: Ի հարկէ չարժէ այլ ես այստեղ կենալ: Բայց ես ոչինչ չեմ ուզում ձեզանից. ինչ որ ինձ հասնելու է, միայն այն աւէք: Ինչ որ աւելի էք ուզում տալ, դրանով նշանածուն առէք, Մանկունու գլխին ածեցէք, որ սևացած երեսը սպիտակի:

—Այս բոպէիս կերթամ և ինչ որ քեզ հասնելու է, կը բերեմ, ասաց Ներսէսը և դուրս գնաց ուրախ-ուրախ, որ Մանկունուն մի ուրախ լուր տանի:

Ներսէսի բարեկամութիւնը դէպի ինձ անկեղծ էր: Մեր բարեկամութիւնը շարունակւեց երկար ժամանակ:

Երբոր ես համաձայնեցի հեռանալ, և Ներսէսն էլ գնաց իմ հաշիւս տեսնելու, ընկերներս՝ Միքայէլն ու Մովսէսը բարկացան վրաս, թէ ինչու համաձայնեցիր:—Եթէ այդպէս է, ասացին, մենք էլ կը հրաժարւենք:

—Չէ, ասացի, եթէ ինձ սիրում էք, հանդարտ կացէք: Այս տունը Մանկունունը չէ, այլ ազգինը: Մենք պարտական ենք ծառայելու, որքան որ կը ծառայի, քանի որ մեզ դուրս չեն արել: Երբ որ դուրս կանեն, ինչ ճար ունենք, պէտք է հեռանանք: Մանկունին շատ սառանայ է, բայց այնպիսի սառանայ, որին վրացիք ասում են վիրէշմակի: Դա միաբանութեան կապը քանդում է՝ իրարից բաժանելով, մէկին սէր ցոյց տալով և միւսին ատելութիւն, մէկին մեծամեծ խոստումներ անելով՝ միւսին սպառնալիք, մէկին լրտես է շինում միւսի վրայ, այդ լրտեսի վրայ էլ մի ուրիշ լրտես է նշանակում. իսկ ինքը լրտեսում է ամենին էլ: Ազգին խաբելու համար շատ նուրբ հնարներ ունին, այնպիսի հնարներ, որ ոչ մի խաչագողի մտքով չի անց կացել: Գիտեն թէ ազգն ինչ է սիրում և ինչ ատում: Զեւացնում են ազգի առաջին սատիկ ատեցող և դրանով ազգի աչքում քաւում իրանց լեռնաչափ յանցանքները, մարսում ամեն տեսակ հարստահարութիւն և յափշտակութիւն: Այնուամենայնիւ ձեր այստեղ մնալն ինձ պէտք է: Ես պատրաստած եմ միայն մեր ազգին ծառայելու համար, իսկ այդ ասպարէզում ծառայել կարելի չէ, առանց դրանց հետ հաշտ լինելու: Ի՞նչպէս կարող ես վարժասեռ լինել մի ազգային դպրոցում առանց դրանց թոյլտուութեան: Դրանք այսօր փակել են Ռոշեանցի առջև Հայոց ուսումնարանների դռները, նոյնը կարող են և ինձ անել: Կամայ ակամայ ես պիտի լռեմ և մարսեմ Մանկունու այս արարմունքը: Դրսից ես չեմ դիպչիլ դրանց, բայց եթէ դա ինձ չըհաւատայ և սկսէ հալածել նաև դուրսը, դուք այստեղ լինելով կը սանձահարէք դրան: Իմ գնալուց յետոյ դա հարկադրւած կը լինի ձեզ և՛ աւելի պատիւ տալ և աւելի ռոճիկ: Առաւել լաւ, թող իմ ջգրու բարձրացնէ իմ բարեկամներին:

Տղէքը համոզւեցան և հանդարտւեցան:

—Մանկունին այնպէս է կարծում, ասացին, որ դու մեզ շատ ես պաշտպանում, մինչդեռ քո խստութիւնը դէպի մեզ անգթութեան ես հասցնում: Դու գնայ և միամիտ կաց, քո բացակայութեան ժամանակ մեր քէֆին քէֆ չի հասնիլ: Ինչքան ուզենանք՝ այնքան կը շինենք, Մանկունին ինչ գիտէ, թէ որքան պէտք էր շինել:

Ցիրաւի ինչպէս ես էի աշխատում, նոյնը պահանջում էի և

իմ ընկերներից, թէև առանց իմ ասելու էլ իրանց գործը կատարում էին ամենայն բարեխղճութեամբ։ Միքայէլն ու Մովսէսը իմ խստութիւնը պատժելու մի հնար էին մտածել։ Մօրուքս շատ երկար էր, իսկ Էջմիածինը շոք։ Մէկ օր դալլաք կանչեցի և մօրուքս տակիցը խուզել տի։ Սրանք հաւաքեցին կտրած մօրուքս և կոխեցին մէկ տեղ։ Երբոր նեղայած էին լինում վրաս և բարկացած՝ հանում էին մօրուքս և իրար ձեռքից յափշտակելով՝ զզզում...

Ամառ էր, որ ես հեռացայ Էջմիածնից։ Հեռանալուս մի ամիս առաջ գնացել էի Թիֆլիս, որ Մոսկուայից պ. Ապանասեանցի ընծայ ուղարկած արագատիպ մամուլը տեսնեմ և ուղարկեմ Էջմիածին։ Գնացի տեսայ և Վէհափառին, որ այդ ժամանակ Թիֆլիսումն էր, ասացի, որ ոտքով բանեցնելու մի հնաձև փոքրիկ մամուլ է, մանր մունր բաներ տպելու համար, և այն էլ, կարծեմ, մի երեսը միայն կարող է տպել, իսկ միւսը՝ ոչ։ Շատ լաւ կը լինի, որ այդ մեքենան այստեղ վաճառենք և մեր գործին յարմար ուրիշ արագատիպ բերել տանք։ Վէհափառը մտածելու ժամանակ ուզեց և մի քանի օրից յետոյ պատասխանեց։

—Մեքենան տ ղ ա ն կուզէ, պէտք է ուղարկել։

Տղան Մանկունին էր, որը տղայամտութիւն էր ունեցել կարծելու, որ իբր թէ մեքենան այնքան լաւ էր, որ Թիֆլիսի տպարանատէրերը ինձ կաշառել են, որ իրանց տամ այդ հրաշալիքը և զրկեմ Էջմիածնի տպարանը։ (Այդ մամուլը հիմա էլ Էջմիածին է, ցանկացողը կարող է տեսնել, թէ քանի գրոշ կարժէ)։

Մամուլն ուղարկեցի։ Ապսպրեցի հօրս, որ գայ ամուսնուս տանէ ամարանոց—մեր Լոք սարը, իսկ ես հետս մի մաշինիստ վերցրի և գնացի Էջմիածին։ Մանկունին այնքան մանկամիտ էր, որ կարծում էր, թէ մէկ մարդ կարող է լինել մի քանի վարպետ և մի և նոյն ժամանակ նաև խմբագիր։ Մաշինիստին որ տեսաւ, շատ բարկութիւնը եկաւ, թէ ինչու աւելորդ ծախք եմ արել (որպիսի խնայողութիւն), ինչու այդ բանը ես ինքս չպիտի կատարեմ, հապա էլ ուր ենք տարեկան ութ հարիւր մանէթ շինել ռոճիկը։ Սակայն ես առանց Վէհափառի հրամանի ու կամքին չէի տարել մաշինիստին։

Մաշինիստը սարքեց մեքենան, և այնպէս դուրս եկաւ, ինչ-

պէս ես ասել էի արդէն։ Մանկունին տխրում էր, որ մաշինիստը անշնորհք և անպէտք մեքենայի մի նոր շնորհք տայ, եթէ ոչ՝ ասում էր, քո վարձդ չեմ տալ։ Կարծում էր որ ես գիտութեամբ մեքենայի վարկը վայր եմ գցում, որ իմ ասածն արդարացնեմ։ Հէնց այստեղից էլ սկսեց մեր կռիւը։ Ես թոյլ չէի տալ անպատուելու իմ տարած մարդուն, իմ նախկին վարպետին և պատուական բարեկամին, որի մասին կարժէ այստեղ մի քանի խօսք ասել։

Այդ մարդն իտալացի էր, Բիւֆոնի ազգանունով, որին աւելի լաւ կը ճանաչեն Թիֆլիսի նախկին դերասանները։ Դա երկրորդական դերասան էր իտալական խմբում, մի և նոյն ժամանակ շատ լաւ տպագրիչ էր։ Դեռ Էնֆիաճեանցի տպարանում եղած ժամանակս դա իր ազատ ժամերին գալիս էր նոյն տպարանում աշխատում և ինձ շատ բան էր սովրեցնում։ Տանում էր և թատրոն, կուլիսների եռեռում կանգնացնում։

Առաջին անգամ ես թատրոն տեսել էի դեռ Վորոնցովի ժամանակ։ Մէկ անգամ, առանց տոմսակի, զոռով գլուխս ներս գցեցի թատրոնի վերնայարկը, որ տեսնեմ սա ինչ բան է։ Ինչպէս Ամերիկայի վայրենիները առաջին անգամ քաղաքակիրթ մարդիկ տեսնելով՝ ապշել էին, նոյնպէս ապշեցայ ես։ Ի հարկէ ոչինչ չը հասկացայ, բայց այն տպաւորութիւնը դուրս տարայ, որ մի քանի շաբաթ շարունակ երգում էի անընդհատ, ձայնիս էլևէջները և բառերը նմանեցնելով լսածիս, բոլորովին այնպէս՝ ինչպէս երգում են մանուկները՝ նմանողութեամբ սուտ բաներ հնարելով։ Սկզբումը օրկեստրի ածելը ինձ թւում էր մի աններդաշնակ խառնուրդ, որպէս թէ՝ մէկը տաքին էր փչում, միւսը հովին, մէկը գոռում էր, միւսը ժըլում, բայց քիչ-քիչ ականջս ընտելացաւ և ես զգացի մի հիանալի ներդաշնակութիւն և աքանչացայ վերին աստիճանի։ Վերջերում թէ Պետերբուրգ և թէ Մոսկուա շատ էի գնում թատրոն. սիրում էի մանաւանդ բալէտները, հէքիաթական տեսարաններն ինձ շատ էին գրաւում։ Տանում էի հետս և Միքայէլին, բայց նրա քունը տանում էր ամենապաս տեսարանների ժամանակ անգամ...

Ռուսաստանից որ եկայ, Բիւֆոնին արդէն ծերացել էր և անգործ մնալով՝ յանձն էր առել ֆրանկմասոնների գործակատարութիւնը։ Զափազանց հայրենասէր էր։ Եղել էր և Գարիբալդիի խմբում

իբրև կամաւոր, աչ ոտքը վիրաւորուած էր գնդակով: Ձափից դուրս ոգևորուել և ուրախանալ գիտէր, իսկ երբ որ բարկանում էր՝ բերանից փրփուր էր թափում, կարծես կատաղում էր: Հանաք անել այսպիսի մարդու հետ կարող չէր Մանկունին. վարձը տուին լիովին և ես հեռանալիս՝ դրան էլ հետս վերցրի:

Ուզենալով նախկին վարպետիս մի հիւրասիրութիւն ցոյց տալ, ես ձիեր վարձեցի և Աբարանի ճանփով, Փամբակի վրայով տարայ Լոռի Լոք սարի գագաթը, որ մեր գիւղի ամարանոցն էր, ուր եկել էր արդէն և ամուսինս: Սարերի և հովիտների ծաղկափթիթ ժամանակն էր և մեր խոտացին շատ տեղ այնպէս յափշտակւում էր, որ ուզում էր ձիուցը թռչել ընկնել ձորերը:—Մեր Խոտիան լաւ է, ասում էր, բայց այսպիսի հրաշալիքներ ես այնտեղ չեմ տեսած: Այս ինչ երկիր է, այս ինչ բուրմունք է, այս ինչ անմահական ջրեր են:

Երբ հասանք մեր տունը, հայրս մի սուփրա բաց արաւ ամեն բարիքով լիքը, մեր բարեկամներն էլ՝ ինձ պատուելու համար՝ որն այս ինչ բերաւ որն այն ինչ, Բիւֆոնիս կարծեց, թէ մի հէքիաթական աշխարհ է ընկել և այնպէս ոգևորուեց, որ մի քանի բաժակ գինի խմելուց յետոյ՝ լաց եղաւ...

Երկու օր պահեցի սարումը և երրորդ օրը ձիաւոր դրի հետը և ճանապարհ ձգեցի դէպի Թիֆլիս, ուր հասել էր երկրորդ օրը և իր հայրենակիցներին պատմել, որ այս կեանքումը տեսել է դրախտը և հիմա այնտեղից է գալիս...

Կարժէր, որ էջմիածնում բոլոր տեսածներս գրէի, բայց օգուտ դրանում չեմ տեսնում. մեծ մարդիկ չընկայեն, իսկ թզուկների մասին գրելիս անտես չըպէտք է առնել և մոծակներին: Ամառը մոծակներից ազատուելու համար՝ զորձ են ածում մուրչագդամի, որ կը նշանակէ մոծակի տուն, բայց պէտք է ասել մոծակարգել, որ նուրբ չիքելայից են կարում և մահճակալի վրայ քառակուսի տոպրակի նման կախելով՝ ազատւում են մոծակի յարձակմունքներից քնած ժամանակ: Անկարելի է, որ խամ մարդ ամառ այնտեղ մնալով ջերմախտ չըստանայ, մանաւանդ իրան անզգոյշ պահողը: Ես զգուշացողներից չըլինելով՝ մէկ անգամ սաստիկ ջերմեցի: Կէս գիշերին, երկար ժամանակ դելը տալուց և Մանկունու հետ կռուելուց

և հայհոյելուց յետոյ՝ մի քիչ հանդարտուեցայ, բայց այդ ժամանակ էլ դաւոն ու զուռնան ինձ հանգիստ չըտուին:—Այս ինչ անպիտան մարդիկ են, ասում էի մտքումս, գիշերուայ ժամը երեքին այս ինչ հարսանիք է, որ սարքել են: Ձայնը գալիս էր բաւական հեռուից, բայց թափանցում էր մինչև ուղեղս և ականջներիս մէջ զուռնայի բոլոր եղանակներն էլ ածւում էր: Նստ որ անհանգստացայ, դուրս եկայ սենեակիցս, բայց էլ ոչ զուռնայ և ոչ դաւուլ, այլ միայն մի մարդ տեսայ, որ սալայատակի վրայ անց ու դարձ էր անում արագ արագ և մեծ-մեծ կօշիկներով դրոփիւն բարձրացնում:—Այս է եղել, ասացի, դաւուլը, բայց ուր մնաց զուռնան: Ներս գնացի և տեղումս պառկեցի թէ չէ՝ զուռնաչիք սկսեցին իրանց սահարին առանց դաւուլի: Դրսի մարդը ներս էր գնացել այդ ժամանակ: Վերջապէս բանից դուրս եկաւ, որ մոծակներն են եղել զուռնաչիքը, որոնք չըկարողանալով ներս թափանցել, ահագին բանակ էին կազմել յարձակելու իրանց սլիներով և նիզակներով:

Մոծակներն այնքան երկիւղալի չէին, որքան մարդերը, կարիճները և օձերը: Ամեն բոպէ վտանգի մէջ էինք, թէ ահա եթէ մէկը չընկնի, միւսը կը կծի: Ղաղարապատի խարխուլ սենեակներում իրանց հողէ կուռներով ամեն ինչ կարելի էր սպասել: Մարութեանի սենեակի առաստաղից մի ահագին օձ վայր ընկաւ և խեղճին լեղապատռտ արաւ: Այս Մարութեանը Խրիմցի էր, Աչաղովսկու աշակերտներից. Վեհարանի մի փիլիսոփան էր: Սա ոչ միայն կոնդակներ և նամակներ էր գրում, այլ և քարոզներ վեհարանի եպիսկոպոսների համար, որ անգիր անեն և մէկտեղ գնացած ժամանակ տաճարանին առանց հասկանալու իրանց ասածը: Սա բաւական խմող մարդ էր և խմողների հետ էր ընկերութիւն անում: Գայիանէի վանքի այդ ժամանակի վանահայրը մի շատ հարբեցող մարդ էր, միշտ նրա մօտ էր գնում: Մէկ օր էլ գնացել էր որ հետը հարբի, հայր սուրբին մեռած էր գտել և դուռը դրսից կողպած և կնքած: Արտասւելով եկաւ մօտս, և սկսեց գանգատուել, որ դուռը կողպել են վրան:

—Ինչ ինաս ունի, ասացի, ի հարկէ պէտք է կողպեն, քանի որ մեռել է...

—Ձէք իմանում, եղբայր, շունը, շունն էլ հետն են կողպել...

—Այդ էլ վնաս չունի, ասացի, նրա դիակի վրայ մի սուգ անող պէտք է թէ ոչ...

—Եւ իրաւ որ սուգ է անում. այնպէս աղեկաուր կաղկանձում է և պատուհանները ճանկռտում. ելք չունի խեղճը: Գնամ Վեհարանին յայտնեմ... այս ինչ բարբարոսութիւն է...

Շուտով Մարութեանցին ընկերացաւ մի նոր մարդ ևս: Դա էր Յովհաննը: Սրան էլ բերել էին որպէս հաշտապահ, բայց իսկապէս ամէն հաշիւ խրճրճող: Այս երկուսը միասին շարունակ խմում էին և երգում.

Գինի, գինի, կուսաս հոգի,
Բիւր անգամ կը խմեմ գինի,
Կը զբաւրթանամ,
Կընեսեմ օղին, կը զբաւրճանամ,
Գինի, գինի, կուսաս հոգի...

Այս մարդկանցն ահա պահեցին, իսկ ինձ դուրս արին: Յովհաննն ինձ ասում էր. հրամանքնիդ փոլիթիք չէք: Ասանց սխալներու, եղծումներու, մոլութիւններու առաջքն առնելու չէ, այլ խրախուսելու է, որ շատ խայտառակութիւններ անեն, որպէս զի խայտառակուին, ինչո՞ւ առնել ասանց խայտառակելուն առաջքը: Հարն եմ անիծեր: Ես կը մոռնեմ իրենց աչքը, թող իրենք կուրանան, ինչուս պէտքն է:

Այս մարդը հանաք չէր անում, իսկ և իսկ այդպէս էլ անում էր: Նա վեհարանի ոգեղ կողմերը վերին ատիճանի խայտառակութեան հասցնել տուաւ իմ հեռանալուց յետոյ: Թէ այդ ինչ բաներ էին,—ժամանակիցներին յայտնի է և աւելորդ է ասելը: Վերջը ինքն և Սանդալջեանը փախան արտասահման և այնտեղից սկսեցին իրանց գրաւոր խայտառակութիւնը: Շատերն առասպել կարծեցին և չհաւատացին այդ ծայրայեղ խայտառակութիւններին: Այս ժամանակին է վերաբերում պ. Ֆ. նշանաւոր յօդուածը, որի մէջ ոչ մի չափազանցութիւն չկայ: Այդ պատուական յօդուածի հրատարակողը պէտք է «Մեղուն» չլինէր և այն էլ Սորմ Գոմոր անունով, քանի որ «Մեղուի» խմբագիրը իր նմանների վրայ քար գցելու իրաւունք չունէր, այսինքն՝ իբրև կղերական, նա իրաւունք չունէր կղերականների վրայ յարձակուելու:

Անկարելի է մոռանալ և Էջմիածնի օձերը: Մէկ օր, գարունը նոր բացուած ժամանակ, երբ օձերը դուրս են գալիս իրանց բներից, բայց դեռ ևս բոլորովին ազատուած չլինելով ձմերային թմրութիւնից՝ չեն կարողանում փախչել կամ շարժուել տեղերից, մի խումբ աշակերտներ վերցրի հետս երկար ձողերով և գնացինք օձեր կոտորելու:—Մէկ ժամուայ մէջ մինչև երեք հարիւր օձ սպանեցինք, այնքան շատ էին և միմեանց վրայ կոյտուած զանազան փոսերում: Այդ կիսակենդան սողուններին տեսնելու է ամառուայ թունդ ժամանակին, թէ ինչ զազաններ են.—թռչում են նետի պէս գլուխները մի կանգուն բարձրացրած: Էջմիածնում օձեր կոտորելու սովորութիւն չունին, մինչդեռ շատ հեշտութեամբ կարելի է ջնջել դրանց հետքերը վանքի շրջակայքից:

IV

1870 թուականն է: Այս թուականի սեպտեմբերից է սկսում իմ գործունէութիւնս ուսուցչական ասպարիզում:

Սարից որ իջանք գիւղ, ես գնացի քաղաք, յուսալով որ Մակար սրբազանը կը կատարէ իր ուած խոստումը: Գնացի մօտը, բայց ընդունելութեան մէջ մի տեսակ սառնութիւն և զգուշութիւն գտայ:

Երբ որ պատմեցի Էջմիածնի բոլոր անցքերը և վերջումը յիշեցրի իր խոստումը,—այդ մասին կը խորհենք, ասաց:

Ինձանից յետոյ Մանկունին զօրեղացաւ, Մուշեղ հեռացնել տուեց իր տպարանից, ընկերներիս սիրաշահեց: Մի տարուց յետոյ Միքայէլին քահանայ ձեռնադրել տուեց և ուղարկեց իրանց գիւղը: Նա այլ ևս չէր կարող մնալ Էջմիածնում տկարութեան պատճառով: Մովսէսը (Վարդանեան) մնաց իբրև տպարանապետ, այդտեղ էլ ամուսնացաւ: Տպարանից մեծ աշխատանք չունեցաւ Մովսէսը, բայց յարմարութիւն ունեցաւ վերջին պատերազմի ժամանակ մի քանի օգտաւէտ կապալներ վերցնել, որից այնքան վաստակ ունեցաւ, որ կարողացաւ իր սեփական տպարանը բանալ Թիֆլիսումը:

Ինձ առաջարկեցին գնալ Ալաշկերտ ուսուցչութեան, և ես էլ յանձն առայ:

Այդ ժամանակ մենք չունէինք աւանդելի առարկաների համար

դասագրքեր, չունէինք մի որ և է օրինակելի և կարգին դպրոց, ամեն ինչ նոր էր սկսւում բուսնել այս ու այնտեղ: Դասատուութեան համար ինձ աւելի չորս առարկայ՝ աշխարհագրութիւն, թուաբանութիւն, ազգային և ընդհանուր պատմութիւն: Գիտութեան առարկաներն էլ սրանք էին, մնացածը լեզուներ էին՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն, այլ և կրօն, երգեցողութիւն և վայելչագրութիւն: Ուսուցչական ժողովներ չէին լինում, ոչ էլ ուսման ծրագիր ունէին: Տեսուչը Վարդան Աբովեանցն էր, մի շատ ազնիւ և պատուական հայ, բայց իր պաշտօնին շատ անյարմար:

Չորս առարկան շատ շատ էր գործը նոր սկսող ուսուցչի համար, բայց ես ստիպուած էի վերցնել, որովհետև ուրիշ յանձն առնող չկար: Ես պէտք է սովորածս նորից սովորէի, այն էս ոչ թէ ինձ համար, այլ ուրիշներին նոյնը հաղորդելու համար դիւրին եղանակով: Այս նախապատրաստութիւնը ինձանից շատ ժամանակ էր խլում, այլ էս ազատ ժամանակ չէի ունենում, որ տեսնեմ ինչ են անում և ինչպէս են դասաւանդում իմ միւս պաշտօնակիցներս:

Երբ որ իմ նախորոշած չափովն անցայ առարկաներիս, սկսեցի կրկնել, և այլ էս դաս պատրաստելու կարիքութիւն չունէի. այնուհետև ազատ ժամերս նուիրեցի միւսների դասերի այցելութեանը աւելի նրա համար, որ ինձ համեմատեմ նրանց հետ, որովհետև վախենում էի, թէ մի գուցէ՝ իբրև խամ ուսուցիչ՝ թոյլ լինեմ գտնուած և յետ մնացած փորձառու վարժապետներից:

Եւ ինչ տեսայ, Տէր իմ Աստուած... Հիմա էլ որ միտս է գալիս միտս սարսում, մազերս փշաքաղւում են: Այցելութիւնս սկսեցի նախակրթարանից: Այդ դասարանը բուն ուսումնարանի շէնքից անջատուած էր, ինչպէս անջատուած է լինում գոմը լաւ շէնքերից: Եւ հէնց գոմի էլ նման էր արտաքուստ, իսկ ներքուստ նման էր խոզանոցի, երբ բազմաթիւ մեծ և փոքր խոզուկներ իրար գլխով ընկնելով՝ որը բրթբրթում է, որը խռխռում, որը մրթմրթում է և որն էլ ճղաւում, ճչում: Անկարգ, անկանոն, ամեն մէկի ձեռին մի առանձին գիրք կամ տետրակ, իսկ վարժապետը մի կատաբեալ վայրենի, իսկ և իսկ խոզարած, մի երկայն ճիպոտ ձեռին մէկի գլխին էր խփում, միւսի ձեռներին: Ինքը սարկաւագ էր, տէրտէրի հագուստով, երկայն հասակով ու մօրուքով և մի երկայն գլանաձև դուխաբորի գդակ էլ գլխին, որ դասի ժամանակ էս չէր վերցնում, վախենալով, որ դասարկ գագաթը ճանճով լցնուի:

Այս պատկերն ունէր ուսումնարանի կրթութեան արմատը, նրա օրօրոցը կամ բոյնը, որտեղ պիտի թևաւորուէին, որ կարողանային թռչել դասարանից դասարան և ոչ թէ խեղդուէին նոյն իսկ բնի մէջ, նոյն իսկ օրօրոցումը: Այդտեղ պէտք էր սիրազորով մօր յատկութիւն և նրա նման սննդատու կաթով լիքը ստինք ունեցող մէկ դաստիարակ կամ գոնէ այդ գաղափարին մերձաւոր մի բան, այլ ոչ երբէք մի հրէշ:

Այս արմատից սկսած դէպի վեր բարձրանալով՝ ես հանդիպեցայ նորանոր հրէշների: Ֆրանսերէնի ուսուցիչը շարունակ հարբած էր լինում և գլուխը կորցրած նոյն իսկ դասատան մէջ: Ինչ օլիներ և գաստակներ ասես, որ աշակերտները չէին խաղում նրա գլխին: Երբ որ ներս էի մտնում ես, իսկոյն թողում էին վարժապետին խաղացողները և շուտով իրանց տեղերում նստում սուս ու փուս, որ ես չտեսնեմ, բայց երևխան ինչպէս կարող է խաբել իրանից մեծին, եթէ նա խելքը գլխին մի մարդ է: Մանկավարժի բնազդում, հոտառութիւն ունեցող ուսուցիչը կարող է նկատել և իր առջև չերևող բաները, իսկ երևցածի ամենախորին խորշերը թափանցել: Բոլոր վարժապետների էլ դասատանդութեան մէջ չկար ոչ հնութիւն և ոչ նորութիւն, այլ մի այլանդակութիւն: Ո՞վ է լսած կամ տեսած, օրինակ, այսպէս բան: — Իմ ներկայութեան ժամանակ, ռուսաց լեզուի ուսուցիչը դասն սկսեց բառահարցութեամբ, թէ ռուսաց այս ինչ բառը ինչպէս պէտք է ասել հայերէն: Աշակերտը մի քանի բառ ասեց ենթադրութեամբ, իսկ վարժապետը պահանջեց, որ նա իմանար: Բայց որտեղից իմանար խեղճը, բոլոր իմացածն էլ մոռացաւ և մնաց ապուշ կորած: Բոլորն էլ մնացել են սառած. ոչ ոք իրաւունք չունի ասելու, որ ինքը գիտէ: Այս վարժապետը միևնոյն ժամանակ և տեսուչ է, աշակերտները նրա իրաւունքից վախենում են և պատկառում: Աշակերտը լռեց, վարժապետը նոյնպէս և այս տևեց մի ամբողջ ժամ, ամբողջ դասը: Զանգը տուին և խեղճ աշակերտները այդ մտաւոր բանտարկութիւնից դուրս թռան որ մի փոքր ազատ օդ շնչեն:

Դպրոցի բարոյական կողմը ուզես չուզես պէտք է ներդաշնակ

լինի մասնորին։ Մասնոր կրթութիւն չեղած տեղը ինչ բարոյական կրթութիւն կարող է լինել։ Անկարգութիւն, կեղտոտութիւն, սահմանութիւն, սահմանութիւն, ափեղցիկ գրուածներ զանազան խորշերում և բոլորն էլ ըստ այսմ...

Այս բոլորը տեսնելուց յետոյ ես զարմացած էի մնացել, որ այսպիսի մի շրջանում իմ դասերի ժամանակ աշակերտներիս մէջ չէի նշմարում որ և է անուշադրութեան նշան, որ և է չարութիւն, ոչ մէկ անգամ չէր պատահում, որ բարկանամ մէկի վրայ, մինչդեռ միւս դասարաններում վարժապետների տուր ու դրըմփոցի ձայնը մինչև իմ դասարանն էր հասնում և իմ աշակերտների դէմքի վրա՝ նշմարում էի խուլ բողոքի արտայայտութիւն, կարծես ասում էինք լսում էք, վարժապետ, պաշտպանեցէք մեզ, ազատեցէք մեզ այդ բարբարոսներից, մեր յոյսը ձեզ վրայ է, տեսէք մենք այնքան յարգում ենք ձեզ, որքան պատում, ուրեմն մենք վատ աշակերտներ չենք, այլ մեր վարժապետներն են վատ... Ես կարմրում և սպրթնում էի այդպիսի բոպէներում, իմ ներքին յուզմունքն անցնում էր աշակերտներիս, որոնց մէջ կային բաւական չափահաս պատանիք և ընդունակ։ Ամենայն օր զգում էի, որ ինձանից մի բան անցնում էր նրանց, նրանց վարակիչը, նրանց աճելն ու զարգանալը շօշափելի և զգալի էր ինձ համար և ես դրանով մխիթարուած էի։ Ուրախ էի շատ, որ պատմութեան և թուաբանութեան դասերն իմ ձեռքն էին, մէկով ներշնչում էի նրանց մէջ իդէալական ձգտումներ, իսկ միւսով զարգացնում նրանց մէջ որամտաբանօրէն մտածել։ Իմ և աշակերտներիս մէջ եղած հոգեկցութիւնն ամուր էր, բնական, սրտանց և անկեղծ։ Մինչդեռ միւս վարժապետները իրանց դասարաններից դուրս էին գալիս պատժած և պատժուած, մազերը խառնուած, ունքերը կիտած, ես իմ աշակերտներիս հետ դուրս էինք գալիս մեր հոգու ամենալաւ տրամադրութեամբը։ Դասամիջոցին անգամ չէին ուզում դժլուել ինձանից, ուզում էին, որ իրանց հետ զբօսնեմ և զրոյց անեմ, ի հարկէ մեծերը միայն։ Ցզէտ և անկիրթ ծնողաց զաւակները մի աստուածային պատիժ են իրանց ծնողաց համար։ Ծնողները այն կարող են հնձել, ինչ որ ցանել են, դանդատելու իրաւունք չունին։ Այս մի և նոյնը կարելի է ասել և վարժապետների համար։ Նրանք էլ ինչ որ ցանեն՝ այն կը հնձեն։

Աշակերտի անկարգութիւնը, անուշադրութիւնը, բթամտութիւնը և այլ շատ թերութիւնների հարիւրից 99-ը վարժապետի տուածն է։

— Ես մի յօդուած ունիմ գրած պատժի մասին և տպուած է «Դըպրոց» ամսագրում։ Նրա մէջ պարզ ի պարզոյ ասած եմ, որ աշակերտի յանցանքը մեծ մասամբ վարժապետինն է. եթէ պէտք է պատժել աշակերտին, ապա նախ պէտք է պատժել վարժապետին, իսկ սրան էլ պատժելուց առաջ պէտք է պատժել տեսչին կամ հոգաբարձուին, որ յանցալից վարժապետներ է տուել անմեղ մանուկներին։

Ախալցխայում ես զգացի, որ կոչուած եմ խարազանով սրբել, մաքրել մեր կրթութեան տաճարները բարոյական աւազակներից։ Այս ձգտումը իմ մէջ մինչև ֆանատիկոսութիւն հասաւ։

Այդ ժամանակ Ախալցխայի յաջորդը Պարզեան Սուքիաս վարդապետն էր։ Սա ուղեւորվով ռուսերէնից դասեր առնել ինձանից, առաջնորդարանում սենեակ տուաւ ինձ և սեղանակից արաւ իրան իբրև վարձատրութիւն իմ աշխատութեան համար։ Ինքն արդէն քաջ հայկաբան լինելով հեշտ էր ինձ համար համեմատական մեթոդով նրա ուշադրութիւնը դարձնել գլխաւորապէս երկու լեզուի մէջ եղած քերականական տարբերութեան վրայ, որ ինչքան շատ է մեր աշխարհիկ լեզուի վերաբերմամբ, այնքան քիչ է գրաբառի հետ համեմատած։ Արդիւնքը հիանալի դուրս եկաւ։ Վերջերումս ասում էր, որ մի բան է թարգմանել և ինձ է նուիրել ի նշան երախտագիտութեան։ Այդ երախտագիտութեան հաւաստիքը ցայսօր դուրս չեկաւ, բայց ես հաւատում եմ, որ կարող է և դուրս գալ։

Շատ մտերիկ լինելով Սուքիասին և յարգելով նրանից, ես պատմում էի դպրոցի թերութիւնները և յորդորում, որ նրա բարեկարգութեանը հոգ տանէ։ Նա ինձ յուսադրում էր, բայց ի զուր։ Վարժապետները կապուած էին այնպիսի աղաների հետ, որ դուրս վռնդել ոչ ոք չէր կարող։ Իսկ աղաների հոգ չէր, որ ուսումնարանն անկարգ է, իրանք այնտեղ զաւակ չունէին։ Կային հոգաբարձուներ, որոնց որդիքը նոյն դպրոցումն էին ուսանում, սրանք շատ էին ցանկանում դպրոցի բարեկարգութիւնը, բայց առևտրական և այլ կապեր ունենալով աղաների հետ, չէին կարող ձայն հանել։ Աղայութեան մասին ես գաղափար չունէի, այդ գաղափարը ես առաջին անգամ Ախալցխայումն ստացայ քանի մի անգամ հիւրասիրելով աղաների

տանը և տեսնելով նրանց տան նահապետին։ Այդտեղ միայն ես տեսայ ասիական աղայի տիպը։ Երևակայեցեք ձեզ մի ծայրայեղ սամադուր, և կըստանանք ասիացի աղայի տիպը։ Աղան պէտք է լինի մի կուռք, միայն խօսուն, և պէտք է խօսի՝ ինչպէս կը խօսէր կուռքը եթէ խորամանկ և գործին շատ հմուտ մի քուրմ, առանձին ձայնով և ոճով։ Բոլոր ներկայ եղողները միայն խունկ պէտք է ծխեն և զանազան փառաբանութիւններ անեն ձեռները սրտին դրած։ Պէտք է նայեն նրա աչք և ունքին, ունքերի պռոտելու հետ պէտք է խոր տխրութեան մէջ ընկնեն, և նրա ժպտելու հետ՝ պէտք է քահքահ խնդան բարձրաձայն, և այլն և այլն և այլն։ Նա մի անմատչելի և անագորոյն բռնակալ է և իր տան մէջ. ոչ կարող է նրա կամքի դէմ ոչ թէ մի բան ասել, այլ անգամ մոռածել։ Ախլցխացոց աղայապաշտութիւնը մինչև անգամ վայրենութեան էր հասնում։ Առաջին քարը ես ձգեցի այդ հոտած լճի մէջ, լիճն սկսեց ալիքներ բարձրացնել և փոքր ինչ հոլհարել։ Այս բանը պատահեց այսպէս։

Մէկ անգամ ինձ մօտիկ մի մարդ հարցրեց.

—Պարոն Աղայեանց, ինչպէս էք գտնում մեր ուսումնարանը։

—Շատ վատ, պատասխանեցի կտրական։

—Ի՞նչպէս թէ «շատ վատ», այդ ինչ էք ասում։

—Այո, շատ և շատ վատ, մի կատարեալ խոզանոց է։

—Իսկ մեր վարժապետները։

—Խոզեր են։

Իմ այս ասածը մի գունդ թթխմոր էր։ Դրանից շաղախեցին մի ահագին խմոր, որից թխեցին զանազան կարկանդակներ և ուտեցրին ժողովրդին։ Եթէ ես մէկն էի ասել, լսողներն աւելացրել էին հարիւրը, բոլորն էլ իմ անունից։ Այս բանը այնպէս մեծացաւ, ինչպէս գլորուող ձնագունդը, որից ահագին կոյտ շինելով՝ վերջումը մի հրէշի կերպարանք են տալիս վրան պոչ ու գլուխներ աւելցնելով։

Հոգաբարձուները տակն ու վրայ եղան իրանց նախագահի հետ, կանչեցին տեսչին, որ անչապաղ մի ժողով կազմէ և ստիպէ ինձ, որ ես իմ ասածներս յետ առնեմ և ներողութիւն խնդրեմ։

Ժողովը կազմեց. ներկայ էին բոլոր ուսուցիչները, ամենքն էլ

միաձայն և միախորհուրդ, բացի մէկից, որ իմ կողմն էր։ Դա մի հայ-կաթոլիկ երիտասարդ էր, բայց մտաւորապէս աւելի լուսաւորչական էր, քան բուն լուսաւորչական վարժապետները։ Մի յառաջաբանով տեսուչը յայտնեց ժողովի նպատակը։—Ժողովուրդը յուզուած է ասաց, որովհետև դպրոցի վարկը վայր են ձգել նրա աչքումը։ Տարաբաղդաբար մեզանից մէկն է արել այդ, և յատկապէս պ. Աղայեանցը։ Հոգաբարձութիւնը ցանկանում է, որ պ. Աղայեանցը յետ առնէ իր ասածները, եթէ իրաւ ինքն է ասել, իսկ եթէ ոչ՝ արդարանայ, ցոյց տայ, որ ինքն այդպէս բան ասած չէ, որ այդ բոլորը զրպարտութիւն է։ Հիմա խօսքը ձերն է, պ. Աղայեանց»։

—Շատ ուշ էք խօսք տալիս ինձ, պ. Աբովեանց։ Եթէ նախ քան այս ժողովը՝ կանչած լինէիք ինձ առանձին, ես ձեզ խորհուրդ կը տայի, որ ժողով չըկազմէք, քանի որ ամբողջ տարին ոչ մի ժողով կազմած չէք։ Դուք գիտէք, որ քննութիւններն սկսում ենք և արդէն մէկ շաբաթից կը վերջանայ։ Քննութիւններից յետոյ՝ սուս ու փուս ինձ կը հեռացնէիք իբրև մի խռովարար մարդու, և ձեր գործը կը շարունակէք ձեր ասածի պէս։ Իսկ հիմա ինչ ասեմ։ Ինչ որ դուք լսել էք, ես էլ եմ լսել։ Այնպէս բաներ են ասում, որ ես նոր եմ իմանում և ինքս չըգիտեմ նրանց սուտն ու ճշմարիտը, բայց այդ հրդեհն ես ինքս եմ գցել, ես եմ վառել։

—Ուրեմն պէտք է յետ առնէք ձեր խօսքը, ձեր ասածը, որովհետև դուք անպատուել էք բոլոր վարժապետներին, վայր էք գցել սրանց վարկը ժողովրդի աչքումը, պէտք է պարոններից ներողութիւն խնդրէք։

Այս վարժապետներն սկսեցին գանգատուել, թէ ինչ և ինչ եմ ասել իրանց, որին որպիսի մականուն եմ տուել...

—Այո, այո, ասել եմ, ասացի և պատրաստ եմ ասածներս մի առ մի ապացուցանել, որովհետև, ձեր երեսին եմ ասում, ես ձեզ վարժապետ չեմ համարում, այլ որին ապուշ և որին դահիճ։

Եւ սկսեցի մէկ-մէկ նկարագրել ամենքին էլ։ Երբ հերթը հասաւ Ֆրանսերէնի ուսուցչին, նրան այնպէս ողողեցի, որ ամենքն էլ մոռացան իրանց ստացած հարուածները։ Մինչդեռ ամենքն էլ չափից դուրս բարկանում էին երբ նկարագրում էի, բողոքում էին, թէ սուտ է բոլորը զրպարտութիւն է, սա միայն բերանն էր ղնճռտում և իբրև

մի թքման լուռ ու մունջ տեղաւորում էր իր գլխին բոլոր թուքս ու մաղձս։

—Դուք ասացէք, պարոններ, շարունակեցի ես, սա մարդ է, ունի արդեօք մարդկային պատուի նշան, եթէ ունի, թողնենայ և ասրտակ զարկէ ինձ, թող գոնէ բողոքէ, բայց սա մի վատահոտ միջատ է, մի բաղլիճ, մի ճիճու ամենավատթար տեսակից... Կարող էք ասել, որ սուտ է ասածս։ Ձեր յանցանքը այն է միայն, որ չափից դուրս ազնիւ էք և բթամիտ, չըգիտէք, թէ ինչ է ուսումը, ուր մնաց որ իմանաք, թէ ինչ է ուսուցումը. իսկ այս թշուառ արարածը եղել է Խալիպեան ուսումնարանումը, այնտեղ որպէս թէ աւարտել է իր ուսումը և նրա անունով էլ մտել այստեղ, որ բարոյապէս ապականէ մեր ուսումնարանը։ Սրանից կարող էք գուշակել, թէ ոբպիսի հրէշներ է տուել մեզ Խալիպեան ուսումնարանը։

Տեսչին չընկարագրեցի, բայց նա ստիպեց, որ իր մասին էլ յայտնեմ իմ կարծիքս, գիտէր, որ իր մասին ես վատ կարծիք չունեմ, մինչև անգամ մի առանձին սէր էի տածում դէպի ինքը ի պատիւ իր անմահ հօր։

—Դուք ինձ էլ չէք հաւանել, ասել էք, որ ես տեսչութեան անյարմար եմ։ Եթէ այդպէս է, հապա ինչու են տուել ինձ այս վկայականները, նայեցէք, և քանիս են, տեսէք։ Այս ասելով վկայականները փռեց սեղանի վրայ, որոնցից շլացան վարժապետները և այնպիսի մի դիրք ցոյց տուին, որ երևում էր, թէ իրր անհնարին էր դրանց դէմ մի բան ասել։

—Ինչու ես ձեզ թողած՝ ձեր թղթերին պէտք է նայեմ, քանի գրոշով կառնեմ ես այդ թղթերը։ Ամենայնեան առամնաբոյժը դրանից շատ վկայականներ ունի։ Այդ թղթերը կարող են արդեօք տեսչութիւն անել։ Թըւեմ արդեօք ձեր պակասութիւնը իբրև տեսչի, և իբրև ուսուցչի։ Ահա ձեր տեսչութեան պտուղները՝ սրանք չեն արդեօք ձեր վարժապետները։ Երբ որ սրանց հաւանում և պաշտպանում էք, մնացածն ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Դուք բարի էք չափից դուրս, բայց անհոգ էք վերին աստիճանի։ Ձեր սրտումը կրակ չըկայ, զուրկ էք ձեր հօր եռանդից, այնու ամենայնիւ, ես կը ցանկայի, որ Հայոց ազգը ոչ թէ ձեզ մանուկներ տար կրթելու, այլ թոշակ տար և վերակացութիւն մի որ և է

դպրոցում։ Ձեր բարի վարք և բարքով դուք կարողէք բարի օրինակ լինել աշակերտաց համար, իսկ կառավարիչ լինել և այն՝ վերանորոգող, բարեկարգող կառավարիչ, դուք չէք կարող։ Եթէ իմ մէջ այրող կրակից դէթ մի կայծ լինէր ձեր սրտում, դուք երկու ձեռքով կը գրկէիք ինձ, իսկոյն կը նկատէիք իմ ձգտումը և կաջակցէիք ինձ։ Դուք հաշտւում էք եղածի հետ, թէկուզ վատ լինի, իսկ ես եթէ հաշտւէի եղածի հետ՝ այսօր վարժապետ չէի լինիլ և այսպիսի վարժապետներին անպէտք չէի համարիլ։ Դուք ձեզ խոհեմ էք համարում, իսկ ինձ՝ անխոհեմ, ձեզ խաղաղասէր էք համարում, իսկ ինձ խռովարար։ Ես այդ ընդունում եմ, բայց ընդունում եմ ոչ որպէս յանցանք կամ թերութիւն, այլ մեծ արժանաւորութիւն։ Մեր ուսումնարանը ախոռ է, ինչու, որովհետև վարժապետներն իրանց գործին հմուտ չեն, դաստիարակի կոչում չունին, տեսուչն անընդունակ է, հոգաբարձուք հոգեբարձ չեն, իսկ այդ կարող է այդպէս չը լինել, կարող է անհամեմատ լաւ լինել, որովհետև նիւթական պակասութիւն չըկայ, հարկաւոր է միայն որ ժողովուրդն իմանայ եղածի վատութիւնը և լաւագունին ունենալու ցանկութիւն յայտնէ։ Եթէ ժողովուրդը հաւատացել է իմ ասածին և պահանջում է, որ ուսումնարանը բարեկարգուի, փոսք և պարծանք նրան, այդ գաղափար տուողին։ Ես խռովարար չեմ, այլ ժողովրդի բարեկամ, մանուկ սերունդի կրթութեան պաշտպան, և յանուն այդ սուրբ գաղափարին ես բողոքում եմ իմ դէմ կազմած քո այս ժողովի դէմ։

Այս ասելուց յետոյ ես դուրս եկայ ժողովից...

Միւս օրը ժողովրդի իրարանցումը սաստկացաւ։ Լսել էին, թէ ինչ և ինչ եմ ասել ժողովում և մէկը տասը շինելով՝ հաղորդել էին միմեանց։ Այդ ժամանակ քաղաքումն էր և Յովակիմ Գեղամեանցը։ Ժողովրդի մէջ սա ինձ էր պաշտպանում և ուրիշ կերպ էլ կարելի չէր։ Սա գրում էր զանազան շարադրութիւններ և բերում մօտս, որ ես քննադատեմ և մի ուղղութիւն տամ իրան։ Երբ մի որ և է գրածի չէի հաւանում, նորից գրում էր ահագին տետրակներ և բերում իմ ուզածիս համեմատ գրած։ Շտկելով իր գրածները մի և նոյն ժամանակ աշխատում էի վարակել իմ գաղափարներով և դիտումներով և իր մէջ ինքնագործունէութեան և յառաջ գնալու վստահութիւն էի զարթեցնում։ Սա էլ էր եղել Խալիպեան ուսումնարանումը, բայց

արտաքսել էր իբրև ըմբոստ աշակերտ։ Այս փաստը նրան բարձրացրեց իմ աչքումը և ոչ թէ ստորացրեց։ Ըմբոստ լինել Խալիպեան ուսումնարանում կը նշանակէ հակառակ լինել դէպի լաւը։ Բայց որքան լաւ կը լինէր, որ նա այդ ուսումնարանում երբէք եղած չը լինէր։ Այսօր դա իր թերի կողմերի համար Խալիպեան ուսումնարանին է պարտական։

Հարցաքննութիւններն սկսեցին։ Ես խնդրեցի տեսչին, որ իմ առարկաներս առաջ դցի, որ շուտ հեռանամ և աղմուկներից ազատուեմ։ Նա յօժարութիւն ցոյց տուաւ և իմ դէմ չեզոք դիրք բռնեց։ Բայց վատահամբաւ ուսուցիչները իրանց բոլոր ազգականներով խնամիներով և քաւորներով միացան, որ քննութեան ժամանակ շշկլեցնեն աշակերտներին, աշխատեն բանը այնպէս բերել, որ երևայ թէ ես ամենևին ոչինչ չեմ սովրեցրել, որ ես մի շառլատան եմ եղել, և ուրիշներին վայր գցելով ինձ եմ ուզել բարձրացնել, իմ թերութիւններն եմ ուզեցել ծածկել։ Այս բանը ինձ համար կեանքի և մահու խնդիր էր, հացից պիտի զրկուէին, եթէ չը կարողանային իմ վարկը ժողովրդի աչքում գցել։ Սրանք, ժողովրդի հոգսը քաշելով, բանի տեղ չէին դրել աշակերտներին, որոնք իմ քաջամարտիկ և անվեհեր զինուորներս էին։ Դրանցում կային ոչ միայն շատ ընդունակ, այլ բաւական խոշոր և ուժեղ տղաք։ Սրանք երբոր իմացան, թէ իրանց վրայ մի արշաւանք պիտի լինի, մի ասպատակութիւն, թէ այդ բանին յօժար են նոյն իսկ տեսուչն և յաջորդը, երբ տեսան վերջապէս իմ յուզած և վրդոված լինելս, եկան ինձ միամտացրին, ասելով՝

—Վարժապետ, դուք բոլորովին անհոգ եղէք, բնաւ չը վրդովուիք, մենք ձեր դասերն այնպէս գիտենք, որ մեզ չեն կարող շփոթել, մանաւանդ որ այդ գռեհիկները ձեր ոչ մի առարկայի հոտն անգամ առած չունին, ինչ գիտեն, որ ինչ հարցնեն։ Բայց մենք դրանց աւելի լաւ կը պատժենք, իրանց դասերի հարցաքննութեան ժամանակ կարող ենք ասել՝ ի՞նչ ենք սովորել, որ ի՞նչ պատասխան տանք. «հէչ բան մ՚ալ չիյտենք»...

—Ո՛չ, ասացի, այդպէս բան չը պէտք է անէք, դուք չը պէտք է հեռուից դրանց չարութեանը։

Այս յառաջադէմ աշակերտներից էր Ստեփան Մալխասեանը։ Երբ որ ամեն կողմից յարձակուեցին սրա վրայ, դեռ մէկին չը պատասխանած միւսն էր հարցնում, միւս կողմից երրորդը, չորրորդը, սա իրան չը կորցրեց և մի այնպիսի պաշտպանողական դիրք բռնեց, ինչպէս մարդ բռնում է մէջքը մի պատի դէմ տալով, երբ վրան յարձակւում են մի խումբ կծոտողներ։

—Սպասեցէք, պարոններ, ասաց, ես ձեզ ամենքիդ էլ պէտք է պատասխան տամ, որ չասէք, թէ չը կարաց պատասխանել. միայն թոյլ տուէք, որ նախ մէկին պատասխան տամ, յետոյ միւսին։

—Այո, այո, գոչեց ժողովուրդը, ձեզ ո՞վ է հարցաքննիչ նշանակել, ինչու՞ չէք թոյլ տալիս, որ ինքը վարժապետը հարցաքննէ։

Ես, տեսնելով, որ աւելորդ եմ, իբրև հարցաքննող, վեր կացայ տեղիցս և գնացի հարցաքննող աշակերտների վերջին նստարանի վրայ նստեցի, ասելով ժողովրդին՝—Ահա ես և մանկունք իմ, քննեցէք, ինչպէս գիտէք։

Հակառակորդներս իրանք գլորուեցին ինձ համար փորած հորի մէջ, խայտառակուելով թէ ժողովրդի և թէ աշակերտների առջև։

Վրդովմունք բարձրացաւ քաղաքացոց մէջ, որոնք կարծես մի առիթի էին սպասում։ Հաւաքուեցին սրն. Պուղեանցի տանը, ինձ էլ հրաւիրեցին այնտեղ, շնորհակալութիւն յայտնեցին, և խնդրեցին որ ես չը հեռանամ։

—Մենք կարձակենք, ասացին, բոլոր վարժապետներին էլ, հոգաբարձուներին էլ, տեսչին և յաջորդին էլ։ Դուք կազմեցէք ձեր ուզած խումբը և բարեկարգեցէք մեր դպրոցները։

—Շնորհակալ եմ, ասացի, ձեր համակրութեան համար, բայց ընդունել ձեր առաջարկութիւնը՝ չեմ կարող։ Այստեղ կայ մի զօրեղ ոյժ, որի տակ ընկճուած էք դուք, և թէև այսօր ոտքի էք կանգնել, բայց վաղը դարձեալ կընկճուիք։ Իմ հոգսը դուք մի քաշէք. ես հէնց այսօր հեռագիր ստացայ Ալէքսանդրապոլից, ուր հրաւիրում են ինձ ուսուցչութեան։

Ցոյց տուի Աւետիքիցս (Բաբայեանց) ստացած հեռագիրը, որից աւելի յուզեցին և յորդորեցին ինձ մնալ, բայց ես մնալ չէի կարող, որովհետև այդ կընշանակէր կեանքս ու պատիւս վտանգի տակ դնել։

Այստեղ միջանկեալ ասեմ, որ այս դէպքից տասը տարի անցած՝ ես կրկին գնացի Ախալցխա, և այս անգամ ոչ իբրև հասարակ ուսուցիչ, այլ իբրև թեմական վերատեսուչ։ Տասը տարուայ մէջ դպրոցները մասամբ բարեկարգուել էին, բայց ժողովուրդը դարձեալ գոհ չէր ոչ հոգաբարձուներից և ոչ ուսուցչական խմբից։ Մի բողոքագիր տուին ինձ խուռն բազմութեամբ։ Յիշեցնում էին շատ տարի առաջ իմ արած պահանջներս, և հիմա իրանք էին պահանջում, որ ի կատար ածեմ նոյնը։ Ես խաղաղացրի դրդուած խնդրատուներին, ասելով.

—Այն ժամանակ ես միայն քանդում էի, իմ հոգսը չէր թէ ով պէտք է շինէ, բայց որովհետև այժմ ես պէտք է լինեմ շինողը, ուստի խնդրում եմ ինձ ժամանակ տաք, որ տեսնեմ ինչ կայ շինելու։

Եւ ես շինեցի, ինչքան հնարաւոր էր. բայց մի տարի միայն անցած Հ. Խորէն Ստեփանէն նշանակուեց յաջորդ՝ միանգամայն նաև տեսուչ ուսումնարանների, թեմական տեսչից անկախ, և նա փոխեց, փոփոխեց ամեն ինչ։

Ախալցխայից հեռացայ ես 1871 թուականի ամառը։ Դուրս գալիս բոլոր աշակերտները եռևիցս ընկան երգելով տխուր երգեր։ Յաջորդի տան մօտով անցնելիս ահագին աղմուկ բարձրացրին և ցոյցեր արին, որ իմ կամքիցս դուրս էր։ Պատահմամբ այդտեղ գտնուեց և Ալէքսանդրապոլի դպրոցների հոգաբարձու Զիլթողցոնց Պետրոս աղան, որ ախալցխացոց բարկացնելու համար ասել էր. «Ձեզի համար դեռ վաղ է լաւ վարժապետներ ունենալը, դա մեզի կը վայելի»։

Յիրաւի Ախալցխայի աղաները սովոր էին հին խալֆաների, որոնք պէտք է լինէին իրանց չիբուխչին, զահուէչին, միմոսը, շողոքորթը, լրտեսն ու կաւատը։ Իրանց շնորհքը պէտք է ցոյց տային իրանց տէրերի համար ուղերձներ գրելով, իսկ նրանց հակառակորդների վրայ պարսաւանք և երգիծանք։ Խալֆաների այս տիպը շարունակում է գոյութիւն ունենալ այժմ մեր գրականութեան մէջ։

Էջմիածնի և Ախալցխայի անցքերից յետոյ ինձ այլ ևս ոչ մի տեղ չէին ընդունիլ՝ համարելով խռովարար, բայց իմ բախտից Ալէքսանդրապոլ հրաւիրողը Աւետիք Բաբայեանցն էր, որ շատ լաւ էր իմանում, թէ ինչ է իմ ուզածը։ Այս հանգամանքն արժանի է

ուշադրութեան, և ես ուզում եմ հետևեալ գլուխը նուիրել այս խնդրի պարզաբանութեան։

VI

Մեր մտաւոր վերածնութեան առաջին կարապետները Դորպատի համալսարանի հայ ուսանողներն էին։ Սրանց յաջորդեցին Պետերբուրգի հայ ուսանողները։ Պետերբուրգի մտաւոր յեղափոխութեան շրջանում զարգացած հայ ուսանողութեան մի ստուար մասը հայրենիք վերադառնալով անկախ դիրք բռնեց և հասարակական գործունէութեան նուիրուեց։ Մարտիրոս Սիմէոնեանցը մտաւ Ներսիսեան դպրոց, այնտեղից էլ Ճեմարան. Ռուբէն Զալալեանցը գնաց Ագուլիս ուսուցչութեան, յետոյ եկաւ Թիֆլիս հիւրանոց բաց արաւ, որ մի սեռակ կլուբ դարձաւ ժամանակակից երիտասարդութեան համար. Զաքարիայ Գրիգորեանցը գրախանութ բաց արաւ և մի և նոյն ժամանակ Գայիանեան ուսումնարանի հիմնադիրներից և ուսուցիչներից մէկը դարձաւ. Գէորգ Եւանգուլեանցն ձգտում էր ամենքի մենտորը դառնալ. Սենեքերիմ Արծրունին «Մեղուի» վերանորոգներից մէկը դարձաւ և Գ. Արծրունու ախոյեանը հանդիսացաւ. Գ. Արծրունին «Մշակը» հիմնեց և Մեղուական խմբի դէմ պարզեց իր դրոշակը։ Գաւառներում ցրուածներն էլ իրանց շրջանում հասարակական գործունէութեան նուիրուեցին։ Սրանցից մէկն էր ահա և Աւետիք Բաբայեանց, որ Ալէքսանդրապոլի դպրոցական գործի գլուխն անցաւ։

Սոյն այս խումբը դեռ ևս Պետերբուրգումն ունէր իր ապագայ գործունէութեան ձգտումը։ Այնտեղ դասագրքեր պատրաստելու հոգս էին քաշում, յօրինում և թարգմանում էին. հետևում էին կրթական գործին, ուխտում էին ծառայել ազգի մտաւոր և բարոյական զարգացմանը փոխադարձ ձեռնտուութեամբ։ Ա. Բաբայեանցը դեռ ուսանող ժամանակ ձգտումն ունէր դառնալ բժիշկ-մանկավարժ։ Նա իր ազատ ժամերի մի մասը նուիրել էր դաստիարակչական գրուածների ուսումնասիրութեան։ Բայց յետոյ այս բաժինն իր ամուսնուն յատկացրեց, տալով նրան ամենալաւ կրթութիւն, որից յետոյ նա դարձաւ մեր մէջ մանկական անդրանիկ պարտիզպանուհին, որ իր լայն նախագիծը չկարողացաւ ի կատար ածել իրանից անկախ պատճառով։

Ես էս՝ դեռ Պետերբուրգում՝ սեր ձգեցի մանկավարժութեան վրայ ու մասնաւորապէս այդ նորածիլ ու թարմ գրականութեանը նւիրւեցի։ Այդ գրականութիւնը իմ հայեացքների մէջ ահագին յեղափոխութիւն ձգեց, ամեն բանի վրայ ես սկսեցի նայել բարոյակրթական տեսակէտից, որով իմ վիպական գրածներս անդամ ստացան այդ դրոշմը։ Նոր էին դուրս գալիս մին մինի ետևից Ֆրեոբելի, Պեստալոցցու, Դիստերվեգի, Քէհրի թարգմանութիւնները և ռուս մանկավարժների ինքնուրոյն գրածները։ «Ուչիտել» (ուսուցիչ) պարբերական թերթը կարդում էինք ամենայն սիրով և հետաքրքրութեամբ, մանաւանդ նրա փորձնական դասերը զանազան առարկաներից։ Աւետիքը թարգմանում էր Մեծ-պապի թւաբանութիւնը ամենափոքր մանուկների համար, և այդ մէկ լաւ առիթ էր, որ փոքրերի մտածողութեան աշխարհը լաւ ուսումնասիրենք։ Եւ ինչքան նորանոր հոգեբանական գիտեր էինք սնում, որոնք սակայն շատ հնուց գտնւած էին լինում, ինչպէս ստուգում էինք յետոյ։ Բայց սրանով մեր գիտի արժանաւորութիւնը չէր պակասում, ընդհակառակը՝ աւելի ևս բարձրանում էր, երբ տեսնում էինք, որ նոյն նկատողութիւնն արել են աւելի նշանաւոր հեղինակներ։ Պէտք է գիտենալ սակայն, որ այլ է մտածելը և այլ՝ ձևակերպել և մարմնացնել մտածածը։ Մենք կարող ենք նոյն իսկ Գեոթէի և Շիքսպիրի պէս մտածել, այսինքն նրանց հայեացքներն ունենալ, բայց չըկարողանալ մեր մտածածները, մեր զգացածները, մեր ստացած տպաւորութիւնները նրանց պէս ձևակերպել, պատկերացնել, հեղինակել, վիպասանել, բանաստեղծել, մի նկարչական յօրինւածք շինել։ Ամենայն յօրինւածք պահանջում է յայտնի չափով տաղանդ։ Կեանքի պատկերներն ամենքս ենք տեսնում, բայց միայն տաղանդաւոր նկարիչն է կարողանում նոյնը պատառի վրայ պատկերացնել։

Երկար ժամանակ ես չէի խոստովանում տաղանդ ասւած բանի գոյութիւնը։ Պիսարևն և նմանիք՝ այդ բանը չէին ընդունում, ես էլ հաւատում էի։ Բեռքլը չէր ընդունում յատկութիւնների ժառանգականութիւնը, ես էլ ինձ իրաւունք չէի համարում չըհաւատալ, բայց յետոյ այդ խնդիրը շատ արծարծւեց և պարզւեց այնպէս, որ եթէ Բեռքլը ողջ մնար, կը խոստովանէր իր սխալը։ Սրա պատճառն այն էր, որ բնական գիտութիւնները դեռ նոր էին ծլում և ծաղկում։

Համալսարանի բնական պատմութեան բաժնի ուսանողները ոչ մի մտաւոր սնունդ չէին ստանում, այժմեան գիտութիւնը չըկար։ Դարւին, Ֆոխտ, Հելմհոլց և ուրիշ շատերը նոր էին ծանօթացւում ռուսաց գրականութեան մէջ և այն էլ ոչ ամբողջապէս, այլ քաղւածքով միայն կամ կտոր-կտոր, իսկ այդ կտորները կուլ էինք տալիս հում-հում։ Մեր մտաւոր պաշարը ճոխանում էր գրականութեան հետ ձեռք ձեռքի տւած։ Մանկավարժութիւնն ևս դեռ մի մշակւած սիստեմ չունէր։ Ամեն ոք ինքը պէտք է շինէր մի ամբողջութիւն, ցրւած նիւթերից մի շէնք շինելով։ Բայց մէկի շինած շէնքը միւսի համար պիտանի չէր։ Որ և է սիստեմի կուրօրէն հետևողները սովորաբար զուրկ են լինում ինքնուրոյն մտաւոր գործունէութիւնից, որովհետև սիստեմի տակ ընկած մանկավարժութիւնը մասնաւոր աղանդի կերպարանք է ստանում, քարանում է և ամելութիւնից զրկւում։ Մանկավարժական ասպարիզում ինձ վիճակւեց երկու իրարից տարբեր ուղղութեան դէմ պատերազմել—մի կողմից խալիֆայականի և միւս կողմից կապկաբար հետևողների և թարգմանողների։ Այս ակնարկութիւնս կը պարզւի հետեւեալ գլուխներում։ այժմ թողնենք այս և երթանք Ալէքսանդրապոլ։

VII

1871 թւականի ամառն էր։ Աւետիք Բաբայեանցը թիֆլիսումն ապասում էր ինձ։ Այստեղից ֆուրգոն նստեցինք ճանապարհ ընկանք դէպի Ալէքսանդրապոլ Կոջորի ճանապարհով։ Մանգլիս որ հասանք, գնացինք այցելութեան Գ. Արծրունուն, որ եկել էր այդտեղ ամարանոց։ Արծրունին «Մշակի» հրատարակութեան թոյլտւութիւնն ստացել էր արդէն և այդտեղ յօդւածներ էր պատրաստում։ Շատ ուրախացաւ և ասաց.—Լաւ էր որ ինքներդ եկաք, ես նամակ պիտի գրէի երկուսիդ էլ, որ աշխատակցէք «Մշակին»։ Իսկ ձեզ վրայ, պարոն Աղայեանց, առանձին յոյս ունեմ։ «Մշակ»-ի վիպական բաժնի համար ձեզանից յարմարագոյնը չունեմ ի նկատի։

—Ամենայն ուրախութեամբ, ասացի, կաշխատեմ ազատ ժամերս «Մշակ»-իդ նւիրել։

Ալէքսանդրապոլ որ հասանք, իջանք Աւետիքենց տունը. այնպէս թւաց ինձ, թէ մեր տանն եմ։ Հայրը հօրս նման, մայրս էլ մօրս նման, ի հարկէ բնաւորութեամբ և ոչ դէմքով։ Կեր ու խումը չէր

դաղարում ոչ մի բոպէ և աւելի լայն ծաւալ ունէր և աւելի ճոխ, քան թէ մեր տանը։ Ես աւելորդ եմ համարում այս տան նկարագրութիւնն անել, քանի որ այդ արել է արդէն նոյն տան դուստր իմ պատուական աշակերտուհիս՝ տիկին Տիրուհի Կոստանեանցը, որ այդ ժամանակ հազիւ հինգ կամ վեց տարեկան կը լինէր։

Ալէքսանդրապոլն այդ ժամանակ մի աստիճան բարձր էր կանգնած Ախալցխայից թէ մտաւորապէս և թէ նիւթապէս։ Հին դպրոցները նորոգելու և բարեկարգելու յարմար առիթներ միմեանց վրայ եկան։ Իշխան Ղահրաման Երկայնաբազուկ Արղութեանցը քառասուն հազար մանէթ կտակեց, որով և հիմնուեց իր անունը կրող նոյն տեղի օրիորդաց դպրոցը։ Յաջորդը նշանակուեց հայր Աղափիրեանցը, որ համալսարան էր տեսել, գիտութեան հետ առել էր և լեզուների ճաշակ։ Տեսչութեան պաշտօնով հրաւիրուել էր Սարգիս Բէգնազարեանցը, որ մեր հողում առաջին անգամ ոտք դնող մասնագէտ մանկավարժն էր։ Բժիշկ Գաբրիէլ Յովհաննիսեանի (Քաջբերունու) ծառայութիւնը փոխադրուել էր Ալէքսանդրապոլ։ Կայծն և ուրիշ ինտելիգէնտ մարդիկ թէ տեղացի և թէ օտարական։ Սակայն այդ բոլորը միասին առած՝ ոչինչ չէինք կարող անել առանց Աւետիք Բաբայեանցի աջակցութեան։ Ասեմ ահա թէ ինչու համար։ Աղայութիւնն այստեղ էլ, ինչպէս և Ախալցխայում, իշխում էր ժողովրդի վրայ։ Դրանց ձեռքումն էին գտնում թէ եկեղեցիքը և թէ դպրոցները իրանց արդիւնքներով, որոնք կուլ էին գնում մի անյատակ լճի մէջ։ Աղաներին կարողացել էր ձեռքն առնել Տէր-Յովսէփ Կոստանեանցը և դառնալ մի անհաշիւ և անսահման իշխան։ Սրա դիկտատորութեան ժամանակ վարժապետներն էլ միևնոյն խալիֆաներն էին, ինչ որ Ախալցխայում։ Բոլորն էլ իր տան սպասաւորներն էին։ Սրանք աղաների որդոցը քիչ թէ շատ հայերէն էին սովրեցնում և երես տալիս, իսկ ժողովրդի զաւակներին անխնայ պատժելով՝ փախցնում ուսումնարանից։ Երեխանցը ներս էին անում գոմանման մի մութ շէնքի մէջ և մինչև երեկոյ պահում առանց դասամիջոցի։ Այսպէս էր ուսումնարանի վիճակը մինչև Բէգնազարեանցի գնալը։ Հին դպրոցն այս վիճակից հանելու և նոր կերպարանք տալու համար հարկաւոր էր Տէր-Յովսէփի ուժին դերակշռող և նրան սիրելի և յարգելի մի նոր ոյժ։ Այս բախտին արժանացաւ ահա Ա.

Բաբայեանցը, իբրև աղայի որդի, բայց բարոյապէս և մտաւոր զարգացմամբ ժողովրդական։

Դեռ ուսումը չըսկսած՝ Աւետիքը մի ժողով կազմեց հոգաբարձուներից և այն միտքը յայտնեց թէ Բէգնազարեանցին և Աղայեանցին պէտք է միմեանցից անկախ կացուցանենք, պէտք է տղայոց դըպրոցը յանձնել Բէգնազարեանցին, իսկ օրիորդացը՝ Աղայեանցին։ Այսպէս էլ արին։ Դպրոցների տեսչութիւնը իրարից բաժանելով՝ ուսուցչական ժողովները չըբաժանեցինք։ Ժողովները խառն էին լինում և երբեմն շատ աղմկալից։ Վիճում էինք միայն ես և Բէգնազարեանցը, միւսները միայն ականջ էին դնում, և երբ հարկ էր լինում ձայն հաւաքել, դուրս էր գալիս մի կատակերգութիւն, որովհետև ձայն տուող վարժապետները կամ ինձ էին ուզում հաճոյանալ կամ Բէգնազարեանցին, չէին ըմբռնում խնդրի էութիւնը։ Այս միայն սկզբումն էր, երբ ուզում էինք հին խալիֆաներից նորակիրթ ուսուցիչներ շինել, բայց հետզհետէ ուսուցչական կազմութիւնը լաւացաւ և մեր մէջ տիրեց կատարեալ ներդաշնակութիւն։ Նոր ուսուցիչներն էին Հայրապետ Ղուկասեանց, որ տասը տարուց աւելի ծառայեց Ալէքսանդրապոլի երկու սեռի դպրոցներին ամենայն տոկունութեամբ, բժիշկ Գաբրիէլ Յովհաննիսեանց, որ յետոյ տեսուչ էլ եղաւ, Աւետիք Եղեկեանց, Հայկ Մատակեանց և այլք։ Երկու խմբի յարաբերութիւնը այնքան սերտացաւ, որ միացեալ ուժով բաց արինք էլի մէկ նոր ուսումնարան օրիորդաց համար Սահականուշեան անունով, ուր ձրի էինք դասախօսում ամենքս էլ։ Ամբողջ Կովկասում ոչ մի դպրոց չըկար, որ Ալէքսանդրապոլի դպրոցների բարեկարգութիւնն ունենար։ Մանկավարժական ամեն տեսակ խընդիրներ այդտեղ սկսեցին մշակուել, ամեն տեսակ յօդուածներ այդտեղ սկսեցին գրուել, մանկավարժական ամեն մի խելացի պահանջ, որ միայն գրքերումն էին, այստեղ իրագործութիւն էին ստանում։

Մասնաւորապէս գալով ինձ, պէտք է ասեմ, որ իմ գործունէութիւնը՝ թէ գրական և թէ ուսուցչական՝ այստեղ իմ սպասածից աւելի բեղմնաւոր եղաւ։ Լինելով ըստ ամենայնի անկախ, գործում էի իմ ուզածի պէս և ուրիշներին էլ վարակում իմ օրինակով։ Այստեղ սկսեցի մշակել իմ նորագոյն մեթոդը, թէ ինչպէս պէտք է ուսուցանել մայրենի լեզուն։ Նախ ցոյց տալի գործով

դասաւանդութեամբ, և յետոյ՝ խմբի ցանկութեամբ՝ գրեցի և հրահանգը, թէ ինչպէս պէտք է ուսուցանել, յետոյ էլ կազմեցի դասագիրքը։ Առաջին անգամ մեր գրերը ես լուծեցի արմատական տարրերի և գրել տալի տակով։ Այստեղ առաջին անգամ ես դաս տալի մի ծխական դպրոցում «Բացատրութիւն բնութեան երևոյթների» և «Տարրական Ֆիզիկա», ըստ Կրիւգերի։ Այս երկու աշխատութիւններն էլ ես թարգմանեցի, որոնցից մէկը տպւեց «Արարատում», որից արտատպւեց յօգուտ Սահականուշեան ուսումնարանի, միւսը՝ Ֆիզիկա՝ տպագրւեց Պետերբուրգի հայ ուսանողների հաշւով։ Այստեղ գրեցի բազմաթիւ յօդւածներ թէ մանկավարժական և թէ քննադատական։ Այստեղ գրեցի և Հայկական հնչիւնների մասին, որով Այւազովսկուն գրգռեցի իմ դէմ, ինչպէս և Պալասանեանին՝ սրա «Մայրենի լեզուի քերականութիւնը» քննադատելուս համար։ Այստեղ գրեցի և իմ «Երկու քոյրը», որի մասին պէտք է մի քանի խօսք ասել այստեղ և մէկ մութ մնացած խնդիր պարզել ժամանակակից նոր սերնդի համար, որ երբեմն միայն ձայնն է լսում, բայց չըգիտէ ինչ տեղից է փչում։

Քիչ առաջ ասացի, թէ Գ. Արծրունին խնդրեց, որ աշխատակցեմ «Մշակ»-ին, և ես էլ խօսք տուի։ Նոյն տարւայ վերջերին մի նամակ էլ Պալասանեանից ստացայ, որ գրել էր խմբագրութեան կողմից և յիշեցնում էր իմ խոստումն։ Այս նամակը որ ստացայ, ես շատ զբաղւած էի և պատրաստի էլ ոչինչ չունէի։ Ջեռաց մի առակ գրեցի զարաբաղի բարբառով, խոստանալով՝ որ շուտով մի վէպ կուղարկեմ իրանց։ Առակը տպւեց «Մշակ»-ի սկզբի՝ կարծեմ եօթներորդ համարում Փրէյդուն ստորագրութեամբ։ Առակը մի արջի պատմութիւն է։ Ասուած ուզում է Արջին մարդ շինել, միայն Դիզակեցի, բայց արջը չի համաձայնւում, ասում է՝ եթէ այդպէս ես ուզում, ես աւելի լաւ կը համարեմ արջ մնալ։ Սրանից յետոյ ահա ես անմիջապէս գրեցի «Երկու քոյրը» մի շաբաթւայ մէջ և ուղարկեցի Վ. Սիմէօնեանցին, խնդրելով, որ սրբագրութիւնը նա տեսնէ։ Ես չըգիտէի, որ «Մշակ»-ի նախորոշած խմբի մէջ երկպառակութիւն է ընկել և Պետերբուրգի ուսանողները Արծրունուց զատւելով՝ խմբւել են Պ. Սիմէօնեանցի շուրջը, որ վերանորոգեն յոգնած և մեռած «Մեղուն»։ Երկու շաբաթ անցած՝ ես

մի նամակ ստացայ տիկին Սրբուհի Երիցեանի և օր. Գայիանէ Յովհաննիսեանի ստորագրութեամբ, որով ինձ շնորհակալութիւն են յայտնում այն քաղցր տպաւորութեան համար, որ ստացել են իմ նոր վէպի ընթերցումից իրանց գրական երեկոյում։ Սրանից յետոյ դուրս եկաւ «Մեղուն» մի յայտարարութեամբ թէ «Մեղուի» բաժանորդները իրանց չստացած համարների փոխարէն կը ստանան Աղայեանցի «Երկու քոյր» վէպը, որ արդէն մամուլի տակ է։ Սրանից երևաց, որ մեր լօթիքը մեղւական դառնալով՝ ինձ էլ ձգել են իրանց կարգը. մի քանի համարներից յետոյ նկատեցի, որ «Մեղուի» խումբը բաւական անշնորհք է և իմ դաւանած ուղղութիւնը չունի։ Բայց այլ ևս ուշ էր, Արծրունին ինձ համարեց մեղւական, այսինքն նրանց համակիր, նրանց ոգին և ուղղութիւնն ունեցող։ Ի հարկէ ես մեղւական չէի, բայց ոչ էլ համակիր էի Արծրունու բնաւորութեան մի քանի գծերին։ Յաջող դիպւածի էի սպասում, որ ազատւեմ «Մեղու»-ից առանց կպչելու Արծրունուն, և այդ դէպքը շուտով վրայ հասաւ։ Աբգար Յովհաննիսեանն սկսեց «Փորձ»-ը և ինձ իրան օգնական հրաւիրելով՝ ձգեց փորձանքի մէջ։ «Փորձ»-ի ապագայ խմբագիրը, երբ ես տեսայ առաջին անգամ, չափից դուրս լաւ տպաւորութիւն գործեց վրաս, գուցէ նրա համար, որ «ժպիտը բերնից ցած չէր գալիս, անմեղութեան էր նշան»։ Եւ յիրաւի, թէև նրա այդ ժպիտը ստացական և շինովի էր, բայց ինքը դեռ ևս բաւական անմեղ էր և անփորձ, բայց փորձի ու փորձանքի մէջ ընկնելու պատրաստակամ։ Դրա փիլիսոփայութիւնը դեռ ևս փորձի ու փորձանքների չորս կողմն էր պտտւում։ Եթէ արած փորձը յաջող էր դուրս գալիս, ասում էր «լաւ պրծանք», իսկ եթէ անյաջող, ասում էր՝ «լաւ խրւեցանք»։ Այսպէս շարունակ մի փորձից պրծնում և միւսի մէջ էր խրւում և ինքն իրան մխիթարում, ասելով՝ «Մախլաս...»։

Հաստափոր «Փորձ»-ի առաջին հատորը նոր դուրս եկած ժամանակ, երբ իմ ընկեր Հայրապետ Ղուկասեանցը խնդրեց ինձ, որ միասին գնանք «Մշակ»-ի խմբագրատունը և մի յայտարարութիւն տանք Աէ.քսանդրապոլի համար նոր ուսուցիչներ հրաւիրելու, Արծրունին ինձ ընդունեց շատ սառը և մեր խնդիրը թողած, սկսեց ուղղակի «Փորձի» վրայ յարձակւել, մանաւանդ նրա լեզուի, որ ինձ խայթի։—Ինչի մասին ուզում էք խօսեցէք, ասացի, բայց լեզուի

մասին մի խօսէք, որովհետև «Մշակ»-ի ամենաթերի կողմը հէնց նրա լեզուն է։ Սրա վրայ Արծրունին բարկացաւ, յուզուեց, սկսեց հակաճառել։ Ես նոյնպէս բարկացայ և յարձակողական դիրք բռնեցի, որից սաստիկ վախեցաւ Արծրունին և սկսեց գրասեղանի արկղը բաց ու խուփ անել, հասկացնելով ինձ, որ այնտեղ ռեւոլուէր ունի, որ եթէ ես խփելու լինեմ իրան, ինքն էլ ունի զէնք։ Վերջապէս մի կերպ դուրս եկայ առանց մնաս բարևի և «Փորձի» փորձանքիցն ազատուեցի։ Սրա վրայ երկու օր չանցած՝ «Մշակ»-ը դուրս եկաւ մի առաջնորդող յօդուածով՝ «Ո՞վ է Աղայեանցը» վերնագրով։ Այս յօդուածի մէջ իր բոլոր մաղձը թափում է վրաս և, լեզուի մէջ իմ տգիտութիւնը ցոյց տալու համար՝ այն փաստն է բերում, թէ Աղայեանցն այնքան տգէտ է, որ փոխանակ գրելու՝ «չէ գնում», գրում է՝ «չի գնում»։ Այստեղից ահա սկսեց մեր հռչակաւոր բանակռիւը, թէ ինչպէս պէտք է գրել յայտնի տեղերում՝ չէ՞, թէ չի։

Մինչև այդ ժամանակ ես երբէք չէի մտածել, թէ ինչպէս պէտք է գրել՝ չէ թէ՞ չի, և հարկ էլ չունէի մտածելու, քանի որ ես մտածում և գրում եմ իմ մայրենի լեզուով. թող տաբակուսի նա, ով որ հայերէն չի մտածում և կապկաբար հետևում է սրան կամ նրան։ Եւ որ խելքը գլխին մարդը այսպիսի չիմար բանի վրայ ուշադրութիւն կը դարձնէ։ Եթէ երկուսն էլ գործածական են ժողովրդի մէջ, թէկուզ մէկը շատ և միւսը քիչ, եթէ գրողը պեղանտ չէ, կարող է անխտիր գործ դնել՝ երկուսն էլ։ Բայց այսպէս չէր մտածում Գ. Արծրունին։ Երբ իմ պատասխանիս պատասխանելիք չունեցաւ, երբ տեսաւ, որ ինքն է սխալւում և ոչ ես, փոխանակ իր սխալը շրջակելու, (որովհետև ասել էր, թէ Խ. Աբովեանցը, որ գործ էր ածում չի, նա ևս ունի չէ, որի համար բերել էր և մի սուտ օրինակ), սկսեց հայհոյել անլուր հայհոյանքով։ Վերջերումն ինձ հասկացրեց, որ այդ ծայրայեղութիւնը իր արածը չէր, որ իր բարկութիւնից օգուտ էր քաղել իր մերձաւորներից մէկը։ Ժամանակի ընթացքում, երբ Արծրունուց հեռացան կեղծաւոր կատուները և մնացան աւելի ազնիւ մարդիկ, երբ «Մեղու»-ի ճանապով սկսեցին գնալ «Նոր-Դար» և «Արձագանք»-ը և միացեալ ուժով սկսեցին յարձակւել վրաս, իսկ Արծրունին ինձ պաշտպանեց, ես էլ այդ բարութեան փոխարէն ինչ որ կարողացայ անել

նրա համար՝ արի, երբ ինձ համար անկախ և ազատ ասպարէզ ունէի «Աղբիւր»-ում և «Տարազ»-ում։ Այսու ամենայնիւ լեզուի խնդրում մենք մինչև վերջ մնացինք անհաշտ, թէև այնքան միայն զիջողութիւն արաւ ինձ, որ իմ գրուածները իմ ուղղագրութեամբ տպեց «Մշակ»-ումը։

VIII

Խօսելով մեր գործունէութեան մասին Ալէքսանդրապոլում, պէտք է մի քանի խօսք էլ նուիրել Ս. Բէգնազարեանցին, որ անմոռանալի ջանք է գործ դրել Ալէքսանդրապոլի դպրոցների բարեկարգութեան մասին։

Բէգնազարեանցը ինձ անծանօթ մի անձն չէր։ Երբ ես դեռ ևս ձուլարանումն էի, որ գտնւում էր Հալաբարում, ամեն կիրակի առաւօտ գնում էի Խոջիվանքի եկեղեցին դպրութիւն անելու։ Այդտեղ դասումը կանգնած էլ լինում իմ հասակակից մի տղայ, միևնոյն հագուստով ինչ որ ես ունէի, բայց շատ տխուր և ընկճւած դէմքով։ Երբ որ ես երգում էի, նա էլ ձայն էր պահում։ Ես սկսեցի հետը խօսել և խօսեցնել. և բանից երևաց, որ ուսում առնելու մեծ ցանկութիւն ունի, բայց նիւթական հնար չունի. սրա վրայ աւելանում է և հասակի մեծութիւնը (մօտ քսան տարեկան էր արդէն), որից խրատում են շատերը և չեն ընդունում, իսկ իր սիրտը ոչ մի ուրիշ բանի չի կպչում, ուսման սէրը մի տեսակ ցաւ է դառել իր համար և դիշեր ցերեկ հալում, մաշում է իրան։

—Մի յուսահատիր, ասացի ես,—Աստուած ողորմած է։ Նա որ այդ ցաւը ձգել է քո մէջ, դրանով արդէն գործի յաջողութեան հիմքը դրել է. Աստուծոյ ձգած սերմը անպտուղ չի մնալ։

—Ա՛խ, ինչքա՛ն շնորհակալ եմ քեզանից, քո այդ քաղցր խօսքիդ համար, պատասխանեց Սարգիսը, և նրա աչքերը ջրակալուեցին։

Մեր Սարգիսը շատ խեղճ էր խօսում, մի տեսակ աղիողորմ կերպով, գլուխը ծռմռելով՝ կարծես ուզում էր լաց լինել մօրը կորցրած երեխայի նման։ Սա այս իրան միայն յատուկ շարժմունքովը վերջերում շատերի գութը շարժեց։

Այսպէս ամէն կիրակի պատահում էի Սարգսին (այն ժամանակ Բէգնազարեան ազգանուն ունենալը չըգիտէի) և մեր ծանօթութիւնը քանի գնում՝ բարեկամական էր դառնում։ Բայց շուտով մենք Հալաբարից տեղափոխուեցինք քաղաք, ուր բացուեց տպարանը, և մի առժամանակ ես այլ ևս չըտեսայ իմ Սարգսին։ Երկու թէ երեք ամիս անցած՝ մէկ օր պատահեց ինձ Մէյդանումը։ Ինքը մօտեցաւ ինձ և պատմեց աւելի ևս տխուր եղանակով, թէ ինչպէս իրան յաջողուեց մտնել Փափազեան վարդապետի մօտ իբրև փոքրաւոր-աշակերտ, քիչումիչ բան սովորեց, բայց վարդապետը գնաց Ղարաբաղ և իրան թողեց դարձեալ անճարացած։

—Սարգիս, ասացի, կուզես եկ ինձ մօտ տպարան, այնտեղ ես կաշխատեմ, որ դու համ արհեստ սովորես, համ էլ ուսում առնես։

—Ա՛խ, այդ ինչ լաւ կը լինի, ուր էր թէ այդպէս մի լաւութիւն անէիր, ասաց Սարգիսս ուրախանալով։

Միւս օրը մեր Սարգիսը եկաւ տպարան, բայց չը գիտեմ երկու թէ երեք օր մնաց միայն։ Խեղճի ոտներն ուռան, և այն գնալն էր որ գնաց, էլ չերևաց։

Սրա վրայ անցաւ մօտ վեց տարի։ Ես Պետերբուրգ էի և բնակում էի եկեղեցու գաւթումը։ Մէկ օր դռնապանը եկաւ ինձ իմաց տըւաւ, թէ մէկ մարդ է եկել, ձեզ է հարցնում։ Ես գնացի և դէմս ելաւ մի երիտասարդ, թուխ մօրուքով, արտասահմանի նորատարազ հագուստով և ասաց.

—Բարով, պարոն Աղայեանց, եկել եմ ձեզ մօտ հիւր։

—Շատ ուրախ եմ, ասացի, համեցէք երթանք։

—Երևում է, որ չըճանաչեցիք ինձ, ասաց։

—Այո՛, ասացի, ներեցէք, որ ծանօթս չէք գալիս։ Սրա վրայ պարոնը բղաւեց.

—Ես Բէգնազարեանցն եմ, է՜... Սարգիս Բէգնազարեանցը, ինչպէս չէք ճանաչում։

—Համեցէք, համեցէք, ասացի, դեռ կը գնանք սենեակս, այնտեղ կը ճանաչեմ, գլխի չեմ ընկնում։

Երբոր տարայ սենեակս, բարկ ու բուրկը տեղաւորեցի, յետոյ մօտեցայ իրան և երեսին խոր նայելով ասացի.—Դէհ հիմա ասացէք տեսնեմ, դուք որ Բէգնազարեանցն էք, մենք ե՞րբ ենք իրար

տեսել և ճանաչել, որ հիմա չեմ կարողանում միտս բերել։

Բէգնազարեանցը ծիծաղեց և էլի բղաւեց զազախեցու եղանակով.

—Բա միտդ չի՞, ես էն Սարգիսն եմ, որ դու տարար տպարան, որ քո արհեստը սովրեցնես, բայց ոտներս ուռաւ, էլ չըկարացի գրաշար դառնամ։

Հա՜.., հիմա իմացայ... Բայց ախը էն Սարգիսն ու էս Սարգիսդ իսկի իրար նման չէք. ինչպէս էլաւ, որ էսպէս փոխուեցիր։

Այստեղ Բէգնազարեանցն սկսեց պատմել իր դլխով անցած վերջին դէպքերը, թէ ինչպէս մի բարերարուհի է գտել և նրա ծախքով մտել Ներսիսեան դպրոց, ուր նրան ընդունել են նախապատրաստականում, բայց ինքը իր ջանասիրութիւամբը իւրաքանչիւր տարի երկու դասարան փոխելով՝ չորս տարում աւարտել է դպրոցի ամբողջ դասընթացը և ստացել փառաւոր վկայական, որի շնորհիւ գտել է մի այլ բարերար, որ նրան ուղարկել է Մոսկուա, ուր սկսել է պատրաստուել, որ մտնէ համալսարան, բայց այնտեղի կլիմայի չըդիմանալով, բժիշկների խորհրդով և իր բարերարի հրամանով գնացել է Գերմանիա, բայց այդ ժամանակ բարերարը վախճանուել է, ժառանգներն ընդհատել են օժանդակութիւնը։ Այժմ Գերմանիայից է գալիս և մտադիր է հայրենիք գնալ, միայն ճանապի ծախք չունի։

—Շատ լաւ, ասացի, շատ ուրախ եմ։ Այստեղ ճանապի ծախք կը գտնենք, բայց աւելի լաւ կը լիներ, որ մի նոր բարերար գտնուէր և քեզ կրկին ուղարկէր Գերմանիա յատկապէս մանկավարժութիւն սովորելու։

Ես այս ասացի իբրև մի ցանկութիւն միայն, հետևելով ժամանակակից մոդային։ Նա ինձ մօտ մնաց մէկ թէ երկու շաբաթ միայն, և մէկ օր էլ եկաւ և աւետեց ինձ, ասելով.—գիտէս, իմ Գերմանիա գնալը յաջողում է։ Այստեղի ուսանողներն ուզում են իրանց հաշուով ուղարկել, որ երթամ մանկավարժութիւն սովորեմ, միայն ցանկանում են, որ Մոսկուայի հայ ուսանողներն էլ մասնակցեն, և արդէն գրել են նրանց։

Մոսկուայի ուսանողները ոչ միայն չօգնեցին, այլ և վատաբանեցին Բէգնազարեանցին և կասկած ձգեցին Պետերբուրգի ուսանող-

ների մէջ էլ։ Զարահոգութիւնն աշկարա էր։ Բէգնազարեանցը գնաց Մոսկուա, ամօթահար արաւ իր չարախօսներին և վերադարձաւ Պետերբուրգ իր վարկը վերականգնած։ Եղեանցը միջնորդեց մի քանի վաճառականների և Սանասարեանցին, ինքն էլ նրանց հետ միանալով հաւաքական օժանդակութեամբ Բէգնազարեանցին ուղարկեցին Զուիցէրիա Քիւսնախտի ուսուցչական սեմինարիան։ Եղեանցը առանձին հոգողութիւն ունէր նրա ուսման յաջաղիմութեան վրայ, թղթակցում էր դպրոցի տեսչի հետ և միշտ լաւ կողմից էր ստանում տեղեկութիւնը։ Ահա այստեղ իր մանկավարժական ուսումն աւարտեց Բէգնազարեանցը և դիպլոմով վերադարձաւ Պետերբուրգ 1870 թուականին։ Այստեղ էլ ցանկութիւն ունէր մտնել համալսարան, բայց այս բանը դուր չեկաւ Եղեանցին և նրան ուղարկեցին Ալէքսանդրապոլ, Ա. Բաբայեանցի առաջարկութեամբ։

Բէգնազարեանցը մի առանձին տաղանդ չունի, ինչ որ է՝ իր անխոնջ աշխատութեանն է պարտական։ Դպրոցները նրան միայն պատսպարել են, իսկ ուսումն ինքն է ձեռք բերել իր ժրաջան ինքնօգնութեամբը։ Ալէքսանդրապոլից յետոյ, նա մի առժամանակ գնաց Օդեսսա, մօտ տաս տարի տեսչութիւն արաւ Երևանի թեմական դպրանոցում, յետոյ Ներսիսիան դպրանոցում եղաւ թէ ուսուցիչ և թէ տեսուչ։ Իբրև ուսուցիչ, պատկառելի և մերթ նաև երկիւղալի էր աշակերտաց համար։ Ներքին սէրը դրսի հաստ կեղևից բղխել չէր կարողանում։ Ուսուցանում էր որպէս արուեստ, կամ ինչպէս կասեն՝ արուեստի բոլոր կանոնների համեմատ, բայց ոչ իբրև Մեսրոպ, որ «Ոչ իբրև զարուեստ ուսուցանէր, այլ որպէս զհոգի առաքելաբար աշակերտացն տայր»։

IX

Հինգ տարու չափ մնացի ես Ալէքսանդրապոլում և շատ գոհ էի վիճակիցս, սիրուած, յարգուած և մխիթարուած էի ամեն կողմից։ Բայց ամեն ինչ թէ բնութեան և թէ կեանքի մէջ պարբերական է։ Լաւն ու վատը, դառն ու քաղցրը, ուրախութիւնն ու տխրութիւնը, յաջողութիւնն ու անյաջողութիւնը շարունակ յաջորդում են միմեանց, ինչպէս տարեայ չորս եղանակները և գիշերն ու ցերեկը։

Սրա վրա շատ չանցաւ երկոքին զաւակներս մեռան—Սոնան և Հայկս։ Սարսափելի բան է առաջին կոկիծը որդեկորոյս ծնողի համար։ Մօր վիշտը շատ և շատ խոր էր, բայց սիրտն էր գցում և հալւում, մաշւում, իսկ ես դուռում էի գազանի պէս, որ դուրս մղեմ սրտիս կոկիծը։ Ես յետոյ թեթևանում էի, իսկ նա ծանրանում էր։

Ես սկսեցի նիհարել, ձայնս կորաւեց։ Ամուսինս աւելի վատ վիճակի մէջ ընկաւ թէ ֆիզիկապէս և թէ հոգեպէս։ Նրան շուտ ուղարկեցի Թիֆլիս, իսկ ես հրաւիրեցի օր. Անգլիցեանին օրիորդաց դպրոցի համար. սրա հետ ամուսնացաւ իմ բարեկամ Ա. Եղեկեանցը։ Սրանից յետոյ ես հեռացայ Ալէքսանդրապոլից։ Բէգնազարեանցն արդէն հեռացել էր ինձանից մի տարի առաջ։ Մենք հեռացանք, բայց դպրոցները բարեկարգ վիճակի մէջ և բարեխիղճ ուսուցիչների ձեռքում թողեցինք։

Ալէքսանդրապոլից ես գնացի Թիֆլիս նորից վերադառնալու յոյսով, բայց թէ իմ և թէ ամուսնոյս տկարութիւնը պահանջում էր Թիֆլիս մնալ։ Այս ժամանակ ահա Աբգար Յովհաննիսեանը հրաւիրեց ինձ օգնելու իր «Փորձ»-ին, որ դեռ նոր պիտի սկսէր։ Մօտ տարի ու կէս մնացի ես «Փորձ»-ի խմբագրատանը, բայց ոչ մի բան չըգրեցի ես «Փորձ»-ի համար բացի մի թարգմանութիւնից «Օգնական-Ուսուցիչ» վերնագրով։ Չըգրեցի, որովհետև գրածիս գրաքննիչը Փորձաքննիչ-մենտոր Եւանգուլեանցն էր, որի սիրած ուղղութեամբ ես բան գրել կարող չէի, ինչպէս դրա փորձն արի մի քանի գրածներ ցոյց տալով։ Կարծելով, որ սրբագրութիւնն ինձ շատ է զբաղեցնում, Աբգարը մի օգնական էլ տուեց ինձ, բայց այդ փորձն ևս անյաջող եղաւ, ես դարձեալ ոչինչ չըկարողացայ գրել։ Փորձում ոչինչ չըգրելով, պատահում էր սակայն, որ ինքս ինձ համար մի բան գրում և պահում էի։ Որքան սիրելի էր ինձ համար Աբգարը, որ ամենայն հոգւով աշխատում էր ինձ սիրաշահած պահել, ոչինչ չէր խնայում, ոչ փող և ոչ պատիւ, բայց այդ շրջանն ինձ համար ատելի և անտանելի էր, մանաւանդ աշխատակիցներից մի քանիսը, որոնք տղրուկի պէս ծծում էին Աբգարին և միևնոյն ժամանակ շարունակ իմ տակը փորում։ Դրանք մի կողմից քծնում էին Աբգարին, միւս կողմից Արծրունուն ու տանող բերողի

պաշտօն էին կատարում։ Ես չէի կարող երկար մնալ այս անտանելի վիճակում։ Ինքս խնդրեցի Աբգարին, որ ինձ ազատ կացուցանէ— իմ խղճմտանքս տանջւում է, ասացի, փող եմ տանում, բայց ոչինչ չեմ շինում. փոխանակ ինձ ութ հարիւր մանէթ տալու մի ուրիշին կարող էք չորս հարիւր մանէթով պահել իմ տեղս։ Աբգարն ինքն զգաց, որ սոխակը վանդակի մէջ կարող չէ երգել, տեսաւ փորձով, որ ես պատէրով բան չեմ կարող գրել, որ ես էլ իմ կապրիզներն ունեմ, որ ինձ հարկաւոր է անպաչման ազատութիւն և անկախութիւն և ազատեց ինձ իր «Փորձ»-ից։ Այս բանը պատահեց 1878 թուի սեպտեմբերին, եթէ չեմ սխալւում։

Այդ տարին ես գնացի Երևան ուսուցչութեան, իսկ Ռաֆֆին Ազուլիս նոյնպէս ուսուցչութեան։ Երևանի թեմական դպրոցի տեսուչը Բէգնազարեանցն էր, Ռուբէն Զալալեանցն էլ հոգաբարձու էր։ Երկու մտերիմ բարեկամներս ինձ ընդունեցին իբրև գերութիւնից ազատուածի և սկսեցին սփոփել և մխիթարել։

Գէորգ կաթողիկոսն իմանալով իմ Երևան գալս, Մանկունու նամակով կանչեց մօտը և առաջարկեց, որ կրկին յանձն առնեմ իմ առաջուայ պաշտօնս, այն է՝ «Արարատ»-ի խմբագրութիւնը։ Այս բանն ինձ համար բոլորովին անսպասելի էր։ Արդէն ճեմարան կար, ուսուցիչներ կային և տեսուչն էլ Այւազովսկին էր։ Իմ պէտքն ինչու պիտի զգացւէր այլ ևս։

—Ինչ անցք որ անցել է ձեր երկուսիդ (իմ և Մանկունու) մէջ, ասաց, պէտք է մոռացութեան տաք։ Այն ժամանակ երկուքդ ալ տղաք էիք, իսկ հիմա հասունցել էք։ Այս գործի համար քէզմէ յարմարագոյնը չունեմ այս տան մէջ։

Մանկունին մօտս կանգնած էր, երբ հետս խօսում էր Վեհափառը, և հէնց իր թելադրութեամբ էլ պէտք է հրաւիրւած լինէի, թէպէտ ինքն այդ չասաց, այլ թէ՝ «իշդէ, մարդս քեզի կուզէ»։

Մանկունու վրայ մատնացոյց լինելով՝ շարունակեց Վեհափառը.

Սա պիտի երթայ... մեծ մարդ կը հանդիսանի զինքը... Թող երթայ, հոգ չէ...

Այստեղ շատ բան ասեց Վեհափառը՝ ցաւած սրտից բխեցած։

—Ես պատրաստ եմ, ասացի, Վեհափառ Տէր, Ձեր հրամանը կատարելու։ Թէ ես և թէ հոգաբարձուք ձեր ծառաներն ենք,

կը հրամայէք, նրանք իմ տեղ մի ուրիշին կը հրաւիրեն և ինձ կարձակեն։

—Շատ ապրես, տղաս... Վարձատրութեանդ համար հոգ չընես. օրինաւոր ռոճիկ կունենաս և ամենայն յարմարութիւն։ Ես դեռ կաշխատեմ, որ սա չերթայ, իսկ եթէ գնալու եղաւ, քեզ իմաց կուտանք։

Այս մի նախապատրաստութիւն էր, որ Վեհափառն անում էր, որ երբ Մանկունուն հեռացնեն, ինձ հրաւիրէ. բայց բանն այնպէս եկաւ, որ Մանկունին մնաց իր տեղը։ Այսու ամենայնիւ այս ինքն ըստ ինքեան չնչին դէպքը ինձ համար գործնական և բարոյական օգուտ ունեցաւ։ Իմ վարկը բարձրացաւ հոգևորականութեան առջև, մանաւանդ միաբանութեան և առաջնորդների, իսկ այս մեծ նշանակութիւն ունէր իմ ապագայ գործունէութեան համար։

Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանը մեծ ճաշկերոյթ տրւեց Գայանէի վանքում ի պատիւ իր նախկին բարեկամի, որ և մի համակրական ցոյց էր առ Նորին Վեհափառութեան քաղցր տրամադրութիւնը դէպի ինձ։ Ինչ պէտք է անես, այսպէս է աշխարհիս կենցաղավարութիւնը։ Կան դէպքեր և վիճակներ, ուր մարդիկ չեն կարողանում սէր ցոյց տալ իրանց սիրածին և ատելութիւն իրանց ատածին։ Այս տողերը գրելիս ինքս այսպիսի մի անելանելի վիճակի մէջ եմ գտնւում, որի մասին կը գրւի մի ուրիշ անգամ։

Երևան հասնելուցս քիչ յետոյ Աբգարը եկաւ Սանասարեանցի հետ։ Սանասարեանցը եկել էր քրոջն այցելութեան, իսկ Աբգարը Բարեգործական Ընկերութեան կողմից ուղարկւած էր դերեվարւած ալաշկերտցիներին նիւթական նպաստ տալու համար։ Ես շատ ուրախացայ թէ մէկի և թէ միւսի գալստեան համար։ Աբգարն ինձ վեր առաւ հետը ու միասին գնացինք այցելութեան գաղթականներին, որոնք ցրւած էին Երևանի զանազան գիւղերում։ Մի երեկոյ հասանք Գաւալու և իջանք փոստի իջևանումը։ Իջևանի պահողը Ծերունի Ամիրխանեանն էր, որ մի կոպիտ և դիւզ խօսող մարդ էր։ Երբ կարդացել էր Աբգարի ուղեգիրը ու գլխի ընկել, որ նա իրան ծանօթ բժշկապետ Յովհաննիսեանի որդին էր, եկաւ ուղղակի երեսին կանգնեց և մի դիւզ հարցմունք արաւ, որից Աբգարս սաստիկ վիրաւորւեց և հրամայեց, որ կառքը լծել տայ։

—Հեռանանք, ասաց ինձ, այս յիմար տեղից, ես այստեղ չեմ կարող գիշերել։

—Բայց արդէն ժամի ինն է, ասացի, և ճանփէքը վտանգաւոր։ Եթէ չես վախենալ, գնանք Բաշնորաշէն, մեր բարեկամ բժիշկ Քաջբերունուն հիւր։

—Գնանք, ասաց, ես չեմ վախենում. «Ես հաւատում եմ իմ աստղին»։

Ճշմարիտ որ Աբգարի աստղն այդ ժամանակ փայլում էր Թիֆլիսի հորիզոնի վրայ այնպէս վառ, ինչպէս ոչոքինը։ Ոչ մէկս զէնք չունէինք, Սանասարեանի բէուլէրն էինք վերցրել հետներս։ Շատ էլ մութն էր։ Մօտ կէս գիշերին մի ամայի անապատի մէջ էինք, ուր և հանդիպեցինք մի խումբ թուրք ձիաւորների, որոնք ճանփից դուրս գալով հեռից կանչեցին մեր կառապանին, թէ ովքեր ենք մենք։

—Գնացէք ձեր ճանապարհը, պատասխանեց կառապանը, սրանք ձեր ուզած մարդկանցից չեն։

—Ի՞նչ են ասում, հարցրեց Աբգարը։

—Ոչինչ, ասացի, պահապաններ են, մեր ապահովութեան հոգս են քաշում։

Կառապանը թռցրեց մեզ և երբ հասանք Բաշ-Նորաշէն, ասացի. «Լաւ պրծանք» աւազակների ձեռից, հիմա հաւատում եմ քո աստղին։

Գիշերուայ ժամի մէկին իջանք Քաջբերունու մօտ։ Աբգարն անձամբ ծանօթ չէր բժշկին, նոր ծանօթացաւ իր տաղանդաւոր աշխատակցի հետ և մի թեթև ընթրիքից յետոյ իսկոյն քնեց։ Մենք չըքնեցինք մինչև լոյս և չիմացանք էլ մեր փոխադարձ հաղորդելիքը։ Որքան տարբերութիւն կայ բնական և շինովի մարդկանց մէջ. որքան տարբերութիւն և նրանց վիճակի մէջ։ Քաջբերունու պէս մարդիկ ծածկւած են մնում աննշան թուրքական գիւղերում, իսկ շինովի անշնորհքները մեծ քաղաքներում իրանք իրանց ժողովրդի ղեկավարող են հանդիսացնում։ Փողն ու դիրքը ապօրինի կերպով յափշտակում է հանճարների պաշտօնը ու ժողովրդին զրկում հարազատ ղեկավարներից։

—Ի՞նչպէս մարդ է քո Աբգարը, հարցրեց Գաբրիէլը։

—Ի՞նչ ասեմ, դեռ իսկական մարդ չէ, ուզում է մարդ դառնալ, մարդ բնական և ինքնուրոյն. բայց ամեն տողի վրայ տասն անգամ յօրանջում է, բան չի դուրս գալիս գլխից։ Եւ որովհետև գրել ուզում է միայն փայլելու համար և ոչ թէ իր զգացմունքների ծանրութիւնից թեթևանալու, որ չունի։ այս պատճառով փայլուն ֆրազներ է հաւաքում զանազան տեղերից, դիմում է նաև կողմնակի միջոցների. գրել է տալիս ուրիշներին այնպէս, որ կարծւի թէ ինքն է գրել և տպագրում է անստորագիր։

—Այն ուսանողների նման, որոնց փոխանակ ուրիշներն են քննութիւն տալիս...

—Ուղիղ այդպէս...

—Ի՞նչ է նպատակը, ձգտումը։

—Ձեռք բերել բարձր դիրք, խելք մարդու համբաւ և հեղինակութիւն, որ շատերի համար ակնածելի լինի, շատերը կարօտ լինեն իր խնամակալութեանը և հովանաւորութեանը, ազգային ամեն տեսակ գործ և գործիչ իր ձեռքումն ունենայ, որ ում ուզենայ՝ ներս թողնի, ում չուզենայ՝ դուրս մղէ։

—Ուրեմն շատ վտանգաւոր մարդ է դա։ Սա մի բոլորովին նոր տիպ է մեր մէջ։

—Այո, նոր, բայց դեռ լաւ չի կազմակերպւած։ Սա կարող է դառնալ մի տեսակ դիքտատոր, եթէ խելքը գլխին պահի, մի քիչ համեստ և հեռատես լինի։ Սակայն սրա մէջ ամեն ինչ առ երես է, մէջը դատարկ է, փուչ է։

Աբգարից յետոյ անցանք այլ առարկաների և անցքերի, որոնք մեր սրտին աւելի մօտիկ էին։ Խօսեցինք այնպիսի բաների վրայ, որոնց մասին միայն խօսում են, բայց չեն գրում։ Մօտ երեք տարի էր անցել, ինչ որ չէինք տեսել միմեանց, բայց շատ ու շատ բաներ էր անցել երկուսիս գլխովն էլ, պէտք էր միմեանց հաշիւ տայինք երես առ երես։

Միւս օրը յետ դառանք դէպի Երևան և ճանապարհին՝ թէ գնալիս և թէ վերադարձին՝ մեր խօսակցութեան նիւթը գլխաւորապէս զանազան անձնաւորութիւններ էին. որոնց գովաբանում կամ վատաբանում էինք Մեր վատաբանութեանն ամենից շատ ենթարկւում էր Պետրոսը (Սիմէոնեանցը), որին հեռացնելը Ներսիսեան դպրոցից

բոցից մի անհրաժեշտ բարեգործութիւն էինք համարում։ Աբգարը պատմում էր ուրիշի պատմածները նրա մասին, իսկ ես պատմում էի իմ տեսածը և դիտածը։ Ես վստահանում էի և Աբգարի բարեկամներին՝ Եւանգուլեանցին, Պալասանեանին, Բարխուդարեանցին, պատմում էի թէ ինչպիսի փշեր էին դրանք ինձ համար «Փորձ»-ի խմբագրատան մէջ։ Աբգարն էլ համակարծիք էր ինձ հետ։ Բայց Աբգարը տարէց տարի նորանոր փորձեր սկսեց անել, իր «Փորձ»-ն «Արձագանք» շինեց և նրան էլ ենթարկեց զանազան փորձերի մինը քան զմիւսն անյաջող։ Տարէց տարի փոխւեց և ինքը, և ամենայն բանի վրայ սկսեց նայել այնպէս, ինչպէս ապաւորւում է առարկան աչքում, այսինքն թարս։ Սկսեց գովել և պաշտպանել իր ատածներին, պախարակել ու հալածել իր սիրածներին։ Շրջապատելով իրան պնդերես և աներես մարդկանցով, հացկատակ պարասաւորներով, դրանով իր թերթն ուզեց հետաքրքրական կացուցանել, կարդացողների թիւ գրաւել, բայց ընդհակառակն այդ ճանփով նա հասաւ մինչև «Նոր-Դար»-ի ստորոտը։ Փոխանակ դնալու դարիվեր, գլորւեց դարիվայր։

Երևանում ես մնացի ութ ամիս։ Այդ տարին պատահեց ճեմարանի առաջին խռովութիւնը, որից յետոյ Վեհապառը սառցրեց իր յարաբերութիւնը Այւազովսկու հետ, թէպէտ մեղաւորը միայն նա չէր, որ Թիֆլիսումն առաջնորդութիւն և ճեմարանում տեսչութիւն էր անում միաժամանակ, այլ և Վեհարանը, որ ամեն ինչին բանի մէջ խառնւում և խառնակում էր ամեն ինչ։ Այդ միջոցին ես ու Բէգնազարեանցը գնացինք Էջմիածին, ուր Բէգնազարեանցը մնաց, որ մասնակցէ անցքի քննութեանը, իսկ ես Մալխասեանցին մխիթարելով՝ որպէս նախկին ընդունակ աշակերտիս, վերադարձայ Երևան։ Այդ տարին Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանը եկաւ կաթողիկոսի մօտ կարևոր գործով, բայց թուրքասիրութեան հանդիպելով՝ յետ դարձաւ ձեռնունայն։ Ամեն իշխանաւոր դրաւչութեան մի ջոկ տաքտիկա ունի։ Գէորգ կաթողիկոսի տաքտիկան թուրքասիրութիւնն էր, որով խոհեմ և խելօք մարդու անուն էր վաստ-

կում։ Իզմիրլեանցին այցելեցինք ես ու Բէգնազարեանցը և մեզ վրայ խելահաս և ծան-բախոհ մարդու տպաւորութիւն թողեց։

Դպրանոցում ես դասեր էի վերցրել նախակրթարանում և մէկ էլ վերջին դասատանը։ Ամեն տեղ այսպէս էի անում ես, դպրոցի երկու ծայրերն էի վերցնում, —ներս մտնողներին ընդունում էի և ուղեւորում դէպի միւս դասարանները, դուրս եկողներին էլ ճանապարհ ձգում դէպի կեանք՝ ինքնակրթութեան ոգի ներշնչելով նրանց մէջ։ Նախակրթարանում ես ունէի ութսունաչափ աշակերտ, և այդքան հոգին սովորում էին իբրև մի հոգի՝ տաքտով ու խմբով։ Երևանի երեխէքը ֆիզիքապէս թոյլ լինելով՝ աւելի զբաղեցնում էի նրանց մարմնամարզութեամբ, որ շատ լաւ էր ներգործում նրանց մտաւոր պարապմունքի վրայ, մանաւանդ խմբովին և տակտով աշխատելու վրայ։ Ամբողջ դասատունը գործում էր իբրև մի լարած ժամացոյց։ Գրել կարդալում այնքան վարժեցին, որ ամեն թելադրութիւն գրում էին անսխալ, գրում էին և փոքրիկ շարադրութիւններ, մեծ մասամբ իրանց գիտցած հէքիաթներից։ Շատերն էին ցոյց տալիս տաղանդի նշան։ Այդտեղ ես իմ դասատուութեան բոլոր թերի և պակաս կողմերը լրացրի, և կարող էի, եթէ տեղը ներէր, ոչ թէ ութսուն հոգու, այլ և հարիւրաւոր հոգու հետ պարապել իբրև մի անհատի հետ ու առ առաւելն երեք ամսում սովրեցնել օրինաւոր գրել-կարդալ։ Շատերը ենթադրում էին, որ տաած արդիւնքի մէջ մի անբացադրելի ձեռնածութիւն կայ, թէ դա աւելի մարզմունքի և մեքենականութեան արդիւնք է։ Ընդհակառակը իմ գործի յաջողութեան միակ գաղտնիքը այն էր, որ բաց էի անում երեխայոց առջև գրել կարդալու գաղտնիքը, նրա բուն էութիւնը զննելի և շօշափելի կացուցանում։ Իմ օգնութեամբ երեխէքն իրանք էին անում գրերի գիւտը, նախ գրում և ապա կարդում էին. երկուսի մէջ էլ գլխաւորը գիտակցութիւնն էր, գիտէին, թէ ինչ են անում և ինչու համար։ Ինչպէս ամեն մի շօշափելի առարկայ զննելի ենք կացուցանում, ցոյց ենք տալիս նրա ձեւը, մեծութիւնը, գործը, զանազան մասերը, այսպէս զննելի էինք կացուցանում գրի ու նրա կարդալու էութիւնը։ Երեխէքս գիտէին այնպիսի գաղտնիքներ, որոնք անյայտ են շատ վարժապետների։ Այսպէս պատրաստած երեխան, թէկուզ մի տարուց յետոյ դուրս

գայ դպրոցից, անկարող է չշարունակել իր ինքնուսուցումը։ Լինելով մի փոքրիկ Մեսրոպ, հասակի հետ կաճի նրա գրագիտութիւնը։ Այս մասին ես գրել եմ «Վարժարան» ամսագրի մէջ՝ ընդդէմ Մանդինեանցի իմ կարծիքով բթացուցիչ մեթոդի։

Երևան ես ընկայ տնակնկալ կերպով։ Մտքումս դրել էի «Փորձ»-ից հեռանալ և անգործ չընթալ, գրեցի Բէգնազարեանցին իմ մտադրութիւնը և խնդրեցի, որ ինձ համար տեղ պահէ մինչև ինձանից բացասութիւն չստանայ, թէկուզ ուշ լինի այդ բացասութիւնը։ Ռուբէնը բաւական ծիծաղել էր իմ այս պայմանի վրայ և ասել էր. «ինչ անենք, մեր Ղազարն է, պէտք է սպասենք, տեսնենք երբ է բարեհաճում գալ»։ Այսպիսի արտօնութիւն միայն ինձ կարող էր տալ խստապահանջ տեսուչ Բէգնազարեանցը, գիտենալով, որ ես թէկուզ տարեայ կիսին գնամ, էլի ի տարեայ գործ կը շինեմ։ Բայց ես գնացի դպրոցական տարեայ սկզբին և վերջումն էլ բոլորովին գոհ մնացի վիճակիցս, այլ ես միտք չունէինք հեռանալ Երևանից, բայց մի տնակնկալ հրաւէր անհրաժեշտ դարձրեց իմ հեռանալը։ Աբիստակէս վարդապետ Սեդրակեանը, որ կառավարիչ էր Ղարաբաղի թեմի, անձամբ խօսեց ինձ ու Բէգնազարեանցի հետ, շատ բաներ հաղորդեց և ցոյց տուեց իմ Ղարաբաղ գնալու կարևորութիւնը։ Ես ու Բէգնազարեանցը այս մասին երկար մտածելուց յետոյ, տեսանք, որ հայր սուրբի մտադրութիւնը կատարեալ անհրաժեշտ է ընդհանուր գործի համար։ Մեզ պէտք են ամեն նահատակութիւն յանձն առնող դպրոցական առաքեալներ։ Ալէքսադրապոլում մեր ձգած հիմքը շարունակում էր հաստատուն մնալ շնորհիւ Հայրապետ Ղուկասեանցի տոկուն աշխատութեան, Երևանն էլ արդէն կապուեց նրա հետ մի ուղղութեամբ, պէտք էր Ղարաբաղն էլ միացնել նրանց հետ, որ ամեն տեղ մի ուղղութիւն, մի հոգի լինի, մի նպատակի դիմի ու միևոյն ծրագիրն ունենայ, որ մշակել էինք արդէն Ալէքսանդրապոլումը։ Ահա այս նպատակով ես թողեցի Երևանը և գնացի Շուշի։

X

Մի զարմանալի դէպք էր իմ Շուշի գնալս։ Էջմիածնի տպարանը բարեկարգեցինք ես ու իմ Միքայէլը, Ղարաբաղի դպրոցա-

կան գործի բարեկարգութիւնն ևս մեր օգնութեամբը կատարեց։ Միքայէլը՝ քահանայ լինելով՝ ամբողջ վիճակի ընդհանուր գործակալն էր, Սեդրակեանի մտերիմը և նրա աջ ձեռքը։ Նուտով Յովհաննէս Տէր-Գրիգորեանցն էլ թեմական տեսուչ եղաւ իմ յորդորանքով, վարժապետներից էլ գաղափարի տէր մարդիկը միացան մեզ հետ և այսպէսով կազմեց մի բաւական զօրեղ խումբ։ Մեզ հարկաւոր էր մեծ ուժ, որովհետև Բաբաջանեանի խումբը ամեն ինչ տակնուվրայ էր արել, քաղաքը խռովութեան մէջ գցել և հաւատացրել, որ իրանից յետոյ այլ ևս քար քարի վրայ չպիտի կանգնի, դպրոցը պիտի փակուի։ Հէնց այս մտքով էլ իրանց գործերից ոչ մի հետք չէին թողել, ամեն ինչ տարել էին հետները, նոյն իսկ հասարակ ցուցակները։ Այս վիճակում Նուշեայ դպրոցը նմանում էր թալանուած Ալաշկերտին։ Պէտք էր ուրեմն վերականգնել մի քարուքանդ շէնք, և չարութեամբ ու անիրաւութեամբ բծաւորած մի ամենամաքուր պատիւ։ Մեծ էր Հայր Սեդրակեանի գործ դրած ջանքը. ամեն մի առաջարկութիւնս դպրոցի վերաբերութեամբ իսկոյն իրագործում էր կարծես մի դիւթական գաւազանով։ Ես տեսուչ չէի, այլ տեսչապետ, եթէ խորթ չի թուալ այսպէս ասել, որովհետև ինքս էի նշանակում տեսուչներ և արձակում, դպրոցների ղեկը, թէ օրիորդաց և թէ տղայոց իմ ձեռին էր։ Ուսումն որ սկսեցինք, մի քանի հոգի եկան միայն, բայց ամիս չանցած վրա թափուեցան այնքան, որ էլ տեղ չունէինք ընդունելու և հարկադրուած՝ երկու նոր դասարան ևս աւելցրինք։ Գործը կարգի ընկաւ և յառաջ գնաց հսկայական քայլերով, որից ամօթահար եղան դպրոցի թշնամիները և մեղայ եկան, իսկ բարեկամները ճակատները լայն բաց արին։

Շատ էր դժուար Նուշի քաղաքում մի բարոյական նախագիծ իրագործելը։ Այդ քաղաքում չկար ձգտումն դէպի ազնիւն ու վսեմը։ Ինչ որ չէր համբուրել, չէր կշռուել, չէր չափուել, չէր գնահատուել դրամի յայտնի քանակութեամբ, դրանց համար գոյութիւն չունէր։ Աշակերտների մէջ երևում էր ծնողաց նիւթապաշտական յատկութիւնը, ինչպէս և նրանց ֆիզիքական առողջութիւնը։ Ֆիզիքապէս առողջ լինելով, ուժեղ էին և մտքով, թէ տղայք և թէ աղջիկք։ Բայց շատ դժուար էր դրանցից իդէալիստ շինել։ Ամբողջ

քաղաքում աչքի չէր ընկնում ոչ մի ապուշ, ոչ մի խելագար, ոչ մի սովորական կարգերն արհամարհող հարբեցող։ Մի հատ ցնորուած մարդ կար միայն, բայց նա էլ մարդամէջ չէր դուրս գալիս, ճգնում էր տանը և աշակերտներ էլ էր կարդացնում։ Նուշեցիք դրա անունը դրել էին բանաստեղծ։ Այս այսպէս լինելուց յետոյ, ուրեմն դիժ պէտք է լինէր մի շուշեցի, որ բանաստեղծ լինելու հակումն ցոյց տար, չէ որ նրան էլ կը ձգէին «բանաստեղծի» կարգը...

Նուշի քաղաքը վաճառաշահ չլինելով՝ ամենայն տարի խախալում, խարբալում է. սաղերն ու տառուզները դուրս են գնում, քաղաքում մնում են փուչն ու տականքսի մանրունքը։ Ես գործ ունէի փուչերի հետ, և սրա համար էլ նահատակում էի չարաչար։ Դաւալարութիւնը թէ ներսից և թէ դրսից էր, և այնպէս բարդ էր, որ դրանց բոլորի առաջքն առնելու համար պէտք էր մի առանձին խորհրդարան։ Այս պատճառով ես այնքան զբաղուած էի, որ ինչպէս կասեն՝ քիթ սրբելու ժամանակ չունէի, և ոչինչ չըգրեցի, բացի մի «Անահիտից», և մի «Թեմական տեսչից», որ «Մեղուի» մէջ տպուեց կիսատ պռատ։

Ղարաբաղում ես իբրև ուսուցիչ՝ նման էի ձագեր պահող Թուխբսկան հաւի, որ սովորաբար գուրգուրում է իր ձագերին, ինչ տեղից ասես մի բան գտնում, ուտեցնում, և միևնոյն ժամանակ դիւրագրգիռ և կատաղի լինելով՝ յարձակւում է շների և կատուների վրայ և փախցնում բազէի սուերից։ Բոլոր կռիւներս յառաջ էին գալիս իմ հաւական սիրուց, որ տածում էի դէպի իմ մնուցած ձագերը։ Ով որ վարժապետի կոչում է ունեցել և սիրտ, նա կը զգայ, թէ ինչ եմ ուզում ասել, կիմանայ, թէ որպիսի սէր եմ ունեցել ես դէպի իմ գործը, դէպի իմ հոգեզաւակներս։ Մի բանով միայն ես մխիթարուած եմ, որ երախտամոռ աշակերտ ունեցած չեմ։ Չեմ տեսած ոչ մի ուսուցիչ, որ այս կողմանէ ինձ չափ բախտաւոր լինի եղած։ Ես հոգւով չափ շնորհակալ եմ իմ աշակերտներից։

Նուշու դպրոցում իմ առաջարկութեամբ յաջորդաբար տեսչութիւն արին Զաւատ-բէգ Իշխանեանց, բժիշկ Բախիշ-բէգ Աղասա-

բեանց, մասնագէտ մանկավարժ Սեդրակ Մանդինեանց և Համբարձում Առաքելեանց։

Սրանցից առաջին երկուսը ձրի կատարեցին իրանց պաշտօնը, իսկ Մանդինեանցին հրաւիրեցինք վարձով։ Սրան ահա կուզեմ մի քանի տող նուիրել ամենայն անաչառութեամբ և ազնուութեամբ, չը նայած իմ առելութեանս, որ ներկայումս տածում եմ դէպի այդ անձնաւորութիւնը։

Սկսած 67 թուականի վերջերից ես Մանդինեանցի ամենամտերիմ բարեկամն եմ եղել։ Իմ բարեկամութեան հոգեբանական աղբիւրը հետաքրքիր դէպքն էր։ 67 թուականի ամառը Մանդինեանը մի քանի շաբաթ վարեց «Մեղու» խմբագրութիւնը և այդ ժամանակ գրեց նա մի քննադատութիւն իմ «Արութիւն և Մանուէլ» վէպի մասին, որ նոր էր դուրս եկել։ Կարելի բան է արդեօք, որ մի նոր գրող չը սիրէ իր այն կրիտիկոսին, որ նրան մի նոր երևոյթ է համարում, տաղանդաւոր անուանում և այնքան յափշտակւում, որ բոլոր վիպագրողներից բարձր է դասում, թէկուզ այդ բոլորը մի ուրիշի կարծիքով չափազանցութիւն լինի և սուտ։ Բայց այդ ժամանակ մեր Մանդինեանցը սուտ ասել չէր կարող, սուտութեան արուեստը դեռ չէր սովորել. նա մեր տաղանդաւոր ու աշխոյժ դերասաններից մէկն էր, իր ուսումը կարծեմ Լազարեան ճեմարանումը աւարտած։ Այս յօդուածը ես կարդացի դեռ Պետերբուրգումը և ինձ ու ինձ ասացի. «Այս ինչ լաւ տղայ է եղել Մանդինեանցը, ինչ լաւ է հասկացել ջոկել կենդանի գրողին մեռածից, բնականը՝ կեղծից»։ Նոյն տարուայ վերջին ես եկայ Թիֆլիս, հետն անձամբ ծանօթացայ, ներկայ եղայ իր խաղերին և շատ հաւանեցի։ Այսպիսով ահա մենք բարեկամացանք, ես դարձայ նրա միակ տաղանդաւոր վիպասանը, իսկ նա իմ միակ տաղանդաւոր դերասանը և կրիտիկոսը։

Վերջը նա գնաց Պետերբուրգ, որ մի քիչ իրաւաբանութիւն սովորէ և մասնաւոր փաստաբանի իրաւունք ձեռք բերէ։ Այդտեղ ընկաւ հայ ուսանողների շրջանը, վարակւեց նրանց ձգտումով, որ էր ծառայել ազգային դաստիարակութեան, ինքն էլ արդէն վարժապետութիւն արած էր Ներսիսեան դպրոցում, թէև չէր զգացել, որ այդ պաշտօնի կոչումը չունի. վերջապէս, օգուտ քաղելով Սանտարեանի ձեռնտուութիւնից, գնաց Գերմանիա մանկավարժութիւն սովորելու, այն պայմանով սակայն, որ իր ծառայութիւնն իր բարերարի ապագայ նպատակներին նուիրէ։ Այս բոլորի մասին նա գրում էր թէ ինձ և թէ Գէորգ Զմշկեանին. երեքս էլ սերտ բարեկամ էինք իրար հետ։

Վերջը երբ որ վերադարձաւ Գերմանիայից արդէն մանկավարժ դարձած, գերմանական փիլիսոփայի դիրք ու ոճ հագած, արտաքին ձևերը փոխած, այսուամենայնիւ ինձ հետ սերտ բարեկամ մնաց, և որովհետև այդ ժամանակ ես էլ արդէն ուսուցչութեան ասպարիզումն էի, նա հետամուտ էր լինում իմ գործունէութեանը, մանաւանդ գրաւորին, և առիթը պատահած ժամանակ՝ գովասանք էր գրում իմ մասին, ասելով, եթէ կայ մեզանում մանուկների սիրոն ու լեզուն լաւ հասկացող՝ այդ Աղայեանցն է միայն։ Ես էլ մտքումս ասում էի. «սա որ այսքանը հասկանում է, պէտք է որ լաւ մանկավարժ լինի»։ Սրա համար էլ երբ որ մի բան էի գրում մանկավարժական, տանում էի մօտը կարդում, խորհուրդ հարցնում և միշտ էլ միայն հաւանութիւն էի ստանում։

Այստեղ ի դէպ ասեմ, որ յետոյ, երբ Բահաթրեանցը եկաւ և այս երկուսի մէջ գժտութիւն ընկաւ, այդ ժամանակ ինձ համար պարզեցին երկուսի էլ թերի կողմերը։ Բահաթրեանցը ինձ շատ մօտեցաւ և առաջարկեց որ միացեալ ուժով դասագրքեր կազմենք։ Ես համաձայնեցի և սկսեցի նիւթեր պատրաստել, բայց երբ ուզեցանք իմ ու նրա նիւթերը միացնել, այստեղ մենք չը հաշտուեցանք իրար հետ և՛ ամբողջ ծրագրի վերաբերմամբ և սկզբնական ուսուցման։ Զէ, ասացի, լաւն այն է, որ դու քու էշը քշես, ես իմը, ես չեմ կարող երեխային ասել. «այս խոզի ոտն է, այս՝ հաւի հօն։ Սրա համար խօսք տալինք իրար նիւթից օգուտ չը քաղել. նա իր տպածի վրայ աւելցրեց. «արտատպութիւնը արգելւած է». ես էլ իմի վրայ նոյնը աւելցրի։ Ոչ ոք չիմացաւ, թէ այդ ինչ էր նշանակում։ Մանդինեանցը քննադատեց երկուսն էլ, իմը գովեց, իսկ Բահաթրեանցինը պախարակեց, բայց Բահաթրեանցն էլ նորան ողողեց։

Մանդինեանցն իր մանկավարժական գործունէութիւնն սկսեց մի շատ սխալ քայլով։ Նա իր բարերարի հետ ունեցած պայմանը մերժեց, ուխտաղանց եղաւ և մինչև անգամ նրա ապագայ գոր-

ծունկուԹեան վրայ մի սև սուեր ձգեց։ Սրա համար Սանասարեանցն էլ նրան աչքից ձգեց, երեսը տեսնել չուզեց։

Ինձ համար այս խնդիրը մութն էր, և ես հակւած էի աւելի Մանդինեանցին արդարացնել, չենթադրելով՝ որ իմ սիրած մարդու վրայ կարող է որ և է բիծ լինել։ Եւ հէնց սրա համար էլ, երբ դուրս եկաւ Ներսիսեան դպրանոցից, գնաց Վան և վերադարձաւ յուսախաբւած, մնաց առանց պաշտօնի, ընկաւ պարտքի տակ, թշուառացաւ։ Այդ ժամանակ ես խնդրեցի հողաբարձութեանը, որ Մանդինեանցին հրաւիրեն։ Խնդիրս չմերժեցին և Մանդինեանցը եկաւ Շուշի և ինձ մօտ մնաց, մինչև ընտանիքի գալը։ Շատ էր փոխւել Սեդրակս և ընկճւել։ Իբրև բարեկամ, սփոփեցի և մխիթարեցի իրան և ամենայն ջանք գործ դրի, որ քաղաքի մէջ անուն և հեղինակութիւն ստանայ, բայց զուր եղաւ իմ ջանքը։ Դեռ նոր եկած, այստեղ կրկնեց իր դասախօսութիւնը, որ արել էր Թիֆլիսում իր կատարած ճանապարհորդութեան մասին։ Ունկընդիրները հիասթափւեցին և ոմանք էլ ասացին ինձ.

—Պարոն Աղայեանց, թէ որ բերած մարդիդ շնորհքն այս է, ուրեմն դու հէնց մեզ զարաբաղցու տեղ ես դրել, կարծում ես թէ մենք լաւն ու վատը չենք իմանալ..

—Դուք սխալւում էք, ասացի։ Այս մարդը ժողովրդի կեանքին անծանօթ լինելով՝ տեսածովը զարմացել է։ Եթէ իմանար, ոն այդ կեանքը ձեզ աւելի է ծանօթ, էլ չէր դասախօսիլ։ Բայց սրար ձեզ դասախօսելու համար հօմ չենք բերել։ Սա մանկավարժ է և ոչ թէ հասարակ վարժապետ, գիտէք ինչ է մանկավարժութիւնը, այդպէս բան մեր ոչ մի դպրոցում չկայ. մենք դեռ չունենք մանկավարժներ, այս մի հատն է որ կայ։

—Շատ լաւ, սաղ կը մնանք, էդ էլ կը տեսնենք, բայց դրանից իսկի մեր խելքը բան չի կորում...

Ուղիղն ասած՝ իմ խելքն էլ բան չէր կորում, իմ նպատակն էր որ մէկ ես էլ տեսնեմ, թէ ինչ բան է արդեօք Մանդինեանցի ձեռքով աւանդւած հերբարտական մանկավարժութիւնը։

Բարձր դասատունը, ուր բաւական խոշոր տղայք կային, յատկացրինք այդ նոր վարդապետութեանը։ Տղայքը պիտի և՛ սովորէին և՛ սովրեցնէին։ Շինել էր և մի նոր այբբենարան, իր ասելով Օթ-

տոյի մեթոդով, որով պիտի դրել կարդալ սովրեցնէին մանուկներին։ Ես իմ այբբենարանը հանեցի, որ աչքովս տեսնեմ Օթտոյի տրւած արդիւնքը։ Ներկայ էի լինում թէ իր դասախօսութեանը և թէ աշակերտների և տեսնում էի, որ մարսւած բան չէ ոչ մէկը և ոչ միւսը։ Երբ ինքն էր դասախօսում, գիրքն առջևն էր դնում, մի քառորդ ժամ երեսին նայում լուռ ու մունջ, իսկ այդ ժամանակ աշակերտները յօրանջում էին և սպասում, թէ ինչ պէտք է ասի, և երբ որ թարգմանում էր կարդացածը կամ յետ պատմում իր խօսքերով, աշակերտները գրում էին բառացի, և յետոյ բերան անում մի անմիտ բառաշարութիւն։ Իսկ գործնական դասերը երբ որ վերջանում ին, ցոյց էին տալիս աւանդած դասի լաւ ու վատ կողմերը և արտնադրում։ Բայց սրնով մանուկների վերքը չէր սաղանում. նրանք ապուշ ապուշ նայում էին, չըգիտէին, թէ ի՞նչ են ուզում իրանցից, ինչ են ուզում հասկացրած լինել։

Ես իմ տպաւորութիւնը չէի թաքցնում Սեդրակից և առանձին ասում էի իրան, որ ձեռք վերցնէ իր Օթտոյից, որ նրանից բան չի դուրս գալ, բայց նա փոխանակ համոզելու, ինքն էր աշխատում ինձ համոզել, որ ես չշտապեմ, որ տարւայ վերջին արդիւնքը հրաշալի կը լինի։ Հասանք տարւայ վերջին և արդիւնքը եղաւ ոչ թէ զերո, ինչպէս ես էի կարծում, այլ մինուս. երեխէքը սովորել էին սուտ կարդալ և սուտ գրել. օրինակ՝ գրում էին որ և է տառի պէս մի բան և կարդում որ և է բառ. գրում էին ամ և կարդում ճնճղուկ...

Մանդինեանցն ինքն իր աչքով տեսնելով իր տւած բացասական արդիւնքը, որ նոյն իսկ խալֆաները չեն անում, էլի պընդում էր, թէ այդ է միակ ուղիղ ճանապարհը։

—Ոչ, ասացի, այդ ճանապարհը ոչ դու գիտես և ոչ քո Օթտոն։ Միւս տարին ես կսկսեմ, և դու կը՞տեսնես, թէ այդ միևնոյն երեխէքը ինչպէս են թև առած թռչում։

Այս խօսքի վրայ Մանդինեանցը աչքերը չռեց վրաս։—Ի՞նչ է, ասաց, քո միտքը, ուզում ես իմ հեղինակութիւնը վնայր գցել։

—Դու հեղինակութիւն չունիս, ասացի, որ վայր գցեմ, քո հեղինակը Օթտոն է։ Մէկ ինձ էլ տես, գուցէ ինձ աւելի ես հաւանում քան թէ Օթտոյին։

—Ես քեզ հաւանում եմ, բայց ոչ քո հեղինակութիւնը։ Դու ամեն մեթոդով էլ կարող ես արդիւնք ցոյց տալ, նոյն իսկ Օթոյի մեթոդով էլ, բայց Օթոն ինչ մեղաւոր է, որ դաս տուողներն անշնորհք լինեն։

—Եթէ այդպէս է, ուրեմն ամեն մեթոդ միևնոյն է, էլ ինչ հարկ կայ Օթոյի պոչից բռնել։ Բայց դու շատ ես սխալւում։ Տուր ինձ միևնոյն խամ ուսուցիչները, և ես նրանցով ցոյց տամ, թէ ինչ առաւելութիւն ունի իմ սովրեցնելու եղանակը։

—Ես համաձայն չեմ։

—Դու համաձայն չես, ես էլ չեմ համաձայն։ Ես կառաջարկեմ մրցութիւն, եկող տարի նախակրթարաններից մէկը դու վերցրու, միւսը ես։

—Օ՛... այդ խօմ առաւել վատ...

—Լաւ է թէ վատ, բայց այլ ևս ոչ մի զիջողութիւն չեմ անիլ քեզ։

Այս ժամից սկսած՝ իմ ամեն բանը Մանդինեանցի աչքումը ծուռեց։ Ես կարծում էի, թէ ինչպէս ես եմ վերաբերւում դէպի ինքը, նոյն վերաբերութիւնը կունենայ և ինքը դէպի ինձ. բայց տեսայ, որ սա իր փիլիսոփայութիւնը փոխել է, ուզում է, որ ամեն ոք իրան ծառայէ, իսկ ինքը՝ ոչ ոքի։ Միւս օրը կարդացի իմ Անահիտը, որ նոր էի գրել, որ տեսնեմ ինչ կարծիք կը յայտնէ իմ նախկին կրիտիկոսս, և նա յայտնեց իր կարծիքը.

—Շատ յիմար բան ես գրել, ասաց, խորհուրդ չեմ տալ, որ տպես։

—Դեռ այդպէս յիմար բան չէիր ասած քո օրումը, պատասխանեցի ես. ինչպէս երևում է, խելքդ կորցրել ես... և սկսեցինք կռուել, խօսքով ի հարկէ։

Մանդինեանցն կողմնակի դրդումներով միտք չդացաւ իշխել ինձ վրայ կամ դուրս մղել։ Մտքումը դրաւ, որ ուսուցչական խումբն արձակէ և նոր ընտրութիւն անէ։ Այս առաջարկութիւնն արաւ հոգաբարձութեանը։ Հոգաբարձութիւնը պատասխանել էր, թէ շատ լաւ, այդ բանը կարող էք անել, միայն մէկ պայմանով. նախ՝ Աղայեանցին չըպէտք է միւսների հետ ազատ համարէք, և երկրորդ՝ ընտրութիւնը պէտք է անէք միասին։ Սրա վրայ Մանդինեանցը

առ երեսս համաձայնում է, բայց սիրտը դաղում է, տեսնելով՝ որ իմ դիրքն աւելի ամուր է, քան թէ իրանը։

Երբ վարժապետներին ազատութիւն էր տուել արդէն և շատերն էլ կարծում էին, թէ իմ խորհրդով է եղել, յանկարծ նամակ ստացաւ Արշակ Նահապետեանից, որ նրան Թիֆլիս էր հրաւիրում։ Այս բանը չըթաքցրեց ինձանից, բայց բովանդակութիւնը չասաց։ Ես ասացի. Սեդրակ, Արշակը քեզ հրաւիրում է, որ տանէ Էջմիածին, ուզում է օգտուել քո տիտղոսից, բայց լաւ կանես, որ պայմանազանց չլինես ու չերթաս, մանաւանդ որ վարժապետներին էլ արձակել ես, իմ գործը շատ պիտի դժուարանայ։

—Չէ, ասաց, այդպէս բան չկայ, դու միամիտ եղիր, ես կերթամ ու էլի կը դամ շուտով։

Սեդրակս գնաց ու գնաց։ Այս այն ժամանակն էր, երբ մեր մանկավարժները մի արդոնաւորդական արշաւանք սկսեցին դէպի Էջմիածին ոսկեգեղմն ձեռք բերելու համար, և ձեռք բերին՝ որը հինգ և որը չորս հազար մանէթ տարեկան։ Եւ ինչ շինեցին այդ առասպելական վարձատացութեան փոխարէն—ամենևին ոչինչ, այլ միայն շահախնդրութեան ձգտումն սփռեցին ամենայն տեղ և սև քար ձգեցին առաքելական կոչումն ունեցող իդէալիստ ուսուցիչների վրայ, մի սև քօղ՝ բոլոր դպրոցների վրայ, որոնց տարեկան ծախքի հաշիւը եօթը հազարից չէր անցնում, որով պիտի պահէին 15—20 ուսուցիչներ։ Մայր դպրոցի և նրա ճիւղերի մէջ եղած նիւթական հաւասարակշռութեան կործանումն եղաւ։ Մանդինեանը լաւ իմանալով, որ ոչ ոք ինձ պէս չի թափանցել նրա հոգու և մտքի մէջ, ոչ ոք ինձ պէս չի ուսումնասիրել նրան, ինձ համարեց իր միակ վտանգաւոր թշնամին, և այնքան կուրացաւ այդ ախտից, որ մի շրջաբերականով արգելեց իմ դասագրքերի գործածութիւնը ազգային դպրոցների մէջ, արգելեց իմ սննդարար կերակուրը, որ հարկադրւեն իր տրւածը ուտել։ Սրանից յետոյ՝ էլ ինչ ասել կուզի, որ նրա անունը իսպառ ջնջեցի իմ բարեկամների ցուցակից և դասեցի ընդ չարս և ուրացողս...

Հայր Սեդրակեանը Ղարաբաղից գնաց Էջմիածին, որ նորանոր արտօնութիւններ ձեռք բերէ իր գործունէութիւնն աւելի ևս ընդարձակելու համար, բայց նրան այլ ևս յետ չը դարձրին, այլ եպիսկոպոս ձեռնադրելով ուղարկեցին Թիֆլիս առա՛ջնորդութեան։ Վերջին երկու տարին ես զուրկ մնալով Սեդրակեանի պէս մի լուրջ, գործունեայ և բարձր պաշտպանից, չափից դուրս շատ նեղութիւններ քաշեցի։ Նրանից յետոյ եկաւ Կարապետ վարդապետ Այւազեանը։ Այս անձի վրայ աւելացաւ և բուն իսկ առաջնորդ Անդրէաս եպիսկոպոսը և երկուքը միասին իրանց շնորհքները միացնելով՝ միմեանց արժանաւորութիւնը լրացրին միմեանց պակասութեամբ, որ կատարի այն ասածը, թէ «Յաթռուն Մովսիսի նստան դպիրքն»։ Դպրանոցի եկամուտը, որ Սեդրակեանը հասցրել էր մինչև տասնըեօթը հազարի, իրանից յետոյ այդ քանակութիւնը իջաւ հինգ հազարի, որ ասել է 18 ուսուցիչ միասին պէտք է ստանային այնքան, ինչքան ճեմարանումն ստանում էր մի հոգի, թէև շատ սև։

Եկամուտի աղբիւրները կրկին բաց անելու համար՝ վերջին տարին ես յանձն առայ տեսչական պաշտօն, որովհետև այլ ևս տեսչապետութիւն անել չէի կարող՝ զրկւած լինելով բարձր պաշտպանութիւնից, բայց մարդիկ շուտ գլխի ընկան, որ իրանց հաց ը պիտի կորուի, աշխատեցին բանն այնպէս բերել, որ ես բարկանամ և հրաժարուիմ։ Ես էլ բարկացայ և հրաժարական տուի, թողելով՝ որ մեռելները թաղեն իրանց մեռելներին։

Հեռանալիս միտս ընկաւ այն, ինչ որ լսել էի Վեհապետեան Գէորգ եպիսկոպոսի մասին։ Այս մարդը, որ ահագին ջանք էր գործ դրել և Բաղդասար միտրապոլիտից յետոյ կորած կալւածները կրկին ձեռք բերել, վերջը դառն ապերախտութեան հանդիպելով՝ հեռացել էր և հեռանալիս յետ չէր մոռիկ տալել, ասելով՝ «Ափսոս են աչքերս...» Մեր բոլոր քաղաքների մէջ չկայ ոչ մէկը, որ Նուշու չափ ապերախտ լինի, շնորհիւ նրա մրուրի և տականքսի, որ զուրկ լինելով փողից, զուրկ է և սրտից ու խղճից։ Շատ անգամ ասում էին ինձ դրսից եկողները. «Դուրսը մենք շատ առատաձեռն ենք և լաւ. վերադառնալիս կառապաններին ամեն մի իջևանում քսան և երեսուն կոպէկ ենք ընծայում, բայց հէնց որ հասնում ենք Աս-

կեռանդ, մեր Ղալի ստորոտը, այդտեղ մեր ձեռքը չորանում է, էլ տասը կոպէկից աւելի չենք տալիս»։ Ուրեմն հէնց որ իրանց քաղաքը երևում է, չորանում են, իսկ քաղաք մտնելուն պէս՝ քարանում։ Այս եկողները զարմանում էին իմ տոկունութեան վրայ և ասում էին. «Դեռ քեզ չափ ոչ ոք չի դիմացել մեր քաղաքում. Շանչեանցի պէս մարդուն, որ այնքան երախտիք ցոյց տուաւ մեր ուսումնարանին, այնքան արտօնութիւն ձեռք բերեց, մենք նրա ուսուցիչներին ծեծեցինք, իրան էլ դուրս արինք, բայց դու որ այդքան չարչարւում և դիմանում ես, երևի նրանից է, որ մեզանից ես, գիտես մեր բնութիւնը, մեր լեզուն, մեզ հետ վարելու եղանակը»։ Այո՛, գիտէի, բայց դարձեալ հեռացայ՝ առանց յետ մտիկ տալու Ղովտի նման, որ շուշեցոց պէս չը քարանամ...

XI

Ղարաբաղից վերադարձայ Թիֆլիս այնպէս ջարդւած և յոգնած, որ մոռացեցի խսպառ հեռանալ ուսուցչական ասպարիզից և քաշւել գիւղ։ Բայց բանն այնպէս եկաւ, որ ես փոխանակ մի մութ գիւղ ընկնելու, ընկայ մի բանաստեղծական աշխարհ, մի երկնային դրախտ, ուր ինձ փայփայում էին անմեղ հրեշտակները և գլուխս զարդարում անթառամ ծաղիկներով։ Այդ երանելեաց աշխարհը տիկին Սոֆիա Բաբայեանցի մանկական դրախտն էր։

—Դու շատ ես յոգնած, ասաց Աւետիքս, քեզ հարկաւոր է հանգստանալ. և ես կը հանգստացնեմ քեզ։ Սոֆիային հարկաւոր ես դու, որ ազգային-ժողովրդական տարր մտցնես նրա պարտիզի մէջ, ազգային ծաղիկներ բուսցնես։ Նրա մօտ դու բոլորովին ապահով կը լինես թէ նիւթապէս և թէ բարոյապէս...

Զարմանալի ստոյգ տակ եմ ծնւած ես։ Ինձպէս մարդը կամայ ակամայ կենթարկւի միստիցիզմի։ Ասենք այդ ցաւը ես միշտ էլ ունեցել եմ, թէև ուշ եմ դարձրել շատ անգամ և ազատ եմ համարել ինձ ամեն տեսակ նախապաշարմունքից։ Դու լաւութիւն արա Մարկոսին, եթէ նա չիմանայ՝ Մարտիրոսը կիմանայ և կը վարձատրէ քեզ։ Թող մէկ քաղաքում քեզ հալածեն քո արած բարութեան համար, մի ուրիշ քաղաք քեզ կը հասկանայ և կընդունի։ Այս իսկ էր մեր Փրկչի էլ ասելը իր աշակերտներին թէ՝ չէք հա-

տեղնիլ Իսրայէլի քաղաքները—երբ մէկում կը հալածեն, գնացէք միւսը։ Այս կողմանէ, ինչքան էլ գանգատւեմ, ինձպէս բախտաւոր մարդ քիչ եմ տեսել, բախտաւոր՝ ոչ թէ նիւթական հարստութիւն ձեռք բերելում, այլ բարոյական ու մտաւոր։

Ընկայ մանկական պարտէզ, ուր երեխէքը անմեղ հրեշտակների էին նման, ուրախ, զբաւարթ, ինչպէս անհոգ թռչնիկներ, որոնք անընդհատ ոստոստում, թռչկոտում և երգում էին իրանց մայրիկի՝ Սոֆիայի չորս կողմում, և ես չգիտէի, թէ որից եմ աւելի հիացած, կրթողից, թէ կրթուողներից,—այնքան բնական էր, այնքան սիրալիր դրանց բարոյական և մտաւոր աճումն ու զարգացումը։

Իմ պարապմունքն այստեղ օրական երկու ժամ էր, պէտք է գրագիտութիւն սովրեցնէի։ Առաջին դասից յետոյ՝ նախաճաշիկս պատրաստ էր լինում, երկրորդից յետոյ՝ ազատ էի, բայց շատ անգամ մնում էի երեխանց մօտ, որ ուսումնասիրեմ նրանց պարապմունքները։ Այստեղ ահա, ըստ ամենայնի առողջարար շրջանում, կազդուրւեցի ես թէ հոգեպէս և թէ ֆիզիքապէս, և ազատ ժամերս նըւիրեցի մանկական գրականութեան, մանկական բանաստեղծութեան։

Գրում էի մանկական երգեր և տալիս տիկին Սոֆիային, որ այնպէս էր ուրախանում, ինչպէս մի նոր գիւտ արած։ Ինձանից ծածուկ էր սովրեցնում երեխաներին և պատւիրում էր, որ ինձ չասեն մինչև լաւ չըպատրաստւին։ Երբ որ լաւ պատրաստւած էին լինում, հաւաքւում էին դահլիճում դաշնամուրի մօտ, հրաւիրում էին ինձ, բայց չէին կարողանում համբերել մինչև սկըսելը, իրար գլխով էին անցնում, ծափահարում և հասկացնել ուզում, որ մի անակընկալ ընծայ պիտի անեն ինձ։ Սկսւում էր մի ներկայացումն, դուրս էր գալիս մի հրաշալի պատկեր, և ես չէի հաւատում, որ այդ պատկերն իմ նկարածն է, այնքան գեղեցկացրած էր լինում տիկինը և կենդանացրած։ Այսօրւանից յետոյ ահա ես գլխովին նըւիրւեցի մանկական գրականութեան, որոնք տպագրըւեցին «Աղբիւրում» մի քանի տարի շարունակ։ Այդ ժամանակ կազմեցի ես իմ «Ռուսումն մայրենի լեզուի» երկրորդ և երրորդ դասագրքերը։

Մանկական պարտիզում մնացի ես մի դպրոցական տարի և

դուրս բերի մի անջնջելի խորին երախտագիտական զգացմունք առ համեստափայլ տիկին Սոֆիա Բաբայեանց։

Ես դեռ մանկական պարտիզումն էի, որ Սեդրակեան սրբազանը եկաւ Թիֆլիս իբրև թեմի առաջնորդ։ Հէնց նոյն ամառն էլ նա ինձ հրաւիրեց յանձն առնել թեմական տեսչի պաշտօն, թէև նոյն ամառւայ ռոճիկը պիտի իմ նախորդն ստանար, իսկ ես ոչինչ։ Այս պաշտօնը ես չէի կարող մերժել հեզամտութեամբ, որովհետև առաջարկողը գիտէր, թէ ում է առաջարկում։ Նա ինձ փորձել էր գործի և պաշտօնի մէջ. շատ լաւ էր ճանաչում. կարիք չըկար որ մի ուրիշին առաջարկէր, կամ ես խնդրէի։ Սրանով նա ուզեց Ղարաբաղում իմ կրած տանջանքի փոխարէնը վարձատրել և նոյն իսկ արդիւնք տեսնել։

Իբրև թեմական տեսուչ՝ ես մի իշխանաւոր չէի վարժապետների համար, այլ իբրև ուսուցիչ և ընկեր ուսուցչի։ Ամեն տեղ՝ ուր որ գնում էի, ուսուցիչ և ուսանող միակերպ ուրախանում էին։ Շատ տեղ իրանք վարժապետներն ու վարժուհիներն էին խնդրում, որ մի քանի օր մնամ, փորձնական դասեր տամ թէ աշակերտներին և թէ իրանց, և ես կարող էի ամենայն ուրախութեամբ։ Առանձին ուշադրութիւն էի դարձնում ծաղկոցների վրայ, մանաւանդ վրացախօս տեղերում, և գործս գնում էր շատ յաջող և գեղեցիկ։ Բայց յանկարծ մի տխուր վարագոյր քաշւեց այդ բոլորի վրայ և ես քաշւեցի իմ հայրենի գիւղը, որ այնտեղ ողբամ թէ ընդհանուր և թէ մասնաւոր աղէտներիս վրայ։

Մեռաւ Վիգէնս, մի հատիկ արու զաւակս, ծաղիկ հասակում. նրան հետևեց մայրը, թողնելով երեք մատղաշ զաւակներս որբ և զուրկ մայրական խնամքից։ Այս յանկարծական հարւածներն ինձ ձգեցին մի տարօրինակ հոգեմաշութեան մէջ։ Ես դառայ մի ոչինչ և ամենայն ինչ աչքումս ոչնչացաւ։ Մի ամբողջ տարի ձեռքս գրիչ չըբռնեց, մի հասարակ նամակ անգամ չըկարողայ գրել։ Թուլանալով հոգեպէս, թուլացայ և ֆիզիքապէս։ Տեսնելով, որ էլ ոչ մի բանի պէտք չեմ, մտածեցի մի վանք քաշւել և այնտեղ

մթնացնել իմ վերջին տխուր օրերը։ Այս մասին մի խնդիր տալի, բայց խնդիրս մերժեցին՝ ինձ համարելով հակառակ կուսակցութեան մարդ։ Գրեցի և Սուքիաս սրբազանին, որ ինձ իր մօտ տանէ, որ ես կռուելու, որ և է կուսակցութեան պատկանելու սիրտ չունեմ այլ ևս, բայց սա պատասխանելու անգամ արժան չը համարեց։ Գրեցի ուրիշներին էլ, բայց բոլորն էլ զուր անցաւ. Աստուած չը կամեցաւ։

Շատ անգամ է պատահել, որ ես ուզեցել եմ մի անխորհուրդ և անմիտ բան բռնել, մի յիմարութիւն անել, բայց Աստուած ազատել է ինձ այդ փորձանքից։ Սիրող սրտի համար սիրազուրկ լինելը մի որոնելի կորուստ է։ Ցառաջացած վշտահարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ սիրոյ որոնումն։ Այդ ցաւն առողջանալ կարող է միմիայն դարձեալ սիրով։ Եւ որքան անձնատուր էի լինում տխրութեան, այնքան սաստկանում էր վիշտս, քնհատութիւն էր գալիս վրաս և սրտի թրթռոց։ Պատահում էին և իստերիքական այլ երևոյթներ, և ես երկիւղ էի կրում խելացնոր լինելուց։ Մտածեցի, որ լաւ բան չէ արածս, զաւակներս կարող են մնալ իսպառ անխնամ։ Մէկ լաւ ձի առայ և սկսեցի պլտտուել ամեն կողմ, քէֆի և զարմանքեան ետևից ընկայ, և երբ զգացի դրա լաւ հետևանքը, սկսեցի շարունակել այդ կեանքը։ Ես առողջացայ, վրաս եկաւ կորցրած ֆիզիքական ուժս։ Ինձ պակասում էր միայն մի սիրող սիրտ, նրան էլ Աստուած հասցրեց։ Ես նորոգուեցի հոգւով և մարմնով, և սրա արդիւնքն եղաւ իմ «Արեգնազանը», «Ցորդը» և սրանց յաջորդող գրածներս։ Լուսինը դուրս եկաւ կրկին ամպի տակից, շներն սկեցին լուսնահաչ տալ.

«Բայց լուսինը բակ բոլորած՝ շարունակում էր իր ճանապարհն,
«Համարելով թէ չի լսում, որ իր վրայ հաչողներ կան»...

ՎԵՐՋ

7/XI—1922
Ա. ՄԵՍՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	տող	սխալ	ուղիղ
67	25	վրնդեց	հրնդեց
76	4	ընդդիմանալ	ընդարմանալ
»	12	Այնու ամենայնիւ	Այդ ժամանակ
77	5	շատ չիտակ	չիփ-չիտակ
»	6	բուրդ	բարդի
79	13	Կը տալի	Կը տալի
»	21	Կը համարէի	Կը համարէին
80	1	գոնէ	տանէ
»	16	ճաշի	ճանպի
»	20	Տէր-Յովհաննիսեանին	Տէր-Յովսէփեանին
»	22	խաշի	խոզի
»	23	Դաղեցկին	դուորէցկին
83	11	19	12
85	32	Նիւթականն	Նիւթական պատկերն
86	10	Ես	Ես
87	10	մէջը	մէջ
88	33	Այսպիսի	Այսպիսիների
91	8	քեռակնոջ մօտ	քեռակնոջ մօր մօտ
93	3	գալիս	տալիս
»	4	չի ուզեցել	չի ուզիլ
98	23	Որքան որ	որքան այն
99	18	հարիւր	66
»	23	աչքով	ոտքով
100	8	հէնց նոյն	եօթն
»	24	իշխանական	իշխանաձուկն
102	18	Այո չատ	Այդ չատ
103	19	խմբագրատանը	խմբագրատունը
»	27	բարձրացրել	բարձրացրել էր
106	2	պէտք չեն	պէտք չեկան
»	»	և նոր	նոր
»	28	իմ գործս	իմ արածս
107	34	բանը	բառը
109	14	Տէր-Յովհաննիսեանցին	Տէր-Յովսէփեանցին
111	7	այդ լոգաածը,	այդ լոգաածը, որով ֆիզիքական ուժին էր տուած վերջնական լաղթութիւնը կեանքի կռիւ մէջ.

Երես	տող	սխալ	ուղիղ
112	23	կենսականին	գեղեցիկ սեռին
»	31	գրականութեան մարդիկ գալու	գրականութեան մէջ մարդիկ գնալու
113	30	ասում էի	ասում էր
114	1	մաքրասէր	մաքրասէր էր
117	24	ձեռքն է	ձեռքումն է
118	11	Եա, Եա	հՕ, հՕ
»	23	Նշամածուն	Նրանով մածուն
119	13	ուտում	ատում
120	9	Ալանեանցի	Յովնանեանցի
123	16	մորեխները	մորմերը
»	23	կատակներ	կոնդակներ
124	16	Առանց	Ասոնց
125	22	Մուշեղ քահ.	Մուշեղեանին
126	17	դասաւորում	դասաւանդում
127	2	ճանճով	քամով
130	4	կուռքը իր	կուռքի մէջ
»	8	պռոտելու	պռստելու
»	22	ձեռնագունդը	ձնագունդը
131	24	Այս	Եւ
132	1	գլխին	գլխին ածած
»	4	թող կենաչ	թող վեր կենաչ
133	17	լաւագունին	լաւագոյնն
134	15	բանն ինձ համար	բանը նրանց համար
142	29	Պ. Սիմէօնեանց	Մ. Սիմէօնեանց
149	21	«Օգտակար-Ուսուցիչ»	«Օգնական-Ուսուցիչ»
»	29	սերպահած	սիրաչահած
152	24	չիմացանք էլ մեր	չիմացանք էլ թէ ինչպէս անցաւ գիշերը, այնքան չատ էր մեր
165	1	Ակեանար	Ակեարան
167	10	ուրիշին	ուրիշն
»	18	կարդում	կատարում

29, 30 և 31 երեսները լեռ ու առաջ են ընկած այսպէս 28, 31, 30 և 29.

2013
22610